



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2589

56



ՀԱՅ ԳԵՂԱՐԱՆՈՍՏԱՆՔԱՅ
ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՏԱՄԱՏՆԱԿԱՆ ԽՈՏԵՆԱԳՐԱՆ
ԳԱԶԵՐԷ - ՀԻՄՆԵՐԻ, 1943

011

Պ. ՏԸ ԳԱՄՐ

ՀԵՂԻՆԵԿ

ՕԳԹԱՎ ՀԷՑԵԷ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ԳՐ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ



ՉՄԻՒՆԻԱ

ՏԵՐ ԵՒ ՀՐԱՅԱՐԱԿԷ

Տ. Յ. ՏԷՏԷԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

1876

Գ. ՏԸ ԳԱՄՕՐ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ա

Այս ճշմարիտ պատմութեան երկրորդ մասը սկսելու ժամանակ Տարիաւորութիւն ունինք մեր ընթերցողներուն և մանաւանդ ընթերցութեան հիւններուն աղաչանք մ'ընելու. այսինքն կ'աղերսենք որ չպայրանան եթէ այս էջերուն մէջ քիչ մը սաստիկ, բայց մեղմուած գոյներով երեւայ իրենց ճշմարտութիւնը, այն որուն ամեն օր կ'ընդհարին աշխարհիս վրայ: Պէտք է սիրել, վարագուրել ճշմարտութիւնը: Տեսլականն իսկ ոչ այլ ինչ է բայց եթէ ճարտարութեան ձեւերը հազած ճշմարտութիւնը: Ախպասանը զիտէ թէ իրաւունք չունի իր ժամանակին դէմ զրպարտութիւն ընելու, բայց զայն նկարագրելու իրաւունքը ունի, կամ որ և է իրաւունք մը չունի. բայց նաև կը կարծէ ճանչել իր պարտաւորութիւնը, որ է բարուց ամենէն փափուկ նկարագրութեանց միջոցին իր դատումը անաչառ և գրիչը պատկառ պահել: Կը յուսայ ան թէ այս պարտաւորութեան հակառակ չպիտի վարուի: Ուստի ասի ըսելէն ետք կը շարունակէ իր պատմութիւնը:

Հինգ տարի անցած էր այն ատենէն 'ի վեր ուր Ռէյեկէյէ նահանգին ընտրողներն օրէնագիր ժողովը ղրկելը էին Գամօրը:

և չէին զղջար իրենց այս ընտրութեան վրայ: Այս երեսփոխանը քաջ գիտէր իրենց տեղական մանր շահերը, և ամեն առթիւ կը փութար ծառայելու անոնց: Ասիկց 'ի զատ իր արժանապատիւ ընտրողներէն ոմանք Բարիզէն անցնելու առթիւ եթէ գային այն փոքրաչէն ապարանը՝ զոր Գամօր Տ'Էմբերաթրիս պողոտային ծառուղիին մէջ շինել տուած էր Լեսդանտ անունը կրող ճարտարապետի մը ձեռքով (Պ. ՏԸ Գամօր այս կերպով ուզած էր ազնուութիւն մը ցոյց տալ իր հին բարեկամին) այնպիսի շնորհալի մարդասիրութեամբ մը կ'ընդունուէին որ իրենց սիրտն արդահատութեամբ համակուած կ'ըլլար երբ դաւառը կը վերադառնային: Պ. ՏԸ Գամօր կը զիջանէր հարցնելու թէ իրենց կիները կամ ազջիկները միասին եկած են մէկ տեղ պզտի ճամբորդութիւն մը ընելու համար. ասիկց 'ի զատ թատրոնի սոմսակներ և խորհրդարանը մտնելու արածնութիւններ կը տար անոնց. իր պատկերները և ձիաստանները կը ցուցնէր. ապարանին գառիթին մէջ իր ձիերը անոնց առջև տրոտել (trotter) կը տար իսկ: Վահանգիւն մարդիկը կը կարծէին և զգայնութեամբ իրարու կ'ըսէին միշտ թէ ան առաջուան չափ մեղամաղձոտ չէր երևար. և թէ իր կերպարանքը շատ շտկուած էր: Իր փոքր ինչ խտած և քաղաքավարութիւնը մեղմ ձև մ'առած էր առանց բնաւ պակսեցնելու անոր արժանապատուութիւնը. զէմբը՝ որ ատենօք տխուր էր՝ հիմա ժպտուն ու միանդամայն ծաղի հանդարտութեան մը գրոշմը կը կրէր. տեսակ մ'արքայական շնորհ կար իր վրան: Ծաղկահաս կամ պառաւ, աղքատ կամ հարուստ, համեստ կամ անպատիւ կիներուն հետ Լուի չորեքտասաներորդի հուշակաւոր քաղաքավարութեամբը, և իր մեծաւորներուն ինչպէս նաև հաւասարներուն հետն ալ ընտիր աղնուականութեամբ կը վարուէր, վասն զի ներքնապէս կիները, իր մեծաւորները, հաւասարները և ընտրողները միահամուռ կ'արհամարհէր կատարելապէս:

Միայն ինքզինքը կը սիրէր, կը յարգէր, կը մեծարէր. բայց ինքզինքը իբր աստուած մը կը սիրէր, կը յարգէր, կը մեծարէր: Իրօք կենացն այս միջոցին յաջողած էր — որքան որ կարելի էր յաջողել — իր անձովը իրապէս կազմելու այն գրեթէ գերմարդկա-

յին տիպարը զոր իր կենացը ճգնաժամին մէջ յառաջադրած էր՝ և երբ միշտ իր անքին անջևը կեցող տեսլական հայլիին մէջ յոտից ցղլուխ ինքն իրեն կը նայէր ակնապիշ, գոհ կ'ըլլար: Պ. ՏԸ Գամօր ստուգիւ էր ինչ որ ուզած էր ըլլար, և իր կեանքին նախադիրը (programme) ինչ կերպով որ ինք որոշած էր՝ այնպէս ճշգիւ կը կատարուէր: Հօրը կամքին անընդհատ ջանադրութեամբն ալ կարող էր զսպելու մարդկային ամեն բնազդեցիկ զգացումները երբ ինքն էր զգացողը, և անարպելու՝ երբ ուրիշներն էին զգացողները, զգացումներ որոնց խաղալիկն է հասարակ մարդը, և որք՝ Գամօրին կարծիքին նայելով՝ ոչ այլ ինչ են բայց եթէ անասնային բնութեան հպատակութիւններ կամ տեսակ մը դաշինք որ տկարները կը կապէ և որմէ զօրաւորներն ազատ կ'ապրին: Ամեն օր կ'աշխատէր յետին կատարելութեան հասցնելու չափ բարդ առնել այն ֆիզիզական ձիրքը և իմացական կարողութիւնները զոր դիպուածն իբեն տուած էր, և այս աշխատութեան նպատակն էր անոնցմէ ամեն հնարաւոր վայելումները քողել իր կարճատև ճամբորդութեան մէջ զոր որորանէն 'ի չէութիւն կ'ընէր: Վերջապէս համոզուած ըլլալով թէ կենցաղավարութեան ծաղիկը, ճաշակի աղնուութիւնը, ձևերու վայելչութիւնն և պատուոյ կէտի անհնարին նորութիւններն ազատորդի մը կատարելութիւնը սուղ տեսակ մը բարոյական գեղեցկութիւն կը կազմեն, այս թեթև ու գերադոյն շնորհագեղութիւններով իր անձը զարգարելու կը ձգնէր իբր երկիւղած ճարտարապետ մ'որ իր գործին վրայ չուզէր որ և է անկատար կէտ մը թողուլ:

Յարատուութեամբ և յաջողութեամբ այսպէս ինքն իր վրայ աշխատելէն կը հետևէր թէ Պ. ՏԸ Գամօր այս միջոցի աշխարհիս լաւագոյն մարդը չէր թերևս, բայց հաւանօրէն անոր ամենէն սիրուն և ամենէն երջանիկն էր: Աւելի արժէք քան թէ խլճահարութիւն ունենալու որոշումն ընող ամեն անձանց պէս երիտասարդ կոմսն ամեն բանի մէջ իր փափաքին համեմատ յաջողելը կը տեսնէր: Այսուհետև ապագային նկատմամբ ապահով ըլլալով, անորմէ համարձակապէս ներկային մէջ օդուտ կը քաղէր և մեծ փարթամութեամբ մը կ'ապրէր: Զարմանալի յանդգնութեանը,

դատումին նրբութեան և ապահովութեան, մեծ յարաբերութեանցն և նաև իր բարոյական անկախութեան շնորհիւն ունեցած էր իր արագահաս բաղդը: Անազորոյն խօսք մ'ուներ զոր սակայն անթերի վայելչութեամբ մը կ'արտաբերէր. «Մարդկութիւնը, կ'ըսէր, բաժանորդներէ կը բաղկանայ»:

Այս սկիզբին ողին աղէկ սորվելով գանձային բարձր ապակաշուքեան ֆրանսասօնութեան մէջ իր աստիճանները շուտ առած էր: Հոն իր անձին հրասպարէի իշխանութիւնն նշանաւոր կը հանդիսանար: Իր անունը, քաղաքական կացութիւնը, պատուաւորութեան համբաւը գործածել զիտէր, ամեն բան իր նօրատակին ծառայեցնելով և ոչինչ վտանդելով: Հաւասար անտարբերութեամբ մը մարդերը կը բռնէր սմանց մոլութեանցը, և ումանց ալ առաքինութեանցը շնորհիւ: Նուաստ գործ մ'ընելու անկարողէր: Գիտութեամբ երբէք աղետաբեր գործի մը մէջ չէր նետեր բարեկամ մ'և ոչ իսկ թշնամի մը: Միայն թէ երբ գործը գէշի դառնար, ինք կրնար ժամանակին քաշուիլ այն գործէն, իսկ փրկանքը անոր մէջ կը մնային: Բայց՝ ինչպէս պատերազմներու՝ նոյնպէս և գանձային շահագիտութեանց մէջ կան մարդիկ որոնց պաշտօնն է թնդանօթին բերանն երթալ, և շահադէտք եթէ այս մարդկանց նկատմամբ շատ հոգ ընեն, մեծ գործեր ընելու չեն յաջողիր բնաւ: Գամօր իր այս ամեն հանդամանքովն իր ընկերներուն մէջ ամենէն ազնուականներուն մին կը սեպուէր, և իր խօսքն՝ ինչպէս ակնբարանին և արշաւահանդէսին ամենէն անարատ սահմաններուն, նոյնպէս և բարձր հնարադիտութեան աշխարհին մէջ գաշնադրի մ'արժէքը ուներ:

Ոչ նուազ կը յարգուէր նաև օրէնդիր ժողովին մէջ: Հոն տարօրինակ գեր մը, այսինքն՝ աշխատողի դերը ընդունած էր: Գործերու վերաբերող յանձնաժողովներուն ամեն մէկը մրցումով կը պահանջէր իրեն անդամակից ունենալ զան: Այս վայելչատէր երիտասարդին համեստ և աշխատասէր ընդունակութիւնը սաստիկ գոհունակութիւն կը պատճառէր: Ամենէն դժուարին խնդիրները պարզելու, ամենէն կ'ընձուալի տեղեկագրերը շինելու պատրաստ գտնուիլը տեսնելով կը զարմանային: Տեղական շահու վերաբերող

օրինաց ծրագիրներն իրեն համար ոչահարկու էին, ոչ ալ դադարնիք ունէին: Հրասպարակային նստի ատեն չէր խօսեր բնաւ. սակայն ազգային խորհրդարանին դիւաններուն կիսաստուերին տակ խօսելու վարժութիւն կ'ընէր. իր պարզ, զգուշաւոր, փոքր ինչ հեղնական կերպերն ևս քան զևս կը նշմարուէին: Տարակոյս չուներին թէ օրին մէկը պետական մարդ մը պիտի ըլլար ան. բայց կ'զգային թէ զոչոչ կը կենար: Իր քաղաքական գոյնը քիչ մը մթին կը մնար: Խորհրդարանին ձախակողմեան կեդրոնին անդամոց կարող կը նստէր, ամենուն հետ քաղաքավարութեամբ, ամենուն նկատմամբ անտարբերութեամբ վարուելով: Հօրը պէս համոզուած ըլլալով թէ զարգացող սերունդը սովորական պայմանաժամերուն մէջ յեղափոխութիւն մը յարուցանելու քմահաճութիւնը պիտի ուղէ ունենալ, հաճութեամբ սրտի հաշիւ կ'ընէր թէ հաւանօրէն իր քառասնամայ հասակին մէջ պիտի լրանար այս շրջանաւոր աղէտքին պայմանաժամը. վասն զի այս իրողութիւնն իր հասուն հասակի անոգայութեանը ժամանակ նորանոր յուզմաներու աղբիւր մը պիտի բանար և պարտադրեց պահանջուաներուն համեմատ իր քաղաքական սկզբունքը պիտի հաստատէր:

Սակայն Գամօր բաւական քաղցր կեանք մը կը վարէր, հետեւաբար անհամբերութեամբ չէր սպասեր փառասիրութեան ժամին: Մարդերուն յարգանք, երկիւղ և նախանձ կը ներշնչէր, և կիներէն կը պաշտուէր: Սրահի մը շուք և փառք կը բերէր իր ներկայութիւնը զոր չէր վատնէր: Անանց քով վայելած սիրաւէտ շնորհները չէին կրնար համբուիլ, վասն զի անթիւ և միանգամայն թաղուն էին: Իր տրփանքը խիստ վաղանցուկ էր: — Երկարատև չէ այն սէրքն որու մէջ քիչ մը հողեօրականութիւն չկայ: — Բայց Գամօր իր անձին յատուկ պարտ մը կը սեպուէր պատուելիք նահատակօրհները, զոր բարեկամութեան ձաղկիկներուն մէջ ազնուութեամբ կը թաղէր: Այսպէս բարիգեան աշխարհի կիներուն մէջ շատ բարեկամօրհներ վաստակած էր, որոնց մէկ քանին միայն կը քմահաճէին, բայց ամենուն երկկները կը սիրէին զինքը: Այս վայելչասիրական հաճոյնց հետ երբեմն սաստիկ զեղք խութիւններ ալ կ'ունենար, որոնց խնձրքը մերթ ընդ մերթ իր

բուժ երեակայութիւնը կը հրապուրէր. սակայն անպատիւ ընկե-
րութիւններէ կը զղուէր, և անոնց մէջ չէր գտնուեր: Շուայտու-
թեան մարդ չէր. իր քունին, սյծերուն, առողջութեանը հոգ
կը տանէր: Վերջապէս իր ճաշակները բարձր էին որքան որ
կրնային բարձր ըլլալ իր հոգին ջնջող մարդկային արարածի մը
ճաշակները: Փափկասուն կանանց սէրը, կենաց շոյալութիւնը,
երաժշտութիւնը, սրտիւրները, դպրութիւնն և ձիւրը մտքին,
զգայութեանց և հոգարտութեան ամեն վայելուածները կը տային ի-
րեն: Վարդի մը գոգը կեցող մեղուի մը պէս Բարդիւի քաղաքա-
կրթեալ աշխարհին ծաղկին վրայ նստելով, անոր հիւթերը կը
ծծէր և կատարելապէս կը զուարճանար հեշտութեամբ:

Գիւրին է ըմբռնել թէ Պ. ՏԸ Գամօր այս անթերի երանու-
թիւնը վայելելովը հետզհետէ կը յարէր այն բարոյական և կրօ-
նական վարդապետութեանց որք իրեն հայթայթեր էին զայն:
Վարժեր էր Գամօր թէ հօրը կտակն և իր յատուկ խորհրդածու-
թիւններն իրեն յայտներ էին բարձր մարդերու ճշմարիտ աւետա-
րանը: ամեն օր ինքնին կը հաստատէր այս կարծիքը, և այն ա-
ւետարանին օրինաց հակառակ վարուելու դրուումն ևս քան զևս
կը տկարանար: Սակայն զինքն իր դրութենէն հեռացնել կոցող
բոլոր շեղումներուն մին անշուշտ միւսներէն աւելի կը գրգռէր
իւր հակակրութիւնը, և այս շեղումն էր ամուսնութիւնը: Ինքնին
տեսակ մը յիմարութիւն ըրած պիտի ըլլար եթէ շղթայելով
իւր աղատութիւնը զոր այնքան ախորժելի կերպով կը գործածէր
տուն տեղ մը կազմելու, կնկանը հետ ընչից և պատուոյ ընկե-
րութիւն հաստատելու և հարկաւ հայր ըլլալու խոչընդոտնե-
րուն, ձանձրոյթներուն, ծիծաղելի վիճակին և վտանգներուն
իսկ ձրիաբար ենթարկէր ինքզինքը:

Ուստի շատ քիչ տրամադիր էր խրախուսելու այն մայրական
յոյսերը որոնց մէջատենօք տիկին ՏԸ Թեքլը թաղած էր իր սէ-
րը: Ասկից ՚ի գատ Գամօր կը կարծէր վարուել կերպով մ'որով ծաղ-
կահաս կինն այս մասին ամենեւին սին յոյս չպիտի ունենար:
Շատ զանցառութիւն ունէր Բեօյեիյի կալուածքին նկատմամբ.
ամեն տարի հաղիւ երկու կամ երեք շաբաթ հոն կը բնակէր այն

միջոցին ուր ընդհանուր ժողովին նիստերը զինքը դաւառը կը
հրաւիրէին: Իրաւ է որ այս կարճատե երևումներուն ժամանակ
տիկին ՏԸ Թեքլի և Տէ Բամօրի նկատմամբ ակնածական երախ-
տագիւտութեան մ'ամեն պարտաւորութիւնները կը կատարէր պար-
ծելով, բայց այնքան ցուրտ կերպով խոյս կրտար անցելոյն ակն-
արկութիւններէն, այնքան խղճահարութեամբ կ'զղուշանար մտեր-
մական խօսակցութիւններէ, վերջապէս օրիորդ Մարիին հետ այն-
պիսի անտարբեր քաղաքավարութեամբ մը կը վարուէր որ ալ ա-
ռանց կասկածի կը հաւատար թէ՛ էգ սեռին փոփոխամտութեան
օղնութեամբն՝ օրիորդ Մարիին մատղաշ մայրն իր տղայական
ցնորներուն հրածեշտ տուած է:

Մեծ էր իր սխալը: Եւ հոս կրնանք նշմարել թէ անզոյ և
արհամարհօտ սկեպտիկեանները ճիշդ անփորձ պարզամիտներուն
չափ սխալ դատողութիւններ և սխալ հաշիւներ կ'ընեն այս աշ-
խարհի մէջ: Պ. ՏԸ Գամօր շատ կարեւորութիւն կրտար այն ա-
մեն բաներուն զոր կնային մտքի փոփոխականութեան վրայ գրած
են մատնուած սիրահարներ, և թերևս ստուղիւ մատնուելու ար-
ժանիներ, և կամ այնպիսիներն որք դժգոհ եղեր են տեսնելով
թէ իրենց սիրային նպատակը խափանող արգելք ունեցած են:
Ճշմարիտ խօսելով՝ կիններն ընդհանրապէս նշանաւոր են իրենց
զաղափարներուն յարատեւութեամբն և զզոյումներուն հաւատար-
մութեամբը: Ընդ հակառակն սրտին անհաւատարմութիւնը մար-
դուս յատկութեանց մին է. բայց մարդս կը պահէ զայն և իր
ստացուածքէն զրկուողի մը պէս կը գոչէ երբ կին մ'այն հաւա-
տարմութիւնը իրեն յատկացնէ կուուելով:

Այս տեսութեան նորանշան խօսք մը չըլլալը կրնաս հաստա-
տել եթէ ուզես խորհիլ համբերատար, սովորն, անբուժարարելի
անձնուիրութեամբ մը գործուող այն սքանչելի քաջութիւններու
վրայ որք ամեն օր ժողովրդային դասուն կիններուն մէջ կը տես-
նուին, այս կիններուն բնաւորութիւնը՝ թէ և կոշտ՝ բայց նոր և
անկեղծ կրմայ: Վերին դասու կիններն ալ ունին այս բնաւորու-
թիւնը, թէ և ասի ասպականուած ըլլայ զինքը պաշարող տենչան-
քէն և զրգիւններէն, և շատ անգամ տեսնուած է որ այս վերին
2

գասու կիներն իրենց կեանքը բոլորովին խորհուրդի մը կամ սիրոյ մէջ փակեր են : Անոնց կեանքը չունի մեզի շեղող և միջթարող հազարուակի խտորումները և անոնց եռանդը զրոգող գաղափարն անշարժ գաղափարի դիւրաւ կը փոխուի : Կիներն առանձնութեան ատեն, բազմութեան մէջ, կարգալու, գործելու, քնելու, աղօթելու ատեն, վերջապէս ամեն պարագայի մէջ այն գաղափարին ետևէն կ'երթան, անով կ'ապրին և անով կը մեռնին :

Տիկին Տը Թեքլը տարիէ տարի ահա այսպէս անայլայլելի եռանդով յարատեւած էր իր նպատակին մէջ որ էր իր սիրտը կէս առ կէս զբաղող երկու անարատ սէրը միաւորել և խառնել աղջիկը Պ. Տը Գամօրին հետ կարգելով, և երկուքին ալ երջանկութիւնը կազմելով : Այս նպատակը երկնելէն 'ի վեր' որ իր հոգիին պէս սրբաւէտ և սիրասուն հոգիի մը մէջ կրնար ծնիլ՝ աղջկանը դաստիարակութիւնն էր կենացը հեշտալի վէպն եղած էր : Անընդհատ այս դաստիարակութեան վրայ կը մտախոհէր : Երբ իր թարթափուն և մեծ աչքը ծառերուն տերևներուն մէջ կամ երկնից մէկ խորշը կը նայէր ակնայեռ, կրնայիբ հաւատսփ ըլլալ թէ ներս այս նայուածքը հոն առաքինութիւն մը կամ նոր շնորհ մը կը փնտռէր որպէս զի անով կարենայ աղջիկը զարդարել իր տեսլական նշանածին, Գամօրին համար : Տիկին Տը Թեքլը իր գիտաւորութեանց վիպային մասին հետ ծանր և դրեթէ կրօնական մտահոգութիւն մ'ալ կը խառնէր մտքին մէջ : Թէև չէր գիտեր, թէև չէր կասկածեր անգամ թէ Գամօրի բնաւորութիւնն ամբարշտութեամբ լի անդունդներ ունի, բայց և այնպէս բաւական կը հասկնար թէ երիտասարդ կոմսն ինչպէս նաև իր ժուռանակի մարդկան շատերը, սկզբունջով բեռնաւորուած չեն շատ : Բայց կը կարծէր թէ մեր ընկերային վիճակին մէջ կանանց վերապահուած պաշտօններուն մին է իրենց էրիկը բարոյապէս վերանորոգել պատուակիր հոգւոյ մը մտերմութեան, ընտանեաց զգացումին, ընտանեկան հարկի քաղցր պարտաւորութեանց աղբջութեամբը : Ուստի տիկին Տը Թեքլը իր աղջիկը սիրուն և հրապուրելի կին մ'ընելով հանդերձ կ'ուզէր պատրաստել զան այն բարձր պաշտօնին զոր անոր կը սահմանէր, և հետևաբար ոչինչ

զանց կ'ընէր Մարին զարդարելու համար այն յատկութիւններով զոր կը պահանջէ այն պաշտօնը :

Ինչ յաջողութիւն ունեցեր էին իր խնամքն ու հոգերը : Այս պատմութեան շարունակութիւնը պիտի պատասխանէ այս հարցման : Առ այժմբաւ է իմացնել ընթացողին թէ Մարի Տը Թեքլը այն ատեն խիստ հաճելի տեսքով մատղաշ անձ մ'էր որու փոքր ինչ կարճ իրանը լաւ տեղաւորուած էր քիչ մը բարձր աղբրերու վրայ : Գեղեցիկ չէր, բայց ծայրայեղապէս շնորհալի, կրթուած, մայրին պէս նրբամիտ էր և անորմէն աւելի կայտառ դնացք մ'ունէր : Օրիորդ Մարի այնքան նրբամիտ էր իսկ որ մայրը կը վախնար որ թերևս չգիտենք ինչպէս արդէն իմացած է իրեն վերաբերող գաղտնիքը, որ էր ամուսնութեան նպատակը : Երբեմն Մարի Տը Թեքլը Պ. Տը Գամօրին վրայ շատ կը խօսէր, երբեմն բաւական չէր խօսեր և խորհրդաւոր հովեր կ'առնուր երբ ուրիշներն անոր վրայ կը խօսէին : Տիկին Տը Թեքլը քիչ մը կը զարմանար այս այլանդակութեանց վրայ : Կոյնպէս մերթ ընդ մերթ կը վրդովուէր նաև Պ. Տը Գամօրին ընթացքէն և իր խիստ զգոյշ դիրքէն : Բայց երբ մարդիկը կը սիրես, անոնց նպատաւոր կերպով կը մեկնես անոնց ամեն ըրածները կամ չըրածները, և տիկին Տը Թեքլը յօժարակամ կը կարծէր թէ Գամօրին երկբիմի կերպսն ասպետական ուղղասիրութեան մը ներշնչումներէն կը հետևին : Արկարծէր թէ կը ճանչէ կոմսը, ուստի իրեն բաւական բնական կ'երևար Գամօրին մինչև յետին ժամը, մինչև վերջնական որոշումն զգուշանալն այն ամեն բաներէն որք կրնային կասել զինքը, հասարակութեան վայրահաշուութեան տեղի տալ, մօրն ու աղջկան հանգստութիւնը վտանգել : Ասկից 'ի զատ այն մեծ հարստութիւնն՝ որ օրիորդ Տը Թեքլին խոստացուած կ'երևար՝ թերևս Գամօրին խղճահարութիւնը կ'աւելցնէր՝ անոր հպարտութիւնը վրդովելով : վերջապէս կոմսին ուրիշի մը հետ չկարգուիլը բարեգուշակ պարագայ մ'էր, և իր պզտի նշանահին հաղիւ ամուսնութեան հասակը կը մտնէր : Ուրեմն յուսահատութեան պատճառ մը չկար ամենեւին, և մօտալուս օրերէն մին Պ. Տը Գամօր կրնար ներս ոտքն ընկնիլ և ըսել . « Տմբ

ինչ աղջիկդ՝ Եթէ Աստուած չէր ուզեր որ այս զմայելի երեսն երբէք գրուի ներս ճակատագրին զրքին մէջ, եթէ ստիպուէր ուրիշի մը տալ իր աղջիկը, խեղճ կինը կ'ըսէր իւրովի թէ գէթ կորսուած չպիտի ըլլային զաւկին վրայ գիշեր ու ցորեկ տարած հոգն ու խնամքը, և թէ սիրելի աղջիկն անոնց շնորհիւ միշտ լաւագոյն և աւելի երջանիկ պիտի ըլլար:

Կունը չէր կրնար երեւակայել թէ որքան աւելի արագութեամբ կը սահէին կ'երթային այն երկար ամիսներն որք տիկին Տը Թեքլի համար միայն մէկ գաղափարով և կանոնաւոր կեանքի մը քաղցր միաձուլութեամբը լեցուած կ'անցնէին Պ. Տը Գամօրին տարեկան առջի երեւումէն մինչև յաջորդ երեւումը: Երիտասարդին այնքան գործունեայ և բազմադրադ կեանքն իսկ վիշեր կը փորէր և գաւթեր կը դնէր իր ժամանակաւոր ուղևորութեանց ամեն մէկին մէջ. սակայն հինգ օտարիէն ետք տիկին Տը Թեքլը տակաւին ինչոքինքը կը գտնէր միշտ այն օրը, որու նախորդ գիշերը, սիրելի և աղետալի գիշերն իր երազը սկսած էր: Այն ժամանակէն ՚ի վեր ոչ խորհուրդն ընդհատուած մը, ոչ իր սիրտը դատարկութիւն մ'է ոչ իր ճակատը խորշով մ'ունեցաւ երբէք: Իր երազն իրեն պէս նոր մնացեր էր:

Օրերը թէև հանդարտօրէն և արագօրէն կը յաջորդէին իրարու, բայց և այնպէս տիկին Տը Թեքլը անհամբերութենէ և վրդովումէ ազատ չէր մնար ամենեկին երբ Պ. Տը Գամօրը գաւառը կանչողեղանակին մօտիւր կը տեսնէր: Քանի որ կը մեծնար իր աղջիկը, մօրն ևս քան զևս մտառամլութիւն կը պատճառէր այն սպաւորութիւնը զոր պատանու հին պիտի ընէր կոմսին մտքին վրայ, և տիկին Տը Թեքլը աւելի սաստիկ կ'զղար պարագային հանդիսաւորութիւնը: Ինչպէս որ արդէն իմացուցինք կերպով մը, օրիորդ Մարի նրբամիտ շուտիկ մ'ըլլալով կրցած էր նշմարել թէ իր գորովագութ մայրը սովորաբար գաւառական ընդհանուր ժողովին նիստերուն եղանակին կ'սպասէր իրեն նորանոր խոյրեր հաղցնելու և փորձելու համար: Ճիշդ այն տարին՝ ուր վերստին սկսանք մեր այս պատմութիւնը՝ սոյն առթիւ տեղի ունեցած էր պզտի տեսարան մ'որմէն ոչ այնքան ախորժած էր տիկին Տը Թեքլը:

Արդ՝ տիկին Տը Թեքլը օրիորդ Մարիին նոր խոյր մը հաղցնելու փորձը կ'ընէր այն տարին: Մարիին մազերուն մէջ՝ որք խիստ գեղեցիկ և խիստ սև էին՝ քանի մը հետ և այլանդակ խոսրոպիկ կար որք յուսահատութիւն կը տային մօրը. ասոնց մին մանաւանդ՝ ինչ որ ալ կարենայիր ընել՝ դարձեալ չէր հնազանդեր, յամառութեամբ սանդղէն և ժպաւէններէն դուրս կը ցցուէր, դէպ ՚ի ճակատը խոյս կը տար և հոն աղվարար վարդի ձևերով կը փթթէր: Տիկին Տը Թեքլը վերջապէս գտած էր — գէթ ինքն այնպէս կը յուսար — ժպաւէններու կարողագրութիւն մ'որ ստուգիւ կը բռնէր այն անհնազանդ խոսրոպիկն առանց բռնել ձևացնելու:

— Հիմա, յիրաւի կը հաստատվէ այդ խոսրոպիկն ալ պիտի չչարժի տեղէն, ըսաւ Տիկին Տը Թեքլը հառաչելով և քիչ մը հեռանալով որպէս զի իր ըրած գործին նայի ակնապիշ:

— Հաստ մի հաստար, սիրելի մայրս, ըսաւ օրիորդ Մարի, որ սովորաբար կը ինչոք և որու միտքը քիչ մը կատակասէր էր, շատ մի հաստար . . . : Այժմէն կը սեսնեմ թէ ինչ տեղի պիտի ունենայ . . . : Չանդակը կը զարնուի . . . կը վազեմ . . . խոսրոպիկն քակուելով կը ցայտէ . . . Պ. Տը Գամօր ներս կը մտնէ . . . մայրս անհանգիստ կ'ըլլայ . . . : Պատկեր:

— Ա՛ռզէի զիտնալ թէ Պ. Տը Գամօր ինչ գործ ունի ատոր մէջ, ըսաւ խոսիւ տիկին Տը Թեքլը:

Աղջիկն իր վիզը նշտուելով, և անդ լիարէն խօսելով,
— Nothing! (ոչինչ) ըսաւ:

Երբեմն օրիորդ տը Թեքլը Պ. Տը Գամօրին վրայ խօսելու ատեն դառն հեգնութեան ձև մը կը գործածէր. մեծ մարդը — երևելի անձը — մերձակայ աստղը — այս անտառներու հիւրերուն չնաշխարհիկը — կամ պարզապէս — իշխանը կ'անուանէր զան:

Այս նշանները ծանրութիւն մ'ունէին որ տիկին Տը Թեքլին ուշադրութենէն չէր վրիպեր: Իրաւ է որ իշխանին առջև անտիական աղջիկն իր զուարթութիւնը կը կորուսէր, բայց ուրիշ զգոհութիւն մ'էր այս: Մայրը կը տեսնէր որ ցուրտ, անշնորհ, լքին դիւրք մ'ունի աղջիկը, թէ կարճ ու կտրուկ, նաև քիչ մը կսկծալի պատասխաններ կը տայ, կը վտխնար որ Պ. Տը Գամօր այս առերևոյթ

Հանգամանքէն խարուելով զէշ դատողութիւն կ'ընէ Մարիին վրայ:

Բայց Պ. Տը Գամօր ոչ աղէկ և ոչ գէշ դատողութիւն կ'ընէր օրիորդ Տը Թեքլի վրայ. իրեն համար սիրուն և աննշան պղտիկ աղջիկ մ'էր Մարին որուն վրայ տարին վայրկեան մը չէր մտածեր:

Այն ւտին աշխարհիս մէջ անձ մը կար որ երիտասարդ կոմսին համակրութիւնը Մարինէն աւելի կը դրողէր, և այնքան աւելի որքան չէր ուզէր ան: Այն անձն էր Տը Գանվալօն Տ'Արմէնօ մարդիկուհին, Լիւզ Տ'Աթրեիլի աղջիկը:

Զօրապետն Եւզոս: յի մէկ քանի կողմը ծաղկահաս կնկանը հետ ուղևորութիւն ընելէն ետք Բարիդի Անտօ փողոցին մէջիւր ապարանը տեղաւորած և արքայական փարթամութեամբ մը շրջապատած էր մարդիկուհին:

Չմեռուան և դարնան ժամանակ Բարիդի մէջ կը բնակէին, իսկ յուլիսի մէջ Գանվալօնի գլխուկը կ'էրթային ուր մինչև աշնան վերջը կընտտէին ճիւղութեամբ և Երբձութեամբ: Զօրապետն ամեն տարի տիկին Տը Բեքլը և իր աղջիկը կը հրաւիրէր քանի մը շաբաթ Գանվալօն դալու և հոն մնալու, վասն զի շատ խոհեմութեամբ կը խորհէր թէ ասորմէ լաւագոյն ընկերութիւն մը չէր կրնար տալ իր նորատի կնկան:

Տիկին Տը Թեքլը յօժարակամ կ'ընդունէր այս հրաւիրները, վասն զի ասովաւ ինք կ'ունենար մերթ ընդ մերթ անսնուելու Բարիդի մարդկանց ընտրեալները, որոնցմէ միշտ հեռի կեցած էր իր մօրեղբոր մուրթիւնները յարգելուն պատճառաւ: Ինքն իրեն համար խիստ անտարբեր էր անոնց հետ տեսնուելու մասին. սակայն իր աղջիկը յետին ծայր վայելչատեր և ընտրեալ անձանց այս ընկերութեան բովը մտնելով կրնար պաճուածանքի և խօսուածքի քանի մը դաւառական ձևերը ջնջել, նորաձևութեան փափուկ և խափուսիկ իրերուն նկատմամբ իր ճաշակը որոշել, վերջապէս քանի մը նոր շնորհներ վաստակել: Ծաղկահաս մարդիկուհին որ այն ատեն աշխարհային կեանքի ամենէն բարձր սահմաններուն մէջ կ'իշխէր և իբր աստղ մը կը փողփոխէր իր դրացուհին գիտաւորութեանց կ'ուզէր նպաստել: Ինքն իսկ օրիորդ Տը Թեքլին վրայ տեսակ մը մայրական համակրութիւն ունենալ կը ձևացնէր, և շատ անգամ տուած խրատներուն օրի-

նակն ալ կը տար: Իր շքեղ ձեռներովը կը զարգարէր, կը պաճուածէր, կը յարգարէր Մարին, և աս ալ փոխադարձաբար մարդիկուհին կը սիրէր, անոր վրայ կ'սքանչանար և անորմէն կը վախնար:

Պ. Տը Գամօր ևս ամեն տարի զօրապետին հիւրընկալութենէն օրուտ կը քաղէր, բայց երբէք ոչ այնքան ստէպ և երկարատև էր քաղած օրուտն որքան կը փափաքէր հիւրընկալը: Գանվալօնի մէջ շաբաթէ մ'աւելի բնակիլը հաղաւորէր էր: Մարդիկուհին Ֆրանսա վերադառնալէն ՚ի վէր Պ. Տը Գամօր պարտաւորած էր անոր և էրիկին հետ վերստին ունենալ աղաւսնի և բարեկամի մը յարաբերութիւնները. թէև կարելի եղածին չափ բնական կերպով տեսնուելու ջանք կ'ընէր, բայց անոնց հետ կը խօսակցէր տեսակ մը սրտութեամբ որ զօրապետին զարմանք կը տար, և որու վրայ ընթացողը չկրնար զարմանալ եթէ ուզէ յիշել այն թագուն և զօրաւոր սլառձառները որով կ'արդարանար Պ. Տը Գամօրին այս զգոյշ ընթացքը:

Երեսասարդ կոմսը մարդերը իրարու հետ կապող և փոխադարձ պարտաւորութեանց ներքև դնող դաշանց մեծադոյն մասին թէև հրածելա տուած էր, բայց անոնց մին այսինքն պատուոյ դաշինքը երկիւղածութեամբ պահելու զգած էր: Իր նոր կենացն ընթացքին մէջ բազմոցս քանի մը դժուարութիւն կրած էր թերևս ստուգապէս սահմանելու և հաստատելու այն միակ բարոյական օրէնքին պատուէրները զոր կ'ուզէր յարգել: Շատ դիւրին է ճշգիւ դիտնալ թէ ինչ կայ Աւետարանին մէջ. բայց նոյնքան դիւրին չէ գիտնալ թէ ինչ կայ պատուոյ օրինադրին մէջ. սակայն այս օրինադիրը գէթ կը սպարունակէր յօդուած մ'որու նկատմամբ Պ. Տը Գամօր չէր կրնար սխալիլ. կ'ակնարկենք այն յօդուածին որու տրամադրութեանցը նայելով կոմսն եթէ զօրապետին պատուոյն դէմ դաւաճանութիւն ընէր, ինքն իր առջև դրուածան և ոճրագործ ազատորդի մը պիտի դառնար: Այս ձերուսիէն ընդունած էր մտերմութիւն, սէր, ծառայութիւն, շնորհ, վերջապէս այն ամեն բաները որոնցմով մարդս ուրիշ մարդու մը նկատմամբ անբռնարարիկ պարտականութիւն մը կ'ունենայ, եթէ ստուգիւ կայ այս աշխարհիս մէջ բան մ'որ պատիւ կ'անուանի: Գամօր սաստիկ

կ'զգար այս պարտականութիւնը: Ուստի տիկին Տը Գանվալժոնի հետ անստղիւս կերպով կը վարուէր: այս վարմունքը կրկին գովեստի արժանի կը դառննք՝ նկատելով թէ բացարձակապէս արդիւլուած էր իրեն սիրել այն միակ կինը որուն Բարիզի և տիեզերքի բոլոր կիներէն աւելի Գամօրին հաճելի ըլլալը բնական բան էր:

Մարդիզուհին երիտասարդ կոմսին համար իբր արդիւնալ պտուղ աղետաբար հրապուրելի, իբր տարօրինակ դեղեցկութիւն՝ սիրագրաւ և իբր անթափանցելի սպինքս* հետաքրքրական էր հաւասարապէս:

Այն ժամանակները բոլորովին աստուածուհի մ'էր այս թարմագեղ կինը: Նրիկին անբաւ հարստութեան և անորմէ կուռքի մը պէս պաշտուէրուն շնորհիւ տեղաորուած էր ոսկեղէն ամպի մը վրայ ուր իբր իր սովորական տեղը նստած էր շնորհալի և բնական վեհափառութեամբ մը: Իր յարգ ու զարդերուն, զոհարեղէններուն, տունին, կառ ու ձիին պերճանքն անպաճոյճ շքեղութիւն մ'ունէր. այս ամեն բաներուն մէջ ճարտարուհիներու և միանգամայն ազնուական հումուհիներու յատուկ ճաշակ ցոյց կը տար: Ար կարծէիր թէ այս փառաւորութեան ճառագայթովին շնորհիւն իր անձն իրօք երկնային էակի մ'անձն է: Մեծահասակ, խարսեղազոյն, մարմնովին դիւրակոր, աչքը կապոյտ և խորունկ, ճակատը ծանրաշուք, բերանը մաքուր և անարդու կին մ'էր նէ: — Իբր տեսնէիր իր թեթև և սահուն քայլովը սրահ մը մտնելը, և կամ կառքովն անցնելը որու մէջ կիսովին պառկած կ'ըլլար թև 'ի կուրծք և մոլորադին նայուածքով, չէիր կրնար չյիշել այն անտիական անմահ գիցուհիները որոնց սէրը մահաստու էր: Մարդիզուհին ունէր մինչև անգամ զէմբի այն փոքր

* Սպինքսը ըստ առասպելաբանութեան հրէշ յիւ, և բանաստեղծներու կարծեացը նայելով հսկի թռտի և կուրծք, առիճի մարմին և արձիտի թռտի րանէր այն: Այս հրէշը հոսեւսիներ կ'առաջարկէր և պանտի չգտալայնները կը ճնշարէր:

ինչ անագորոյն և վայրենական գրոշմը զոր հին ժամանակուան քանդակագործներն իրենց դերբնային տեսիլքին մէջ յանկարծ ըմբունք էին անշուշտ, և որու համեմատ շինեցին իրենց ոլիմպիական մարմարակերտներուն աչքերը և շուրթերը: Իր թևերն և ուսերը՝ որոնց ձևն անթերի էր՝ անհպելի լեռները ծածկող վարդազոյն և անարատ ձիւնով շինուած կերևային: Աերջապէս հոյակապ և զմայելի էր տիկին Տը Գանվալժոն:

Բարիզի հասարակութիւնը կը յարգէր այս կինը ու միանգամայն կ'արանչանար վրան, վասն զի ծեր էրիկի մը մատղաշ կինն ըլլալու դժուարին դերին մէջ որ և է չարախօսութեան տեղի չէր տար: Առանց արտաքոյ կարգի ջերմեռանդութեան սեթևեթը ունենալու մարդիզուհին կրնար իր աշխարհասիրական պերճութեանց հետ նաև զթասիրական խնամակալութիւնները և բարեսպաշտական վայելչադրութեան ամեն բարձր գործերը կատարել: Իր որսին հսկողի մը պէս անոր վրայ մտաւոր հսկող տիկին Տը Լա Բօշ-ժիւկան անգամադէկ վկայութիւն կը տար անոր համար և իր աշուշտ և քան զեւ արժանի կը սեպէր այս կինը: Պ. Տը Գամօր՝ որ ինքն ևս ակամայ կը դիտէր մարդիզուհին եռանդազին հետաքրքրութեամբ մը՝ մօրաքոյրին և հասարակութեան գաղին հետաքրքրութեամբ մը կը միտէր հաւատալ թէ նորատի կիպէս ընդհանուր կերպով մը կը միտէր հաւատալ թէ նորատի կինը խղճի մտօք կը կատարէ իր փափուկ դերը, և թէ իր զոհուած պատանութեան, սրտին և գեղեցկութեան բաւական փոխարինութիւն մը կը զանէր իր կենաց փառաւորութեանն և իր հպարտութեան գոհունակութեանցը մէջ: Սակայն կոմսն անվտաղ հումութեան տրամագրութիւն ունէր՝ միտքը բերելով անցելոյն ինչ ինչ յիշատակները, և միանգամայն ինչ ինչ այլանդակութիւններ զոր կերեւակայէր թէ կը նմարէ դեռահաս կնկան կերպերուն մէջ:

Ապին ժամը ուր՝ յիշելով այն ամեն անդունդները և բոցերը զոր ատենօք ընդնշմարած էր այս սրտին յատակը, կը գրգռէր կոսկածելու և իւրովի բուելու թէ արտաքուստ հանգարտ այս կերպարանքին ներքև ամեն փոթորիկներն և թերևս ամեն ապականութիւնները կային: Իրաւ է որ նէ իր հետ չէր վարուեր ճիշդ այնպէս ինչպէս կը վարուէր ամենուն հետ: Իրենց յարաբե-

բուժեանց հանգամանքը մասնաւոր խտրութիւն մ'ունէր. կ'ակնարկենք այն տեսակ մը ծածուկ հեղնութեան որուն ձեն ոչ յիշուիլէ աչմոռցուիլ ուղղուելու անձանց մէջ կը հաստատուի ստեպ :

Պ. Տը Գամօրի լեզուն կենցաղագիտութեամբ և յարդանօր կը մեղմէր այս խտրութիւնը, իսկ նորատի կիներ երբեմն դառնութեամբ անգամ կը շեշտէր զայն : Կոմսը մերթ ընդ մերթ կ'երևակայէր իսկ թէ մարդիկուհիին այս վարմունքին նճրքն պըտասիրական սլաք մը կ'զգայ, և այն ցուրտ ու անխռով գեղուհիին այս զրդիուն որքան ալ անորոշ ըլլար, ահեղ և միտնշամայն խորհրդաւոր կ'երեւար իրեն : Այս ահեղութիւնն և խորհրդաւորութիւնը հրապոյր և վերջուպէս կը տային Գամօրին :

Ահա այս վիճակի մէջն էին երկուքն ալ, երբ Պ. Տը Գամօր՝ սեպտեմբերի առջի օրերը Գանձալոյնի ապարանն անցունելու համար սովորութեանը համեմատ եկած ըլլալով հոն հանդիպեցաւ տիկին Տը Թեքլին և իր աղջկան : Երիտասարդին այն տարի հոն դալ բնակիլը ցուալի եղաւ տիկին Տը Թեքլին համար : Ներսիսա հոգեւորութիւնը կը տկարանար և իրիցձը կ'սկսէր վերջուպէս : Իրաւ է որ մտքով իր յայտերուն յետին պայմանաժամ գրած էր այն օրն ուր իր աղջիկը քսան տարին լրացուցած պիտի ըլլար. արք՝ Մարին տակաւին տասնութ տարեկան էր. բայց՝ ինչ և է՝ այս աղջիկն արդէն ուղղունք եղեր էին, տարաձայնութիւնը բազմիցս կարգած էր զան, Պ. Տը Գամօր չէր կրնար չլսած ըլլալ այս շուքները որք նահանգին մէջ կը շրջէին, այլ սակայն կը լուէր ան, իր ընթացքն անփոփոխ կը մնար. ըսել կ'ուզենք թէ երիտասարդը տիկին Տը Թեքլի հետ ծանրաշուք բարեկամութեամբ և Մարին հետ ալ սառնահար անհոգութեամբ մը կը վարուէր, թէ և այս պատահուհին մայրական գեղեցիկ աչեր և զսպուած խոսքով մը ունենար :

Պ. Տը Գամօր ուրիշ մաստանջութիւններ ունէր որք տիկին Տը Թեքլին մտքէն իսկ չէին անցներ : Տիկին Տը Գանձալոյնին կոմսին նկատմամբ ընթացքը՝ անոր զայլուստէն ՚ի վեր՝ հեղնական յարձակումի աւելի յայտնի դոյն մ'առած կ'երևար : Պաշտպանողական դիրքն երբէք ակտիւ չէ մարդու մը համար, և Գա-

մօր այս դրքին մէջ ամենէն աւելի անձարակ ըլլալը՝ կ'զգար, վասն զի ամենէն քիչ սովորած էր այսպիսի կացութեան մը : Ուստի պարզապէս որոշեց շուտով մեկնիլ Գանձալոյնի գեղակէն :

Կեկնեղէն օր մ'առաջ երեկոյեան ժամը հնդկն ատենները մինչդեռ իր պատուհանին առջև կենալով՝ պարտիզին ծառերուն վերնէն ձորին վրայ դիզուող կապտադոյն մեծածաւալ ամպերուն կը նայէր, լսեց ձայնի մը հնչիւնը որ զինքը սաստկապէս յուզելու յատկութիւնը ունէր :

- Պարնն Տը Գամօր :
- Տեսաւ որ իր պատուհանին տակ մարդիկուհիին կեցած էր :
- Քիչ մը պտոյտ կ'ընես, շարայարեց մարդիկուհին :
- Գամօր բարև տուաւ և իսկոյն իջաւ :
- Երբ հասաւ անոր քով,
- Սաստիկ տաք է, այնպէս չէ : Պարտիզին մէջ պտոյտ մը ալիտի ընեմ, և քեզի հետս կը տանիմ, ըսաւ տիկին Տը Գանձալոյն :
- Երիտասարդը քանի մը քաղաքավարական խօսքեր մը մտայ, և ապա սկսան քով քովի քայլել պարտիզին շրջանաւոր ծառուղիներուն մէջէն : Նէ կը յառաջէր արագասահ քայլով մը, իր տարօրինակ վեհափառութեամբը, դիւրակոր մարմնովը, ուղիղ և փոքր ինչ բարձրադիր գլխովը, որ փեղոյր մ'ունէր. իր ետէն մանկլախի մը կը փնտուէր, բայց մանկլախի չկար, և իր կապտադոյն երկայն րօպան (մարդիկուհին շատ քիչ անգամ կարճ շրջագետտ կը հագնէր) աւալին և չորաբեկ տերևներուն վրայ կը քսուէր ճզմուած մետաքսի նուագաւոր և կանոնաւոր ձայնով մը :
- Թերևս անհանդիսս ըրի քեզի, կրկնեց մարդիկուհին պահ մ'ետք : Ա՛րբը պատուհանին առջև ինչ կ'երազէիր :
- Ոչինչ . . . փոթորիկին կը նայէի որ կը հասնի մեզ :
- Բանաստեղծ կը դառնաս, բարեկամ :
- Բանաստեղծ դառնալու պէտք չունիմ, վասն զի բոլորովին բանաստեղծ եմ . . . :
- Չէի կարծեր . . . : Աղղը անսպանաւ պիտի մեկնիս :
- Անյատնա :

- Ինչո՞ւ այդքան շուտ :
- Հոն գործեր ունի՞մ կարգադրելու :
- Լա . . . բայց Վաթրոն . . . Վօթրոն — անունն ալ մտցայ — հոն չէ :
- Վօթրո՞ Գամօրին քարտուղարն էր :
- Վօթրո ամեն բան չլինար ընել, ըսաւ կոմսը :
- Ա՛հ, կարգն է ըսելու թէ Վօթրոյ բաւական անհամ կ'ե-
րեայ ինձ :
- Նաև ինձ . . . բայց հին բարեկամուհիս՝ տիկին Տույլեի-
յէն իբր փիլիսոփայ և Տը Լա Բօշ-Ժիւկան մօրաքոյրէս ալ իբր
կըրեանոցի վաղեմի աշակերտ ինձ յանձնուած է ան :
- Ի՛նչ տխմարութիւն :
- Ասկից 'ի զատ, կրկնեց Գամօր, կրթուած է Վօթրո, և
գեղեցիկ զիր ունի :
- Հապա դուն :
- Ի՛նչ կը նշանակէ այդ «հապա դուն» :
- Գուն ալ գեղեցիկ զիր ունի՞ս :
- Ունենալս ցոյց պիտի տամ քեզ երբոր ուզես :
- Իբ՞ա : Եւ ի՛նչ պիտի գրես ինձ :
- Անկարելի է երեակայել թէ մարդիկուհին որքան բացարձակ
անտարբերութեան և անարդու հեղնութեան ձևով մ'այս անհեղեղ
արամախօսութեան կը դիմանար առանց բնաւ իր քայլը մեղմելու,
առանց բնաւ իր բանակցին նայելու անդամը, և առանց երբէք
իր գլխին սէզ և ուղիղ զիրքը փոփոխելու :
- Արձակ . . . կամ ոտանաւոր, ինչպէ՞ս որ հաճիս, ըսաւ
Գամօր :
- Ա՛հ, ուրեմն ոտանաւոր ալ շինել զիտես :
- Երբոր խանդ ունենամ :
- Եւ երբ կ'ունենաս խանդ :
- Ընդհանրապէս առտուները :
- Եւ հիմա զիշեր է . . . ատի ազնիւ պատարխան մը չէ
ինձի համար :
- Գուն, տիկին, խանդս վառելու ըստհանձնարարութիւնը չու-
նիս, կարծեմ :

- Բայց ինչո՞ւ չէ : Երանութիւն և պարծանք մ'էր ինձ
խանդ վառելս . . . :
- Մարդիկուհին յանկարծ կանկ առած էր նեղսուուակի մը վրայ
նետուած գեղջական կամիջի մ'առջև :
- Հոն ինչդնել ուզելս զիտես, հարցոց Գամօրին՝ կամուրջը
ցոյց տարով :
- Չէ, չդիտեմ, պատասխանեց կոմսը :
- Ուրեմն ամենեւին բան մը չդիտես դուշակել : — Ա՛ուղեմա-
րուեստական ժայռ մը դնել հոն, բարեկամ :
- Ինչո՞ւ բնականը չդնես, տիկին : Եթէ ես հոն ըլլայի՛ բնա-
կան ժայռ մը կը դնէի :
- Արուեստական ժայռ մը դնել ուզելս դադափար մ'է, ըսաւ
մարդիկուհին նորէն քայլելով և կամուրջէն անցնելով — բայց յի-
րաւի երկինք կ'որոտայ . . . : Որոտումը շատ կը սիրեմ զիւղին
մէջ . . . հապա դուն :
- Ես, Բարիկի մէջ նախամեծար կը համարիմ որոտումը :
- Ինչո՞ւ համար :
- Վասն զի չեմ լսեր :
- Երեակայութիւն չունիս ամենեւին :
- Ունիմ, բայց կը զսպեմ :
- Շատ կարելի է : Ատակած ունիմ թէ . . . յատկութիւն-
ներդ կը պահես ընդհանրապէս . . . և մասնաւորապէս իղմէն :
- Ինչո՞ւ քեզմէ պահեմ յատկութիւններս :
- «Պահեմ» զի զմայլելի է . . . : Ինչո՞ւ : — Վասն զի կը
դիտես . . . վասն զի չես ուզեր զիս շրջանել . . . վասն զի
հանդստութեանս հոգը կը տանիս . . . : Արհատտեմ քեզ թէ
յիրաւի շատ բարեսիրտ ես . . . : Բայց ի՛նչ է ասի. անձրև կը
դայ ահա :
- Անձրևի մեծ կաթիլներ իբր կ'սկսէին չըմրախ (crépiter)
տերևներուն մէջ և ծառախիլ ծառուղիին գեղին աւաղին վրայ .
մութն ևս քան զէս կը տիրէր, և յանկարծաշունչ քամիներ ծառե-
րուն կատարները կը ձուէին :
- Պէտք է ետ դառնալ, ըսաւ ծաղկահաս կինը, օգն իբր
կ'արուի :

Եւ սկսաւ դէպ ՚ի դղեակն երթալ քիչ մ'աճապարումով. բայց քանի մը քայլէն ետք սպիտակ փայլակ մ'անոնց դլխուն վերեն ամպը ճղքեց յանկարծ: որոտումի աղմկալի դղրդիւն մը լսուեցաւ, և անձրևի հեղեղ մը տեղաց դիւղին վրայ:

Բարեբաղդաբար հոն մտա տեղ մ'ապաւէն մը կար ուր կըցան նետուիլ մարդիզուհին և իր ընկերը: Այս ապաւէնն աւերակ մի էր որ պարտիզին իբր զարդ պահուած էր, և որ հին դղեկին մատուոն էր ատենօք: Գիւղական եկեղեցիի մը տարածութիւնը ունէր այն. պատերն աներևոյթ եղեր էին բաղեղի թանձր ծածկոցի մը ներքև. տանիքին վրայ թուփեր բուսեր էին, և աւերակին չորս կողմը բունող և անոր շուք տուող ծառերուն ոստերուն հետ կըխառնուէին: Ալատաղձ չկար հոն. յարկի մնացորդով մը ծածկուած էին միայն եկեղեցիին դասն և այն վայրն ուր խորանը շինուած էր ատեն մը: Հոն սայլակներ, բահեր, հողասանտրեր (râteau) և ուրիշ ամեն տեսակ գործիներ կըխռնէին, զոր պարտիզպանները սովորութիւն ունէին անկէ առնելու: Մարդիզուհին վազելով այս խառնաշփոթ բաներուն միջևը, այս նեղ տեղն ապաւինեցաւ, և ընկերն ալ իր ետևէն դնաց:

Սակայն փոթորիկն ևս քան զէս կըսաստկանար. անձրևը չորս հինուփուտ պատերուն մէջուղխօրէն կըտեղար հին դառնից ցած գետինը ողողելով. փայլակներն իրարու կը յաշորդէին դրեթէ անընդհատ, և շերթ շնդ մերթ գմբեթէն խիճ ու կրի բեկորներ զատուելով պղտի դասին քարայտականերուն վրայ կ'ընկնէին և կը փշրուէին:

— Ասի ինծի համար շատ զեղեցիկ բան է, ըսաւ տիկին Տը Գանվարն:

— Նաև ինծի համար, ըսաւ Գամօր աչքը վեր ընելով և նայելով դէպ աւերուն գմբեթը որ կիսովին կը պաշտպանէր գանոնք. բայց շիտակը չլիտեմ թէ արդեօք հոս ապահով տեղ մ'է:

— Եթէ կը վախնաս, դնա գուն, ըսաւ մարդիզուհին:

— Քեզի համար կը վախնամ:

— Գործեալ կ'ըսեմ թէ շատ բարեսիրտ ես:

Ապա իր փեղոյրը հանց և թաթպանովը սկսաւ հանդարտօ

բէն սրբել՝ անձրևի քանի մը շիթերը վրայէն ջնջելու համար:

Պահ մը լուռ կենալէն ետք յանկարծ վեր ըրաւ իր հողանի գլուխը, և Գամօրին արձակելով այն խորունկ նայուածքներուն մին որք մարդս ահարկու հարցումի մը կը պատրաստեն,

— Բարեկամ, ըսաւ, եթէ ապահով ըլլայիր թէ այս զեղեցիկ փայլակներուն մին մինչև մէկ քառորդ պիտի մնայնէ քեզի. . . ինչ կ'ընէիր:

— Բայց, սիրելիդ իմ, ըսաւ Գամօր, բնականապէս. . . մնաս բարեալ կ'ըսէի քեզ:

— Ինչպէս:

Գամօր ինք ևս ծաղկահաս կնկան նայելէն ետք, ըսաւ.

— Գիտես որ կան վայրկեաններ ուր կըդրդուիմ քեզի շուտիկ մը կարծելու:

— Իրաւ կ'ըսես: Լաւ, ուրեմն կան վայրկեաններ ուր ես ալ ատոր հաւատալու կը դրդուիմ. օրինակի աղաղաւ, այս վայրկենիս գիտես ինչ կուզէի: Ա՛րդէի ձեռքս պատրաստ ունենալ շանթը. . . և երկու բոպէ ետք մեռած կ'ըլլայիր:

— Ասն զի:

— Ասն զի կըլիշեմ. . . կըլիշեմ թէ մարդ մը կայ որուն ուղեցի նուիրուիլ, և որ մերժեց զիս. . . թէ այն մարդը կենդանի է. . . և թէ կենդանի ըլլալն անհաճոյ է ինձ քիչ մը. . . շատ. . . սաստիկ կերպով:

— Անկատակ կը խօսիս, տիկին, կրկնեց Գամօր՝ բան մ'ըսելու համար:

Մարդիզուհին սկսաւ խնդալ:

— Յուսամ թէ չես հաւտար, ըսաւ նէ: Այդքան չարսիրտ չեմ. . . : Վատակ մ'է ըսածս, և կըհաւանիմիսկ թէ անհամ կատակ մ'է. բայց հիմակ անկատակ կըհարցնեմ քեզ, պարոն և բարեկամ, ինչ կարծիք ունիս իմ վրայ. ինչ կին կըկարծես որ եղած ըլլամ փորձառութեամբ:

— Ա՛րդնո՞ւմ թէ ամենևին չգիտեմ:

— Ենթադրենք թէ շուտիկ կին մ'եղած ըլլայի, ինչպէս քիչ մ'առաջ ենթադրելու պատիւը ըրիր ինձ, կը կարծես թէ դուն

մատ ունեցած պիտի չըլլայիր իմայդ փոփոխութեան մէջ: Չկարծեմ թէ կիներուն կեանց մէջ կայ վճռական ժամ մ'որ անոնց հողոյն մէջ նետուած յողի բողբոջ մը կրնայ սոսկալի կերպով աճիլ և ուռճանալ, թէ քեզի դէմ եթէ մահաբեր հրեշտակի մը զգացումները ունենայի, ոչ այնքան կը մեղադրուէի . . . և թէ վարձարութեան մ'արժանի եմ՝ քանի որ եմ ինչ որ եմ հիմա, այսինքն բարի կին մը, խիստ պարզ կ'լին մ'որ շատ կը սիրէ քեզի . . . փոքր ինչ օխտակութեամբ մը . . . և որ՝ վերջապէս կը մաղթէ որ ամեն տեսակ երջանկութիւններ ունենաս այս և հանդերձեալ աշխարհի մէջ. ըսէ, միթէ չհաւատաս այս ըսածներուս . . . : Բայց չէ, մի պատասխաներ, շփոթութիւն մ'է պատասխանել, և շփոթիլը անօգուտ է:

Տիկին Տը Գանվալօն դուրս ելաւ իր սրտսպարանէն, և դնաց երեսը դէպ 'ի բաց երկինքն ուղղեց՝ կարծես տեսնելու համար թէ փոթորիկն ինչ վիճակի մէջ է:

— Լմեցաւ, ըսաւ ապա: Մեկնի'նք:

Այն ատեն նշմարեց թէ աւերակին վարի մասը պարզապէս ջուրի և սղմի լճի մը փոխուած է. ատրպայունքուն դասին աստիճաններուն եզրը կանկ առաւ և սղտի ազդողով մ'արձակեց:

— Ինչպէս անցնինք, ըսաւ իր թեթե մուճակներուն նայելով:

Ապա դէպ 'ի Գամօր դառնալով, ըսաւ.

— Պարոն, գնա՛ նաւակ մը գալի'ր:

Գամօր ինքն անգամ պահ մը նահանջեց չհամարձակելով ոտքը դնել ճարպուտ տղմին և մնայուն ջուրին մէջ սրով մատուռին բոլոր դառիթը լեցուած էր:

— Հաճէ՛ քիչ մը սպասել, ըսաւ. երթամ, կօշիկ, սանդալ, կամ օւրիշ բան մը գտնեմ:

— Աւելի պարզ միջոցը կ'սց, ըսաւ մարդիզուհին յանկարծական որոշումի շարժումով մը: Զիս շալիելով մինչև դուռը տար:

Եւ՝ առանց սպասելու երկտասարդին պատասխանին՝ սկսաւ իր միջազգեստներուն ծայրերը հաւքակ ամենայն ուշադրութեամբ, և երբ լմեցաւ այս զբաղումը,

— Տար դիս, ըսաւ:
Գամօր իր սոհմուհիին նայեցաւ զարմացմամբ, կարծելով թէ դարձեալ կտտակ կ'ընէ ան. բայց բոլորովին անկատակ էր ներս առաջարկութիւնը:

— Ինչ կը վախնաս, կրկնեց մարդիզուհին:

— Չեմ վախնար:

— Միթէ բաւական ուժեղ չէս:

— Տէր Աստուած, կարծեմ թէ ոյժ ունիմ:

Գամօր որորանի մը մէջ տեղաւորելու պէս զիրկը առաւ մարդիզուհին, դասին աստիճաններէն վար իջաւ և իր տարօրինակ բեռովը դէպ 'ի դուռն ուղղեցաւ՝ մինչդեռ մարդիզուհին երկու ձեռներովը րօպան կը բռնէր: Աղողուած գետնին վրայ չլայթելու համար Գամօր կը պարտաւորէր զգուշութեամբ քայլել. ուստի առջի քայլերը առնելու ատեն իր ուշադրութիւնը այս զգուշութեան տուաւ. բայց երբ քայլը ապահովեց, մարդիզուհին դիւրանի գլուխը քիչ մը ծուռելով կը հանդէս գտնուէր բռնող լեկին վրայ. իր շուրթերը կիտարաց էին դրեթէ չարաբոյր ժպիտով՝ որ ներս նրբասյր և կաթի պէս սպիտակ ակունքները ցոյց կը տար: Անագորոյն չարամտութեան մի և նոյն արտայայտութիւնը կը փողփողէր իր ախար աչերուն մէջ որք երկու մանրեկրորդի չափ թափանց յարատեութեամբ մը Գամօրին վրայ յառելէն ետք յանկարծ ծածկուեցան իր արտեանսընին կապտանման աղբովը:

Գամօր իր ոսկրներուն ըլեղէն փայլակի մ'անցնիլը զգալ կարծեց:

— Խեղճ ընել կ'ուզես զիս, մըմբայ:

— Թերես, պատասխանեց մարդիզուհին:

Մի և նոյն ատեն երկտասարդին գրկէն փախաւ, և ոտները գետինը դնելով աւերակէն դուրս ելաւ:

Գլեակը հասան առանց ամենեկին խօսք մ'ընելու իրարու:

Սակայն երբ որ հըն մտնելու մօտեցան, ծաղկահաս մարդիզուհին դէպ 'ի Գամօր դառնալով ըսաւ.

— Ապահովեղի'ր թէ ներքնապէս շատ բարի եմ. . . յիբախի՛ս

Գամօր այս հաւաստումին չնայելով հետեւեալ առաւ փութաց մեկնել, ինչպէս որ արդէն որոշած էր :

Առջի օրուան տեսարանէն ամենատխուր տպաւորութիւն մը կը տանէր հետը : Մարդիզուհին անոր հպարտութիւնը վերաւորած , անհնարին տրիփը վառած , պատիւը վրդոված էր : Ինչ էր այս կինը , և ի՞նչ կ'ուզէր իրմէն : Սէրը կամ վրէժն էր իրեն այս դժոխային հպտանքը ներշնչողը : Ինչ կ'ուզէր թող ըլլար , Գամօր ճեղքուած սառնակոյտին ներքև կիսովին բացուած անդունդը յայտնապէս չնշմարելու չափ նորընծայ մը չէր այս տեսակ արկածներու մէջ . ուստի անկեղծապէս որոշեց յաւիտենապէս զոյցել իրենց մէջ տեղն այն անգունդը : Այս նպատակին հասնելու լաւագոյն միջոցն էր անշուշտ ալ վերջտալ մարգրիզուհիին հետ ունեցած յարաբերութիւններուն : Բայց ինչպէս մեկնէր այս ընթացքը զօրապետին առանց զրդուելու անոր կասկածները և հաւանելու վտանգի մ'որ էր կենկանը վրայ ունեցած համարումը բոլորովին ջնջել : Այսպէս վարուելն անկարելի էր : Ուստի իր բոլոր քաջասրտութեամբը զինուեցաւ , և համակերպեցաւ անդայ սրտով մը կրելու այն ամեն փորձանքները զոր թարմահաս կնիկն ստոյգ կամ կեղծ թշնամութիւնը կրնար վերապահել իրեն :

Բ

Գամօր այն ժամանակները տարօրինակ գաղափար մ'ունեցաւ : Ազնուականագոյն ժողովարաններու մէկ քանիին անդամն էր : Իր ընկերներուն ընտրեալներուն մէջէն մէկ քանին ընտրելու , խմբելու և անոնց հետ զաղտնի ընկերակցութիւն մը կազմելու խորհուրդը ունեցաւ . այս ընկերութեան նպատակը պիտի ըլլար բոլորովին անթերի անաչառութեամբ իր անդամաց մէջ հաստատել և պահել պատուոյ կէտի սկզբունքը : Լափփանքներ ըսուած և Պաղպաղէն հոչա-

կուած ընկերութեան հետ ամենին նմանութիւն մը չունէր այս ընկերութիւնն որ հասարակութեան մէջ անորոշ կերպով խօսակցութեան առարկայ եղաւ զրեւանդէրոս (Raffiné) ընկերութիւն , նաև Տաճարականէրոս ընկերութիւն անունով , որ իր ճշմարիտ անունն էր : Տաճարականէրոս ընկերութիւնն ոչ միայն և ոչ տրամական (dramatique) հանդամանք մ'ունէր : Իր անդամները հասարակ բարոյականէն դուրս կամ երկրին օրինաց վերեր դտնուելու պահանջութիւնը չունէին : Փոխադարձ ծայրայեղ օգնականութեան որ և է երդումով մը կապուած չէին իրարու հետ : Պարզ խոստումով մը խօսք կը տային պատուոյ ամենէն մարտը կանոնները պահել իրենց փոխադարձ յարաբերութեանց մէջ : Այս կանոններն իրենց օրինադրին մէջ ճշգրտապէս նշանակուած էին : Բաւական դժուարին է ճշգրտապէս գիտնալ թէ ի՞նչ էր անոնց բնապիւրը . բայց կ'երևայ թէ ժողովարանին , խողին , ձիարշաւին , մեծամարտութեան և կնասիրութեան մասնաւոր սահմաններուն մէջ այն կանոններուն գրեթէ միայնակ առարկաներն էին պատուոյ ընտանի խոյրիները : Օրինակի առդաւ այս ընկերութեան անդամներէն ուր որ իր ընկերակիցներուն մէկին թէ կնիկը , թէ սիրուհին որսար , պատուոյ գէմ ոճիր գործած և անունը կտրուած կ'ըլլար : Արտաքսումէն ՚ի դատ պատժական արամադրութիւն չէին պարտնակեր այն կանոնները . բայց արտաքսումի հետևութիւնները ծանր էին , վասն զի նոյն միջոցէն սկսեալ մէն զի անդամակից անարժան անդամը ալ ոչ կրճանչէր և ոչ իսկ կը բարեկէր : Տաճարականէրոս այս զաղտնի միութեան մէջ թանկագին օգուտ մը կը գտնէին . այս օգուտն էր այն մասնաւոր ազատութիւնը զոր իրենց փոխադարձ յարաբերութիւններն ունէին աշխարհասիրական կեանքին զանազան պարագաներու մէջ ուր ամեն օր կը գտնուէին Տաճարականէրոս , թէ թատրի խորհրուան , թէ ակմբանոցներուն մէջ , թէ ժողովարանին սեղաններուն բոլորտիքը , և թէ ձիարշաւի կրկեսին բեմերուն վրայ :

Բարիգեան պերճաշուք կեանքը վարող իր ընկերներուն և ախոյեաններուն մէջ Գամօր անշուշտ բացառութիւն մ'էր իր վարպետութեանց խորութեան և կանոնաւոր սահմանումին շնորհիւ :

խոյ բացարձակ սկեսպոսիւթեան և գործնական նիւթապաշտու-
թեան մասին բացառութիւն մը չէր ան. սակայն բարոյական օ-
րէնքի մը պէտքն այնքան բնական է մարդուս, և ասոր այնքան
քաղցր է բարձր սանձի մը հնազանդիլն որ ընտրուած միջամուխ-
ներն՝ երբ առջի անգամ Գամօրին ծրագիրը տեսան՝ եռանդով
ընդունեցին, շատ գոհ ըլլալովոր սովորական պատուոյ խառնա-
շփոթ և ծփին դազափարնեռուն տեղ տեսակ մը դրական և յա-
տուկ կրօն մը պիտի հաստատէին, թէև շատ նեղ ըլլային այս-
պիսի կրօնի մը սահմանները: Ընթերցողը կը գուշակէ արդէն
թէ մասնաորակէս Գամօրի համար պատուար մ'էր այս զոր
կ'ուզէր կանգնել իր և զինքը շրջնող արքիին մէջ: Այսպէս՝
կրկին օյժով մը կը կապուէր այն բարոյական կապով որմէն՝ ՚ի զատ
ամենեւին կազ չլար իրեն համար: Իր գործը ամբողջեց զօրա-
պետին ընդունել տալով ընկերութեան նախագահութիւնը: Զօրա-
պետը, որուն համար պատիւը տեսակ մը խորհրդաւոր բայց իրա-
կան աստուած մ'էր, բերկրութեամբ համակուեցաւ իր կուռքը
պաշտողներուն նախագահութիւն ընելովը: Գոհ եղաւ երիտա-
սարդ բարեկամէն իր երկնած խորհուրդին համար, և աւելի ևս
յարգեց զան:

Այն ատեն ձմեռուան միջինքն էր: Տիկին Տը Գանվալօն եր-
կար ժամանակէ ՚ի վեր վերստին սկսած էր վարել իր անաչառ-
ու միանգամայն վայելչասէր կեանքը, առտուները եկեղեցիէն, ցո-
րեկները Պալօնեի անտառներէն և ողորմութեան օթեակներէն,
իրիկուններն ալ Օբէրայի կամ Իտալական թատրոնէն ամենեւին
չպակսելով: Նորէն տեսած էր Պ. Տը Գամօրը առանց ամենա-
փոքր յուզմունք ցոյց տալու, և առաջուանէն աւելի բնական և
պարզ կերպով իսկ վարուած էր հետը. ամենեւին խօսք չբացած
էր անցերոյն վրայ, որ և է աննարկութիւն չըրած էր փոթոր-
կին ժամանակ պարսիզին մէջ տեղի ունեցող սեսարանին, իբր
թէ այն օրը միանգամ ընդ միշտ դուրս թափած ըլլար այն ամեն
բաները որք իր սրտին վրայ կեցեր էին: Այս ընթացքն ան-
տարբերութեան կը նմանէր: Պ. Տը Գամօր կը պարտաւորէր այս
պատճառաւ սաստիկ ուրախանալ, բայց ընդ հակառակն կը նեղա-

նար:՝ Այս կերպով իր կեանքէն աներևոյթ կ'ըլլար անագորոյն
բայց զօրաւոր շահ մը, իր յղիուն սրտին արդէն շատ սիրելի
շահ մը: Արմար կը միտէր ստուգիւ հատալու թէ իր կարծածին
չափ խորին և խառնաշփոթ բնաւորութիւն մը չունի ակիկն Տը
Գանվալօն, թէ սակաւ առ սակաւ աշխարհային դուճակ իրողու-
թեանց մէջ մարած է, և թէ իրապէս եղած է նէ ինչ որ կը
պնդէր թէ է, այսինքն իր վիճակէն գոհ և անվաս բարի անձ
մը:

Գիշեր մը Գամօր Օբերայի թատրոնին երաժշտաց խմբին մօտ
իր նստարանին վրան էր: Մարդիկուհին սխներու միջեր բունած
իր օթեկիկն մէջն էր: Առաջին միջնարարներուն ժամանակ Գա-
մօր թատրոնին փոշերուն մէջ զանազան բարեկամներու հանդիպե-
լուն պատճառաւ սովորական ժամանակէն աւելի կանուխ չլըցաւ
երթալ և իր անհմուհիին, այսինքն ակիկն Տը Գանվալօնին որ-
պիսութիւնը հարցնել և իր մեծարանքը մատուցանել: Վերջապէս
չորրորդ արարուածէն ետք օթեակը գնաց մարդիկուհին բարեկու-
համար. մինակ գտաւ զան, վասն զի զօրապետը վարի սրահն ի-
ջած էր. Գամօր ներս մտնելով զարմացաւ երբ տեսաւ որ ծաղ-
կահաս կնկան այտերուն վրայ նորահոս արտառքի հետք կայ.
ասկից ՚ի զատ ներս աչերն ալ թաց էին: Արդահատութեան յան-
ցանքը գործած միջոցին յանկարծ բռնուելէն դժգոհ երեցաւ, և
կոմսին ըսաւ.

- Երաժշտութիւնը ջիւերս քիչ մը կը զրդուէ միշտ:
- Ո՛հ, պատասխանեց Գամօր, դուն որ զիս կը մեղադրես ը-
սելով թէ յատկութիւններս կը պահեմ, ինչու բուկիներդ կը պա-
հես: Եթէ տակաւին կրնաս արտասուել, աւելի աղէկ:
- Բայց ո՛չ, ըսաւ նէ: Ալ կարենալս յատկութիւն մը չէ . . .
. . . Ո՛հ, Ատտուած իմ. եթէ զիսնայիր . . . յատկութեան բո-
լորովին հակառակն է լալու կարողութիւնը:
- Գաղտնիք մ'իես դու, յիբաւի:
- Հետաքրքրի՛ր ես իմանալու այդ գաղտնիքը . . . միայն այդ
գաղտնիքը: Ա՛ն, ուրեմն գոհ եղի՛ր . . . : Մանաւանդ որ
ժամն է ալ վերջ տալու հետաքրքրութեանդ . . . :

Մարդիպուհին իր թիկնաթուր քիչ մը հեռացուց օթեկին եզրէն և հասարակութեան տեսքէն, Գամօրին կողմը դարձաւ ապա, և շարայարեց .

— Ուրեմն կ'ուզես դիտնալ թէ ի՞նչեմ, ի՞նչ կ'ղրամ, ի՞նչ կը խորհիմ . . . կամ լաւ ևս է ըսել, սարդապէս կ'ուզես դիտնալ թէ արգեօք սիրոյ վրայ կը խորհիմ . . . : Իրաւ է, միայն ատոր վրայ կը խորհիմ : — Գեւ ի՞նչ կ'ուզես դիտնալ . . . : Սիրող ունենանք կամ չունենանք : — Սիրող չունիմ և երբէք չսիրտի ունենամ, չէ թէ վասն զի առաքինի եմ, այլ վասն զի ոչինչ կը հաւտամ, այլ վասն զի ինքզինքս կը յարգեմ և ուրիշները կ'արհամարհեմ . . . : Ձգուանք կը տան ինձ այն գձուձ մեքենայութիւնները, այն գձուձ արիփները, այն գձուձ սէրքը զոր աշխարհի մէջ կը տեսնեմ . . . : Յիրուի կիները շատ փոքրոզի աբարածներ են անշուշտ քանի որ ասանկ պղտի բաներու համար անձնատուր կ'ըլլան . . . : Իսկ իմ մասին, կը յիշեմ թէ օր մը — ասկից հազար տարի առաջ — ըօի քեզ քո անձս ինձի համար նուիրական է, և՛ սրբապղծութիւն մը գործելու համար՝ Հոռովի Ղեստեան կուսանաց պէս՝ ոճրագործութեանս չափ մեծ, մահուան չափ սոսկալի սէր մը կ'ուզէի . . . : Պահ մ'առաջ սա չորրորդ շքեղ տրարուածին ժամանակ լացի : Լացի չէ թէ վասն զի աշխարհիս վրայ մինչև հիմա չլսուած գերահրաշ երաժշտութիւն մը կը լսէի միայն, այլ վասն զի կ'սքանչանայի, այլ վասն զի տրփօրէն կը նախանձէի այն ժամանակներու հոյակապ սիրահարութեանց վրայ . . . : Եւ ստուգիւ այսպէս էին այն ատենուան սիրահարութիւնները : Երբ այդ վեշտասաններու դարու պատմութիւնները կարդամ, հոգեպիշ կը հիանամ : Այն մարդիկն ինչպէս դիտելին սիրել . . . և մեռնիլ : Սիրուէտ զիշեր մը, և ապա կը մեռնէին : Զմայելի է այս : — Ահա այս է դադան'ըր, բարեկամ, ելի՛ր զնա ալ, մեզ կը նային : Պիտի կարծուի թէ կը սիրարանենք, և որովհետև այդ հաճոյքը չունինք, անօգուտ է անոր տահաճութիւնները քաշել : Ասկից 'ի զատ ես դեռ Կարոլոս Թ. ի արքունեաց մէջն եմ՝ րոլորովին, և դուն սև զղեստովք և բոլորաձև գլխարկովդ դուծա կը շարժես : Երթմա բարեա :

— Շատ շնորհակալ եմ, ըսաւ Գամօր : Բռնեց մարդիպուհին ձեռքը զոր անտարբերութեամբ կ'ծրկընցընէր նէ, և օթեկէն դուրս ելաւ :

Փողին մէջ Պ. ՏԸ Գանվալօնին հանդիպեցաւ :

— Սիրելի՛ բարեկամ, ըսաւ զօրապետն անոր թեւ բռնելով, պէտք է՝ որ քեզ խորհուրդ մը հաղորդեմ, խորհուրդ մ'որ առջի իրեկունէն 'ի վեր միտքս կը զրաւէ :

— Ի՞նչ խորհուրդ, զօրապետ :

— Ահա ըսեմ. այս զիշեր խել մը զմայելի դեռաբոյս աղջիկներ կային . . . : Անոնց նայելով քեզի միտքս բերի : Կնոջս ալ իմացուցի խորհուրդս . և պէտք է Գամօրը կարգել այս պատանուհիներուն մէկին հետ՝ ըսի անոր :

— Ո՛հ, զօրապետ :

— Ինչո՞ւ կը զարմանաս :

— Շատ ծանր բան է ատի : Եթէ մարդս սխալի ընտրութեան մէջ, հետևանքը ծանր է :

— Բն, բն, ատի կարծածիդ չափ դժուար չէ . . . : Իմինիս պէս կ'ին մը գտի՛ր . . . որ շատ կրօնասիրութիւն, քիչ երեակայութիւն ունենայ, իսկ մասնաւոր բնութիւն մ'ամենեին . . . : Ահա այս է դադան'իքը . . . : Խօսքը մեր մէջ մնայ, սիրելիդ իմ :

— Ինչ և է, ատոր վրայ պիտի մտածեմ, զօրապետ :

— Մտածէ, ըսաւ զօրապետ ծանր կերպարանով :

Ապա կնիկին քովը զնայ զոր այնքան լաւ կը ճանչէր :

Իսկ մարդիպուհին ինքզինքը շատ աղէկ կը ճանչէր, և զարմանալի ճշմարտութեամբ մ'ինքն իր նկարագրութիւնը ըրած էր : Բայց ինչպէս Պ. ՏԸ Գամօր իր տեսակովը, նոյնպէս և տիկին ՏԸ Գանվալօն իր տեսակովը բացառութիւն մը չէր բարեկեան աշխարհի մէջ, թէ և երկու այսքան զօրեղ հողիներ և քաջաձիր միտքեր պարտաւոր էին բարեկեան աշխարհի սովորական ապականութիւնները մինչև հազուագիւտ աստիճան մը տանիլ :

Բարեկի բարձր քաղաքակրթութեան արուեստական միջնորդան իբօք կ'ներուան պարտաւոր զոսցումը և յօժարութիւնը կը ջնջէ և

միայն զբոսումի զչացումը և յօժարութիւնը կը թողու : Այս փառաւոր և թատրական հարկներու պէս կեղծ մթնոլորտին մէջ կիներն ընդհանրապէս մարդկային կեանքի և մասնաւորապէս քրիստոնէական կեանքի ճշմարիտ գաղափարը կը կորուսեն , և ներելի է հաստատել թէ հեթանոսութիւնը եւն այն ամեն կիներն որք յորձանքէն դուրս կատարեալ առանձնութեամբ մը չեն ապրիր , ինչպէս կան այսպէս ընողներ : Հեթանոսութիւնը եւն , վասն զի զցայնութեանց և մտքի հեշտութիւններէն միայն համկ'առնուն , և վասն զի տարին անգամ մը բարոյական կարգաւորութեան գաղափար մը , տպաւորութիւն մը չեն ունենար , ուրիշ է եթէ ունենալու հարկադրին մայրութենէ , զոր կիներէն օմանք կը գործովեն . հեթանոսութիւնը եւն վեշտասաներորդ գարու աշխարհական կաթոլիկ զեղուհիներուն պէս , որք պերճանաց , թանկագին կերպասներու , զերընտիր կահերու , գրադիտութեան , արհեստից , իւրենց անձանց և սիրոյ սիրահարներն էին . Մարի Սթիւարթին պէս հեթանոսութիւնը եւն և կարող անոր պէս վերստին քրիստոնէայ դառնալու տապարին տակ :

Յայտնի է թէ լաւագոյններուն , ընտրագոյններուն (élite) , կարգացող , խորհող , երազող կիներուն վրան է մեր խօսքը : Իսկ միւսները , այսինքն այն կիներն՝ որք բարիզեան կեանքի պղտի հանգամանքը և սղայական շրտումը կ'առնուն միայն , այն կիներն որք փոխադարձ այցելութիւններ կ'ընեն , ժամտեղեր կը տան , կը քշուին , կը հագուին կրկապուին , կը շաղակիրատեն , գիշեր ու ցորեկ ունայնութեան մէջ կը յուզուին , և Բարիզեան արեւին ճառագայթներուն մէջ տեսակ մը մոլեգնութեամբ կը պարեն՝ առանց խորհրդածութեան , առանց կրքի , առանց առաքինութեան և առանց մոլութեան անգամ , կը սարսուռորինք խոստովանել թէ ամեն բանէ աւելի արհամարհելի են :

Արդ՝ Տը Գամօր լաւ մարդկութիւն՝ ինչպէս ըսած էր իրեն նմանող այն մարդուն՝ ստուգապէս մեծ հեթանոսութիւն մ'էր . ասի ըսած էր նաև թէ կան հանդիսաւոր ժամեր՝ ուր կիներուն ճակատագիրը շատ անգամ իրենց սիրած մարդուն ազդեցութեամբ կը վարանք և կ'որոշուի , և թէ ինքն ալ օրին մէկն ունեցած էր

այն ժամերուն մին ուր Պ. Տը Գամօր անոր մտքին և սրտին մէջ նետած էր սերմ մ'որ հրաշալի կերպով ծլած և զարգացած էր :

Գամօրին մտքէն իսկ չանցաւ այս մտքին մեղադրել ինքզինքը . բայց՝ զարմանալով այն ամեն ներդաշնակութեանց վրայ որով ինչ մարդկութիւն կը մտէր՝ դառնապէս ցաւեցաւ այն աղետալի պարագաներուն վրայ որք զինքը անորմէ կը զատէին : Ասկից 'ի վատ պատուոյ աւելի ճշդ իրա պարտականութիւններով ինքնին շղթայուէն 'ի վեր ինքն իրմէն աւելի ապահով ըլլալը զգալով ալ սկսաւ նուազ խղճահարութեամբ անձնատուր ըլլալ վտանգի մը հետաքրքրական հանդամանաց և յուզմանց , վտանգ որու դէմ անընկճելի կերպով պաշտպանուած ըլլալը կը կարծէր : Չվախցաւ աւելի ստէպ փնտելու իր զեղանի սղականին ընկերութիւնը , և շարաթը մէկ կամ երկու անգամ ազգային պատգամատունէն ելնելէն ետք անոր տունը մտնելու սովորութիւնը իսկ հաստատեց : Երբ միայնակ կը գտնէր ծաղկահաս կիներ , իրենց խօսակցութիւնն երկուստեք անփոփոխ կ'առնուր այն հեղինական և զաղտնապէս զրգուշ դարձուածքը , որու մէջ երկուքն ալ կը գերազանցէին : Գամօր չմոռցած էր Օրերայի մէջ անոր յանդուղն խոստովանութիւնը , և զայն յօժարաւ կը յիշեցնէր անոր , հարցնելով թէ վերջապէս դա՞նձ էր այն սիրահար դիցազնը զոր կը փնտտէր , և որ ըստ իր կարծեաց կը սպասուորէր Պօթմիւլի պէս* չարագործ մը , կամ Վիցցիոյին† պէս երաժիշտ մ'ըլլալ :

* Պօթմիւլ . . . սկիզբէն իշխան սը Մարի Սթիւարթի երկը Բոյոյ , և այն իշխանուին առեւտրելովը հետն ամասնացաւ Բոնի :

Օ. Թ.

† Մարի Սթիւարթիին արքայազարն ու սիրելի էր : Տգեղ և ապագայ էր ան , Բայց արքայայն էր Բոնի և իւրեք պաշտպան մ'էր , և կրցաւ հաճել ըլլալ Մարի Սթիւարթիին : Այս խաղաղութիւն երկու Անրե Տարնէյ նախանշեցաւ Ռիչարդի դէմ և զան մտքիւ պոռա Մարի Սթիւարթի խաղաղութիւն օգնելէն մէջ և ներս այլին առջև :

Օ. Թ.

— Կան չարագործներ, որ կը պատասխանէր մարդիղուհին, որք միանդամայն երաժիշտ են . . . : Պատեհ ժամն է, բան մ'երգէ ինձ :

Չմեռուան վերջերը մարդիղուհին պարահանդէս մը տուաւ . շքեղութեան և կիրթ ճաշակի իրաւացի համբաւ մ'ունէին իր տուած հանդէսներն որոց միջոցին վեհասպետական վայելչաշնորհոտութեամբ մը կը պատուէր և կը մեծարէր իր հիւրերը : Պարահանդիսին զիշերն իր յարգուղարղը խիստ պարզ էր, ինչպէս կը վայլէ քաղաքավար տանտիկնոջմը . այս յարգուղարղն էր մթաղոյն թաւշէ երկայն բօսա մը, թեւերը մերկ և առանց դոհարկներու, վարդաղոյն կուրծքին վրայ խոշոր մարդրիտներու մանեակ մը, և խոյրի տեղ իր մարդիգական թաղոն որ իր քումայթ (blond) մազերուն թեթև շէնքին վրայ տեղադրուած էր : Գամօր ներս մտնելու միջոցին զեղանի կնկան իրեն նայիլը տեսաւ, իբր թէ իրեն սպասած ըլլար : Նախորդ իրիկուն եկած էր ներա հետ տեսնուելու համար, և իրենց մէջ սովորականէն աւելի սաստիկ բանակուի մը տեղի ունեցած էր : Գամօր տիկին Տը Գանվալօնի փառաւորութենէն յափշտակուեցաւ : Ասոր զեղեցիլութիւնն՝ անշուշտ կուխին գաղանի եռանդներէն սաստիկ զրգուած և ներքին բոցէ մ'իբր լուսաւորուած ըլլալով թափանցիկ կուճի մը նուրբ և բովանդակ շողումը ունէր : Երբ Գամօր կրցաւ մինչև ներա քովը հասնիլ և բարև տալ, տրփաւէտ սքանչայման զղայումի մը չգիմարելով, ըսաւ .

— Ոճիր մը գործել տալու չափ ստուգիւ զեղանի՛ ես այս զիշեր . . . :

Մարդիղուհին կոմսին աչքին մէջը նայելով ակնայեռ,

— Կուղէի տեսնել ատի, ըսաւ :

Եւ իր շքեղ անհոգութեամբը հեռացաւ :

Չորսպետը մօտեցած էր, և կոմսին ուսին զարնելով ըսաւ .

— Գամօր, սովորութեանդ պէս չեմ պարեր . . . : Բիքէթ խաղանք :

— Շատ աղէկ, զօրսպետ :

Եւ երկուքը մէկ՝ երկու կամ երեք սրահներէ անցնելով հասան

մարդիղուհին մեծախոյրը (boudoir), որ հաւկթաձև և խիստ բարձրաձեղուն պղտի սենեակ մ'էր, և որու զետիներ սև ու ճերմակ ծաղիկներով բանուած կարմիր մետաքսէ օժոց մը փռուած էր : Թէև դուռերը հանուեր էին, երկու ծանր վարագոյրներ այս մեծախոյրը բոլորովին կը զատէին մօտակայ ձեմասրահէն (galerie) : Չորսպետն իր հանդէսներու միջոցին ահա հոն խաղալու և երբեմն քնելու սովորութիւն ունէր : Բազմոցի մ'առջև խաղի պղտի սեղան մը պատրաստուած էր : Այս մանր փոփոխութենէն 'ի զատ մեծախոյրն իր ամեն օրուան սովորական տեսքը կը պահէր, այսինքն սկսուած կնային ձեռագործներ, զիբեր, լրագիրներ և հանդէսներ ցանոցիը կը կենային կահերուն վրայ :

Չորսպետն երկու կամ երեք բարձի խաղալէն ետք, զօր վաստրիեցաւ (Գամօր անմտադիր էր)

— Յանցանք մ'է ինձ, պատանի՛դ դու, քեզի այսքան երկարատեն այն կիներուն քովէն վերցնելու . . . : Ազատութիւնդ կը տամ . . . : Ես անցամ մը լրագիրները աչքէ պիտի անցունեմ :

— Կարծեմ նոր բան մը չկայ, ըսաւ Գամօր ոտք ելնելով :

Գամօր ևս օրագիր մ'առնելով և կռնակը վառարանին տալով տեղաւորուեցաւ, և սկսաւ փոփոխակի ոտները տարցնել : Չորսպետն ալ բաղմոյցին վրայ տեղաւորուելով Լը Մօնիէ-օր Տը լ'Արօ լրագիրը աչքէ անցուց, քանի մը ռազմական յառաջացումները օրինաւոր դտաւ, մէկ քանին պախարակեց, և սակաւ առ սակաւ մրափեց՝ զլուխը կուրծքին վրայ ծուռած :

Պ. Տը Գամօր չէր կարգար, այլ նուագածուներու երաժշտութեան ուշկրդնէր անորոշապէս և կրմտախոհէր : Պարահանդիսին ներդաշնակութիւններուն, շուքներուն և ջերմաբլր անուշահոտութիւններուն հետ մտքին առջևը կրբերէր կնկան մը շարժումները, և այս կինն այն պարահանդիսին տիրուհին և թաղուհին էր . կոմսը ներա զիւրաթեք և սէգ քայլը կը աւեսէր, ծանր և երաժշտային ձայնը կը լսէր և շունչը կը ծծէր :

Այս երիտասարդն ալ ամեն բանէ-յաղած էր . սէրն ու հեշտութիւնն ալ ոչ գաղտնիք և ոչ հրապոյր ունէին իրեն համար . բայց իր յղիուն (blasé) և ծերունական երեւակայութիւնն այս կենդա-

նի և բարակուն դեղեցիկ արձանին առջև կը զրդուէր բոլորովին բոցավառ : Այս անարատ, անաչառ և սիրատոջոր գեղեցկութիւնը Գամօրին մինչև երակները կըխուովէր : Յիրաւի իրեն համար մարդիզուհին կնիկէ մ'աւելի, մահկանուհիէ մ'աւելի բան մ'էր : Հին աուուրց առասպելները, սիրահար դիցուհիները, արքշիռ սանդարամտուհիները (bacchante) դերմարդկային հեշտութիւնները, երկրային հաճոյից անձանօթն և անհնարինը, վերջապէս ամեն բան ստոյգ էր, իրական էր, հնարին էր իրմէ երկուքայլ անդին, իր ձեռքին տակ էր, և այս ամեն բաներէն զինքը հեռի կեցնողն էր միայն սա մրափող ծերունիին ձանձրալի ստուերը :

Բայց՝ ինչ և է՝ այս ստուերը պատիւն էր . . . :

Գամօրին աչքն՝ իբր իր մտախօհութեան անգունդներուն մէջ մոլորած կըսեւեւէր վառարանին հանդիպակայ վարադոյրին վրայ :

Յանկարծ գրեթէ անձայն վեր ելաւ այս վարադոյրը, և մարդիզուհին անոր զարդաձև ծալքին տակէն իր պսակաւոր ճակատը ցոյց տուաւ :

Նախ մենախուցին չորս դին նայեցաւ անդամ՝ մը, սալա պահ մը կենալէն ետք կամայ մ'իջեցուց վարադոյրը, և ուղղակի յառաջեց գէպ 'ի Գամօր որ կը զարմանար անշարժ : Մարդիզուհին անոր երկու ձեռները բռնեց անմուռնչ, նայուածքը անոր աչքին մէջ սեւեւեց, անդամ մ'ևս արագօրէն նայեցաւ իր քնայած էրիկին, ետք քիչ մ'ոտներուն վրայ կանգնելով շուրթերը կոմսին երկնցուց : Գամօրին խեղքը գլխէն լուաւ, ամեն բան մոռցաւ, ծուռեցաւ և հնազանդեցաւ անոր :

Մի և նոյն պահուն զօրապետը յանկարծական շարժում մ'ըրաւ, և արթնցաւ . բայց մարդիզուհին արդէն իր առջևն էր՝ երկու ձեռները խաղու սեղանին վրայ դրած, և իրեն ժպտելով .

— Բարի լոյս, զօրապետս, ըսաւ :

Զօրապետը ներումն խնդրելու համար քանի մը խօսք մըմրաց, մարդիզուհին գուարթութեամբ բազմոցին վրան հրելով զան,

— Շարունակէ ուրեմն, շարայարեց . եկայ բարեկամս Գամօրը առնելու կարձատե հօբէկէծի մը համար :

Եւ ձեմասրահին ճամբան բռնեց նորէն : Ետէն զնայ Գամօր որ ուրուականի մը պէս դունատ էր : Մարդիզուհին վարադոյրին տակէն անցնելու ատեն ետևը դարձաւ և կէս ձայնով ըսաւ .

— Ահա՛ ո՞ճիրը :

Ապա աներեղոյթ եղաւ բազմութեան մէջ որ տակաւին սրահները կը զրաւէր :

Պ. ՏԸ Գամօր ներա քովն երթալու փորձ չըրաւ, և լուռեցաւ իրեն թէ նէ ևս կ'զգուշանար իրմէն :

Քառորդ մ'անցնելէն ետք կոմսը մեկնեցաւ Գանվալօնի ասպարանէն :

Իսկոյն իր տունը զնայ : Իր սենեկին մէջ ճրագ մը վառուած էր : Անցնելու միջոցին երբ հայելին նայեցաւ, ինքն իրմէն վախցաւ : Մենախուցին ահարկու դէպքը բոլորովին ընկճեր էր զինքը : Իր աշկերան իր վարպետն եղած էր, այս մասին սխալելու ժամանակն անցած էր այլ : Իրողութիւնն ըստ ինքեան զարմանալի բան մը չէր ամենեին : Բարոյական վեհութեան մէջ կիմարը մեղմէն աւելի կը բարձրանան, չկայ առաքինութիւն մը, անձնութիւն մը, դիւցաղնութիւն մ'որ մեզի չդերագանդեն անոնք . բայց երբ անդամ մ'անդունդները կը նետուին, մարդեանոնք . բայց երբ անդամ մ'անդունդները կը նետուին, մարդեան ամեն և աւելի խորը կ'ընկնին : Այս անկումն երկու պատճառ ունի . առաջին՝ վասն զի կիներն աւելի տրեփ ունին, երկրորդ՝ վասն զի պատիւ չունին :

Ըստ որում այս պատիւ բան մ'է վերջապէս, և պէտք չէ վատահամբաւել զայն : Պատիւն ազնիւ, փափուկ, փրկաւէտ կիրառութիւն մ'ունի : Առնական յատկութիւններուն արժէքը կ'աւելու նայ անով : Մարդերուն պարկեշտութիւնն է այն . երբեմնակի ոյժ մը, բայց միշտ շնորհ մ'է : Սակայն կարծել թէ պատիւն ամեն բանի կը բաւէ, թէ մեծ շահերու, մեծ կիբերու, կեանքի մեծ փորձութեանց առջև անվրիպելի նեցուկ և պաշտպանութիւն մի է, թէ աւելի բարձրէն եկած սկզբանց տեղը կը բռնէ, թէ վերջապէս Ըստուծոյ կը յաջորդէ, ծանրապէս սխալիլ է, ենթարկուիլ է վտանգի մ'որ է արեւտալի բոսլէի մը մէջ ինքնայարդուութեան (estime de soi) զգացումը բոլորովին կորուսել և յանկարծ

մշտնջենասպէս ընկնիլ զառնութեան այն տխուր ուղիքնոսն որու մէջ այս միջոցին ՏԸ Գամօր կոմսը յուսաբեկ կը յուզուէր զիշերը ծովը նետուած նաւարեկի մը սէս :

Այն սգալի գիշերը Գամօր ինքն իրեն գէմ անձկութեամբ լի կուի մ'ես ըրաւ և յաղթուեցաւ : Հետեւեալօրը ժամը վեցին մարգիլուհիին տունը գնաց :

Տեսաւ մարգիլուհիին որ իր արքայական պերճանօք զարդարուն սենեկին մէջ կրակին մօտ բազմոցի մը վրայ կիսովին պառկած էր՝ քիչ մը դունատ և յոգնաբեկ : Գամօրը ընդունեցաւ իր սովորական հանդիստոյնն ու պաղութեամբը :

- Բարբի եկար, ըսաւ կոմսին : Խնչպէս ես :
- Ոչ այնքան լաւ :
- Խնչ պատճառաւ :

— Կերեակայեմ թէ քիչ մը զիտես պատճառը, ըսաւ Գամօր : Տիկին ՏԸ Գանվալօն առանց պատասխանելու անոր նայեցաւ իր մեծ աչերով որոնք զարմացած էին :

— Կ'աղբսեմ քեզի, տիկին, կրկնեց Գամօր ժպտելով, սէլ թողունք երաժշտութիւնը, վասն զի վարագոյրը բացուեցաւ, և տրամը կ'սկսի :

- Ա՛հ, ուրեմն տեսնենք ներկայացումը :
- Ձիս կը սիրես թէ ոչ երէկ զիշեր պարզապէս ուղեցիր փորձել իս, ըսաւ Գամօր : Կրնաս և կ'ուզես ըսել ինձ ատի :
- Անշուշտ կրնայի, բայց չեմ ուզեր ըսել :
- Աւելի համարձակ կը կարծէի քեզի :
- Մասնաւոր ժամեր ունիմ համարձակ ըլլալու կամ չըլլալու համար :

— Լաւ, կրկնեց Գամօր, եթէ համարձակութեան ժամն անցաւ քեզի համար, ինձի համար եկաւ . . .

- Ատով փոխարինութիւն կ'ըլլայ, ըսաւ նէ :
- Եւ արդ պիտի հաստատեմ քեզ թէ համարձակութեան ժամն եեաւ ինձի համար, շարայարեց Գամօր :
- Յուսամ թէ ես ալ գոհ ու զուարթ պիտի ըլլամ, ըսաւ մարգիլուհիին : Եւ խորթեղի պարտալի մը համը հօտը աւելի

առնելու համար հանդիստ գիրք մ'ուսննալ ուղղի մը սէս իր բազմոցին վրայ կամայ մը տեղաւորուելով :

— Ես, տիկին, կը սիրեմ քեզի . . . կը սիրեմ ինչպէս որ կ'ուզես սիրուիլ . . . : Եռանդագին և մահահրաւէր է, ինքզինքս մեռցնելու և քեզի մեռցնելու չափ սաստիկ է այս սէս :

— Գէշ չսկսար, ըսաւ մարգիլուհիին կիսաձայն :
— Բայց, շարայարեց կոմսը խորին և ամփոփ ձայնով մը, քեզի սիրելով, սիրելս ըսելով, և քեզմէ սիրուելու ջանք ընելով՝ անարժանարար առաթուր կը կոխեմ պատուոյ պարտականութիւններ զոր զիտես, մանաւանդ քանի մ'ուրիշ պարտականութիւններ զոր չզիտես : Աճիբ մ'է այսպէս վարուիլ, ինչպէս ըսիր : Յանցանքս իմառջև մեղմելու չեմ աշխատիր : Կրտեսնեմ, կը դատեմ և կ'ընդունիմ այս յանցանքը : Կրկնեմ բարոյական վեղջին կասը որ կը մնար ինձ : Գուրս կ'եննեմ պատուակիր մարդերու կարգերէն, դուրս կ'եննեմ մարգիլութեան կարգերէն անգամ . . . : Սէրէս ՚ի զատ մարդկային բան մը, քեզմէն ՚ի զատ նուիրական բան մ'ամենեւին չունիմ սղ . բայց սէտք է որ ոճիբս ղէթ երեւիլ փոխարինութիւն մ'ուսննայ . . . : Արդ՝ ահա ըսեմ այդ փոխարինութիւնը ինչպէս ըմբռնեմ . . . : Կ'ըմբռնեմ երկու հաւատարմութիւնը ինչպէս ըմբռնեմ սրբ ամեն բանի վերքը միայն մէկ-պէս աղատ և հզօր էակներ սրբ ամեն բանի վերքը միայն մէկ-ղմէկ կը սիրեն և կը յարգեն . միայն իրարու նկատմամբ սէր, անձնուիրութիւն, հաւատարմութիւն, պատիւ ունին, բայց այս փոխարձակ սիրոյ, անձնուիրութեան, հաւատարմութեան, պատուոյ աստիճանն ամենէն բարձրն է : Բոլորովին քեզ կը տամ և կը յատկացնեմ անձս, բոլորովին քու կը եմ իմ ամեն վիճակի և ամեն պարագաներու մէջ՝ քեզմէ հաւասար փոխարեւոր տեսնելու սպանման . . . : Մնանք ընկերային դաշանց սահմանին մէջ որմէ դուրս երկուքս ալ թշուառ կ'ըլլանք : Մարդկային բազմութեան միջևն անձանօթ բարձանց վրայ դադարնապէս միանանք, դադանապէս կը զիտանանք, և մարգիլութեան վրայ իշխելով և արհամարհանք զգալով ընկերակցինք մեր երկուքին ձիրքովը, մեր կարողութիւններով, մեր զօրութիւններով, մեր բարիւնեան երկու թագաւորութիւնովը, քու կ'եննեմ որ չլինար մեծնալ, իմիսովս որ կրնայ մեծ-

նալ եթէ զիս սիրես . . . և այսպէս մինչցմահ ապրինք ես քեզ մով, դուն իզմով և իրարու համար . . . : Կըսէիր թէ տարօրինակ և զրեթէ սրբապիղծ սուփանք կ'երագես, ահա այն սուփանաց մին : — Միայն թէ այս տրիվը ընդունելէ առաջ աղէկ մտածէ, վասն զի կը հաւատտեմ քեզ թէ խիստ ստուգապէս կը խօսիմ : Քու վրայ սէրս անբաւ է . . . : Քեզի այնքան կը սիրեմ որ միայն քեզմով, միայն քու համարումովդ, միայն քու կաթողին սիրովդ, քուկդ ըլլալու հպարտութեամբ և արբշուութեամբ . . . կրնամ մտնալ բարեկամութեան թշնամանուիլը, ուխտիս գրծուիլը, պատուոյս կորսուիլը, և մտիթարուիլ . . . : Սակայն, տիկին, կը սրբատաւորիս հասկնալ թէ ասի զդացումս՝ որու հետ իրաւունք չունիս խաղալու . . . : Արդ՝ եթէ կ'ընդունիս սէրս, եթէ կ'ընդունիր այս դաշնակցութիւնը, որ աշխարհիս ամեն օրինաց հակառակ . . . բայց դեթ մեծ և տարօրինակ է . . . հաճէ իմացնել ինձ, և ոտքդ ընկնելու պատրաստ եմ . . . : Եթէ չես ընդունիր այս դաշնակցութիւնը, եթէ կը վախնաս անկէ, եթէ պատրաստ չես իրմէ հետևող ամեն ահարկու պարտականութեանց, դարձեալ իմացնու ինձ . . . ոչխօսք մը և ոչ մեղադրանք մը պիտի լսես . . . : Որքան ալ սուղի նստի ինձ մերժելդ, պիտի համակերպիմ, կեանքս թշուառութեան կըտամ, կը մեկնիմ, անդառնալի կերպով կը հեռանամ քեզմէ, և երէկուան անցածը յաւիտենապէս կը մոռցուի :

Գամօր լուց, և բուն անձկութեան արտայայտութեամբ մը աչքը թարմահաս կնիւն աչքին վրայ յառելով կեցաւ :

Մինչդեռ կումը կը խօսէր, մարդիզուհին սուլի ծանր կերպարան մ'առած էր . ուշ կը դնէր անոր խօսքերուն, դուխը քիչ մը ցած բռնելով, անզուտ հետաքրքրութեան մը դիրքը առնելով, մերթ ընդ մերթ տխուր բոցով մը վառ ու բորբոք նայուածք մը արձակելով անոր : Կործքի տալար և արագ բախումէ մը, լայնաբաց պինչերու* թէթև սարսուռէ մը միայն կը յայտնուէր իր սրտին փոթորիկը :

*Narine: 47ին 2-ովը :

Պահ մը լուռ կենալէն ետք, ըսաւ .
— Իրօք ասի հետաքրքրական կը դառնայ . . . բայց ինչ և ըլլայ, այս գիշեր մեկնելու միտք չունիս, կարծեմ :

— Ոչ, ըսաւ Գամօր :
— Լաւ ուրեմն, կրկնեց մարդիզուհին՝ գլուխովն երթաս բարեի նշան մ'ընելով և առանց ձեռքը տալու անոր, նորէն պիտի տեսնուինք :

— Բայց երբ :
— Առաջին օրը :
Գամօր կարծեց հասկնալ թէ մտածելու ժամանակ կ'ուզէ մարդիզուհին, անշուշտ քիչ մը վախցած ըլլալով այն հրեշէն որու հրատէր կարդացած էր նէ :

Կումը ծանրաբար մնաս բարեաւ ըսելով գուրս ելաւ :
Հետևեալ օրն և միւս օրերն 'ի նանիր ներկայացաւ տիկին Տը Գանվալօնին դուռը : Մարդիզուհին կը հագուէր և առնէն գուրս տեղ պիտի ձաշէր :

Այն օրերը չարչարանաց դարեր եղան Պ. Տը Գամօրի համար : Տեսակ մը կսկծալի ակներևութեամբ գրաւեց զինքը գաղափար մ'որմէն ստեղծ վրդովուած էր : — Կը կարծէր թէ մարդիզուհին չսիրեր զինքը . թէ պարզապէս ուզած էր անցելոյն վրէժը լուծել իրմէն, և թէ զինքն անպատիւ ընելէն ետք հիմակ իր վրայ կը խնդայ, այսինքն դաշնադիրը իրեն ստորագրել տուած էր, բայց ինք կը մերժէր ստորագրել :

Սակայն մինչդեռ Գամօրէն հպարտութիւնն այսպէս վէրք կ'առնուր, իր սրիվը փոխանակ տկարանալու կը զցրանար սաստիկ :

Իրենց խօսակցութեան չորրորդ օրը տիկին Տը Գանվալօնին տունը չգնաց : Յոյս ունէր իրիկուն հետը տեսնուելու Տուայլեի դեռկոմսուհին տունը ուր ամեն ուրբաթ տեսնուելու սովորութիւն ունէին : Տուայլեի դեռկոմսուհին Գամօրի հօրը հին տարփուհին (maîtresse) էր . հայրն իր որդւոյն դաստիարակութիւնը այս դեռկոմսուհին յանձնել արժան դատած էր : Գամօր տեսակ մը բարեկամութիւն ունէր այս կնկան համար : Բարեմիտ կին մի

էր սա . կըսիրէին զինքը, և իր վրայ քիչ մը կը խնդային . երկար ատենէ ՚ի վեր գաղթած էր մատաղաշ կին մ'ըլլալէ . բռնադատուելով հրաժեշտ տալու սիրապաշտութեան որ իր զեղեցիութեան տարիներուն առաջին զբաղումն եղած էր, և ջերմեռանդութեան յօժարութիւն չզգալով միտքը դրած էր ծերութեան սիզբնաւորութեան ժամանակ սկիզբարան մ'ունենալ, ուր քանի մ'երեւելի մարդեր, զիտուններ, զբազէտներ, ճարտարագէտներ կ'ընդունէր : Հոն ազատ խորհելու պարծանքն ունենալ կ'ուզէին : Գեռուհումուհին իր նոր կացութեան պարտականութիւնները կատարել կարենալու համար որոշած էր լուսաւորուիլ : Անոնաւոր կերպով ունինքը կ'ըլլար հրաւարակային դասախօսութեանց և բանակցութեանց որոնց մօտան կ'սկսէր հաստատուիլ : Ազատ այլ ազգի սերունդներու վրայ կը խօսէր բաւական վայելչօշ կերպով : Յակայն սաստիկ զարմանք մը յայտնած էր այն օրն ուր՝ Գամօր՝ որ հաճոյք կ'ըզար գեռուհումուհին չարչրելով՝ յարմար սեպած էր իմացնել անոր թէ մարդիկ կապիկներէն սերած են :

— Ինչ նայէ, քարեկամ, ըսաւ նէ, յերաւի չեմ կրնար ընդունիլատի . . . : Ինչպէս կրնաս կարծել թէ հաւդ կապիկ մ'էր . . . դուն որ այդքան սիրուն ես :

Այս ուժով կը տրամաբանէր նէ ամեն բաներու վրայ : Բայց ինքզինքը փիլիսոփայի մը տեղ կը գնէր, սակայն երբեմն առտուները խիտ թանձրահիւս քօղով մը դուրս կ'ըլնէր զաղանի, Սէն — Սիւլբիօն եկեղեցին կ'երթար, և խոստովանանք կ'ըլլար որպէս զի բարեգութն Աստուծոյ հետ հաշտ գտնուի, եթէ պատահաբար էութիւն ունենար նա :

Տուայլեի գեռուհումուհին հարուստ էր, պատուաւոր ազգականներ ունէր, և իր պատանութեան մեծ թեթեւութիւններուն չնայելով՝ լաւադոյն մարդիկ իր տունը կ'երթային : Տիկին Տը Գանվալօն հաւանած էր Գամօրին առաջնորդութեամբը հոն երթալու, և տիկին Տը Լա Բօշ — Ժիւկան տիկին Տը Գանվալօնին ետակէն եկած էր, վասն զի ամենուրեք ներս ետակէն կ'երթար իր Սիժիսօն աղուն հետ :

Այն իրիկուն քիչ մարդ հաւքուած էր Տուայլեի գեռուհումուհին

ին տունը : Պ. Տը Գամօր՝ որ քանի մը՝ ըրպէ առաջ եկած էր՝ զօրապետին և իր կնիւան զալը տեսնելու զօհոնանակութիւնը ունեցաւ . մարդիկուհին նախորդ օրերն իր տունը չդանուելուն համար ցաւիլը հանդարտօրէն յայտնեց կոմսին . բայց դժուարին էր միջնորդական բացատրութիւն մը յուսալ ասանկ փոքրաթիւ ակումբի մը մէջ և տիկին Տը Լա Բօշ — Ժիւկանի արթուն հսկողութեան ներքե : Գամօր վայրագար կը հարցոփորձէր իր տահմուհին երեսը, որ զեղեցիկ և ցուրտ էր՝ ինչպէս միշտ, և որու պատճառաւ իր վիշտերն աւելցան : Նոյն միջոցին իր կեանքը կը տար որպէս զի սիրարոյր խօսք մ'ըսէ իրեն մարդիկուհին :

Տուայլեի գեռուհումուհին հանձարեղարանութեան խաղերը* կը սիրէր թէև ինք չունենար այս յատկութիւնը : Այն իրիկուն թուղթի կտորներու վրայ զրովկարծիք մը յայտնելու, բան մ'ըսելու խաղը կը խաղային, ինչպէս որ գեռայսօր մօտա է : Այս անմեղ խաղերն անմեղ չէն միշտ, ինչպէս պահ մ'ետք պիտի տեսնենք :

Խաղին մասնակցիլ ուզող հանդիսականաց մատիտներ, զրիչներ, թուղթի կտորներ բաշխուեր էին, և ոմանք մեծ սեղանի մը բլրոտիքը, ոմանք ալ թիկնաթոռներու վրայ միայնակ նստած՝ խորհրդաւոր կերպով հարցումներ և պատասխաններ կ'ստուերաւորէին փոփոխակի, մինչդեռ զօրապետն ու իւր խաղար տիկին Տը Լա Բօշ — Ժիւկանին հետ : — Տիկին Տը Գանվալօն սովորութիւն չունէր մասնակցելու այս տեսակ խաղերու որք ձանձրոյթ կը տային իրեն, ուստի Պ. Տը Գամօր զարմացաւ տեսնելով թէ նէ այն իրիկուն կ'ընդունէր մատիտը և թուղթերը զբ գեռուհումուհին տուած էր իրեն : Այս տարօրինակ պարպայէն Գամօր ուշաբրեցաւ և զմիշտ կեցաւ : Ինք ևս՝ սովորութեանը հակառակ՝ խաղին մէջ մտաւ, և յանձն առաւ իսկ կողովի մը մէջ հաւքելու հետցեստէ զբուած պղտի տոմսերը : Ժամ մ'անցաւ առանց որ և է մասնաւոր դէպքի : Հանձարեղութեան դանձեր վասնուեցան :

* Jeu d'esprit.

« — Ի՞նչ է սէրը : — Այլ կարծես թէ երկու սեռին մէջ բարեկամութիւնը հնարին ըլլայ : — Սիրելին աւելի քաղցր է քան թէ սիրուիլը — հարցումներուն նման ամենէն փափուկ և անակնկալ հարցումներ հանդարտօրէն իրարու յաջորդեցին համարժէք պատասխաններով :

Յանկարծ մարդիկուհին պզտի աղաղակ մը հանեց , և իր ճակտին վրայ կաթիլ մ'արեան մեղմիկ հոսիլը տեսնուեցաւ . իսկոյն տիկին ՏՐ Գանվալօն սկսաւ խնդալ և ցոյց տուաւ իր արծաթեայ մատիւր որուն մէկ ծայրը զրիչ մը կար . սաստիկ խորհրդածութեանցը միջոցին այս գրչով իր ճակատը ծակած էր : Նոյն բոպէէն սկսեալ Գամօրին ուշադրութիւնն աւելցաւ , երբ մանաւանդ թարմագեղ կնկան մէկ արտաթիւն և հաստատ նայուածքը կարծես մտաւրտ գէպք մ'իմացուց իրեն :

Տիկին ՏՐ Գանվալօն քիչ մը մթին անկիւն մը նստած էր իր հարցումներուն և պատասխաններուն վրայ աւելի հանդարտութեամբ խորհելու համար : Այրիկեան մ'ետք երբ Գամօր տոմսերը հաւքելու համար սրահին մէջ կ'երթնեկէր , մարդիկուհին սոմսակ մը կողովին մէջը ձգեց , և ուրիշ մ'ալ անոր ձեռքը տուաւ դաղանայէս և իր սեռին յատուկ կատուի յաջողակութեամբ :

Խաղն աւարտելէն ետք մինչդեռ խրաքանչիւր ոք այս ցրուած և ճնշուած թողմի կտորները վերտին կարդալով կը զուարճանար , Պ. ՏՐ Գամօր առանց որ և է դժուարութեան և առանց նշմարուելու կոցաւ կարդալ մարդիկուհին գաղտագիտ սոմսակը , որ կարմրանման , փոքր ինչ գունատ , բայց դիւրընթեռնելի մեղանով մը գրուած էր , և յետագայ տպերը կը պարունակէր .

« Ըզուովս , մարմնովս , պատիւովս և ինչքովս ամենասիրելի ազգականս Լուի ՏՐ Գամօրինն եմ այժմէն և ընդ միշտ :

« Երակներուս անարատ արիւնովը դրուած և ստորագրուած է : « Ծ մարտ , 185 . .

« ՇԱՐԼՕԹ ՏՐ ԼԻԻԳ Տ'ԷԹԻԵԼ »

Գամօրին բոլոր արիւնն դէպ իր ուղեղը ժայթքեցաւ , աչե-

րուն վրայէն ամպ մ'անցաւ , և ձեռնովը կահի մը կռթնեցաւ . ապա մահատիպ դեղնութիւն մը ծաւալեցաւ յանկարծ իր երեսին վրայ : — Այս ակտանշանները ոչ ինչի արդարացի և ոչ վախի ակտանշաններ էին : Իր տրիփն ամեն բան կը զսպէր : Անբաուրախութիւն մը կ'ըզար երբատարդը : Աշխարհս իր սաբին տակը կը տեսնէր :

Տը Գանվալօն մարդիկուհին ահա այս համարձակ և տարօրէն յանդուդն կերպով անձնատուր եղաւ իր սիրողին և իրենց աղետալի միութիւնը հաստատուեցաւ . այս համարձակութիւնն և յանդուդն համեմուած էին այն արիւնարոյր միութիւնականութեամբ որու այնքան ընտանի էր տիկին ՏՐ Գանվալօնն սաստիկ սէրը գրաւող վեշտասաներորդ դարը :

Գ

Այս վերջին յարտէպէն (épisode) 'ի վեր դրեթէ վեց շաբաթ անցած էր . երեկոյեան ժամը հինգ էր դրեթէ , և մարդիկուհին Պ. ՏՐ Գամօրին կ'սպասէր , որ իր տունը անկախ դար Օրէնսիքի թողովին նիստէն ետք : Երիկին բնակարանին հետ հաղորդակցութիւն ունեցող իր սենեկին դուռերուն մին զարնուեցաւ յանկարծ : Զօրապետն էր դարնողը : Նէ զարմացմամբ , սարսուռով իսկ սեսաւ որ անոր դէմքը բոլորովին գունաբեկ էր :

— Բայց ի՞նչ կայ , բարեկամ : Հիւանդ ես , հարցուց էրիկին :

— Զէ , ամենեին , պատասխանեց զօրապետը :

Անկանն առջև ոտքի վրայ կեցաւ , և պահ մ'անոր նայեցաւ անբարբառ , իր ալեոր աչերն անկապթաներուն մէջ կը դառնային :

— Շարլէթ , կրկնեց վերջապէս ցատկին ժայտով մը , պէտք է որ քեզ խնդութիւն մը խոստովանիմ : . . . այս առատէն 'ի

վեր չեմ ապրիր . . . : Տարօրինակ նամակ մ'ատի . . . կուզես կարդալ :

— Եթէ կը հաճիս, պատասխանեց Շարլօթ :

Չօրսպետը նամակ մը հանեց զրպանէն և կնկանը տուաւ : Ահներևապէս և դժուարութեամբ կեղծուած էր նամակին զիրն և տակը ստորագրութիւն չկար :

— Անանուն նամակ մը, ըսաւ մարդիզուհին որուն ունցը թեթեակի վեր ելաւ 'ի նշան անարգանաց :

Այս սկսաւ կարդալ նամակը, որու բնադիրն այս է :

«Չօրսպետ, բարեկամ մը կը սրտմտի տեսնելով թէ վտաճութիւնդ և ուղղամտութիւնդ չարաչար կը դործածուին : Գու ամենասիրելիներդ կը խաբեն քեզի : Մարդ մ'որ անչափ շնորհք վայելած է քեզմէ, և կին մ'որ ամեն բան քեզ կը պարտաւորի, միացած են դաղտնի համաձայնութեամբ մ'որ կը թշնամանէ քեզի : Արմաղթեն որ ժամառաջ հասնի այն ժամն ուր պիտի կրնան ձեր ժառանգութիւնը բաժնել իրենց մէջ : Ան որ բարեպաշտական սրբաւ կը սեպէ իրեն իմացնել քեզ այս եղելութիւնը, չուզեր որ և է անձի մը դէմ զրպարտութիւն ընել : Համողեամ է ան թէ պատուդ կը սրահուի այն կնիկէն որու յանձնեցիր զայն . նէ միշտ արժանի է սիրոյդ և յարգանացդ . ներս միակ յանցանքն է հաւանիլ ապագայի հաշիւներու զոր լաւագոյն բարեկամդ չլիտնար ընելու մահուանդ, սյրի կնկանդ և ժառանգութեանդ վրայ : Խեղճ կինը հրապուրելի պատրանքովը հռչակաւոր մարդու մը հմայական աղբեղութեանն ենթարկուած է ակամայ, բայց ինչ առնուն տամ այս մարդուն ընթացքին, որ բարեկամ է, գրեթէ զաւակդ է : Այս վարմունքին համար իրեն դէմ զայրացած են ամեն պարկեշտ անձինք, և մասնաւորապէս նէ որ յանկարծ ըսուած խօսակցութեան մը շնորհիւ այս իրողութիւնները իմացաւ, և որ այս աղբարարութիւնը քեզ ընելով իր խղճին կը հնազանդի :»

Մարդիզուհին ընթերցումը աւարտելէն ետք նամակը զօրսպետին առաւ անտարբերութեամբ, և ըսաւ .

— Ստորագրութիւնն է «Էլէօնօր-Յովհաննա Տը Լա Բօշ-Ժիւկան» :

— Ար կարծես, ըսաւ զօրսպետը :

— Արեւին պէս յայտնի է, կրկնեց մարդիզուհին : — Բարեպաշտական պար . . . հրապուրել պարտն : . . . պարկեշտ անձն : . . . Անոր սովորական խօսքերն են ասոնք . . . : Արցեր է ծպտել իր գիրը, բայց ոչ ոմը . . . սակայն աւելի վճռողական բան մ'ալ կայ . կը վերագրէ Պ. Տը Գամօրին — կարծեմ ասոր վրայ խնդիրը — բուն իր նպատակները և հաշիւները զոր դուն ալ, ես ալ գիտեցինք, կարծեմ :

— Եթէ հաւատայի թէ նէ դրած է այս վատ նամակը, պուսայ զօրսպետը, մինչև մահս երեսը չէի նայեր ալ :

— Ինչիւ պէտք է խնդալ ասոր վրայ :

Չօրսպետը սկսաւ իր հանգիստաւոր պտոյտներուն մին ընել սենեկին մէջ : Մարդիզուհին ժամացոյցին կը նայէր անհանդարտ : Էրկին անոր այս նայուածներուն մին տեսաւ յանակնկալ, և յանկարծ կանկ առնելով, ըսաւ .

— Այսօր Գամօրին կ'սպասես :

— Այո, կարծեմ թէ ժողովին նստէն ետք պիտի գայ :

— Ես ալ կը կարծէի, կրկնեց զօրսպետը :

Ջգաձգային ժպիտ մ'ունեցաւ :

— Գիտես, սիրելիդ իմ, շարայարեց, այս խայտառակ նամակը ընդունելէս 'ի վեր յիմարական խորհուրդ մը կը զրաւէ զիս . . . վասն զի, յիշաւի, կարծեմ թէ խայտառակութիւնը փոխադրական . . .

— Մեր խօսակցութիւնը գաղտնապէս ըսելու խորհուրդն ունեցար, ըսաւ մարդիզուհին ծիծաղկոտ անհողութեան կերպով մը :

— Այո, ըսաւ զօրսպետը, հոն, սա վարպուրին ետևը կենարով, ինչպէս կ'ընեն թատրոնին մէջ . . . բայց, փառք Աստուծոյ, կըցայ այս վատ գրգուռին զիմարել . . . : Եթէ երբէք յանձն առնէի սյսպիսի ակարութեան մը, գէթ կ'ուզէի հաւանութիւնդ առնուլ նախ :

— Եւ հաւանութիւնս կ'ուզես, ըսաւ մարդիզուհին :

— Ինչո՞ւ Շարլոթս, կրկնեց ցաւաղին և գրեթէ աղերսալի ձայնով մը, ծեր խենդ մ'եմ, ծերունի տղայ մ'եմ . . . բայց կ'ողամ թէ այս ապիրատ նամակը կեանքս պիտի թունաւորէ . . . : Ի՞նչ ընեմ . . . արդէն այնքան անդթաբար մասնուած եմոր . . . : Ուղղասէր մարդ մ'եմ, բայց յոյժ կ'ստիպուիմ տեսնելու թէ ամեն մարդ ինձի պէս ուղղասէր չէ . . . : Ան բաներ որք ինձ անկարելի կ'երևան, ինչպէս զլսուն վրայ քայլելը, բայց սակայն դիտեմ որ ուրիշներն ամեն օր կ'ընեն այս բաները . . . : Ի՞նչ մեղքս պահեմ : Այս նենդալի տողերը կարդալով անկարելի եղաւ ինձ չլիշել թէ Գամօրի հետ յարաբերութիւններդ ժամանակէ մ'ի վեր աւելի յաճախ են :

— Անշուշտ, վասն զի շատ կը սիրեմ դինքը, ըսաւ մարդիկուհիս :

— Յիշեցի նաև միւս դիշեր, պարահանդիսին ժամանակ մենախտցիդ մէջ իր հետ առանձին տեսնուիլդ . . . : Երբ արթնցայ, քու և անոր գէմքին վրայ գաղտնիքի նշմարանք կար . . . : Ձեր մէջ ի՞նչ գաղտնիք կրնայ ըլլալ :

— Հիմա չեմ ըսեր, ըսաւ մարդիկուհին ժպտելով :
 — Ձեմ կրնար գիտնալ այդ գաղտնիքը :
 — Պիտի դիտնաս երբ ժամանակը գայ :
 — Ինչ և է կ'երդնումքեղսակայն թէ կասկած չունիմքեզմէն, ոչ քեզմէն և ոչ անորմէն . . . : զէթ չեմ կարծեր թէ իս ստուգապէս մատնես, թշնամանես անունս արտասես . . . : Աստուած չընէ որ ատանկ կասկած մ'ունենամ . . . : Բայց եթէ պատիւս յարգելով միայն կը սիրէք զիրար, եթէ մէկըմէկ սիրելով իրարու կը յայտնէք ձեր սէրը . . . : Եթէ դուք, որ երկու բարեկամներս, զաւակներս էք, քովս, զիրկս գտնուելով անհասքեր աչքով մը ծերութեանս յառաջգիմութիւնները կը հաշուէք, ձեր ապագայի նպատակները կը կարգադրէք, և այսպէս մտաւրտ մահուանս ժպտելով . . . : և ձեր երանութիւնը վայելելու համար գերեզմանիս սպասելով . . . : թերևս կարծէք թէ անմեղ էք . . . : Բայց ոչ, ասի ալ սոսկալի բան մ'է :

Զօրապետը զբաւուած ըլլալով իր արիւղին կիրքէն որ իր բո-

յը ու եռանդը կը զրգուէր, ձայնը ևս քան զէս բարձրացուցած, և իր դուհիի գէմքը տխուր արժանապատուութեան և հարկուսպառնալեաց հով մ'առած էր :

Թեթև գեղնութիւն մը ծաւալեցաւ ծաղկահաս կնկան գեղեցիկ երեսին վրայ, և սղախ ծալ մ'ամփոփեց իր փայլուն ճակատը : Զանադրութեամբ մ'որ լաւագոյն դատի մը մէջ վեհ կը սպուէր՝ խիցն զսպեց իր վաղանցուկ տկարութիւնը, և անտարբերութեամբ էրիկին ցոյց տալով վարագորուած դուռը ուսկէ մտած էր ան, ըսաւ .

— Լաւ, ուրեմն սա դուռին ետեը կեցի՞ր :
 — Երբէք պիտի չներես ինձ այս ընթացքս :
 — Բարեկամ, կիները չես ձանչեր ամենեկին : Նախանձառութիւնն այն ո՞ճիրներուն մին է զոր անոնք ոչ միայն կը ներեն, այլ նաև կը սիրեն :
 — Աստուած իմ, ասի նախանձառութիւն չէ :
 — Ինչ կ'ուզէ թող ըլլայ : Գնա կեցի՞ր հոն :
 — Անկեղծ է հաւանութիւնդ :
 — Կ'աղաչեմ . . . : Առայժմ, եթէ կ'ուզես, սենեակդ գնա . . . բայ թող այդ դուռը . . . : և երբ տեսնես Պ. ՏԸ Գամօրին գալիթը մտնելը, եկի՛ր :

— Ոչ, ըսաւ զօրապետը պահ մը վարանելէն ետք, քանի որ մինչև այս աստիճան կը հասցնեմ գործը — և կսկծալի արտումութեամբ մը հառաչեց — չեմ ուզեր գէթ կասկածիս պատրուակ մը թողուլ . . . : Անոր գալէն առաջ եթէ քուլէդ հեռանամ, կրնամ երեւակայել . . . :

— Թէ գաղտնապէս իմաց տուի Պ. ՏԸ Գամօրին, այնպէս չէ : Շատ բնական բան է այդ կասկածը : Ուրեմն հոս կեցի՞ր : Միայն թէ զիրք մ'առ, վասն զի մեր խօսակցութիւնն առայժմ կրնայ անհամ ու ձանձրալի ըլլալ :

Զօրապետը նստելով,
 — Բայց վերջապէս ի՞նչ գաղտնիք կրնայ ըլլալ ձեր մէջ :
 — Հիմա չեմ ըսեր, պատասխանեց դարձեալ իր սպիներսային ժպտուլը :

Զօրապետը զիրք մ'առաւ մերենայաբար, և սկաւ կրակը ար-
ծարծել և խորհիլ:

Մարդիղուհին կ'ողէր որ վտանգը, տրամը և սոսկումը խա-
նուին իր արփանաց հետ, ուրեմն կը պարտաւորէր զօ՛՛՛՛ ԸԼԼԸ, վասն զի նոյն միջոցին խայտառակութիւնը, կործանումն և մահն իր դրան ետևն էին. սակայն՝ ճիշդը խօսելով այս ամեն աղէ-
տից միանգամայն տեղի ունենալն իրեն համար իսկ ծառ էր, և նոյն պահուն տիրող ընթացքէն ժամանակ երբ կրցաւ երևակա-
յել վտանգին տեսիլը և խիական մեծութիւնը, կարծեց թէ սիր-
տը պիտի ճղքուի և խելքը պիտի թռի:

Մանաւանդ թէ նամակին որմէն գրուած ԸԼԼԸուն նկատմամբ չսխալած էր: Այս խայտառակ հրաշակերտն իրօք տիկին Տը Լա Բօշ-Թիւկանին գործն էր: Ատոր դէմ անիրաւութիւն չընելու համար կ'ըսենք թէ իր տուած հարուածին բոլոր հետեանքը ինքն ալ չէր գիտեր ամենեին: Ինքն իսկ կը հաւատար տիկին Տը Գանալալօնին առարինութեան. բայց իր անընդհատ հսկողու-
թեան շնորհիւ կրցած էր նշմարել թէ ժամանակէ մ'ի վեր Գա-
մօր աւելի յաճախ կը տեսնուէր մարդիղուհիին հետ, և թէ ա-
նոնց կենցաղադրական յարաբերութիւնները նոր կերպարան մ'ա-
ռած են: Գլտենը արդէն թէ տիկին Տը Լա Բօշ-Թիւկան իր ձերունի բարեկամին բոլոր ժառանգութիւնը իր տղուն՝ Սիմիամօ-
նին յատկացնելու երազը կը տեսնէր. սոսկալի սոսխութիւն մը նախազգաց, և որունց այս սոսխութիւնը ծլած միջոցին ջնջել էր բոլոր ուղածն էր զօրապետին կատակածը զրգուել Գամօրին գէմ և անոր դուռը դոցել տալ ասոր համար. բայց իր անանուն նամակը, այս տեսակ վատ չարագործութեանց շատերուն պէս, իր խայտառակ հեղինակին կարծածէն աւելի աղետալի և մահա-
ւիթ զէնք մ'էր:

Ուստի անտիական մարդիղուհին կը մտախօհէր՝ իր կրակը ար-
ծարծելով և մերթ ընդ մերթ ժամացոյցին նայելով զաղտնապէս:
Պ. Տը Գամօր մէկ կամ երկու բոպէ ետք պիտի հասնէր: Իրենց յարաբերութեանց ներկայ վիճակին նայելով կ'երեակայէր թէ Գամօրին առջի խօսքերէն իրենց զաղտնիքն անմիջապէս երևան

պիտի ելնէր, և եթէ այս զաղտնիքը յայնուէր, իր հետեւ-
թիւնը պիտի ըլլար առ նուազն հրապարակային անպատու-
թիւն, գայթակղելի անկում, աղքատութիւն, վանարդելութիւն՝
տիկին Տը Գանալալօնի համար, իսկ մահ իր երէկին կամ իր սի-
րողին, կամ թերեւ երկուքին համար:

Երբ կոմսին գալուստը իմացնող զանգառիին ձայնը հնչեց սպա-
րանին գտնութէն, այս ամեն զաղտնարներն իբր ուրուականներու խումբ մը տիկին Տը Գանալալօնին ուղեղը խուժեցին վերջին անգամ մ'ալ. ապա յետին ետանդով իր քաջասրտութիւնը ամփո-
վեց, և իր ամեն կարողութիւնները լարեց զործագրելու համար այն նպատակը զոր շատաւ երկնած էր, որ իր յետին յայն էր, և զոր մանրերկրորդի մը մէջ կրնար բոլորովին տապալել Պ. Տը Գամօրին մէկ բաւը, մէկ շարժումը, մէկ անմտադրութիւնը, մէկ անխնայութիւնը:

Առանց խօսելու ժպտելով բարեկց իր երկիւր, և նշան ըրաւ որ իր թագստոցն երթայ: Զօրապետն որ զանգակին ձայնը լսե-
լով ոտք ելած էր՝ դարձեալ վարանիլ ցոյց տուաւ, ապա կարծես ինքրինքը արհամարհելու մտօք ուսերը վեր ընելով զնաց պա-
հուեցաւ վարադոյրին ետև որ սենեկին զլսաւոր դրան հանդիպա-
կայ կողմն էր:

Բոպէ մ'ետք դուռը բացուեցաւ ծառայէ մը, և Պ. Տը Գա-
մօր ներս մտաւ: Տեսակ մ'անձապարումով կը յառաջանար՝ զէպ 'ի վառարանն ուղղուելով, և իր ժպտուն բերանն արդէն կիտովին կը բացուէր խօսելու համար երբ յանկարծ մարդիղուհիին նայուած-
քին արտայայտութիւնը զիտեց, և խօսքն իր շուրթերուն վրայ սառեցաւ. այս նայուածքն որ իր վրայ սեւեւած էր ներս մտնե-
լէն 'ի վեր՝ հետ և ճիւղաղական անշարժութիւն մ'ունէր որ ա-
ռանց ամենեկին բան մ'իմացնելու Գամօրին ամեն տեսակ վախ տուաւ անոր:

Կոմսը դժուարին կացութիւններու վարժուած, զգոյշ, խոհեմ ու միանգամայն աներկիւղ մարդ մ'էր: Ուստի ունքը չչարժեց, չխօսեցաւ և սպասեց:

Մարդիղուհին մի և նոյն ահարկու սաստիկութեամբ նայելէ ա-
ռանց դադրելու ձեռքը անոր տուաւ:

— Կամ խենդ է, և կամ վտանգը հոն է, ըսաւ Գամօր իւրո-
վի:

Տիկին Տը Գանվալօն իր հանձարին և սիրոյն արագահաս ըմ-
բռնութեամբ զյայ թէ Գամօր կը հասկնար եղելութիւնը, ուստի
անմիջապէս, առանց և ոչ իսկ թոյլտալու լուրթեան որ զիրենք
վտանգելու ժամանակ ունենայ, ըսաւ.

— Շնորհակալ եմ որ խօսքդ բռնեցիր:

— Խիստ բնական բան է, ըսաւ Գամօր, և նստաւ:

— Ո՛չ, վասն զի գիտես որ դարձեալ չարչարուելու համար ե-
կար հոս . . . : Երբ՝ ըսէ նայիմ, իմ անփոփոխելի խորհուրդս
քիչ մ'ընդունած ես՝ հոս դալով:

— Ո՞ր անփոփոխելի խորհուրդը: Ինչ կը թուի թէ շատ խոր-
հուրդներ ունիս:

— Եյո՛, բայց կ'ակնարկեմ լաւին . . . լաւագունին գէթ . . .
վերջապէս ամուսնութեանդ վրայ է խօսքս . . . :

— Գործիւն, տիկին, ըսաւ Գամօր որ՝ այսուհետև հաստատ
գիտնալով վտանգը և ասոր տեսակը՝ աւելի անյողոտդ կը քայլեր
իր կիզողական ճամբուն վրայ:

— Մի՛շտ, բարեկամ. . . : Բայց ուրիշ բան մը կայ զոր չգի-
տես: Ըսել կ'ուզեմ թէ դո՛ւն աղջիկը:

— Ե՛հ, սոցա ուրեմն փախիմ:

Մարդիզուհին ժպտի մը հետ: Հրամայական նայուածք մ'ար-
ձակեց կոմսին վրայ:

— Ուրեմն այդ խորհուրդդ առջև տանելու շատ կը փափաքիս,
կրկնեց Գամօր խնդալով:

— Սաստիկ: Հարկ չկայ նորէն ըսելու քեզ պատճառներս,
քանի որ բոլոր ձմեռն ասոր վրայ արդէն քարոզ սուրի քեզ . . .
մինչև այն աստիճան որ զօրաստը վրդովեցաւ, և մեր մէջ
գաղտնիքի մը հոտը առաւ:

— Չեմ հաւտար, զօրսպետը:

— Ո՛հ, հանդիսա եղի՛ր, ծանր բան մը չկայ . . . : Ու-
րեմն համառօտելով մեր արդէն ըսածները կ'ըսենք. Օրիորդ
Գամբէլ չըլլար . . . շատ խարտեաշ է, և ասի ըսելովս ինք-

զինքս ալ վար զարկած կ'ըլլամ. . . օրիորդ Տը Սիլա չըլլար .
. . . վասն զի շատ նիհար է . . . չըլլար նաև օրիորդ Բօլէ,
թէ և միլիոններ ունենայ . . . և խիստ լաւ ընտանիքէ . . .
չըլլար նոյնպէս օրիորդ Տ'եկրիննի . . . վասն զի տիկին Պա-
զիէրի և տիկին Վան-Քիւրիի հովերն ունի շատ: Պիտի խոս-
տովանիս որ ասոնց ամենն ալ քիչ մը վճատութիւն կը տային մեզ.
. . . բայց ինչ և է . . . այդ աղջիկները կարգելու անհնարին
ջանք ու ճիգ կայ . . . : Նորէն կ'ըսեմ թէ ուրիշ մը . . .
հրաշալիք մը դայ:

— Անունը, հարցոց Գամօր:

— Մարի Տը Թեբլը:

Լուրթիւն մ'եղաւ:

— Է՛, բան մը չըսես ամենևին, կրկնեց մարդիզուհին: Վասն
զի ըսելիք չունիս ամենևին . . . վասն զի նէ անձնական գե-
ղեցիկութիւն, դաստիարակութիւն, ընտանիք, հարստութիւն, վեր-
ջապէս ամեն բան ունի . . . երանգի մէջ միայն կրնայ գտնուիլ
այսպիսի աղջիկ մը . . . ասկից 'ի գատ քու և անոր երկիրները
կից են . . . : Կը տեսնես, բարեկամ, թէ ինչպէս ամեն բա-
նի վրայ մտածեր եմ. . . : Բայց յիշուի չգիտեմ թէ ինչպէս
աւելի շուտ չի շեցինք զան:

Պ. Տը Գամօր կը լուէր միշտ, և մարդիզուհին կ'սկսէր զարմա-
նալ անոր լուրթեան վրայ:

— Ո՛հ, կրկնեց տիկին Տը Գանվալօն, որքան ալ փնտռես
բան մ'ըսելու . . . ամենևին առարկութիւն մը չունիս ասոր
դէմ. . . : Եյո՛, անդամ մը բռնուեցար . . . : Երբ՝ կ'աղա-
չեմ, բարեկամ, այո՛ ըսէ:

Եւ մինչդեռ իր բերանը շնորհալի ու փաղաքուշ կերպով մը
«կ'աղաչեմ» կ'ըսէր, նայուածքը սոսկալի ձայնով մը զպէտք է՝
կ'ըսէր:

— Ներելի՛ է ինչ ասոր վրայ խորհիլ, տիկին, ըսաւ Գամօր
վերջապէս:

— Ո՛չ, բարեկամ:

— Բայց վերջապէս, կրկնեց Գամօր որ խիստ դու՛նտ էր,

կարծեմ թէ շուտով և դիւրութեամբ կըտաս ինձ օրիորդ Տը Թեք-
լը . . . : Օրիորդ Տը Թեքլը շատ հարուստ է . . . : Ամեն
կողմէն ուզող ունի . . . : Ասկից 'ի զատ իր մօրեղբայրը դաւա-
ռական ինչ ինչ դաղափարներ ունի, մայրն ալ ջերմեռանդութեան
զաղափարներ որք կընան յոյժ . . .

- Ատի իմ վրայ ձգէ, ընդմիջեց մարդիզուհին :
- Բայց անի ասի կարգելու մոլութեանդ պատճառն ի՞նչ է :
- Բարեկամ, սիրահարութեան զբաղումը չունեցող կիներն ա-
մուսնութիւններ կազմելու մոլութիւնը ունին :
- Բայց, կատակը մէկդի, տաւր ինձ քանի մ'օր որ խորհիմ :
- Ի՞նչ բանի վրայ պիտի խորհիս : Չըսած ես ինձ միշտ թէ
կարդուելու միտք ունիս . . . թէ առթի մը կ'ստղասես միայն :
Արդ՝ ասկից լաւագոյն առիթ պիտի չդանես բնաւ . . . և եթէ
փախցնես այս առիթը, բոլոր կեանքիդ մէջ պիտի զղջաս . . . :
- Բայց դէ՞ ընտանեացս կարծիքը հարցնելու ժամանակ տուր
ինձ :

— Ընտանեացդ : Աստուի կ'ընես : Կարծեմ թէ շատ չսփահաս
ես . . . : Ասկից 'ի զատ ովէ ընտանիք ըսածդ : Տը Լա Բօշ-
ժիւկան մօրաբոյրդ :

- Անշուշտ . . . չեմ ուզեր վերաւորել իոկ զինքը :
- Տէր Աստուած, այդ վախը մի ունենար երբէք. ես կ'ըսեմ
թէ սաստիկ պիտի հրճուի ան :
- Պատճառը :
- Պատճառները գիտեմ ես :

Եւ ծաղկահաս կիներն այս պատասխանը տալէն ետք՝ իր վրայ
տարօրինակ խնդուկ մ'եկաւ որ մագմնաց ջրաձղային ցնցումներու
պիտի փոխուէր, վասն զի իր ջիղերն այս սոսկալի ձղաժուռն
ետք կարծես մոլեղներ էին :

Գամօր իրեն առաջարկուած սոսկալի հանելուկին ամենէն
մթին կէտերը սակաւ առ սակաւ նշմարած ըլլալով իւրովի զգաց
թէ պէտք էր կարճ կատել այս խօսակցութիւնը որով իր ամեն
կարողութիւնները մինչև զրեթէ անտանելի աստիճան մը բորբո-
քեր էին : Ուստի ստք ելաւ :

— Ստիպուած եմերթալու, վասն զի տունս չեմ ճաշեր. բայց
վաղը նորէն պիտի դամ եթէ հաճիս :

— Անտարակոյս . . . : Հրաման կըտան որ զօրապետին իմա-
ցընեմ եղելութիւնը :

— Տէր Աստուած . . . այո, վասն զի անկեղծաբար կ'ըսեմ
թէ սրբան ալ առարկութիւններ փնտուեմ, չեմ գտներ :

— Լաւ, ուրեմն պաշտելի ես ինձ, ըսաւ մարդիզուհին :
Եւ ձեռքը երկնցուց զոր Գամօր պագաւ և դուրս ելաւ :

Մարդ Տը Գանվալօն զօրապետէն շատ աւելի կորովասես ըլ-
լալու էր որպէս զի նշմարէր այն քանի մը տկարութիւնները
կամ անհամաձայնութիւնները որք այս երկու երևելի արհեստա-
ղէտներուն կողմէն անոր առջև ներկայուած այս կատակերդու-
թեան մէջ կային : Իրենց աչերուն անմուռն խաղը միայն կրնար
բաւել զիրենք մատնելու, և զօրապետը չէք տեսներ այս խաղը :
Իսկ անոնց հանդարտ, զիւրիս, բնական արամախօսութեան մէջ
չկար խօսք մը որ չկարենար հասկնալ և որով չհասաստուէին իր
վրդովումներն և չզիոթուէին իր կասկածները : Այն միջոցէն
սկսեալ ամեն կասկած իր մտքէն փարատեցաւ բոլորովին. վասն
զի զօրապետը շատ պարզ և շատ անմեղ մաքի տէր ըլլալով չէր
կրնար ոչ երևակայել այն զրուելի կարգադրութիւնը որու մէջ յու-
սահատական պատասխարան մը փնտուած էր տիկին Տը Գանվալօն,
և ոչ մտնել ամբարշտութեան այսքան խորունկ անդունդ մը :

Զօրապետը թաղտոյցէն ելնելով երբ կ'նկան առջևն երեցաւ
վերստին, ահարկ էր. ամօթահարութեան և խոնարհութեան
շարժում մ'ըրաւ. կ'նկանը ձեռքը բունեց և ժպտեցաւ իր հողիին
բոլոր բարութեամբն ու խանդաղատանքովը : 'այն պահուն մար-
գիզուհին իր ջղային դրութեան մէկ նոր ընդգիմագործութեանը
չգիմանալով սկսաւ հեծկտալ, որով զօրապետը բոլորովին յուսա-
հասեցաւ :

Այս բարեբարոյ մարդը կըյարդենք, և հետևաբար երկար բա-
րակ չպիտի նկարագրենք տեսարան մ'որուն հետաքրքրութիւնը
պարկեշտ անձերու առջև նոյն տեսարանէն հետևող ցաւալի տպա-
ւորութիւնը ջնջելու չափ սաստիկ չէ :

Նոյնպէս պիտի լուենք այն խօսակցութեան վրայ զոր հետեւեալ օրն ունեցան տիկին Տը Գամօր՝ և Պ. Տը Գամօր: Ընթերցողը հասկցաւ անշուշտ թէ Գամօր՝ այս սև մեքենայութեան մէջ տիկին Տը Թեքլի անուան երևալը տեսնելով առջի անգամ զգացած էր դժկամակութեան և նոյն իսկ զըզուանքի այնպիսի զզացում մ'որ մաղ մնաց՝ ամեն բան պիտի վտանգէր: Ինչպէս յաջողեցաւ իր խղճին այս յետին ապստամբութիւնը զսպել, մինչև անգամ ակամայ ընդունելով այն միջոցը որ իր տարփանայ անդորութիւնը պիտի ապահովէր. ինչպիսի գորովելի իմաստակութիւններով համարձակեցաւ համոզուելու թէ սղ իր մեղսակցին, մարդիզուհիին պարտք ունէր միայն, թէ անոր կը պարտաւորէր ամեն բան, այս բանը անգամ, մեկնելու փորձ մը չպիտի ընենք: Մեկնելը մեղմել է, և հոս չենք ուզեր մեղմել: Ա՛րքենք միայն թէ Գամօր համակերպեցաւ այս ամուսնութեան: Բռնած էր ճամբայ մ'որ կանկ չառներ մարդս. ուրիշ բան է եթէ շանթ մ'արդիլէ անոր քայլը:

Գանք տիկին Տը Գանդալունին. այս ազականակիր և ամբարտաւան սրտին վրայ տկար զաղափար մ'ունեցած կ'ըլլաս. եթէ զարմանաս տեսնելով թէ պաղարիւնով և խորհրդածութենէ ետք անպատճառ կ'ուզէր առջև տանիլ այն նենգալի նյարտակը զոր վտանգին մերձաւորութենէն դրդուելով երկնած էր: Արհասկնար նէ թէ զօրապետին կասկածներն օրին մէկն աւելի սպառնական կերպով պիտի զրդուէին եթէ ծանոցուած ամուսնութիւնը չկատարուէր: Տրփազին կը սիրէր Գամօրը, ոչ նուազ կը սիրէր իրենց սիրահարութեան տրամական գաղտնիքը. ասիկց'ի զատ անասելի սարսափ մը զգացած էր մտածելով թէ կրնայ զրկուիլ այն անբաւ հարստութենէն զոր իրը սեպելու սովորած էր. վասն զի իր առջի պատանութեան անշահախնդրութիւնն այն ատեն շատ հեռի էր, և չէր կրնար հանդուրժել զաղափարի մ'որ էր ողորմելի կերպով ընկնիլ բարիզեան այն աշխարհի առջև որուն իր պերճանքովն ու դեղեցիութեամբը կ'իշխէր: Սէրը, գաղտնիքը, հպարտութիւնը, վերջապէս ամեն բան կ'ուզէր պահել ամեն զոհողութիւն յանձն առնելով, մանաւանդ երբ աղէկ մտածեց, թուեցաւ

իրեն թէ իր այս երանութիւնը պահելու ապահովադոյն միջոցն էր Գամօրին ամուսնութիւնը:

Իրաւ է որ մարդիզուհիին այս ամուսնութեան գործը առջև տանելով տեսակ մը ոսոխուհի (rivale) կ'ստանար իւրովի, բայց ինքն իր վրայ շատ բարձր համարում ունենալուն համար՝ չէր վստահար այս ոսոխուհիէն, և օրիորդ Տը Թեքլը միւս ամեն աղջիկներէ նախապատիւ կը սեպէր, վասն զի կը ճանչէր զան, և վասն զի օրիորդ Տը Թեքլը ամենայն նկատմամբ իրմէն ստորին էր:

Գրեթէ տասնուհինգ օրէն ետք զօրապետն աւտու մը տիկին Տը Թեքլին տունն եկաւ և ներս աղջիկը ուզեց Պ. Տը Գամօրին համար: Ցաւալի բան մ'է մանրամասնապէս նկարագրել այն ուրախութիւնը զոր զգաց տիկին Տը Թեքլը: Միայն գաղտնապէս զարմացաւ թէ ինչու Պ. Տը Գամօր ինքն անձամբ եկած չէր իր խնդիրը մատուցանելու համար. բայց Գամօր այս սիրտը ունեցած չէր: Սակայն առաւօտէն 'ի վեր Բէջեի կը գտնուէր, և իսկոյն տիկին Տը Թեքլի տունը գնաց երբ իմացաւ թէ ընդունուած է իր խնդիրը: Երբ այս հրեշտային ընթացքը ունենալու որոշումը ըրաւ, որոշեց գէթ գերբնասիր ձևերով վարուիլ, և զիստենք թէ քաջահմուտ էր այս տեսակ ձևերու:

Գիշերը՝ Տիկին Տը Թեքլը և իր աղջիկն առանձին մնալով երկար ատեն աստղերու քաղցր պայծառութեան միջոցին ժու եկան իրենց սիրելի դարաստափին վրայ. աղջիկը մօրը փառք կը տար, մայրն Աստուծոյ փառք կը տար, երկուքն իրենց սիրտերը, երազները, համբոյրները և արտաւերջ մէկմէկու կը խառնէին, և այսպէս խեղճ կիներն այնքան երջանիկ էին որքան ներքի չէ ըլլալ այս աշխարհիս մէջ:

Օգոստոս ամսուան մէջ Պ. Տը Գամօր և օրիորդ Տը Թեքլը պատկուեցան:

7

Տը Գամօր կոման ու կոմսուհին քանի մը շարաթ Քէօյեի բնակելէն ետք Բարիզ դացին իրենց ապարանը տեղադրուելու համար որ Էֆէրմիլի պողոտային մէջն էր :

Տիկին Տը Գամօր այն օրէն սկսեալ ամեն ամիս ժրութեամբ թղթակցեցաւ իր մօրը հետ : Հոս պիտի օրինակենք իր նամակներուն մէկ քանին , որով ընթերցողն աւելի շուտով և աւելի մտերմաբար պիտի ճանչէ այս նորածիլ կէնը :

ՏԻԿԻՆ ՏԸ ԳՆՄՕՐ ԱՌ ՏԻԿԻՆ ՏԸ ԹԵՔԼԸ

Հոկտեմբեր . . .

Ամենասիրելի մայր իմ , կը հարցնես ինձ թէ երջանիկ եմ : Զէ . . . երջանիկ չեմ : Սակայն թե ու թիւ ունիմ . թուչունի մը պէս կը լողամ երկինքը . գլխուս , աչքիս , սրտիս մէջ արև կ'զգամ : Ասով կը շլանամ , կ'զգլխիմ , երկնային արտուօք կը թափեմ : Զէ , գորովալի մայր իմ , հաւատ որ անհնարին բան մ'է այս : Երբ կը խորհիմ թէ անոր կինն եմ , երբ կը մտածեմ թէ էրիկս է ան որ խեղճ պղտի մտքիս մէջ կ'իշխէր միտք մ'ունենալէս 'ի վեր , և որ բոլոր տիեզերաց երիտասարդներուն ընտրելադոյնն էր իմ առջև . երբ կը խորհիմ թէ անոր կինն եմ , թէ մշտնջենապէս կ'ապուած ենք միասին . . . ինչպէս կը սիրեմ կեանքը , ինչպէս կը սիրեմ քեզի , ինչպէս կը սիրեմ Արարիչը :

Ինչպէս զիտես , անտառն ու լիճն երկու քայլ անդին են . ես և էրիկս զրեթէ ամեն առտու հոն կ'երթանք ձիով պտոյտ ընելու համար . . . էրիկս , կ'ըսեմ , կը լսես , այո , էրիկս և ես հոն կ'երթանք : Զգիտեմ ինչպէս օդը միշտ զեղեցիկ է , եթէ նաև

անձրև զայ , ինչպէս այսօր . ուստի ահա ետ դարձանք : Այս առտու շրջադայութեան ժամանակ համարձակեցայ բոլորովին մեղմիկ հարցումներ ընել իրեն մեր պատմութեան ինչ ինչ կէտերունկատմամբ որք մութ կը մնային ինձ : Օրինակի ազադաւ , ինչո՞ւ կարդուեցաւ հետս :

— Վասն զի կ'երևայ թէ կ'ախորժէի քեզմէ , օրինո՞ղ Մարի :

Սիրելի է իրեն այս անունը տալ ինձ որ վայրենական մանկութեան չզխտեմ ինչ յարավէպը կը յիշեցնէ իրեն — վայրենական բառն ալ իրն է :

— Եթէ կ'ախորժէի իր իղձն , ինչո՞ւ համար այնքան քիչ ցոյց կը տայիր ինձ ախորժիլ :

— Վասն զի կարդուելու հաստատ որոշում ընելէ առաջ չէի ուզեր սիրաբանել հետդ :

— Ինչպէս կրցայ ախորժելի ըլլալ քեզ , քանի որ զեղեցիկ չեմ բոլորովին :

— Իրաւ է որ բոլորովին զեղեցիկ չես , պատասխանեց այս անդութ մարդը , բայց շատ աղւոր ես , նա մանաւանդ կատարելապէս շնորհալի ես մօրդ պէս :

Այս ամեն մութ կէտերն 'ի գոհունակութիւն օրինո՞ղ Մարիին պարզուած ըլլալով , օրինո՞ղ Մարին սկսաւ արշաւակի վազել , վասն զի ոչմիայն անձրև կը գար , այլ նաև չզխտեմ ինչո՞ւ հարսնակի մը պէս յանկարծ կարմրած էր նէ :

Սիրելի մայր իմ , որքան քաղցր է սիրուելն այն անձէն զոր կը պաշտես , որքան քաղցր է նաև անորմէ սիրուելն ճիշդ այնպէս ինչպէս կ'ուզէիր , ինչպէս կ'երազէիր սիրուիլ , ինչպէս վիպային նորածիլ սրտովդ պատրաստուեր էիր սիրուելու : Զպիտի հատաս թերես եթէ ըսեմ թէ այսքան փոփոկ խնդրի մը վրայ տաս թերես եթէ ըսեմ թէ այսքան փոփոկ խնդրի կերպեր , սիրելու դանազան կերպեր կային , անշուշտ դուհիկ կերպեր , կամ պահանջոտ կերպեր , կամ տղայական կերպեր , կամ բոլորովին ծիծաղելի կերպեր , և թէ այս սիրելու կերպերուն և ոչմին պիտի ըլլար մեր գրացի իշխանին սիրելու կերպը : Անի կը պարտաւոր էր ըլլար մեր գրացի իշխանն սիրելու կերպը : Անի կը պարտաւոր էր սիրել իբր իշխան մը , վասն զի ինքն ալ իշխան է , վա-

յեւլութեամբ և արժանապատուութեամբ, ծանր և փոքր ինչանաչառ խանդաղատութեամբ, բարեսիրութեամբ, զրեթէ զիջումով — իբր սիրահար, միանդամայն իբր տէր — իբր տէր, բայց իբր սիրահար-տէր, վերջապէս իբր էրիկս, սիրելիս:

Հրեշտակդ իմ սիրելի, որ մայրս ես, երջանիկ եղիւր երանութեամբս որուն բուն հեղինակն ես: Չեռներդ կը պահնեմ. թեւեղ կը պաղնեմ, շնորհակալ եմ, հողուովսիրտով կը սիրեմ քեզի: Եթէ քուս ըլլայիր, երջանկութեանս չափն անցած կ'ըլլար, կարծեմ չլիմանալով կը մեռնէի . . . : Սակայն շատ շուտ եկուր. պատրաստ է սենեակդ. գոյնը կ'ապուտակ է երկնից պէս ուր կը լողամ. . . : Արդէն ըսի քեզ ասի, կարծեմ, բայց կը կրկնեմ ըսածս: Մնաս բարեաւ, դու որ աշխարհիս ամենէն երջանիկ ու պզտիկ կնկան մայրն ես:

ՕՐՈՐԴ ԾԱՐԻ, ՏԸ ԳՆՄՕՐ ԿՈՄՍՈՒՇԻ

Նոյեմբեր.

Մայր իմ, կը լացնես զիս . . . զիս որ ամեն առտու քեզ կ'սպասէի: Սակայն բան մը չեմ ըսեր քեզ, չեմ աղաչեր: Եթէ հախս առողջութիւնը բոլոր ձմեռ ներկայութիւնդ պահանջելու չափ տկարացած է, զիտեմ թէ որ և է աղաչանք քեզի պարտաւորութենէդ չհեռացներ. բայց շնորհ ըրէ, բարի հրեշտակս, մի չափանցեր, և մտածէ որ պզտի Մարիդ ալ կ'ապուտակ սենեկին առջևէն չանցնիր առանց սիրտն ելնելու:

Եթէ 'ի բայ առնուս այն վիշտը զոր կը տաս իրեն, երջանիկ է ան որքան որ կը նստ փափաքիլ: Իր սիրուն իշխանը սիրուն է միշտ և իշխան է միշտ: Անի Մարիդ կ'առնու կը տանի որպէս զի յիշատակարանները, թանդարանները, թատրոնները տեսնէ, իբր դաւառացի պզտի կին մը, ինչպէս է իրօք: Ոչ ապաքէն սրտառուչ է ասանկ նշանաւոր անձի մ'այս ընթացքը: Հիացումներովս կը զուարճանայ ան, վասն զի հիացումներ ունիմ: Բարիդ հոյակապ է, բայց ասոր վրայօք բան մը չըսես մօրեղբայրս Տէ Բամբօրին. Բարիզի մէջ մէկ օրն երկու օր կ'արժէ մտքին և կեանքին համար:

Էրիկս երէկ Վերսայլ տարաւ զիս: Գէպ 'ի Վերսայլ ուղևորութիւնս կ'երեւայ թէ հոս մարդոց առջև փոքր ինչ ծիծաղելի փախուստ մ'է, վասն զի դիտեցի որ Տը Գամօր կոմսը չպարծեցաւ այս ուղևորութեամբ. ինչև է, Վերսայլ բոլորովին հաստատեց այն սպաւորութիւնները որք տրուեր էին ինձ: Փոփոխութիւն կրած չէ հախս հետ հոն դացած ըլլալէդ 'ի վեր: Այս քաղաքը մեծաշուք, հանդիսաւոր և ցուրտ է:

Սակայն պալատին սիւնազարդ դստիկոնին ներքև նոր և հետաքրքրական թանգարան մը կայ, որու մէջ ընդհանրապէս պատմական պատկերներ, այն ժամանակուան պատճէններ կամ բնագիրներ կան: Ամեն բանէ աւելի հետաքրքրութիւնս շարժեցաւ երբ Շարլը Լը Թեմբերէն մինչև Վուաշինը թըն կարգաւ տեսայ այն ամեն երեսները զոր երեակայութիւնս այնքան ստեղծ իր առջևն երեցնելու փորձն ըրած էր: Կարծես թէ Եղիստեան դաշտերուն մէջն ես և թէ այս ամեն մոռելներուն հետ կը տրամախօսիս: Գիտցիր, մայր իմ, որ շատ բաներ բացատրեցի Պ. Տը Գամօրին որ դիտութեանս և հանձարիս վրայ զարմացած կ'երեւար: Սակայն, ինչպէս քաջ կը կուսհես, իր հարցումներուն պատասխան տուի միայն. բայց պատասխան տալ կարենալս կարծես զարմանք առաւ իրեն: Արեմն ինչն համար այն հարցումները կ'ընէ ինձ: Եթէ չլիտեր դանազանիլ այլ և այլ Տը Գօնթի իշխանութիւնները, չլիտալը շատ բնական կ'երեւայ ինձ, բայց նոյնպէս խիստ բնական է անոնց մէն մին ճանչել կարենալս քանի որ մայրս սորվեցուցած է ինձ ճանչել զանոնք:

Ապա իմ թախանձալի աղաչանացս վրայ դացինք պանդուկը ճաշեցինք: Ահնացս լաւագոյն վայրկեանն էր այս ճաշը: Էրիկին հետ սրանդոկին մէջ ճաշելն ուձիրներուն ամենէն զմայլելիին է:

Ասի արդէն քեզ թէ դիտութեանս վրայ զարմացած երեւած էր ան: Արտարտաւորիմ յաւելուլ թէ ընդհանրապէս զարմացած կ'երեւայ երբ կը խօսիմ: Համր կը կարծէր զիս: Իրաւ է որ գրեթէ անխօս եմ, վասն զի կը խոստովանիմ թէ սաստիկ վախ կը տայ ինձ ան: Յիրաւի շատ կը վախնամ որ ահա՞նց չըլլամ, անմիտ, կամ պահանջող (prétentieux) կամ իմաստակ չերեւակիրեն: Այն օրն

ուր իր հետը համարձակ խօսելու սովորած պիտի ըլլամ, եթէ երբէք պիտի գայ այն օրը, և ուր պիտի կրնամ ցոյց տալ իրեն որքան ուղիղ դատում և մանր մունր հմտութիւններ կրնամ ունենալ, այն օրը, կ'ըսեմ, մեծ բեռէ մը պիտի ազատիմ, վասն զի ստուգիւ կը կարծեմ երբեմն թէ մանկուհի մը կը սեպէ զիս: Անցեալ օր պուլվարին վրայ խաղալիկներ վաճառողի մը կրպակին առջև կանկ առեր էի (ի՛նչ պակտութիւն), և որովհետև պէպէկներու շքեղ գունդի մ'ակնայեռ նայիլն տեսաւ,

— Գէպէկ մը կ'ուզե՞ս, օրհորդ Մարի . . . ըսաւ ինձ:

Ո՛չ ապաքէն սոսկալի է այս, մայր իմ:

Ինքն ամեն բան գիտէ (Տը Գօնթի իշխանուհիներէն 'ի զատ) ամեն բան կը բացատրէ ինձ, բայց քեզ կարճ ու կտրուկ կերպով, խօսքով մը կը բացատրէ պարտ մը կատարելու համար, ինչպէս կը բացատրեն անձի մ'որու յոյս չունիս հասկցնել: Այլ սակայն նրբան քաջ կը հասկնամ ես, խեղճ մայրիկդ իմ:

«Բայց աւելի աղէկ, կ'ըսեմ իւրովի. վասն զի եթէ իս կը սիրէ իբր չհասկցող կին մը, եթէ իս կը սիրէ իբր ապուշկին մը, հապաւ ի՛նչպէս պիտի սիրէ ետք:» I love you excessively. (Սաստիկ կը սիրեմ քեզի)

Գեկտեմբեր.

Բարիզ վերադարձանք, մայր իմ, և ստանուհինդ օրէն 'ի վեր այցելութիւնները բոլոր ժամանակս կը զրաւեն: Մարդերը հոս այցելութեան չեն երթար. սակայն 'ի հարկէ երիկս կը պարտաւորի առաջին անգամ զիս ներկայելայն անձերուն որոնց հետ պիտի տեսնուիմ: Ուստի հետս կը գայ, և հետս գալով ես աւելի կը զուարճանամ քան թէ ինք, կարծեմ: Մովորականէն աւելի ծանր կը վարուի. այս սիրուն մարդուն սրտի նեղութեան միակ ձևն իր այս ծանրութիւնն է: Տեսակ մը հետաքրքրութեամբ կը նային ինձ: Յայտնի է թէ սաստիկ հետաքրքրութեան առարկայ մ'է այն կինը զոր այս իշխանագունն իր ընտրութեամբը պատուեց: Այս պատճառաւ օղորդիկ զգամ և վեհերոս կը դառնամ: Արևարմը մը իմ, համարձակ և բնական կերպով չեմ վարուիր: Մարդիկ

տղեղ և ապուշ կը սեպեն զիս: Սաստիկ կը զարմանան: Կ'ենթադրեն թէ երիկս հարստութեան համար կարգուած է հետս: Ար փափաքիմ լալ: Նորէն կառքը կը մանենք. Գամօր կը ժպտի, և խկոյն երկինք կը թռիմ: Ահա մեր այցելութիւնները:

Սիրելի մամաս, կ'իմացնեմ քեզ թէ տիկին Տը Գանվալօն հրեշտակ մ'է քի՛նծի քհամար: Շատ անգամ Տէղ-Իթալիէն թատրոնը իր օթեակը կը տանի զիս, վասն զի իմս յունվարի Աին ազատ պիտի ըլլայ: Երէկ իր զեղեցիկ սրահներուն մէջ պղտի հանդէս մը տուաւ մասնաւորապէս ինձի համար: Չօրսպետը սրարահանդիսին սկիզբ տուաւ ինձի հետ: Ի՛նչ բարի մարդ: Ար սիրեմ զինքը, վասն զի կ'սքանչանայ քու վրայ: Մարդիզուհին լաւազոյն պարագէտները ինձ ներկայեց: Ատնք երիտասարդ պարոններ էին, և իրենց վիզն ու շապիկն այնքան բաց էին որ կը սարսուէի: Ուս և վիզը մերկ մարդեր չտեսեր էի երբէք. զեղեցիկ չէ այս մերկութիւնը: Սակայն յայտնի է թէ անոնց ամեն մէկը վայելուչ և հարկաւոր կը սեպէ ինքզինքը: Այս պարոններուն ճակատը թախծալիւ և ծանր, նայուածքն անարգու և յաղթթական, բերանն ալ միշտ բաց է աւելի աղէկ շունչ առնելու համար. իրենց «էրէն» կը պարզուի և կը ծփայ իբր երկու թև: Մէջքէդ կը բռնեն, մայր իմ, իրենց ապրանքը բռնելու պէս, նայուածքով կ'իմացնեն քեզ կանխաւ թէ իրենցմէ հափափուելու պատիւը պիտի ունենաս, և իրօք կը հափափեն քեզի. երբ շնչասպառ կը յոգնին, դարձեալ աչքով կ'իմացնեն քեզ կանխաւ թէ կենալու ուրախութիւնը պիտի տան քեզ, և կը կենան. պահ մը կը հանդէին, կը շնչեն, կը ժպտին, իրենց ակունները ցոյց կը տան. նոր նայուածք մը և վերստին կը մեկնին: Ի՛նչ պաշտելի արարածներ . . . :

Գամօր վալսեց հետս և զո՛հ երեցաւ: Մարդիզուհին հետ վալսելը առաջին անգամն է որ տեսայ. աստղերու պարն է այս: Բան մ'ուշադրութիւնս դրանց այս և ուրիշ պարադաներու մէջ, այսինքն կիները յայտնի յայտնապէս հոգի կը տան երիկիս վրայ: Ահարկու բան է այս, զորովալի մայր իմ: Անգամ մ'ուս հարցուցի իւրովի թէ «Ինչո՞ւ զիս ընտրեց Գամօր. ի՛նչպէս կրնամ հաճելի ըլլալ իրեն, թէ վերջապէս կրնամ մ'ոյիլ»: Այս ամեն խորհրդածութիւններուն հետ

տեւութիւնն եղաւ յետադայ խենդութիւնն որուն նպատակն է քիչ մը վտաահուութիւն տալ ինձ :

Տը Գամբը կոմսուհին Կարգերովիւնը շք ինն անյամբ ըրո՞ծ է :

«Տը Գամօր կոմսուհին՝ որ Պ. Տը Թեքլի Մարի անունով աղջիկն է՝ իր քսանամեայ հասակին մօտեցող անձ մ'է, և իր դեռահասութեան հակառակ շատ բանիրուն է : Ինչպէս էրիկն ալ ուրիշներէն առաջ կը խոստովանի, գեղանի չէ այս կինը, բայց աղւոր է : Սակայն կը կասկածի այս աղւորութեան նկատմամբ : Բայց սեննեք : Նախ կոմսուհին խիստ երկայն ոտք ունի, բայց Տիան որսուհին ալ այս սրկսութիւնը ունէր, ու թերևս այս պատճառաւ կոմսուհին կը քայլէ թեթևութեամբ մը զոր չունենար գուցէ եթէ երկայն չըլլար իր ոտքը . հասակը կարճ է ընականաբար, բայց ձիւ վրայ աղէկ է այս կարճութիւնը . զիրութիւնը սովորական, երեսն անկանոն, բերանը շատ մեծ և շուրթերը շատ հաստ են . բարէ, պիտի ստուեր մ'ալ ունի . ակրաները բարեբաղդաբար ձերմակ, բայց ոչ բաւական փոքր, քիթը միջակ, քիչ մը բաց . աչքը մօրն աչքին նման է, և այս է իր լաւագոյն ունեցածը . ունքն իր մեծ-մօրեղբօր Տէ Բամբօրին ունքէն շտարբերի, որով դժնէպէ՞մ կ'երևայ կոմսուհին, թէ և այս դժուութեան անհիմն ըլլալը բարեբաղդաբար կը հաստատուի ներազէ մըին ընդհանուր արտայայտութենէն և մանաւանդ հոգւոյն հեղութենէն . գոյնը թուի է մօրը պէս . բայց թուի գոյնը մօրը կ'երթայ, իսկ իրեն չերթար . մաղբը սև, կապուտակ, թանձր և ունայնապէս շքեղ են : Չգիտեմ թէ բոլորն 'ի միասին ինչ կընշանակէ » :

Մայր իմ, զիս խրախուսելու սահմանուած այս նկարագիրն ամենեկն չխրախուսեց զիս . ընդհակառակն միջտութիւն տուաւ, վասն զի կը կարծեմ թէ տեսակ մը ազնոյի դաղափարը կը տայ այն :

Մ'ուզէի կիներուն ամենէն գեղանին, ամենէն ընտիրը, ամենէն հրապուրելին ըլլալ, սկ'մայր իմ, բայց՝ եթէ հաճելի եմ էրիկիս՝ ալ աւելի կը հրճուիմ : Ինչ և իցէ, փնտ.ք Աստուծոյ, թերևս իրեն աղւոր կ'երևամ այնքան որքան չեմ, վասն զի մարդիկ այս նիւթերուն վրայ ճիշդ մեզի սէս ձաշակ չունին : Այս պատճառաւ չեմ հասկնար

թէ ինչո՞ւ քուելի չարանշանար տիկին Տը Գանվալօնին վրայ : Ներա հետ անտարբերութեամբ կը վարուի : Ես՝ եթէ այր ըլլայի՝ կը խենդ-նայի տիկին Տը Գանվալօնին համար :

Մնաս բարեւա, մայրդ իմ սիրելագոյն :

Յունվար .

Արյանդիմաննես զիս, սիրելի մայրս : Նամակիս ձեր վերադրեր է քեզի : Ձես ըմբռներ թէ ինչ պատճառաւ այս անտիճան հնունուք և հոգ կ'ընեմ, կըսահմանեմ, կը բաղդատեմ արտաքին անձս : Այս ընթացքիս մէջ փոքր ինչ փոքրողութիւն և թեթևութիւն մը կայ որ կը վերադրէ քեզի : Արհարցնես իւրովի թէ ինչպէս կրնամ կարծել որ մարդ մ'այս մարմնային գեղեցկութիւններով կը կապուի միայն, և թէ մտքին ու սրտին յատկութիւններն արժէք մը չունին իրեն համար : Բայց, սիրելի մայր իմ, ենթադրելով թէ աղջիկդ ունի մտքին և սրտին այդ յատկութիւնները, ինչ բանի կրնան ծառայել անոնք, եթէ ոչ համարձակութիւն և ոչ առիթ ունի ցոյց տալու այն յատկութիւնները : Բայց համարձակութիւն ունենամ անդամ, կ'սկսիմ ստուգիլ հաւտալ թէ առիթը պիտի սրտի միջոց . վասն զի պէտք է խոստովանիլ քեզ թէ Բարիդ կատարեալ չէ, և թէ այս արևը բիծեր ունի : Բարիդ սքանչելի տեղ մ'է, բայց միշտ որ բնակիչներ ունի . ըսել չեմ ուզեր թէ անբալաբաբար են, ընդհակառակն շատ քաղաքաջար են, բայց նաև շատ անմտաղիր են, և կրցածիս չափ կը կարծեմ թէ անոնք կ'ապրին և կը մեռնին առանց խորհելու թէ ինչ կ'ընեն : Յանցանքն իրենցը չէ, վասն զի խորհելու ժամանակ չունին : Առանց Բարիդէն դուրս ելնելու յաւիտենական ուղևորներ են անոնք զոր անընդհատ կը ցրուեն շարժում և հետաքրքրութիւնը : Արի՜ ուղևորներն աշխարհիս մէկ հետաքրքրական կողմը տեսնելէն և ամիս մը կամ երկու ամիս իրենց տունը տեղը և ընտանիքը մոռնալէն ետք իրենց տունը կը գաւառան և կընստին, բայց բարիցիք ոչ երբէք : Ասոնց կեանքը ճամբորդութիւն մ'է : Տուն տեղ չունին : Իրենց համար երկրորդական բան մը կը դառնայ ինչ որ այլուր կեանքի առաջին բանն է : Ինչպէս ամենուրեք, նոյնպէս և Բարիդի մէջ բնակիչները տուն տեղ ունին, սենեակ ունին, պէտք է որ ունենան . ինչպէս ան-

մեն տեղ, նոյնպէս և հոն այր ու հայր, կին ու մայր են, և պէտք է որ ըլլան. բայց կարելի եղածին չափ քիչ են այս ամեն բաները, խեղճ մայրս: Շահը տան մէջ չէ. շահը փողոցին, թանդարաններուն, ախմարաններուն, թատրոններուն, ժողովարաններուն մէջն է, այն արտաքին անբաւ կեանքին մէջն է որ ամեն կերպարանքով զիշեր ու ցորեկ կը յուզուի Բարիզի մէջ, քեզի կը քաշէ, կը դողուէ, ժամանակը, միտքը, սիրտը կ'առնու, և ամեն բան կը լսուի: Բարիզ աշխարհին լուազոյն տեղն է անկէ անցնողներու համար, բայց յուսեցոյնն է հոն ապրողներու համար:

Արդ՝ երբ փնտուցի այն յատկութիւնները, որով կրնայի յարել ինձ էրիկս որ մարդերուն լուազոյնն այլ բարիզցի մ'է, 'ի հարկէ պարտաւորեցայ միտքս բերել այն յատկութիւնները որք անմիջապէս կ'ըմբռնուին և որք պէտք չունին մանրազնին քննութեան առնուելու. հիմա միտքս հասկցմբ, մայրդ իմ սիրեցեալ:

Ինչ և է, իրաւունք ունիս, այս մտատանջութիւնս ողորմելի է, ինձի և քեզի համար անարժան է, վասն զի զիտես որ ըստ ինքեան պղտիկ և ոչ վատ անձ մ'եմ: Եթէ կրցած ըլլայի մէկ կամ երկու տարի հին դեկի մը, մնական անտառի մը մէջ փակել Պ. Տը Գամօրը, բացարձակապէս յայտնի է թէ շատ ախորժելի պիտի երևար ինձ այս բանը, վասն զի աւելի ստէպ կը տեսնէի զինքը, աւելի շուտ կ'ընտելանայի իր վեհափառ անձին հետ, և պզտի տաղանդներս իր մոզուած աչքին առջև կրնայի զարդայնել. բայց նախ ասի կրնար ձանձրոյթ տալ իրեն, երկրորդ ասով յիրաւի շատ կրգելբանային մեր կեանքն ու երջանկութիւնը: Ա՛զգամ թէ կեանքն ու երանութիւնն ասանկ զիւրութեամբ չեն կարողադրուիր: Ամեն ինչ դժուարութիւն, ամեն ինչ վտանգ, ամեն ինչ կռիւ է: Ուստի որքան ուրախութիւն է յաղթելը: Միջր իմ, հաւաստի եղի՛ր թէ պիտի յաղթեմ, թէ պիտի բռնադատեմ էրիկս զիս ճանչելու ինչպէս դուն կրճանչես, բայց նաև քեզի պէս ինքն ալ զիս սիրելու՝ այն ամեն տեսակ լաւ պատճառներուն համար, որք տակաւին իր մտքէն անգամ չեն անցնիր:

Ասով ըսել չեմ ուզեր թէ բոլորովին անմիտ կը կարծէ զիս, կարծեմ թէ երկու օրէն 'ի վեր այդ զաղափարը հանեց միտքէն:

Երևակայէ որ էրիկս Աօթրօ անունով զրաղիր՝ մ'ունի. անուշը գէշ, բայց մտրդը բաւական գեղեցիկ է, միայն թէ չեմ սիրեր իր փախուսիկ նայուածքը: Պ. Աօթրէ մեզի հետ կը բնակի գրեթէ. արշալոյսին կը գայ, շրջակայ տեղուանքը չքիտեմ՝ ուր կը նախաճաշէ, օրերը Լուի Տը Գամօրին խուցին մէջ կ'անցունէ, և երբեմն մեր տունը կը մնայ մեզի հետ ճաշելու համար երբ երեկոյին աւարտելու գործ մ'ունենայ: Արթուած է այս անձը. ամեն բան զիտէ քիչ մը: Երիկիս քով իր ունեցած ստորինն այլ շահաւոր պաշտօնը ստանձնելէն առաջ կարծեմ ամեն արհեստներուն փորձը րրած է: Արսիբէ զբակաւութիւնը, բայց չսիրեր իր ժամանակին և երկրին գրականութիւնը զոր ողորմելի կը համարի, թերևս ինքն անոր մէջ յաջողած չըլլալուն համար: Օտար զրագէտները և բանաստեղծները նախապատիւ կը սեպէ. բաւական ախորժով, բայց շատ սնայարծութեամբ օրինակներ կը բերէ անոնցմէ: Մանկութեանը ժամանակ անշուշտ աղէկ դաստիարակուած չէ, վասն զի մեզի խօսք ուղղելու ատեն յաջև յահակ Վ. յո, տէր իմ, ա. յո, տիկին՝ կ'ըսէ ծառայի մը պէս, բայց սակայն շատ մեծ սիրտ՝ կամ լաւ ևս՝ սնուցարձ է: Ըստ իս իր զլխաւոր պակսութիւնն է հզօր մտքի՝ յատուկ հեղնական ծաղր մը զոր ունենալ կրճեացնէ ամեն անգամ որ կրօնքի և համանման բաներու վրայ խօսք կ'ըլլայ:

Արդ՝ ասկից երկու օր առաջ ճաշի ատեն՝ ամեն տեսակ կիրթ ճաշակի հակառակ այսպիսի այլանդակութիւն մ'ընելու համարձակած ըլլալով, էրիկս ըսաւ անոր.

— Սիրելի Աօթրօս, ես այդ կատակներուն նկատմամբ զլխովին անտարբեր եմ. բայց եթէ հզօր միտք մ'ես, ահա կին մը որ տկար միտք մ'է, և՛ ինչպէս զիտես՝ հզօրը պարտաւոր է տկարը յարդելու:

Պ. Աօթրօյին գոյնը փոփոխակի կարմիրի, դեղինի, կանաչի

*Esprit fort հզօր միտք կը Ռարբանէնէ, իէև ալլաբանութեամբ անհատաւ նշանակէ:

փոխուեցաւ . զիս ամարդօրէն բարեկեց ան և իսկոյն զորս ելաւ : Այն օրէն ՚ի վեր նշմարեցի որ իմ առջև աւելի զբոյժ կրկենար : Երբ մինակ մնացի Լուիին հետ , ըսի .

— Հիմա զիս շատ հետաքրքիր պիտի կարծես . բայց կը հարցընեմ իւրովի թէ ի՞նչպէս կրնաս ամեն գործերդ և զազանիքդ յայտնել այնպիսի մարդու մ'որ ամենեկին սկզբունք չունի :

— Ո՛հ , ըսաւ Պ. Տը Գամօր , սովորութիւնն է այդպէս ձեռնալ . իր մերխոսութեան հովերովը քու առջև յանկուցիչ ըլլալ կը կարծէ . . . ըստ ինքեան լաւ մարդ մ'է ան :

— Վերջապէս , կրկնեցի , բանի մը չհաստար :

— Ո՛հ , իրաւ է որ մեծ բան չէ հաւտացածը : Սակայն վստահութիւնս չարաչար չգործածեց երբէք , վասն զի պատուակիր մարդ մ'է ան :

Քեզի պէս մեծ աչքերս բացի ՚ի նշան զարմայման :

— Ի՞չ կայ , ինչո՞ւ կը զարմանաս , օրիորդ Մարի :

— Պատիւ ըսածդ ի՞նչ է , պարոն :

— Քեզ կը հարցնեմ , օրիորդ Մարի :

— Աստուած իմ , ըսի շատ կարմրելով , ազէկ չդիտեմ ի՞նչ ըլլալը . բայց վերջապէս կ'երեւակայեմ թէ սրտիւն երբ կը բաժնուի բարոյականէն , մեծ բան մը չէ , և թէ բարոյականն երբ կրօնքէն կը զատուի՝ ոչ ինչէ . այս ամեն բաները շղթայի մ'օղակներն են . պատիւը վերջին օղակէն կը կախուի ծաղկի մը պէս , բայց եթէ շղթան կտրուի , ծաղկիլը միւս բաներուն հետ միասին կ'ընկնի :

Մնայր իմ , Գամօր աչքիս մէջը նայեցաւ տեսակ մ'այլանդակ արտայայտութեամբ , իբր թէ փիլիսոփայութիւնս ոչ միայն շփոթած , այլ նաև վրդոված ըլլար զինրը . ապա թեթեալի հառաչեց անդամ մը , և ոտք ելնելով լոկ այս պատասխանը տուաւ .

— Շատ աղւոր է տուած սահմանդ :

Ապա թատրոն գացինք , և ներկայացումին մինչև վերջը շաքարեղէններ և սառնացեալ նարինջներ կերցուց ինձ :

Տիկին Տը Գանվալօն մեր հետն էր : Ազաչեցի զինքն որ հետևեալօրը Պոլսոնի անտառն երթալու համար մեր տունէն անց-

նի և զիս հետն առնու , վասն զի նէ իմ կուռքս է . որքան աղւոր և որքան ընտիր է : Գեղեցիկ բոյր ունի : Գոհ եմ իր քովը : Երբ ետ կը գառնայինք թատրոնէն , Լուի՛ սովորութեանը հակառակ լուռ մնաց : Վերջապէս յանկարծ ըսաւ ինձ :

— Վաղը նմարդիզուհիին հետ անտառը պիտի երթաս :

— Այո :

— Լաւ . բայց կարծեմ թէ քիչ մը ստէպ կը տեսնուիք . . . : Առտու , զիշեր . . . չէք զատուիր իրարմէ :

— Տէր Աստուած . կը կարծէի թէ ստէպ տեսնուիլս հաճելի է քեզ . . . Միթէ տիկին Տը Գանվալօն լաւ ընկերուհի մը չէ :

— Պատուական ընկերուհի . բայց կիներու բարեկամութիւնները ընդհանրապէս չեմ սիրեր : Սակայն իրաւունք չունիմ ասոր վրայ քեզ խօսք ըսելու . ասանկ յարաբերութեանց սահմանները գիտելու չափ խելք ու միտք ունիս :

Ահա այս խօսքերը ըսաւ ինձ , մնայր իմ : Արհամբուրեմ քեզի :

Մարտ .

Մնայր իմ , յոյս ունէի թէ անհանդէսներու , դուռի վրայ կախուած ծաղկեփունջերու , սիւնի քիւերու զարդերու և հրապիր փամփուշտներու նկարագրութիւններով ձանձրոյթ չպիտի տամ քեզ . վասն զի վերջապէս մեծ պահք կը մտնենք : Այսօր փակեալ խորան է : Բայց և այնպէս վաղը չէ միւս օր տիկին Տուալլիին տունը պիտի պարենք : Չէի ուզեր երթալ , բայց տեսայ որ չերթալս Լուիին դժգոհութիւն կը պատճառէ , նաև վախցայ վերաւորելու տիկին Տուալլին որ էրկիկս գրեթէ մայրի տեղ ծառայեց : Ասկից ՚ի զատ մեծ պահքը սին խօսք մ'է հոս : Իմ մասիս շատ կը ցաւիմ այս բանիս վրայ . երբ ուրեմն կանկ պիտի առնուք , երբ պիտի դադրի՞ք զուարճանալէ , Աստուած իմ :

Մերելի մնայրս , կը պարտաւորիմ խոստովանիլ թէ շատ կ'զբօսնում , հետևարար երջանիկ չեմ : Քիչ մ'այս մեծ պահքին վրայ դրեր էի յոյսս , բայց ահա օրացոյցէն կը հանն զայն : Սակայն որքան աղւոր , հանձարեղ և վայելուչ գիւտ մ'է այս սիրելի մեծ պահքը . որքան ուշիմ է կրօնքը , և ինչպէս կը ձանձէտ . . . և յիւ-

մար մարդկութիւնը. ինչպէս հեռասես է իր օրէնքը. նաև ինչպէս ներողամիտ է, վասն զի զբօսանքին սահման դնելը զայն ներելէ: Ես ալ կը սիրեմ զբօսանքը, զեղեցիկ պաճուճանքը որով ծաղիկներու կը նմանինք, փառաւոր սրահները, երած շուժիւնը, հանդէսները, պարը: Այո՛, կը սիրեմ այս ամեն բաները, անոնց մոզական շփոթը կ'զգամ, արբշուութիւնը կ'զգամ, բայց միշտ, միշտ . . . ձմեռը Բարիդի մէջ, ամառը հանքային ջուրի տեղումները միշտ այս մըրիկը, այս շփոթն ու արբշուութիւնը վայրենիներու, արբաներու, և՛ եթէ համարձակէի ըսել՝ անասուններու յատուկ բան մը կը գառնայ: Ինչո՞ք մեծ պահք. նախատեսած էր այս բանը: Մինչդեռ քահանան այս առտու «Յիշէ որ հող ես» կ'ըսէր ինձ, մեծ պահքը կ'ըսէր նաև ինձ. «Յիշէ որ հողի մ'ունիս. յիշէ որ պարտիք ունիս, էրիկ մը, զաւակ մը, մայր մը ու Աստուած մ'ունիս»: Եւ այն ատեն, մայր իմ, մեր հինօրեայ տունին շուքը կը քաշուէինք ընտանեօք, ծանր խորհուրդներով զբաւուած կ'ապրէինք, մեր խելքը միտքը տունին և ժամին կը տայինք, բարձր և սուրբ բաներու վրայ կը խօսակցէինք. բարոյական աշխարհը կը մտնէինք, նորէն երկինք կը տեղաւորուէինք: Փրկաւէտ անջրպետ մ'էր մեծ պահքը, որու շնորհիւ մարդուս զբօսանքն ասշուքեան, և հաճոյքը ջղաձգային սարսուռի չփոխուիր, և ոչալ իր ձմեռուան դիմակն իր երեսը կը գառնայ:

Ասի բոլորովին տիկին ծօպէրի կարծիքն է: Ովէ այս տիկին ծօպէրը: Բարիզարնակ խոհեմ պղտի կին մ'է զոր մայրս պիտի սիրէ: Ամիսներէ 'ի վեր քիչ մ'ամենուրեք, և մասնաւորապէս Սէն-Ֆիլիք-Տիւ-Բուլի եկեղեցւոյն մէջ հանդիպեցայ անոր առանց և ոչ իսկ կարծելու թէ զրացիս է և թէ իր ասպարանքն իմինիս ժող է: Ահա այսպէս է Բարիզ: Շնորհալի կին մ'է ան. հեզ, գորովալի և աներկիւղ կերպարան մ'ունի: Միշտ քով քովի կը նստէինք մեքենայարար: Իրարու կը նայէինք զաղանապէս: Մեր աթոռները ետ կը քաշէինք որպէս զի կարենանք անցնիլ, և մեր ամենէն անոյշ ձայնովը «Ներէ, տիկին» կամ «Ո՛հ, տիկին» կ'ըսէինք: Եթէ թաթպանս ընկնէր, զետնէն կ'առնուր ան, և ես

«Հատ շնորհակալեմ, տիկին» կ'ըսէի: Օրհնած ջուր կը տայի իրեն: Ո՛հ, սիրելի տիկին, կ'ըսէր և կը ժպտէր: Երբ մեր կառքերը լծին բոլորտիքը կը դիմադրուէին, պղտի բարև մ'և դարձեալ ժպիտ կ'առնէինք կը տայինք: Օր մը Թիւրքիստանի սպառտին նուազահասնդիսին մէջ մէկգլմէկ նշմարեցինք և սաստիկ ուրախացանք. երբ մասնաւորապէս մեզ հաճելի բան մը լսէինք, շուտով իրարու կը նայէինք, և մեր սովորութեանը համեմատ կը ժպտէինք: Երևակայէ զարմանքս երբ միւս օրն առտու համակրութեանս մեր տունէն երկու քայլ անդին խտալական պղտի տունը մտնելը, իբր իր տունը մտնելը տեսայ: Հարցուփորձ ըրի: Տիկին ծօպերն է մտնողը: Իր էրիկը քու մայր թե՛ երիտասարդ մը և քաղաքային երկրաչափ է: Իսկոյն ամենասաստիկ փափաք զգացի զբացուհիս այցելութիւն մ'ընելու: Փափաքս Գամօրին յայտնեցի քիչ մը կարմրելով, վասն զի կը յիշեմ թէ կիներու բարեկամութիւնը չսիրեր. բայց ամեն բանէ առաջ իս կը սիրէ: Սակայն առաջարկութեանս վրայ քիչ մը քիթուպիւնջ ըրաւ:

— Գէթ թող որ քիչ մը տեղեկութիւն առնում այդ մարդկանց վրայ, ըսաւ:

Առաւ տեղեկութիւնը: Քանի մ'օրէն ետք ըսաւ.

-- Մարի, կընաս տիկին ծօպերի տունը երթալ. շատ աղէկ կին մ'է ան:

Նախ Պ. ՏԸ Գամօրին վիզը ցատկեցի, և անկից տիկին ծօպերին տունը:

— Ես եմ, տիկին:

— Ո՛հ, տիկին:

— Կը ներես, տիկին:

— Ո՛հ, այո՛, այո՛, այո՛, տիկին:

Ապա պաղնուեցանք, մայր իմ, և ահա հին բարեկամուհիներ եղանք:

Ինչպէս ըսի, իր էրիկը քաղաքային երկրաչափ է: Մեծ հնարքներու, արհեստագիտական մեծ գործերու կ'ըբաղի, բայց քիչատենէ 'ի վեր, մայր իմ, Յանկարծ մեծկակ ժառանգութիւն մ'եկած ըլլալով իրեն, իր ուսումները ձգած, և սկսած էր ամե-

Յեւին բան մը չընել, այսինքն գէշութիւն ընել միայն: Ահա ասոր վրայ կարգուեցաւ իր հարստութիւնը աւելի կոկելու (arrondir) համար: Իր նորահաս սղախ կինը տրտմալի զարմացումներ ունեցաւ: Էրիկն երբէք իր տունը չէր տեսնուեր: Միշտ ժողովարանները, թատերաբեմի խորշերը, չղիտեմ ու սատանային ծակերը կը գտնուէր: Թուղթ կը խաղար, տարփուհիներ ունէր և՛ որ աւելի սոսկալին է՝ խման էր: Կնիկին սենեակը զինով կը մտնէր: Այս անձին վրայ կատարեալ զաղափար մ'ունեցած կ'ըլլաս միայն պարագայով մը, զոր գրիչս գրեթէ չուզեր գրել: Այսինքն օր մը ուղեց կոշիկներովը պառկիլ: Մայր իմ, ահա այս էր այն աղւոր պարոնը, զոր սղախ բարեկամուհիս հեղութեամբը, քաջասրտութեամբը, խոհեմութեամբը, խելանութեամբը սակաւ առ սակաւ պարկեշտ մարդ մը, արժանիք ունեցող մարդ մ'է պատուական էրիկ մ'ըրաւ: Աօի ոչ ապաքէն քաջալերական իրողութիւն մ'է, վասն զի վիճց է Աստուած թէ ինձ սահմանուած գործն ասկից աւելի դիւրին է. բայց այս ընտանիքն ուրախութիւն կը տայ ինձ, վասն զի կը հաստատէ ան թէ նոյն իսկ Բարիդի մէջ կարելի է իրապէս շինել այն բոյնը զոր ես կ'երազեմ: Այս սիրուն գրացիները Բարիդի մէջ կը բնակին, բայց անոր որսը չեն. տուն անց մը ունին, զիրար կը վայելեն, իրարու կը վերաբերին: Բարիդ իրենց գրան առջևն է: Աւելի աղէկ: Բարձր զբօսումներու միշտ բաց աղբիւր մ'է այն որու կը մասնակցին. բայց այս աղբիւրէն կը խմեն և չ' թէ կը խղրուին հոն: Հասարակային սովորութիւններ ունին. երեկոյեան ժամերը իրենց տան մէջ կ'անցունեն, կը կարգան, կը զծագրեն, կը խօսակցին, վառարանին կրակը կ'արծարծեն, հովին և անձրեւին ունկնդիր կ'ըլլան, իբր թէ անտառի մը մէջն ըլլային. կեանքին թելառ թել իրենց մատերուն միջևէն անցնիլը կ'զգան ինչպէս մենք մեր գիւղական սիրելի տքնութեաց ժամանակները: Երջանիկ են անոնք, մայր իմ:

Ուրեմն այս է ահա երազը, այս է ահա ծրագիրս: Էրիկս Պ. Ժօսեթին պէս մոլորութիւններ չունի: Սովորութիւններ ունի միայն, սովորութիւններ զոր Բարիդի մէջ իր բն'երութեան մարդիկն ունին: Սիրելի մայրս, կ'ուզէի այս սովորութիւնները կա-

մեաց կամաց այլափոխել, անողալի կերպով Պ. ՏԸ Գամօրի միտքը ձգել զարմանալի զաղափար մ'որ է մարդուս դիշեր մ'իր տունը իր սիրեցեալէ սիրող կնիկան հետ անցունել կարենալն առանց հիւժեւելու: Միւս բաներն ետքէն պիտի գան: Միւս բաներն են նստական կեանքէ ախորժիլը, տնական պղտի մենարանին ծանր ուրախութիւնները, ընտանեկան զգացումը, միտքն որ կ'ամփոփուի, հոգին որ նորէն կը դանէ ինքզինքը, այնպէս չէ, բարի հրեշտակի իմ: Արդ՝ յոյսդ դի՛ր վրաս. վասն զի այժմ առաջուանէ աւելի եռանդով, արիւթեամբ և վստահութեամբ դրառուած եմ: Ասոր պատճառն երկու է. նախ՝ վասն զի բոլոր սրտովը կը սիրէ զիս էրիկս, թէ և գոցէ քիչ մ'աւելի թեթեւութեամբ, որու չեմ արժանի: Արսիբէ զիս, երես կը տայ ինձ, շատ աղէկ կը վարուի հետս: Ամեն հաճոյք կը հայթայթէ ինձ, միշտ 'ի բաց առնելով սակայն մեր տունը մնալու հաճոյքը: Արդ՝ ինչպէս ըսի՝ նախ կը սիրէ զիս, երկրորդ, մայր իմ, զիսն օր բան մը, բան մը զիս կը խնդացնէ ու միանգամայն կը լացնէ: Ահա ըսեմի՛նչ ըլլալը. ժամանակէ մ'ի վեր յիբրակ կը կարծեմ թէ երկու սիրտ ունիմ, մեծ սիրտ մ'որ իմս է, և ուրիշ մ'որ աւելի պղտիկ է. . . .

Ո՛հ, Աստուած, մայրդ պիտի արտասուէ հիմա. . . : Բայց, սիրեցեալը իմ, ասի մեծ խորհուրդ մ'է. . . երկնից մէկ երազը, բայց թերևս երազ մը զոր գեռ ոչ էրիկին կ'ըսեմ, ոչալ ուրիշ որ և է անձի մը, այլ միայն ամենասիրելի մայրիս. . . .

Բայց, կ'աղաչեմ, մի լար, վասն զի այս երազը գեռ բոլորովին ասոյդ չէ:

Յանցարտքն ՄԱՐԻ

Այս նամակին իբր պատասխան տիկին ՏԸ Գամօր երկու օր ետք զիմ մ'առաւ որ իր հախն մահը կ'իմացնէր: ՏԸ Թեքըլը կոմսը մեռած էր կաթուածի յանկարծահաս հարուածէ մ'որ երկար ժամանակէ 'ի վեր կը զուշակուէր իր սուղջութեան վիճակին նայիլով: Տիկին ՏԸ Թեքըլը կանխատեսելով թէ՛ աղջկանն առաջին շարժումը պիտի ըլլար էր քովը զալ և ցատալի յուզմանց

մասնակցի՛ն՝ սատիկ կը պատուիրէր անոր որ այս ճամբորդութեան յոգնութիւնները չկրէ : Միանգամայն խօսք կը տար անոր ինքն անձամբ Բարիզ դալու և գտնելու զան իր քանի մ'անհրաժեշտ գործերը կարգադրելէն անմիջապէս ետք :

Այս ընտանեկան սուգին բնական հետեանքն եղաւ Տը Գամօր կոմսուհիին սրտին մէջ սաստիկացնելայն անհանդատութեան և անորոշ սրտմտութեան զգացումը, որուն քանի մը նշաններն իր վերջին նամակներուն մէջ կերպիւ իւրք կը նշմարուէին, թէ և իր մայրասիրութեան զուշութիւնները՝ ծածկէին և մեղմէին այն նշանները : Մարի ամենեկին երջանիկ չէր այնքան որքան ըլլալը ցուցնէր իր մօրը, վասն զի ամուսնութեան առաջին տիւններն և առաջին պատրանքը չլրցեր էին երկար ատեն խաբել ասանկ նուրբ և ուղիղ միտք մը : Կոր հարս ըլլող աղջիկ մը դիւրաւ կը սխալի այն սիրոյ ընդարձակութեան նկատմամբ որու առարկան է ինք : Շատ անգամ կը պաշտէ իր էրիկը և կը կարծէ թէ էրիկէն ալ ինք պաշտուած է քանի որ իր հետը լոկ կարգուած է ան : Այս նորահիթիս սիրտը սիրոյ ամեն զեղջեղանքը, ամեն անուշահոտութիւնները, ամեն երգերը զուրս կը տայ, և այս երկնային ամպին մէջ ծրարուելով՝ կը կարծէ թէ ամեն բան սէր է իր բուրբասիքը, բայց սակաւ առ սակաւ ամայր կը փարասի, այն սիրտը շատ անգամ կը խոտտովանի թէ իրմէն միայն կը գան եղեր այն նուազահանդէսն և այն բանաստեղծային խանդերն որք զինքը կը մոզէին :

Իտեղ՛ Մարիին փափուկ սիրտն ահա օրէ օր այս տարաորութեամբ գրաւուած էր, տպաւորութիւն զոր ուղեցինք նկարագրել սրբան որ զրիչը կը նայ կնային սիրտերու այս նուրբ զանազանութիւնները նկարագրել : Ասկից աւելի բան մը չէր այն տպաւորութիւնը, բայց Մարիին համար մեծ բան էր իր մտքէն, երեւակայութեանն անգամ չէր անցած թէ կը նայ իր էրիկէն մատնուիլ, և մանաւանդ մատնուիլ այն անպարտիչ նախամտածումով զոր դիտենք՝ սակայն Գամօրին ներս համար ունեցած ուշադիր բարեօրութեանցը հակառակ զոր Մարի առ մայրն դրած նամակներուն մէջ ամենեկին չափազանցութեամբ չէր նկարագրեր՝ կ'ըլար

թէ փոքր ինչ անարգու և անհոգ է էրիկը : Ամուսնութիւնը զրեթէ ամենեկին փոփոխութիւն մը սուած չէր Գամօրին սովորութեանց, զրեթէ կ'ըսենք, վասն զի իր մէկ սովորութիւնը փոխած էր, այսինքն փոխանակ ժողովանոցը ճաշելու իր սունը կը ճաշէր : Մարի կը կարծէր թէ սիրուած է էրիկէն, սիրուած՝ զրեթէ նախատական թեթևութեամբ մը :

Սակայն եթէ Մարի տրտում և երբեմն լալու չափ տրտում էր, տեսանք որ չէր յուսահատեր ան, և թէ այս պղտիկ արի սիրտն աներկիւղ վստահութեամբ մը կը յարէր այն ամեն երջանակաւետ յաջողութիւններուն զոր անպղան կը նայ մերապահել իրեն :

Պ. Տը Գամօր՝ ինչպէս կը նայր հաստալ՝ խիստ անտարբեր կը մնար իր անսխական կիներ չարչարող յուզմանց նկատմամբ : Մտքէն իսկ չէր անցուներ այս յուզմունքը : Ինքն իր մասին շատ երջանիկ էր, թէ և երջանիկ ըլլալը կը նայ շատ արթորինակ երեւալ : Այս ամուսնութիւնը զժուարաւ առնուող քայլ մ'եղած էր, բայց Գամօր իր յանցաւորութեան գրքին մէջ անգամ մը տեղաւորուելէն ետք սովորած էր հոն մնալու : Սակայն իր խիղճը, որքան ալ անզոյացած ըլլար, սակաւին քանի մը կիներին թեթևութեանը թերևս, և ինչպէս ընթերցողը նշմարած է հարկաւ, Պ. Տը Գամօր կը կարծէր թէ իր կնկան քանի մը փոխարինութիւն կը պարտաւորի :

Իր կնկան համար ունեցած զգացումները տեսակ մ'անտարբերութեամբ և տեսակ մը զթութեամբ կը բաղկանային : Անորոշապէս կը ցուէր այս պատմութիւն վրայ որու կեանքը բարձրացոյցն կարգի վերաբերող երկու ճակատադրի մէջ բռնուած փոխուած էր : Ար յուսար թէ Մարի միշտ պիտի չցիւտնայ այն վիճակը որ զինքը դուռսպարտած էր ան, և որոշած էր յիշել ինայեչ այն վիճակին խստութիւնը մեղմելու համար, սակայն Գամօր ինքզինքը բոլորովին կը տար լոկ այն տրփին որ իր կեանքին յետին անիրաւութիւնն եղած էր, վասն զի փիկին Տը Գամօր լայնի հետ ունեցած տարփային յարաբերութիւնները՝ զոր անբնական կը գրգռէին գաղտնիքն ու վստանքը և որոնց սակաւի զեղեցիկութեան ու միանգամայն յաջողակութեան տէր կիս մը սատիկ ճարտարու-

Թեամբ մը հոգ կըտանէր, կըսարտաւորէին տարիներէ ետք պտօ-
հել առաջին ժամանակուան իտէական կատարելութիւնը:

Սակայն սահման ունէր այն շնորհալի քաղաքավարութիւնն ու-
րով Պ. Տը Գամօր իր կնկան հետ վարուիլ կըձևացնէր: Նորա-
հաս կոմսուհին ուզելով էրիկին այս մարդասիրութիւնը գեղծելու
փորձը ընել՝ անոր սահման մ'ունենալը նշմարած էր: Օրինակի
աղաղաւ երեկոյին որ և է արտաքին զբօսանք մերժելու համար
իւր յողնած ըլլալը պատրուակ բռնած էր, յուսալով թէ էրիկը
զինքը միայնակ չպիտի թողու տունը: Սակայն կըսխալէր: Ասանկ
պարազաններու մէջ իբրև է որ Պ. Տը Գամօր ճաչէն ետք քիչմը
կնկանը հետ առանձին մնալու շնորհքը կ'ընէր, բայց ժամն իննին
կատարեալ հանդարտութեամբ մը կինը մինակ թողլով կ'երթար:
Միայն թէ ժամ մ'ետք ծրար մը շաքարեղէններ կամ կողով մ'ըն-
տիր կարկանդակներ կը դրկուէին Մարիին որ այս ծամոցներուն
օղնութեամբը գիշերը աղէկ կամ գէշ կ'անցունէր: Այս համալամ
անուշեղէնները երբեմն տիկին ծօպէրին հետ կ'ուտէր, երբեմն
ալ Պ. Աօթրօյին հետ, որ էրիկին գրագիրն էր: Այս Պ. Աօթ-
րօն՝ որ 'ի սկզբան տիկին Տը Գամօրին աչքին փուշմ'եղած էր՝
կամաց կամաց ինքզինքը սիրցուցած էր անոր: Էրիկին բացակա-
յութեան ժամանակ իր ձեռքին տակ միշտ պատրաստ կը գտնէր
Աօթրօն, և ասոր կը գիմէր ամենօրեայ մանր մունր գործերու,
հասցէներու, հրաւիրագրերու, գիրքեր, ձայնագրի տետրակներ,
գրասեղանի պաշար գնելու համար: Ասկէ հետեւած էր տեսակ
մ'ընտանութիւն: Մարի սկսած էր «Աօթրօ» կամ «բարեկամ»
կոչել զան: — Աօթրօ ժրութեամբ կը կատարէր ծաղկահաստ
կնկան պղտիյանձնարարութիւնները: Շատ եռանդ և յարգանքցոյց
կը տար անոր, և յատկապէս կ'ըղուշանար իր առջև այն սկեպ-
տիկեան մեծաբանութիւններէ որոնցմէ անոր չախորժիլը գիտէր:
Նէ գոհ էր անոր այս վերանորոգմանէն, և այս մասին իր ե-
րաստադիտութիւնը յայտնելու համար երկու կամ երեք անգամ գի-
շերները իր տունը կեցուց այն միջոցին ուր Աօթրօն իր յանձնա-
բարութիւնները ուզելու կը գար: Տիկին Տը Գամօր գրքի կամ
թատրոնի վրայ կը խօսակցէր անոր հետ:

Երբ սղաորութեանը պատճառաւ կոմսուհին հաստատապէս
փակուեցաւ իր տունը, Պ. Տը Գամօր առջի երկու օրը ժամը
մինչև տասն անոր ընկերն ըլլալու շնորհքն ըրաւ. բայց այս ջա-
նագրութիւնը յողնեցուց զինքը, և խեղճ կինն՝ որ արգէն ամ-
բողջ ապագայ մը շինած էր այս խախուտ հիման վրայ՝ երրորդ
օրն անոր վերատին իր ամուրիի արվորութեանց համեմատ ապրիլ
սկսիլը տեսաւ ցաւօք սրտի: Զգալի եղաւ իրեն այս հարուածը,
և իր տրտմութիւնը մինչև այն աստի կրած սրտմութեանէն աւելի
ծանր կերպարանք առաւ: Միայնութիւնը ցաւալի եղաւ իրեն:
Մարին ժամանակ չունեցած էր մտերիմ բարեկամուհիներ գտնե-
լու Բարիզի մէջ: Տիկին ծօպէր օղնութեան հասաւ իրեն որքան
որ կըցաւ. բայց կոմսուհին մինակ մնացած միջոցներուն Աօթրօն
աւելի ստէպ կեցնելու կամ կանչելու ալ իսկ սովորեցաւ: Գամօր
ինքն իսկ՝ դուրս չելած շատ անգամ իր գրագիրը կնկանը բերե-
լով, կ'ըսէր.

— Սիրելի գ իմ Մարի, Աօթրօն բերի Շէքսպիրին հետ. միա-
սին վառեցէք ձեր խանդը:

Աօթրօն աղէկ կըկարգար, թէ և պերճախօսական հանդիսաւո-
րութեամբ մ'որ երբեմն կոմսուհին գաղտնի խնդուկը կըբերէր:
Ինչ և է, մինչև տիկին Տը Թեքլի մօտալուտ դալուստն երկար
գիշերները անցունելու միջոց մ'էր Շէքսպիրի գործերուն այս ըն-
թերցումը: Ասկից 'ի զատ տիկին Տը Գամօր՝ տեսնելով թէ
Աօթրօն շատ երախտագէտ կ'երևայ եթէ զինքը կեցնէր, և շատ
վշտաբեկ՝ եթէ թողուր որ մեկնէ՝ բարեսրտութեամբ նշան կ'ընէր
անոր որ նստի, եթէ նաև Աօթրօն իրեն ձանձրոյթ տար:

Ապրիլի մէջ գիշեր մը, ժամը տասնի մօտ Պ. Աօթրօ մինակ
էր Տը Գամօր կոմսուհին հետ, և կը կարգար Աօթրօն ֆօսթը
զոր Մարի չէր ձանչեր: Այս ընթերցումը կ'երևար թէ անտիական
կնկան անձնական մտատանջութիւններուն յողթած էր. սովորա-
կանէն աւելի ուշադրութեամբ մտիկ կ'ընէր՝ ընթերցողին նայե-
լով ակնայեռ և եռանդաղին. բայց միայն երկին հզօրութեանէն
դաւաւած չէր Մարի. ինչպէս ստէպ կը պատահի, Գերմանացի
բանահիւսին երևելի թատրերգութեան մէջ նէ իր յատուկ խոր-

հոգիքն և իր յատուկ պատմութեան կը հետևէր, և զիտե՛նք թե անշարժ գաղափարէ մը յափշտակուած միտք մ'ինչպիսի տարօրինակ կորովատեսութեամբ մ'ակնարկութիւններ և նմանութիւններ կը գտնէ որք ուրիշի մը համար անզղալի են: Տիկին Տը Գամօր անշուշտ քանի մը հեռուոր համեմատութիւններ կը նշմարէր իր էրիկին և տողդոր Փօսթին մէջ, նաև բուն իր և Մարդրիտին մէջ, վասն զի այս արամէն տարօրէն յուզուեցաւ կոմնուհին, և չկրցաւ իսկ զսպել իր յուզումներուն բռնութիւնը երբ Մարդրիտ իր գնդանին ներսէն վշտի և յիմարութեան հետևեալ աղաղակը արձակեց.

«Գահճի՛ճ, ո՞վ տուաւ քեզ այդ իշխանութիւնը իմ վրայ . . . : Տակաւին ծաղկահաս եմ, բոլորովին ծաղկահաս, և՛ արդէն մեռնիլ . . . : Ո՛հ, ինչպէ՛ ինձ, ի՛նչ ըրի քեզ: Հիմա իշխանութեանդ տակն եմ բոլորովին . . . : Թնդ միայն որ տակաւին կաթ տամ զաւակիս . . . զոր այս զիշեր մինչև առտու զիրկս օրեցի . . . : Չաւախ առին ձեռքէս զիս աւելի աղէկ տանջելու համար, և հիմա կ'ըսեն թէ մեռցուցի զան . . . : Երբէք աւելի ուրախ պիտի չըլլամ, ո՛չ երբէք:»

Հաղիւ կրնար երեակայել թէ խառնաշփոթ զղայումներու, բուն համակրութեան, անորոշ վախի չզիտեմ ի՛նչ խառնորդ մը յանկարծ զբաւեց տիկին Տը Գամօրին սիրտը որ սկսաւ յորդել այս զբաւումին սաստիկութենէն. սակայն այս մանկամարդ կինն իր թիկնաթուռին մէջ կռնակի վրայ ընկաւ և զեղեցիկ աչերը զոցեց՝ կարծես բռնելու համար արտաքը սր իր երկայնաձև յօնից ազբերուն մէջ սեղէն կը հօսէին:

Նոյն միջոցին Պ. Աօթրօ յանկարծ գաղբեցոց ընթերցումը, խորին հառաչ մը հանեց, ծունկի վրայ եկաւ Տը Գամօր կոմսուհիին առջև, և անոր ձեռքը բռնելով,

— Խեղճ հրեշտակ, ըսաւ:

Ընթերցողը գծուարաւ կը հասկնար այս գէտքը և անկէ ծաղող խիտ ծանր և դժբաղդ հետևութիւնները, եթէ հոս փակագիծ մը չբանայինք Պ. Աօթրօյին ֆիզիոլոյին և բարոյական պատկերը անոր մէջ սեղանորելու համար:

Պ. Հիրօլիդ Աօթրօ զեղեցիկ մարդ մ'էր, և ինքն ալ զիտէր թէ զեղեցիկ է: Խեղբովը կը կարծէր թէ իր տիրոջը Տը Գամօր կոմսին կը նմանի քիչ մը՝ թէ բնութեան շնորհիւ և թէ շարունակ անոր օրինակին հետևելովը. այս պահանջատեսիւնը բոլորովին անհիմն չէր:

Արտաքուստ Պ. Տը Գամօրին կը նմանէր որքան որ զուհիկ մարդ մը կրնայ կատարելապէս հոյակապ մարդու մը նմանիլ: Աօթրօ դաւառական սլոտի պաշտօնաւորի մը տղան էր: Խր հօրմէն կոկիկ հարստութիւն մը ստացած և իր բաղդախնդիր կենաց զանազան ձեռնարկութիւններուն մէջ վատնած էր: Գայրօցի աղգեցութիւններէ մղուելով նախ կը երանոց մը նետուած, ապա անկէ ելնելով Բարիլ եկած և հօն իրաւադիտութեան տարերաց և սկզբանց վրայ դաս առած էր: Փաստարանի մը քովն աշխատած, ապա զբախանութեան ասպարէզն ալ նետուած էր առանց յաջողութիւն դանելու: Պօրային մէջ արժէթուղթի վրայ խաղացած և կորուստներ կրած էր: Տեսակ մը վրդովալի անհամբերութեամբ բաղբին ամեն դուռերը հետզհետէ զարկած էր, բայց որ և իյէ՛ ձեռնարկութեան մէջ չպիտի կրնար յաջողիլ, վասն զի ամեն բանի մէջ իր փառամոլութիւններն անբաւ և սաղանդները միջակ էին: Միայն երկրորդական կացութիւններու կը յարմարէր ան, բայց երկրորդական կացութիւնները չէր ուզէր: Արնար աղէկ ուսուցիչ մ'ըլլալ, բայց կ'ուզէր բանահիւս ըլլալ. զի ուղի քահանայ մը, բայց կ'ուզէր եպիսկոպոս ըլլալ. ընտիր զբաղիւր մը, բայց կ'ուզէր պաշտօնեայ ըլլալ: Աւերջապէս կ'ուզէր մեծ մարդ մ'ըլլալ, և չէր: Աղծաւոր եղած էր, վասն զի կեղծաւորութիւնը զիւրին բան է, և մէկ կողմէն տիկին Տուալիին փիլիսոփայական ընկերութեան, միւս կողմէն ալ տիկին Տը Լա Բօշ-Թիւլանի ուղղափառ ընկերութեան վրայ կ'ընթելով իր քարատուար մտած էր Պ. Տը Գամօրին քովը, որ մարդկային սեռը ընդհանրապէս արհամարհելու սովորութիւնը ունենալով Աօթրօն այս կամ այն մարդուն պէս լաւ սեպած էր:

Պ. Տը Գամօրին մտերմութիւնը բարոյապէս շատ վնասակար եղած էր Պ. Աօթրօյին: Իբրև է որ այս մտերմութիւնը վար ա-

աած էր Վօթրոյին ջերմեանդուծեան զիմակը որ կոմսին տան մէջ դրեթէ արժէք չունէր, բայց սակայն սոսկալի կերպով աւելցուցած էր դառն ապականութեան այն մթերքը զոր կենաց պատրանքէն հետևող սոսաճութիւնները և հպարտութեան ոխն ու քէնը համբարեր էին այս վիրալի սրտին մէջ: Արնանք աներկբայ ըլլալ թէ Պ. Գամօր իր քարտուղարին բարոյականութեան խանդարմանը կանոնաւորապէս ձեռնարկելու յուր ակորժակը չունեցած էր, բայց իր մերձաւորութիւնը, մտերմութիւնը, օրինակը բաւեր էին այս խանդարման: Գրադիր մ'աւելի կամ նուազ խորհրդակից մ'է. կը դուշակէ իրեն չյայտնուած բաները: Ուստի Վօթրօն շատ չուշացաւ նշմարելու թէ իր տէրը բարոյականի մէջ սկզբունքի ծայրայեղութեամբ, քաղաքականութեան մէջ համոզումներու զեղծումով, զործերու մէջ խղճահարութեանց սնոտիքովը մեղանչող մը չէր: Հանձարամտութեան, վայելչութեան և ամբարտաւանութեան մասին Գամօրին բարձրութիւնը կատարելապէս կը շլացնէր և կ'ապականէր Վօթրօն՝ ցոյց տալով իրեն չարութիւնը ոչ միայն բարեբաստ, այլ նաև շնորհքով և հմայական ազդեցութեամբ ճառագայթող: Հետևաբար Վօթրօ սաստիկ կ'ըստ քանչաճար իր տիրոջ վրայ. կ'սքանչանար, անոր կը նմանէր և կը քամահարէր զան: Գամօր անոր անձին և հանդիսաւոր ձևերուն ու կերպերուն նկատմամբ անարդութեան բաւական սաստիկ զգացում մը կը կրէր, զգացում զոր պահելու գծուարութիւնը յանձն չէր առնուր, և Վօթրօյին միսն ոսկորին ձայն կը տար երբ այսքան բարձրէն ցուրտ հեղուութիւն մը կ'ընկնէր իր սնտիաւորութեան կոկիճալի վէճքին վրայ: Բայց պղտի տրտունջ մ'էր այս: Վօթրօյին ատելութիւնը ամեն բանէ աւելի զրդուողն էր Գամօրին զիւրութեամբ և անամօթութեամբ յաղթանակ տանելը, արագութեամբ և առանց արժանեաց հարստանալը, աշխարհիս ամեն վայելուանները առանց նեղութեան, առանց աշխատութեան, առանց խղճի ստանալը և հանդարտօրէն լափփելը, վերջապէս իր ատելին էր ինչ զոր ինքն իրեն համար երազած էր առանց այս երազը իրագործել կարենալու:

Անշուշտ Պ. Վօթրօ այս մասին բացառութիւն մը չէր, և

այսպիսի օրինակներ փրկաւէտ չեն երբ աւելի առողջ միտքերու անդամ կը ներկայանան. վասն զի պէտք է համարձակիլ ըսելու այն անձանց, որք՝ Պ. ՏԸ Գամօրին պէտ՝ ամեն բան առաթուր կը կոխեն, և որք սակայն կը յուսան թէ իրենց գրադիրները, բանուորները, ծառաները, կիներն և զաւակներն առարկին պիտի մնան, պէտք է համարձակիլ ըսելու թէ կը սխալին:

Արդ՝ ահա այսպիսի մարդ մ'էր Վօթրօ: Քառասուն տարեկան էր այն ատեն. ասի հասակ մ'է ուր մարդուս խիստ դէշ ըլլալը հազուադէպ բան մը չէ, եթէ նաև մինչև այն ատեն հանդուրժելի եղած ըլլայ ան: Անաչառի և մաքրակօծի ընթացք ցոյց կը տար առ երեսս: Սրճարան մ'ունէր ուր կ'իշխէր, և ուր իր ժամանակակիցները կը գատէր և ամենքը միջակ կը սեպէր: Գժուարակամ մարդ մ'էր ան. առարկիւնութեան մասին գիցցադնութիւն, տաղանդի մասին հանձար, արհեստի մասին մեծ արհեստը պէտք էր իրեն: Իր քաղաքական կարծիքներն Երոստրատի կարծիքներուն կը նմանէին, հին Երոստրատին բոլորովին նպաստաւոր տարբերութեամբ մ'որ էր տաճարը այրելէն ետք կողոպտել: Ալերշապէս Վօթրօ անմիտ մ'էր, բայց խիստ չարադործ անմիտ մը:

Եթէ Պ. ՏԸ Գամօր այն զիշերն իր աշխատութեան շքեղ խուցէն դուրս ելնելու միջոցին իր աչքը դրան կըտրակին ծակին վրայ դնելու անվայել ընթացքը բռնած ըլլար, պիտի տեսնէր բան մ'որ կրնար սաստիկ զարմանք տալ իրեն. պիտի տեսնէր Վօթրօյին փողովներով գրուադուած խտալական գեղեցիկ կահի մը մօտիլը, անոր զգրոցները խառնելը, և վերջապէս ամենամեծ գիւրութեամբ կըզակ մը բանալը, որ շատ վարպետութեամբ շինուած էր, և որուն բանալին նոյն միջոցին իսկ Պ. ՏԸ Գամօրին զրպանին մէջն էր: Պ. Վօթրօ ահա այս խուզարկութիւնէն ետք Գոթը հետն առնելով մատաղահաս կոմսուհին մենախուցը գնաց, որու ոտքն ընկած ձեղեղիք զինքը քիչ մ'երկար ասան:

Տիկին ՏԸ Գամօր աչերը գոցած էր արտասուք յայտնի չընելու համար. բացաւ սակայն աչերը այն միջոցին ուր Վօթրօ անոր ձեռքը բռնեց և «Խեղճ հրեշտակ» անուանեց զան: 11

Կոմսուհին այս մարդը ծուռնկի վրայ եկած տեսնելով բան մը չհասկցաւ, և պարզապէս ըսաւ անոր .

— Խե՛նդ ես, Ա՛օթրօ :

— Այո՛, խե՛նդ եմ, գոչեց Ա՛օթրօ՝ իր մազերը ետին նետելով բանաստեղծային շարժումով մ'որու սովորած էր, այո՛, սէրն ու գթութիւնը խե՛նդ ըրին զիս : վասն զի գիտեմ վիշտերդ, անարատ և աղնիւ նահատակ, գիտեմ արտասուքիդ աղբիւրը, վտահութեամբ թող որ հոսին անոնք մինչ 'ի մահ քեզ նուիրուած սրտի մը մէջ :

Անտիական կոմսուհին՝ եթէ ուզէր անդամ՝ չէր կրնար թողուլ որ իր արտասուքը Ա՛օթրօյին սիրտը թափի, վասն զի իր աչերը յանկարծ չորցեր էին : Կնկան մ'առջև ծուռնկի վրայ եկած մարդ մը վտեմ կամ ծաղրելի կրնայ երևալ միայն : Գժբաղդարար Ա՛օթրօյին անշնորհ ու միանդամայն թատերական դիրքը ծաղրելի կերպարանովն երեցաւ տիկին Տը Գամօրին ծիծաղասէր երևակայութեան : Սաստիկ զուարթութեան ճառագայթէ մը լուսաւորեցաւ իր դեղատեսիլ երեսը . շուրթերը խածաւ քրքիջ մը չարձակելու համար, բայց և այնպէս քահքահ մը ձգեց :

Փարզս պէտք չէ որ ծուռնկի վրայ գայ երբ յաղթական ոտք ելնելու ապահով չէ : Եթէ ոչ Ա՛օթրօյին պէս ողորմելի կերպարան մ'առնելու վտանգը մտած կ'ըլլայ :

— Ելի՛ր, բարեսիրտ Ա՛օթրօս, ըսաւ վերջապէս տիկին Տը Գամօր անկատակ կերպով մը : Այդ ընթերցումը յայտնապէս մոռորեց քեզի : Գնա՛, հանդ չէ : Մոռնանք այդ բանը . . . միայն թէ ալ մի մոռնար ինքզինքդ :

Ա՛օթրօ ոտք ելաւ : Կասկապոյտ էր գոյնը :

— Տիկին, ըսաւ, սիրտ ունեցող մարդու մը սէրն երբէք թշնամանք մը չէ . . . իմ սէրը դէթ անկեղծ էր . իմն հաւատարիմ պիտի մնար . . . իմն վատ ծուղակ մը չէր :

Այնքան յայտնի դիտաստութիւն մը կար այս խօսքերը նշանակող ձայնին մէջ որ կոմսուհին զէմքն իսկոյն այլազունեցաւ : Անտիական կինն իր թիկնաթոռին վրայ կանգնեցաւ :

— Ի՛նչ ըսել կ'ուզես, պարոն :

— Բանդէ, ամեն ըսելիքս կարծեմ գիտես, ըսաւ Ա՛օթրօ : Կոմսուհին ոտք ելաւ :

— Պարոն, հիմաի անմիջապէս պիտի բացատրես այդ խօսքը, թէ ոչ պահ մ'ետք էրիկիս առջևը պիտի բացատրես :

— Բայց, Աստուած իմ, ըսաւ Ա՛օթրօ տեսակ մ'անկեղծութեամբ, տրամութիւնդ, արտասուքդ կարծել տուեր էին ինձ թէ դիտելիր . . . :

— Ի՛նչ, ըսաւ նէ :

Եւ որովհետեւ կը լուէր Ա՛օթրօ,

— Բայց ինչո՞ւ չխօսիս, ապիրանտ :

— Ապիրատ մը չեմ, ըսաւ Ա՛օթրօ, կը սիրէի քեզի և կըցատէի վրագ, ահա այս է բոլոր ընելիքս :

— Ի՛նչ բանի համար կը ցատէիր վրաս :

Ա՛օթրօ ամենևին չէր յուսար թէ տիկին Տը Գամօրին բնաւթիւնն և լեզուն այսպիսի հրամայական զօրեղութիւն ունի : Շտապաւ մտածեց թէ այսքան խօսելէն ետք իրեն համար ապահովագոյն միջոցն էր անկատար չթողուլ բացատրութիւնը : Ուստի գրպանէն նամակ մը հանեց զոր պարզապէս քովն առած էր 'ի պահանջել հարկի հաստատելու՝ համար կասկածներ, որք՝ ըստ իր կարծեաց՝ կոմսուհին մտքին մէջ գրգռուեր էին երկար ժամանակէ 'ի վեր, և այս նամակը բացուած տուաւ անոր :

Տիկին Տը Գամօր դեգեւեցաւ, ապա առաւ գիրք : Միայն ակնարկ մը նետելով ճանչեց զիրը, վասն զի ստեպ կը գրակցէր տիկին Տը Գանվալօնին հետ : Հրավառ տրիփով մը գրուած էր նաւակը, և հետևեալ խօսքերով կը վերջանար .

«Մարիէն քիչ մը կրնախանձիմ միշտ : Գրեթէ կը ցաւիմ զան քեզ տուած ըլլալուս, վասն զի աղւոր է . բայց ես գեղեցիկ եմ, այնպէս չէ, ամենասիրելիդ իմ : Մանաւանդ կը պաշտեմ զքեզ : »

Գեռահաս կինն առջի խօսքերը կարդալով արդէն ստիպալի կերպով զեղնած էր . ընթերցումը աւարտելով զսպուած աղաղակ մը

Հանեց ակամայ . ապա նորէն կարգաց նամակը , ետ տուաւ Վօթ-
բոյին՝ իբր թէ ինչ ընելը չգիտնար , և քանի մը բոստէ անշարժ
մնայ՝ իր առջև դէպ անգունդ մը նայելով ակնայեռ : Իր սրտին
մէջ աշխարհ մը կը փլուէր :

Յանկարծ դէպ ՚ի մօտակայ դուռ մ՛ուղղեցաւ արագօրէն քայ-
լելով , և իր սենեակը մտաւ ուր անոր աճապարանօք զգրոցներ
բանալու զօյելը լսեց Վօթբո : Պահ մ՛ետք դուրս ելաւ կոմսու-
հին . փեղոյր մը գրուած և վերարկու մ՛տած էր : Մի և նոյն
արագութեամբ և խտուածեամբ անցաւ իր մենախուցէն — Վօթբո՝
ահարեկ՝ ուղեց կեցնել տիրուհին :

— Տիկին , ըսա՛ւ անոր առջևը կենալով :

Դե՛ ձեռքովը մեղմիկ հրեց Վօթբոն և մենախուցէն դուրս ե-
լաւ :

Քառորդ մ՛ետք : Շանդ-Էլիդէի սրղոտայէն կ՛երթար դէպ ՚ի
Բարիզ ուղղելով : Գիշերուան ժամը տասնուեկին էր : Ապրիլամի-
սուանցուրտ գիշերներուն մին էր , և անձրևը հատ առ հատ կը
տեղար : Հագուագիւտ անցորդներ որք լայնաձև թաց տրոտոցնե-
րուն (trottoir) վրայ տակաւին կը քայլէին՝ հետաքրքրութեամբ
կըզառնային և այս անտիական և վայելչագեղ կնիան ետեէն կը
նայէին որո գնացքին կարծես արագութիւն կը տար կենսաբեր
կամ մահահարուէր շահ մը . բայց Բարիզի մէջ սչինչ մարդուս զար-
մանքը կը գրաւէ , վասն զի հոն ամեն բան կը տեսնուի : Ուստի
տիկին Տը Գամօրին զարմանալի գնացքն ամենեւին տարօրինակ
ուշադրութիւն մը չէր գրգռեր . քանի մը մարդ կը ժպտէին . մէկ
քանին ալ ծաղրի խօսք մը կը նետէին զոր չէր լսեր կոմսուհին :
Մի և նոյն ջղաձգային արագութեամբ Գօնդօրտի մայտանէն ան-
ցաւ դէպ ՚ի Սէն դետին կամուրջն ուղղուելով : Սէն դետին
ջուրերն որ ուռեցած և տղմխառն էին՝ կամիջին կամարներուն
տակի գերաններուն զարնուելով ժխոր կը հանէին . կոմսուհին կա-
մըջին քովը հասնելով և այս ժխորը լսելով յանկարծ կանկ ա-
ռաւ . գետեղբայ պարսպին վրայ կը լինեցաւ և ջուրին նայեցաւ .
ապա դուրսը օրեց , երկարօրէն հառաչեց և սկսաւ քայլել նո-
րէն : Քիչ մ՛ետք Վանօ փողոցին մէջ կանկ առաւ մեծ ապարանի

մ՛տաջև որ պարտիզի պատու մը զատուած և կղզիացած էր մեր-
ձակայ տուներէն . այս ապարանը տիկին Տը Գանվալունինն էր :

Երբ հոն գտնուեցաւ , անսես հպատանուհին ալ ինչ ընելը
չգիտցաւ : Ինչև՛ համար եկած ըլլալը անգամ չէր գիտեր : Ու-
ղած էր դալ կարծես իր դժբաղդութիւնը ստուգելու , մատովը
շօշափելու , կամ դուցէ անոր նկատմամբ տարակոյսի պատճառ
մը , պատրուակ մը գտնելու համար : Նպատակ մ՛ընտրած էր ի-
րեն , հոն եկած էր , և ալ ինչ ընելը չէր գիտեր :

Ապարանին պարտէզներուն առջև սահմանաքարի (borne) մը
վրան նստաւ , դուրսը ձեռներուն մէջ պահեց և խորհելու փորձ
ըրաւ : Փողոցն ամայի , և կես գիշերն անցած էր : Անձրևային
սաստիկ հովմ՛ամեհաբար սկսաւ փչել Բարիզի վրայ , և խեղճ կի-
նը ցրտահար կը սրսփար :

Քաղաքատես զինուոր մ՛իւր վերարկուովը փաթթուած անցաւ ,
և կոմսուհին բռնեց թևէն .

— Ինչ կ՛ընես հող դուն , ըսաւ բիրտ ձայնով մը :

Տիկին Տը Գամօր զինուորին նայելով ,

— Չգիտեմ , ըսաւ :

Այս մարդը զթաց անոր վրայ : Մանաւանդ թէ նորատի
կնկան անկարողութեանը հակառակ անոր կիրթ ճաշակը և կեր-
պիւ մը պարկեշտութեան անոյշ բոյրը նշմարեց :

— Բայց , տիկին , չէք կընար հող մնալ , կրկնեց աւելի մեղ-
միկ :

— Չէ :

— Մեծ վիճա մ՛ունիք :

— Այո :

— Ինչ է ձեր անունը :

— Տը Գամօր կոմսուհի :

— Ո՛ւր կը բնակիք :

Կոմսուհին իր հասցէն տուաւ :

— Լա՛ւ , տիկին , սպասեցէք ինձ :

Քանի մը քայլ առաւ փողոցին մէջ , ապա մօտեցող կառքի մը
ձայնը լսելով կանկ առաւ : Կառքը դատարի էր : Ուստիկանու

Թեան մարդն աղաչեց կոմսուհին որ կառքը մտնէ : Հնազանդեցաւ նէ : Իսկ ինքը կառքստանին քովը նստաւ :

Պ. Տը Գամօր պահ մ'առաջ տունը մտած էր , և կոմսուհիին շարունակ աներևութեան պատմութիւնը շքմորով կ'լսէր սենեկապանուհիէն երբ պարտանին պղտի զանգակը հնչեց : Կոմսուհիին մինչև տունը գալը քիչ մը հանդարտած էր , և որովհետև երիկը խորունկ նայուածքով մը կը հարցուփորձէր զինքը ,

— Տկար էի , ըսաւ ժպտելու ջանք ընելով , ուզեցի քիչ մը դուրս ելնել . . . : Փողոցները չեմ գիտեր . . . և այս պատճառաւ մոլորեցայ :

Թէև ճշմարտանման չէր այս բացատրութիւնը , բայց Պ. Տը Գամօր չպնդեց . անոյշկերպով քանի մը պղտի յանդիմանութիւններ մըմտաց , և իր կիներ յանձնեց սենեկապանուհիին որ աճապարանօք ներս թաց զլետները հանեց վրայէն :

Նոյն ատեն Պ. Տը Գամօր մեկուսի սուս ոստիկանութեան մարդը որ դաւիթը կ'ստատէր , և հարցուփորձեց զան : Այս մարդէն իմանալով թէ որ փողոցին մէջ և փողոցին ճիշդ որ կողմը գտած էր կոմսուհին , իսկոյն հասկցաւ ճշմարտութիւնը առանց ուրիշի բացատրութեանց կարօտ ըլլալու :

Իր կնիանը սենեակն ելաւ : Կոմսուհին պառկած էր և մարմնովին կը դողար : Իր ձեռներուն մին սառանին վրայ կախուած էր : Գամօր ուղեց բռնել այս ձեռքը : Նէ կամաց մը քաշեց ձեռքը տրտմալի բայց համարձակ արժանապատուութեամբ մը : Այս պարզ շարժումը մշտնջենապէս բաժնած էր կնիկը երիկէն : Նոյն բոպէէն սկսեալ տիկին Տը Գամօր այրի եղաւ լին զաշնադրութեամբ մը զոր ինք պահանջած և երիկն ընդունած էր :

Գամօր քանի մը վայրկեան անշարժ մնաց վարագոյրներուն շուքին նայելով ակնայեռ և մոլորազին . ապա յամբարար քայլեց լոին սենեկին մէջտեղէն : Ինքզինքը արդարացնելու համար սուտ խօսիլը մտքէն չանցաւ : Իր գնացքը հանդարտ և կանոնաւոր էր , սակայն երկու կապուտանման շրջանակներ յանկարծ փորուեր էին իր աչերուն ներքև , և իր երեսին վրայ մոմին սոյխտակա-

նման դեղնութիւնը ծաւալած էր : Ետևը կցուած երկու ձեռներն իրարու մէջ կը զարարուէին : Մասն անցած օղակ մը չդիմանալով այս զարարումին խորտակուեցաւ : Գամօր մերթ ընդ մերթ կանկ կ'առնուր և անտիական կնկան ակուններուն ձայնը կը լսէր , որք կը կրճէին : Այս ժամի չափ ետք յանկարծ անկողնին մօտեցաւ , և կէս ձայնով ,

— Մարի , ըսաւ :

Կոմսուհին իր տենդալաւ աչերը անոր դարձուց :

— Մարի , կրկնեց Գամօր , չգիտեմ թէ ինչ կրնաս դիտնալ , և չեմ հարցներ ինչ դիտնալ : Քեզի դեմ շատ յանցաւոր եմ . . . բայց ոչ այնքան որքան կը կարծես անշուշտ . . . : Սոսկալի պարագաներ իշխեցին իմ վրայ . . . : Բայց ինքզինքս չբնդելու պատրուակ չեմ փնտեր . . . : Ազատիդ չափ խախտ գտաք զիս . բայց կ'աղաչեմ , հանդարտէ , պահպանէ ինքզինքդ . . . :

Այս առտու նախադպրոցներուդ , մայրական յոյսերուդ խօսքը կ'ընէիր ինձ : Այդ խորհուրդով պարտաւ . . . : Ասկից 'ի դատ կենացդ տէրը պիտի ըլլաս . . . : Իսկ ես քեզի համար պիտի ըլլամ ինչոր հաճելի է քեզ , այսինքն . բարեկամ մը կամ օտարական մը . . . : Հիմա կ'զգամ որ ներկայութիւնս վնաս կըրայ քեզ . . . բայց սակայն ցաւ է ինձ այդ վիճակիդ մէջ մինակ թողուլ քեզի . . . : Այս գիշեր փիկին ծօսելը կ'ուզես :

— Այո , մըմտաց :

— Երթամ դրկեմ . . . : Հարկ չէ ըսել թէ կան այնպիսի գաղտնի բաներ զոր կին մ'իւր սիրելադոյն բարեկամուհիին չյայտաներ . . . :

— Բայց միայն իր մայրին , հարցուց Մարի աղերսալի անձկութեան ձայնով մը :

Գամօր ալ աւելի դժգունեցաւ , և վայրկեան մ'ետք ,

— Բայց միայն իր մայրին , կը հաւանիմ , ըսաւ . . . :

Մայրդ վաղը պիտի գայ , այնպէս չէ :

Մարի գլուխովն այն ըսելու նշան ըրաւ :

— Անոր հետ քու նկատմամբ որոշում մը պիտի ընէք , և ամեն բան պիտի ընդունիմ :

— Շնորհակալ եմ, ըսաւ կոմսուհին տկարօրէն :

Գամօր իսկոյն մեկնեցաւ սենեկէն : Ինքն անձամբ դնաց տիկին ծօսէրը փնտուելու, զոր արթնցնել տուաւ, և կարճ կերպով ըսաւ անոր թէ իր կինը պաղառած ըլլալուն պատճառաւ ջղային սաստիկ տաղնապով մը համակուած է :

Շնորհագեղ պղտի տիկին ծօսէրն արագօրէն իր բարեկամուհիին տունը վազեց, և գիշերն անոր քովն անցուց : Երկար ատեն միամտաբար խաբուած չմնաց այն բացատրութենէն զոր Գամօր տուած էր իրեն : Վիներն իրենց վիշտերուն բուն պատճառը փոխադարձաբար կը հասկնան շուտով : Սակայն տիկին ծօսէր ոչ ուզեց որ կոմսուհին գաղտնիք տայ իրեն, և ոչալ գաղտնիք մ'իմացաւ . սակայն իր կաթողին սիրովն այն սոսկալի գիշերն ըրաւ իր բարեկամուհիին այն միակ ծառայութիւնը զոր կրնար ընել, այսինքն լացուց կոմսուհին :

Այն գիշերը Պ. Տը Գամօրին համար ալ քաղցր գիշեր մը չեղաւ : Կոմսն ամենեւին չբնացաւ : Մինչև առտու իր բնակարանին մէջ քալեց տեսակ մը կատուութեամբ : Այս պատանուհիին վիշտն անոր սիրտը յօշոտեր էր : Մի և նոյն ժամանակ անցելոյն յիշատակները կը գրգռուէին, հետեւեալ օրուան երկիւղներն աղջկան քով մայրը — և ինչ մայր — իր ամեն սիրելի պատրանաց, ամեն կարծիքներուն, կենացն ամեն երջանկութիւններուն նկատմամբ սաստկապէս յուսաբեկ և վշտահար կը ցուցնէին Գամօրին, և կոմսը կ'զգար թէ սրտին մէջ զթութեան համար, և խղճին մէջ տաղնապի համար կենդանի թելեր կային տակաւին : Ար բարկանար իր այս տկարութեան դէմ, և նորէն կը տկարանար :

Ո՛վ ուրեմն մատնած էր զինքը : Ո՛վ յայտնած էր իր գաղտնիքը : Այս մտատանջութիւնը գրեթէ հաւասար սաստկութեամբ կը յուզէր զինքը : Առաջին բոպէէն չսխալած էր այս մատնութեան նկատմամբ : Իր կնկան յանկարծահաս և գրեթէ յիմարական վշտին, յուսահատ դրբին, լուութեան պատճառն ոչայլ ինչ կրնար ըլլալ : Բայց եթէ համողում մը, վճռողական յայտնութիւն մը : Թամանակ մ'ունայնաբար կասկածներ ընելէն ետք վերջապէս համողուեցաւ թէ տիկին Տը Գանվալօնին նամակները միայն կրցեր է-

ին այսքան պայծառ կերպով լուսաւորել իր կնկան միտքը : Ինքն ամենեւին չէր գրեր մարդիլուհիին, սակայն չկրցած էր մարդիլուհիին արդիւիւ իրեն գրելու : Տիկին Տը Գանվալօնին, ինչպէս կտեսնաց մեծադոյն մասին համար ատանց նամակի սէրը խիստ անկատար էր : Պ. Տը Գամօր յանցանք մ'ունէր, որ իրեն պէս մարդու մը համար աններելի է, և որ էր պահել սիրուհիին նամակները. բայց ոչ ոք կատարեալ է. կոմսը ճարտարագէտ էր. կրսիւրէր տրիսուէտ ճարտասանութեան այս հրաշակերտները (chef-d'oeuvre). պարծանք մ'էր իրեն զանոնք ներշնչելը, և չէր կրնար համողիլ այրելու այսպիսի հրաշակերտներ :

Հտապաւ քննեց այն գաղանի զգրոցը որու մէջ կը պահէր տիկին Տը Գանվալօնի նամակները. դիտմամբ յայտնի ձգուած ինչ ինչ նշաններէն հասկցաւ թէ խառներ էին այս զգրոցը : Սակայն նամակներուն և ոչ մին պակաս էր. միայն անոնց կարգն աւրուած էր :

Ղօթթօին դուշտորութիւնը կասկածելի ըլլալով, Գամօր արդէն քանի մ'անդամ անոր վրայ կասկածներ ըրած էր երբ առտու տոմսակ մ'ընդունեցաւ իր գրադէն որ չկրցաւ ամենեւին կասկած մը թողուանոր մտքին մէջ : Ճիշդը խօսելով Պ. Ղօթթօ ևս բաւական անախորժ գիշեր մ'անցունելէն ետք քաջալերութիւն չզղացած էր արհամարհելու այն ընդունելութիւնը զոր իր տէրը կրնար իրեն վերապահել այն առաւօտ : Իր տոմսակը բաւական սասանութեամբ շարագրուած ըլլալով կրնար կասկածները հանդարտ թողուլ եթէ պատահաբար գրգռուած չէին անոնք, և եթէ կոմսուհին մատնած չէր զինքը : Վիմացնէր տոմսակով թէ Լօնտրայի մէջ վաճառատունէ մ'իրեն առաջարկուած շահաւոր պաշտօն մ'ընդունելով ստիպուած էր յանկարծ որոշում մ'ընել և առտու իսկ մեկնիլ անդարմանելի առիթ մը չկորուսելու համար : Վաւարտէր տոմսակը իր ամենասաստիկ երախտագիտութիւնները և յաւելը յայտնելով տիրոջը :

Գամօր չկրնալով խղիւղ Ղօթթօն որոշեց վճարել անոր վարձքը : Ոչ միայն դրկեց անոր մէկ քանի չվճարուած ամսականները, այլ նաև բաւական կոկիկ դումար մը իր համակրութիւնը և մաղ-

Թանրը անոր յայտնելու մտօք . սակայն պարզ զգուշութիւն մ'էր կոմսին այս ընթացքը , վասն զի Պ. Տը Գամօր ալ ամենեւին վախ մը չունէր այս Թունակիր անձէն , տեսնելով որ ան չունէր այն միակ զէնքը զոր իրեն դէմ կրնար ունենալ , նաև այն շահը որմէ կրնար դրդուիլ այն զէնքը գործածելու . վասն զի հասկցած էր թէ Պ. Աօթրօ իր կնիկը սիրելու պատիւը ըրած էր իրեն , և ասով ոչ այնքան նուաստ կըսեպէր իր գրագիրը , վասն զի կը տեսնէր որ ազատորդի յայտատուութիւնը , այսինքն ուրիշին կնիկը սիրելու յատուութիւնը ունի եղեր ան :

Պ. Տը Գամօր այն առաւօտ քաջարտութեան տաժանելի ջանադրութիւն ընելու հարկաւորութիւնը ունեցաւ իր աղնուականութեան յատուկ սրբաւորութիւնները ինքն անձամբ կատարելու , այսինքն կայարանն երթալու և տիկին Տը Թեքլը ընդունելու համար . բայց քաջարտութիւնն երկար ժամանակէ 'ի վեր իր միակ առաքինութիւնն էր , և դէթ այս առաքինութիւնը կը պարտաւորէր չկորուսել երբէք : Այսելչութեամբ ընդունեց իր ծաղկահաս զօրանչը որ իբր սպառ որոյրովին սկերով հագուած էր : Տիկին Տը Թեքլը զարմացաւ աղջիկը Գամօրին հետ չսեսնելով : Արմնը խոստովանեցաւ թէ առջի օրէն 'ի վեր քիչ մը տկար է Մարի : Խօսքովն ու ժպիտովն ըրած զգուշութեանց հակառակ շոյողեցաւ իր զօրանչը իսկոյն սաստկապէս վրդովելէ աղատ պահել : Բայց ինքն ալ կիսովին միայն կ'ուզէր հանդարտել տիկին Տը Թեքլը , որ անոր մամուտը զգուշութեամբ մը տուած պատասխաններուն ներքև աղէտք մը զղաց կանխաւ . 'ի սկզբան իր փետային խել մը ստիպողական հարցումներ ընելէն ետք լուռ կեցաւ մինչև տունը հասնիլը :

Գեուահաս կոմսուհին իր մայրը առաջին տպաւորութենէն խնայելու համար անկողինէն ելած , և խեղճ պատանուհին իր աշնահար այտերուն վրայ քիչ մը սնգոյր անդամ քսած էր : Պ. Տը Գամօր ինքն անձամբ բացաւ տիկին Տը Թեքլին իր աղջկան սենեկին դուռը , և գնաց :

Նորատի կինը դժուարութեամբ քիչ մ'ելաւ իր բազմոցին վրայ յէն , և մայրն իր գիրկն ընդունեց զան : Նախ զիբիլընդխառն

օյաղնուեցան և անմուռնչ դողեցին զիրար . ասլս մայրն անոր քովը նստաւ , աղջկան դուրսը իր կուրծքին վրայ հանդէցուց , և անոր աչքին մէջը նայելով հոգեպիշ ,

— Ի՞նչ կայ , ըսաւ ցաւազին կերպով :

— Ո՛հ , բան մը չկայ . . . յուսահատական բան մը չկայ ամենեւին . . . միայն թէ հիմակ առաջուպէն աւելի սիրել պէտք է Մարիդ , այնպէս չէ :

— Այո . . . բայց ի՞նչ է , ի՞նչ կայ :

— Պէտք չէ գէշութիւն ընել քեզ . . . և պէտք չէ նաև ինձ ընել . . . : Գիտես պատճառը :

— Այո . . . բայց կ'աղաչեմ , սիրելի աղջիկս , կ'աղաչեմ , ըսէ , ի՞նչ ունիս :

— Լաւ , ըսեմուրեմն ամեն բան . . . բայց , շատ կ'աղաչեմ , ինձի պէս սրտոտ եղի՛ր . . . :

Մարի աւելի խորունկ կերպով գլուխը պահեց մայրին ծոցը , և սկսաւ ցած ձայնով և առանց անոր նայելու պատմել այն սուկալի դաղտնիքը որ յայտնուած էր իրեն , և զոր էրիկին խոստովանութիւնը կը հաստատէր :

Այս սուկալի պատմութեան ժամանակ տիկին Տը Թեքլը աղջկան խօսքը և ոչ իսկ անգամ մը կտրեց . միայն թէ մերթ ընդ մերթ անոր մաղեքը կը պագնէր : Անտիական կոմսուհին որ' ուրիշի մ'ոճիբէն կարծես իբր ամօթահար չէր համարձակեր մօրը նայելու , կըրցաւ երևակայել թէ ինքն իր դժբաղդութիւնը քիչ մը չափազանց ծանր կը ցուցնէր քանի որ մայրն այնքան հանդարտութեամբ կը լսէր այս դժբաղդութեան խոստովանական պատմութիւնը . սակայն այն սուկալի բոպէին մէջ տիկին Տը Թեքլին հանդարտութիւնը մարտիրոսներու հանդարտութեան կը նմանէր , վասն զի այս մայրն իր ամենասիրելի աղջկան ձեռքովն այն ատեն կը կրէր այն ամեն անտանելի չարչարանքը զոր քրիստոնէուհի մը վաղբերուն ճիրանովը կամ գահճիւն կարծովը կրնար կրած ըլլալ մինչև այն ատեն :

Իր գեղանի և դուռնատ երեսն ու մեծ աչքերը դէպ երկինք կը նայէին՝ ինչպէս կը կարծուի թէ կը նայէին հոովմէական կրկես-

ներուն մէջ ծունր կրկնող անարատ նահատակութիւններուն երեսն ու աչերը, և կարծես կը հարցնէին Աստուծոյ թէ ստուգիւ այսպիսի չարչարանաց Համար միթիմարութիւններ ունի՞ արդեօք :

Երբ տիկին Տը Թեբլը ամեն բան լսեց, ոյժ ունեցաւ ժպտելու իր աղջկան որ վերջապէս իրեն կը նայէր անհանդիստ վեհերոտութեան արտայայտութեամբ մը, և աւելի անձկութեամբ համբուրելով Մարին, ըսաւ .

— Այո՛, սիրելի աղջիկս, ատի մեծ տրտմութիւն մ'է յիրաւի . . . սակայն իրաւունք ունիս ըսելու թէ յուսահատական բան մը չկայ :

— Կը կարծես :

— Անշուշտ . . . այս բանիս մէջ անըմբռնելի դաղտնիք մը կայ . . . բայց ապահով եղի՛ր թէ դժբաղդութիւնն երեւածին չափ սոսկալի չէ :

— Բայց քանի որ ինք կը խոստովանի՛, խեղճ մայրը իմ :

— Աւելի աղէկ ունիմ խոստովանիլը, սիրելիս . . . խոստովանիլը կը հաստատէ թէ իր սրտին մէջ տակաւին վեհանձնութիւն մը, քանի մը դարմաններ կան . . . ասկից 'ի զատ իր խիստ վշտահար ըլլալը կ'զգայի . . . կիտնաս որ մեզի պէս կը տառապի ան ալ . . . : Աերջապէս ապագային վրայ խորհի՛նք, սիրեցեանք իմ :

Մայրն ու աղջիկ ձեռք ձեռքի տուած իրարու կը ժպտէին փոխադարձապէս՝ զսպելով արտառքը որով լեցուեր էին իրենց աչերը :

Քանի մը ըրայէն ևտք,

— Աղջիկս, ըսաւ տիկին Տը Թեբլը, կ'ուզէի կէս ժամի չափ հանգչել . . . ասկից 'ի զատ պէտք ունիմ քիչ մը յարգուղարղս շտկելու :

— Ուրեմն սենեակից տանիմ քեզի . . . : Ո՛հ, կրնամ քայլել . . . : Կ'զգամ թէ աւելի աղէկ, շատ աղէկ եմ . . . :

Տիկին Տը Գամօր թեն ատաւ մայրը և տարաւ մինչև այն սենեակին դուռն որ իրեն համար սխառապատուած էր արդէն : Շեմին վրայ թողոց մայրը և ինքն ետ գնաց :

— Խոհեմեղի՛ր, ըսաւ տիկին Տը Թեբլը՝ ետեը դառնալով և դարձեալ ժպտելով անոր :

— Գու՛ն ալ եղի՛ր, մրմնաց մանկամարդ կիներ, որու ձայնը քաշուած էր :

Սենեակին դուռը գոցելէն ետք տիկին Տը Թեբլը զէպ երկինք նայեցաւ ձեռնամաձ . ապա անկողնին առջև ծունր կրկնելով անոր մէջը թաղեց զլուխը և սկսաւ մոլորագին հեծկլալ :

Պ. Տը Գամօր դայած փակուած էր իր մատնատունին մէջ որ տիկին Տը Թեբլի խոցին կից էր : Դախ մեծաբայլ ժուռ եկաւ այն ընդարձակ սենեակին մէջ, ըրպէ՛ս առ ըրպէ՛ս ներս ներս մանեցելը տեսնելու յոյսով : Ժամանակը կ'անցնէր, ուստի կուսը նստաւ և ուղեց կարդալ . սակայն խելքն ուրիշ տեղէր . իր ականջն աւկամայ անյազաբար կը լսէր տան ամենէն պղտի ձայները : Եթէ երևար թէ քայլ մը կը մօտի, յանկարծ ոտք կ'եղնէր ան և շուտով երեսը կը շտկէր : Երբ բացուեցաւ մօտակայ սենեակին դուռը, անոր անձկութիւնը սաստկացաւ . նախ երկու ձայնի շշուկը, ապա տիկին Տը Թեբլին օթոցին վրայ ծանրապէս անկուսը, և ապա յուսահատական հեծկլանքը լսեց որոշակի : Պ. Տը Գամօր ուժգնակի նետեց զիրքը զոր կը ջանար կարդալու, և արմուկը դնելով զրասեղանի մը վրան որ իր առջևն էր՝ իր պրկուած ձեռքովն երկար ատեն դուռնատ ճակատը սեղմելով մնաց :

Երբ մեղմեցաւ հեծկլանքին ձայնը և սակաւ առ սակաւ դարբեցաւ, Պ. Տը Գամօր շունչ առաւ :

Կէսօրին մօտ յետադայ տունակը ընդունեցաւ :

« Եթէ թոյլ կը տաս ինձ որ աղջիկս գիւղը տանիմ քանի մ'օր մնալու համար, այս մասին երախտագէտ պիտի ըլլամ » քեզ :

« ԵՒԻԶԱ ՏԸ ԹԵԲԼԸ »

Կոմսն խկոյն այս պարզ տողը գրեց ու զրկեց իբր պատասխան .

« Չես կրնար ընել բան մը զոր ես այսօր և միշտ չընդունիմ »

Տիկին Տը Թեքըը իրօք իր աղջկան տրամադրութիւններուն և ոյժերուն ինչ ըլլալը հասկնալէն ետք որոշած էր անյապաղ հեռացնել զան էրիկին ներկայութենէն, իրենց փոխադարձ կացութեան ցաւալի դժուարութիւններէն, և այն տեղէն ուր այնքան վիշտեր կրած էր Մարի։ Ինքն իսկ հարկաւորութիւն ունէր առանձնապէս և ամփոփ միտքով խորհելու որպէս զի այսպիսի անօրինակ պարագայի մը մէջ որոշում մ'ընէ։ Վերջապէս իրենց մէջ մինչև որ քիչ մը ժամանակ չանցնէր, տիկին Տը Թեքըը Գամօրը վերստին տեսնելու քաջասրտութիւնը չէր զգար, եթէ երբէք նորէն պիտի տեսնուէր անոր հետ։

Անձկութեամբ սպասեց այն պատասխանին զոր Գամօր պիտի տար իր աղերսագրին։ Իր զաղափարներուն ահարկու շփոթութեան մէջ տիկին Տը Թեքըը կը կարծէր թէ այսուհետև ամեն բանի կարող է ան, և ամենայն նկատմամբ կը վախնար անորմէն։ Բայց կոմսին տոմսակը սիրտ տուաւ իրեն. շուտով աղջկանը կարգաց զայն, և երկուքն ալ ամենափոքր ոստի մը յարող երկու կորուսեալ խեղճ էակներու պէս ուղեցին հաճութեամբ նշմարել այն տեսակ մը յարգական լքումը, որով կոմսն իրենց բաղդը իրենց ձեռքը կը յանձնէր։

Գամօր օրը Օրէնսդիր ժողովին նստին մէջ անցուց, և երբ տունը դարձաւ, կինն ու զոքանչը մեկներ էին։

Տիկին Տը Գամօր հետեւեալ առտու իր աղջկութեան ժամանակի սենեկին մէջ արթնցաւ. գարնան թռչունները հայրական հին պարտիզին մէջ իր պատահաններուն ներքև կը ճուռողէին։ Ճանչեց իր մանկութեան բարեկամներուն այս ձայները և սիրտն ելաւ արդահատութեամբ. սակայն քանի մը ժամուան քուն մ'իր բնական արիւթիւնը տուած էր։ Հեռացուց այն զաղափարները որք կը մեղկէին զինքը, ելաւ անկողնէն, և զնայ մայրը՝ արթնցած միջոցին՝ զարմացնելու։ Քիչ մ'ետք երկուքն ալ ման կը զային այն դարատափին վրայ ուր թիփներ կային. ապրիլ ամսոյն վերջը մօտ էր, նորբայր և խնկարոյր դալարիքն արևին մէջ կը տարածուէր, ճանձերն արդէն երամովին կը բզլային կիսաթիթ վարդերուն,

կապուտագոյն շեփորիկներու բուրդերուն և խիլիչներու* կախուած ողկոյղներուն վրայ։ Երիտասարդ կոմսուհին այս թարմաւէտ հրաշալեաց միջևը լուելայն քանի մը շրջան ընելէն ետք՝ մայրը իր մտածութեանց անշուշտ թաղուած տեսնելով անոր ձեռքը բռնեց և ըսաւ.

— Մայր իմ, մի տրտմիր . . . ահա առաջուան պէս ենք . . . մեր պզտի բոյնին մէջ ենք միասին . . . Երջանիկ պիտի ըլլանք, յիրախ։

Մայրն աղջկան նայեցաւ, անոր գլուխը բռնեց և տեսակ մը բռնաբարութեամբ ճակատէն պագնելով,

— Հրեշտակ մ'ես, ըսաւ։

Պէտք է խոստովանիլ թէ Տէ Բամօր շատ նեղեց իր քրոջ աղջիկը և թուր, թէև ասոնք խանդակաթ սէր ունենային իր վերայ։ Ծեր ազատորդին երբէք չսիրած էր Գամօրը, հաւանած էր խնամութիւն հաստատելու հետը, զինքը երեսփոխան ընելու աւելի համակերպութեամբ քան թէ եռանդով։ Գէպքը շատ կարգարացնէր իր հակակրութիւնը, բայց պէտք էր զաղտնի պահել իրմէն Գամօրին դէմ հակակրութեան արդարացած ըլլալը։ Տէ Բամօր պատուական, բայց անթերի և խիստ մարդ մ'էր։ Եթէ հարևանցի կերպով բան մ'իմացած ըլլար Գամօրին ընթացքին նկատմամբ, անշուշտ անզարմանելի ժխոր մը հանելու պիտի գրդուէր։

Այս պատճառաւ տիկին Տը Թեքըը և իր աղջիկը ծածկապէս խօսք ըրին իրենց մէջ անոր առջև անթափանցելի զգուշութեամբ մը համբերելու։ Բայց նաև երբ օտարականի մ'առջև զանուէին, մի և նոյն զգուշութեամբ կը վարուէին։ Երկար ատեն տեւելով թերևս անտանելի ըլլար այս զգուշութիւնը, եթէ՝ ծաղկահաս կոմսուհին առողջութեան վիճակն օր ըստ օրէ նուազ կասկածելի նշան մը չառնուր որու շնորհիւ ներելի էր իրենց անհանգարտ մտատանջութիւն ունենալ և առաձնակի ասորիլ։

* Cytise. յանաբէն քիթիսօս, որչպարեմաւոր պոռնիլու մի պե
ասին է։ Ծ. Թ.

Սակայն տիկին Տը Թեքլը՝ ինքզինքը իր աղջկան դժբաղդու-
թեան զլխաւոր պատճառը սեպելով և այս մասին անասելի դառ-
նութեամբ մը ինքզինքը ամբաստանելով՝ անցելոյն և ներկային
տերակներուն միջևն ապագային համար դարման մը, ապաւէն մը
կըփնտուէր անընդհատ : Տիկին ար Թեքլը կոմսուհին բոլորովին
և ամեն զոհողութիւն յանձն առնելով իր էրիկէն զատելու գաղա-
փարը ունեցած էր նախ : Գամօր իր ամբարիշտ երկրիմութեամբն
երկիւղաւած էր տիկին Տը Թեքլին, որ այս երկիւղին առաջին
տպաւորութենէն դրգուելով իր աղջիկը վերստին այսպիսի մար-
դու մը քովը տեղաւորելու գաղափարը չկրցած էր անարսափ ե-
րևակայել : Բայց ենթադրելով թէ Պ. Տը Գամօրին հաւանու-
թեամբը կամ օրէնքին իշխանութեամբը կարելի ըլլար անոնց զա-
տուիլը, այսպիսի բաժանում մը դայթաղելի գաղտնիք մը կը
յայտնէր հասարակութեան, և կրնար ահաբեկ տեղի
տալ : Այս հեռուութիւնները չունենար անդամ, գէթ տիկին Տը
Գամօրին և իր էրիկին մէջ յաւիտենական վիճ մը պիտի բանար
հարկու : Արդ՝ տիկին Տը Թեքլը ահա այս վճիռ բացուիլը չէր
ուզէր : Վասն զի այս մասին շատ խորհելուն զօրութեամբը Պ.
Տը Գամօրին բնաւորութիւնը եթէ թերևս ոչ աւելի նպաստուոր
գէթ աւելի ճշմարիտ լոյսէ մը յայտնուած տեսաւ վերջապէս : Տիկին
Տը Թեքլը գէշութիւնը չէր ճանչեր բնաւ, բայց գիտէր թէ ինչէ
աշխարհս և կեանքը, և ասոնց նկատմամբ չդիտցածները կորովա-
մաութեամբը կը դուշակէր : Ուստի գրեթէ հասկցաւ Գամօրին
ինչպէսակ բարոյական հրեշ մ'ըլլալը, և հասկնալովը տակաւին
բան մը յուսաց անորմէ : Ղերջապէս Մարիին վիճակը քիչ մը ժա-
մանակէ ետք իրեն կը խոստանար միսիթարութիւն մը զոր պէտք
չէր իրմէն յափշտակելու վտանդին ենթարկուիլ, և Աստուած
կրնար թող տալ որ այսքան ցաւալի միաւորութեան մ'այս պա-
տանդն օր մ'անոր խզուած կապերը վերակաղմէ :

Տիկին Տը Թեքլը իր խորհրդածութիւնները, վախերը, յոյսերը
աղջիկին հաղորդեց, և շարայարեց :

— Ինչ՞ աղջիկս, քեզ խրատ տալու իրաւունքէն գրեթէ
գրկուեցայ, միայն կ'ըսեմ քեզ, ես ահա այսպէս կ'ընէի :

— Լաւ, մայր իմ, այդպէս պիտի ընեմ, ըսաւ ծաղկահաս կի-
նը :

— Գարձեալ մտածէ ատոր վրայ, վասն զի շատ դառնութիւն-
ներ պիտի ունենայ այն կայութիւնը զոր ընդունելու կը պատ-
րաստուիս. բայց, բաբէ, դառնութեանց մասին միայն ընտրու-
թիւն կրնանք ընել :

Այս խօսակցութեան վրայ, և զիւղը գալէն գրեթէ ութ օր
ետք տիկին Տը Թեքլը Պ. Տը Գամօրին յետագայ նամակը գրեց,
աղջիկը կարգաց և հաւնեցաւ այս նամակը :

« Արածեմ ողբեցիր ըսել ինձ թէ կնկանդ ազատութիւնը ետ կը
տաս, եթէ կ'ուզէ ետ առնուլ : Չուզեր և չկրնար ետ առնուլ իր
ազատութիւնը : Աինդ արգէն սլարտաւոր է զոհուելու մանկան որ
անուագ պիտի կրէ : Այս անուան անարատ մնալն իրմէն կա-
խում չպիտի ունենայ : Ուստի կ'աղաչէ քեզի որ առնիդ մէջ իր
տեղը պահես : Թերևս կը վախնաս որ խոսովութիւններ հանէ,
յանդիմանութիւններ ընէ ան. բայց ամենեկին մի ունենար այդ-
պիսի վախ մը : Ան և ես կրնանք տառապիլ անձայն : Սակայն,
կ'աղերսեմ քեզի, բարեսիրութեամբ վարուէ անոր հետ : Մեղքքիբ
Մարիին : Հաճէ գեւ քանի մ'օր հանդարտ ձգելու գիշորը, և
ապա ետ կանչէ զինքը կամ եկուր : »

Այս նամակը Պ. Տը Գամօրին արդահատանքը շարժեց : Ռը-
քան ալ անզոյ ըլլար ան, կրնանք կարծել թէ իր կնկանը մեկ-
նելէն 'ի վեր մտքի անթերի հանդարտութիւն մը չունէր : Ան-
ստուգութիւնը չարեացյոտեղոյն է, վասն զի անոնց ամենը կ'ե-
րևակայէ այն : Ութ օրէն 'ի վեր ամենեկին լուր մը չառած ըլ-
լալով չկար հնարաւոր աղէտը մ'որուն իր զլխուն վերելը ծփալը
չզգար : Իր տանը մէջտեղի ունեցող պատահարը տիկին Տը Գան-
վալօնէն գաղտնի պահելու և զան բոլորովին հանդիստ ձգելու
ամբարտաւան քաջարտութիւնը ունեցած էր, վնչդեռ ինք չէր
կրնար քնել : Այս տարօրինակ մարդն ահա առնական կեանքի
զօրութեան և մեծասրտութեան այսպիսի ջանադրութիւններով ինքն
իր առջև տակաւին տեսակ մը բարձր համարում կը պահէր :

Ուստի տիկին Տը Թեքլի տոմսակն անոր համար աղատում մ'եղաւ : Կոմը յետակայ կարճ նամակը գրեց անոր .

Ներախտագիտութեամբ և ակնածութեամբ կ'ընդունիմ ամեն ըրած որոշումներդ : Աղջկանդ որոշումը վեհաձայնական է : Այդ որոշումին արժէքը ճանչելու չափ ես ալ դեռ վեհաձայնութիւն ունիմ : Ուղես կամ չուղես, յաւիտեան անոր բարեկամն եմ. նաև քոյդ :

«ԳԱՄՕՐ»

Պ. Տը Գամօր յառաջարանական խօսքով մ'իր դալուստը ծանուցանելէն ութ օր ետք իրիկուն մը տիկին Տը Թեքլին տունը հասաւ : Իր ծաղկահաս կիներ հիւանդ էր : Ականատեսները մեկուսեցու (écarter) հոգ տարուած էր . բայց իրենց խօսակցութիւնն ոչ այնքան ցաւալի և դժուարին եղաւ որքան կրնար վախցուիլ : Տիկին Տը Թեքլը և իր աղջիկը Գամօրին պատասխանին մէջ տեսակ մ'աղնուութիւն գտեր էին որ վստահութեան նշոյլ մը տուած էր անոնց : Ամեն բանէ առաջ սէդ էին անոնք, և՛ կանանց սովորութեան հակառակ՝ ամենէին չէին սիրեր աղմուկը և կռիւր : Ուստի պաղութեամբ և հանդարտութեամբ ընդունեցին Գամօրը : Իսկ աս իր ճակատին վրայ և խօսքերուն մէջ ցոյց տուաւ ստոյգ և արամալի հեղութիւն մ'որ թէ արժանապատուութիւն և թէ շնորհք ունէր : Խօսակցութիւնը նախ ատեն մը կոմսուհին առողջութեան վիճակին վրայ, ապա օրուան լուրերուն, տեղական պարագաներուն վրայ դարձաւ, և կամաց կամաց դիւրին և սովորական ձև մ'առաւ : Պ. Տը Գամօր քիչ մը յոգնած ըլլալը պատուակ բռնելով՝ դուրս ելաւ ինչ կերպով որ ներս մտած էր, այսինքն երկուքին ալ բարև տալով և առանց անոնց ձեռքը թոթուել ուղեւր :

Տիկին Տը Գամօրին և երիկին մէջ այսպէս սկսան այն նոր և տարօրինակ յարաբերութիւններն որք այսուհետև անոնց ամուսնական կեանքի միակ կապը պիտի ըլլային : Գամօր հրապարակային ցոյցերէ զոչ շատ քիչ մ'էր, ասիկց 'ի զատ կնկանը քով

իւր բռնած քաղաքավար բայց զոչ զիւրը զդալի կերպով պիտի շտարբերէր այն սովորութիւններէն զոր Գամօրին ունենալը յայտնի էր . ուստի այս երկու պատճառաւ մարդիկ ևս առելի պիտի խաբուէին անոր և կնկան նոր յարաբերութեանց նկատմամբ :

Գամօր երկու օր կեցաւ Բէօյեի : Այս երկու օրուան մէջ տիկին Տը Թեքլն ընդունայն սպասեց մեղմարար (attenuant) բացատրութեան մը զոր չէր ուզեր խնդրել և զոր կը յուսար սակայն : Ինչ էին այն սոսկալի պարագաներն որք Գամօրին ամենէն նուիրական զգացումները մոռցնելու չափ տիրեր էին անոր կամքին վերայ : Երբ նէ կը ջանար այս գաղտնիքը թափանցել, իր միտքը չէր թողուր զինքը ճշմարտութեան մօտենալու : Պ. Տը Գամօր ահարկու վտանգի մը սպառնալեաց առջև՝ տիկին Տը Գանվալունին պատիւը, հարստութիւնը, թերևս կեանքը ազատելու համար պարտաւորած էր իր անարժան գործը կատարելու : Ասի չքմեղութեան տկար պատճառ մը կ'երևար այն մայրին աչքին, սակայն պատճառ մ'էր այն : Թերևս նաև՝ իր աղջկան հետ կարգուելով իր սրտին մէջ որոշած էր խղել այն աղետալի կապը որ՝ ինչպէս կը պատահի՝ անկից ետք գրեթէ իր կամքին հակառակ նորէն բռնած էր զան : Ինչպէս Գամօրին գալուստէն առաջ, նոյնպէս և մեկնելէն ետք տիկին Տը Թեքլը այս ամեն վշտալի կէտերուն նկատմամբ չէ թէ ապացոյցներ այլ միայն կարծիքներ ունեցաւ որոնց ամենէն միջթարական ճշմարտանմանութիւններուն մասնակից կ'ընէր իր աղջիկը :

Որոշուած էր որ տիկին Տը Գամօր դիւղը մնայ իր առողջութեան մինչև վերահաստատուիլը : Գամօր փափաքած էր միայն որ կինն իր սովորական բնակարանը հաստատէ իր Բոյեի երկիրն որուն զղեարկը շատ ճաշակով նորոգուած էր : Տիկին Տը Թեքլը զոչայ այս կարգադրութեան պատշաճութիւնը, ինքն իսկ ձգեց Տը Թեքլը կոմսին հին բնակարանը, և աղջկանը հետ տեղաւորուցաւ այն միջակ ապարանին մէջ որ ատենօք Պ. Տը Գամօրին մայրական նախահարցը կը վերաբերէր, և որուն հանդիսաւոր պողոտան, կրանիթեայ վանդակաձև պատերը, նշգարիներու լարիւրինքները և դարաւոր եղևիւններէ հովանաւորուած սեւթոյր ըճա-

կը նկարագրեցինք արդէն այս պատմութեան մէկ ուրիշ մասին մէջ:

Մայր և աղջիկ հոն իրենց ամենէն քաղցր և ամենէն ներքին յիշատակներուն միջևն էին. վասն զի այս պղտի դղեակը, որ այնքան երկար ժամանակ ամայի էր, անխնամ ձգուած անտուներն որք անոր շուրջը կը պատէին, արամաշուք լճակը, մենական յուերժահարը և ասոնց նման ուրիշ ամեն բան անոնց մասնատր կալուածքը, անոնց միասնական (commun) երազներուն սիրելի շրջանակը, անոնց մանկութեան աւանդութիւնը, անոնց պատանութեան բանաստեղծութիւնն եղած էին: Անշուշտ մեծ արամութիւն մ'է արտասուալի աչերով, ձգնուած սիրտով մ'և կեանքի փոթորիկներէն ծուռած ճակատով մը նորէն տեսնել այն ընտանի վայրերը ուր երանութիւնը և հանգարտութիւնը ճանչեր էին. սակայն անցեալ ուրախութիւններուդ, գերեւած յոյսերուդ, կործանուած երազներուդ վերահասու ըլլող այս ամեն մտերիմներն եթէ ցաւալի ախանտեսներ են, նաև բարեկամներ են: Արօրեա զանոնք, և կարծես թէ անոնք ալ քեզի կը սիրեն: Ահա այսպէս այս խեղճ կիներն իրենց անբուժելի վէրքը այս անտառներուն, ջուրերուն, մենական վայրերուն վրայ ժուռ ածելով կը կարծէին լսել ձայներ որք կը ցաւէին իրենց վրայ, և շնչել համակրութիւն մ'որ կը հանդարտէր գիբները:

Շատ փորձանք ունէր այն կեանքը զոր սիկին Տը Գամօր արիսրար ընդունելու խոհեմութիւնը ունեցած էր. բայց յերասի այս փորձանաց ամենէն անագորոյնն էր սարկով Տը Գանվալօն մարգիզուհին վերստին տեսնելու և անոր հետ պահելու այնպիսի դիրք մ'որ կարենար զօրապետին և հասարակութեան աչքը խաբել: Առմտուհին համակերպած էր ներս հետ տեսնուելու, բայց կը փափաքէր կարելի եղածին չափ ուշացնել այս մերձաւորութիւն յուզմունքը: Եր առողջութեան վիճակը բնական պատճառ մ'եղաւ այն ամառուան մէջ Գանվալօնի երկիրը չերթալու, և ցորեկն ալ իր սենեկին մէջ փակուած մնալու երբ մարգիզուհին զօրապետին հետ Բէյեի Եկաւ սյցելութեան: Տիկին Տը Թեքըրը դիմաորեց մարգիզուհին, և իր սովորական բարեշնորհութեամբը յաջողեցաւ

հիւրընկալելու զան: Տիկին Տը Գանվալօն ևս՝ որու Գամօր իմացուցած էր եղելութիւնը՝ չխռովեցաւ, վասն զի լրագոյն կիներն ինչպէս և շարագոյնները գերադանյապէս յաջողակ են այս տեսակ խաբեբայութեանց մասին, և վերջապէս ամեն բան այնպիսի կերպով անցաւ զնաց որ զօրապետն ամենափոքր կասկած մ'ունենալու չդրուեցաւ:

Գեղեցիկ եղանակն անցաւ: Պ. Տը Գամօր բազմաց զիղն եւ կած երեւած էր՝ մէն մի տեսակցութեան մէջ հաստատելով իր կնկանը հետ ունեցած յարաբերութիւններուն նոր ձեւը: Իր սովորութեան համեմատ օգոստոս ամսուան մէջ Բէյեիի աստարանը բնակեցաւ, և ինքն իսկ կոմսուհին առողջութեան վիճակը պատրուակ բունց այն տարի Գանվալօնի դղեակը սաեպ չերթալու համար:

Բարիզ վերադառնալով նորէն ստացաւ իր սովորութիւնները, նաև իր անհոգ ինքնամոլութիւնը, վասն զի սակաւ առ սակաւ սխափուեր էր այն ցնցումէն զոր կրած էր. կ'սկսէր մոռնալ իր վիշտերը, ալ աւելի կնկան վիշտերը, և զաղտնապէս ինքզինքը երջանիկ անդամ կը համարէր այն դարձուածքին համար զոր դիպուածը տուեր էր իր կացութեան: Իրօք Գամօր այս կացութեան ստատելութիւնները կը պահէր և անպատեհութիւնները ալ չունէր: Աինը անդեկութիւն ունէր, ըսել է թէ Գամօր ալ չէր խաբեր զան. իրապէս կոմսին համար սիփուճ մ'էր այս. կոմսուհին ալ քիչ մ'ատենէ ետք մայր պիտի ըլլար, խաղալիկ մը, միթիթարութիւն մը պիտի ունենար. ասկից 'ի զատ Գամօր միտք ունէր աւելի ուշադրութիւններով և ակնածութիւններով վարուիլ անոր հետ. ուրեմն իր կինն երջանիկ կամ երջանիկ պէս պիտի ըլլար, այսինքն որքան որ կ'ըլլայ աշխարհիս կանանց քառորդը: Ուրեմն ամեն բան կարգին էր: Առման իր փառայեղ կառքին պահ մը կապուած անիւները նորէն արձակեց, և նորէն իր շքեղ աստարեզը նետուեցաւ իր արքայական տարփուհիովը հպարտանալով, հոն արքայական հարստութիւն մ'ունենալ երազելով և իշխանութեան ու փառասիրութեան յաղթանակները՝ իր իր կենաց պատիւ հեռուստ ընդհնարելով:

Բաւական երկրայելի պարտականութիւններ պատրուակ բռնելով աշնան մէջ միայն մէկ անգամ Բէօյեի դնաց, սակայն բաւական ստէպ նամակ կը գրէր, և տիկին Տը Թեքլը Համառօտակի տեղեկութիւններ կը տար անոր իր կնկան վրայ:

Գամօր՝ նոյեմբերի վերջերն առտու մը հեռագիր մ'առաւ որ հեռագրական ոճով հասկցուց իրեն թէ անմիջապէս կը պարտաւորէր Բէօյեի գալ եթէ կ'ուզէր ներկայ դանուիլ իր զաւկին ծննդեան: Պ. Տը Գամօր չէր դեգեկեր երբ պատշաճութեան կամ մարդավարութեան պարտաւորութիւն մը կ'երևար իրեն: Տեսնելով թէ վայրկեան մը չէր կրնար կորուսել եթէ կ'ուզէր առտու մեկնող կառաչարին (tráin) հետ երթալ, իսկոյն կառք մը նետուեցաւ և կայարանը վազեց: Իր ծառան հետեւեալ օրն ետևէն պիտի գար:

Բէօյեի հետ յարաբերութիւն ունեցող կայարանը բազմաթիւ մըրններով հեռի էր անկից: Պարագային շփոթութեան պատճառաւ որ և է կարգադրութիւն եղած չէր հասած ժամանակ զինքը ընդունելու համար, ուստի կայարանէն մինչև Բէօյեի երթալու համար պարտաւորեցաւ բաւական համարիլ տեղական ծանրաշարժ կառք մը: Ճամբաներուն յոռի վիճակն ալ ձախորդութիւն մ'երգաւ, ուստի առաւօտուան ժամն երեքին միայն իր սրողոտային վանդակապատին առջև կառքէն վար ցատկեց յողնաբեկ և ցրտահար:

Գէպ ՚ի տունն ուղղեցաւ՝ հինօրեայ լռին կնձնիներուն տակաւին տերեւախիտ և սաստկադէս մթին դմբեթին տակէն մեծաբայլ յառաջանալով: Պողոտային միջևն էր երբ սուր աղաղակ մ'օղը պատուեց, սիրար կուրծքին մէջ ոստեց. կանկ առաւ յանկարծ և ականջ գրաւ: Աղաղակը կը տեսէր ՚ի խաւարի: Կրնայիր կարծել թէ մարդկային արարած մը յուսահատարար մարդասպանի մը դանակին ներքև կ'աղաղակէ: Սակաւ առ սակաւ մեղմեցան այս ցաւադին ձայները. Գամօր տելի արողօրէն քայլել սկսաւ. ալ չէր լսեր իր շնչերակներուն խորին և հատճեպ զարկը: Այն միջոցին՝ ուր սպարանին լոյսերը կընշմարէր՝ վշտադին աղաղակ մ'ես, աւելի կսկծալի, աւելի աղետաւոր աղաղակ մ'ես լսուեցաւ, և Պ. Տը Գամօր այս անգամ կանկ առաւ: Թէև իր միտքն անմիջապէս

հասկցաւ այս հոգեվարքի աղաղակներուն բնական բացատրութիւնը, բայց և այնպէս զինքը կը խռովէին անոնք: Գամօրին պէս բոլորովին շինովի կեանքի մը սովորած մարդերու համար հազուադէպ բան մը չէ տարօրինակ զարմացումով մը համակուիլ երբ բնութեան ամենապարզօրինաց մին երկնային իրողութեան տիրական և անդիմադրելի սաստկութեամբն անոնց առջև յանկարծ կը կանգնի:

Պ. Տը Գամօր տունը հասաւ, ծառաներուն բերնէն քանի մը տեղեկութիւն առաւ, և իր դալուստը տիկին Տը Թեքլին խմացրնել տուաւ: Տիկին Տը Թեքլը իսկոյն իր աղջկան սենեկէն վար լջաւ:

Կոմսն անոր գունաբեկ գէմը և խոնաւ աչքը տեսնելով,
— Միթէ անհանգիստ ես, ըսաւ ուժղնասէս:

— Անհանգիստ չեմ, ըսաւ, բայց շատ ցաւ կը քաջէ ան, և շատ երկար կը տևէ ցաւը:

— Կրնամ արդեօք տեսնել զինքը:
Պահ մը լուռութիւն տիրեց:

Ղար կը նայէր տիկին Տը Թեքլը որուն ձակասն ամփոփած էր, ապա վեր նայելով, ըսաւ.

— Կրնաս տեսնել եթէ պահանջես:
— Ոչինչ կը պահանջեմ: Եթէ կը կարծես թէ ներկայութիւնս անհանգիստ պիտի ընէ զինքը . . .

Պ. Տը Գամօրին ձայնը սովորականին պէս համարձակ չէր:

— Կը վախնամ, կրկնեց տիկին Տը Թեքլը որ ներկայութիւնդ շատ չյուղէ զինքը: Եթէ կ'ուզես վստահիլ ինձ, երախտապարտ պիտի ըլլամ քեզ:

— Բայց գէթ . . . թերևս, ըսաւ Գամօր, շատ դո՛հ պիտի ըլլայ եթէ զիտնայ որ եկած եմ, հոս եմ. . . թէ չեմ թողուր զինքը:

— Իրեն պիտի ըսեմ ատի:

— Աղէկ:

Գլխու լնթե նշանով մը մնաս բարև ըսաւ տիկին Տը Թեքլին և իսկոյն հեռացաւ: Պարտէզը մտաւ, որ տունին ետևն էր, և

հոն մէկ ծառուղիէն միւս ծառուղին ժուռ եկաւ ըստ դիպումա-
ծի:

Պ. ՏՐ Գամօր այս միջոցիս կը դտնուէր այն հանդամանաց մէջ
ուր մարդերուն պաշտօնն ընդհանրապէս խիստ դիւրին և խիստ
փառաւոր չէ ամենեին. բայց այս փորձանքին հասարակ ձանձ-
րոյթներն իրեն համար ծանրացեր էին քանի մը խորհրդածու-
թիւններով որք մասնաւորապէս ցաւալի էին: Իր ներկայութիւնն
ոչ միայն անօգուտ, այլ նա ահառիթ էր. ոչ միայն նեցուկ մը
չէր, այլ նաև աւելի վտանգ և վիշտ մ'էր: Այս խորհրդա-
ծութեան մէջ դառնութիւն մը կար զոր ինքն իսկ կ'զգար: Իր
ծննդական վեհանախութիւնն և բռնադատուած խոնարհութիւնը
կըսարտէին մինչդեռ կը ըսէր այն վայրենի աղաղակները և աղե-
խարշ ողբերը որք դրեթէ անընդհատ իր ականջին կը հասնէին
հեազհեաէ: Աւերջապէս այնցուրտ դիշերն այս սրբաբնիկն խոնա-
հողին վրայ կեցաւ և տրտմալի արշալոյսին մինչև այն դիշերին
յաջորդելը քանի մը ծանր ժամը անցուց:

Տիկին ՏՐ Թեքլը բազմիցս եկած և լուր բերած էր իրեն:
Ժամն ու թի միջոցին ներս հանդարտ և ծանր կերպարանով իրեն
մօտենալը տեսաւ:

- Պարոն, ըսաւ, տղայ զաւակ մ'ունիս:
- Շնորհակալ եմ . . . : Ինչպէս է նէ:
- Աղէկ է: Պիտի աղաչեմքեզի որ պահ մ'ետք երթաս տես-
նես զինքը:

Աէս ժամի չափ ետք տիկին ՏՐ Թեքլը դաւթին դրան սեմին
վրայ երեցաւ և կոչեց զան.

- Պարոն ՏՐ Գամօր, ըսելով:
- Երբ կոմսը մօտեցաւ քովը, տիկին ՏՐ Թեքլը շարայարեց յու-
զումով որ իր շուրթերը կը դողացնէին:
- Ժամանակէ մ'ի վեր անհանգստութիւն մ'ունի նէ, ըսաւ
կոմսին: Աը վախնայ որ մինչև հիմա իր հետն անուշութեամբ
վարուած չըլլաս այս զաւակը ձեռքէն առնելու համար . . . :
Եթէ երբէք այդպիսի խորհուրդ մ'ունիս . . . : հիմա պիտի չկա-
տարես զայն, այնպէս չէ, պարոն:

— Ի՛նչու ես, տիկին, պատասխանեց կոմսը խօրին ձայնով մը:
Նէ հառաչանք մը հանեց, և

— Եկուր, ըսաւ Գամօրին:

Ապա անոր առջևն անցնելով վեր ելաւ ասնդուղէն: Անեկին
դուրը բացաւ, և թոյլ տուաւ որ Գամօր ներս մտնէ:

Իր առաջին նայուածքը հանդիպեցաւ իր ծաղկահաս կնիկան
աչքին որ իրեն կը նայէր ուղղակի: Աոմսուհին անկողնին վրայ
նստած էր կիսովին՝ բարձերու վրայ կռթնած, և աւելի սպի-
տակ էր ինք քան թէ վարագոյրն որու խաղաղ շուքը կը շրջապա-
տէր զինքը. զիբին առած էր իր զաւակը որ կը քնանար, և որ
իր մայրին պէս այժմէն սպիտակ տանթելներով և կարմիր թե-
լուկներով (ruban) ծածկուած էր: Այս բոյնին ներսէն կոմսուհին
ուղղակի էրիկին կը նայէր մեծ աչերովն որք տեսակ մը վայրենի
պայծառութեամբ կը փողփողէին, և որք յաղթանակի զոացու մին
հետ խառնուած սաստիկ սարսափի մը զոացումը կ'արտայայտէին:

ՏՐ Գամօր անկողնէն քանի մը քայլ հեռի կանկ առաւ, և իր
լաւազոյն ժախտովը բարեկեղծ իր կինը,

- Մարի, շատ դուրս ունեցայ վրագ, ըսաւ:
- Շնորհակալ եմ, պատասխանեց շունչի մը պէս տկար ձայ-
նով մը:

Մի և նոյն աղերսալի և ահարեկ ձևով դեռ կը նայէր էրիկին:
— Հիմա ք'չ մ'երջանիկ ես, կրկնեց Գամօր:

Մանկամարդ կինն իր բոցավառ աչքը արագօրէն զաւկին հան-
դարտ երեսին վրայ դարձուց, ապա դէպ 'ի Գամօր վերցնելով,
ըսաւ.

- Չաւակս պիտի չառնուս:
- Ո՛չ երբէք, պատասխանեց:
- Մինչդեռ Գամօր այս խօսքը կ'արտաբերէր, իր աչերը յանկարծ
վարագուրեցան, և ինքն իսկ զարմացաւ՝ զոչով թէ արտաուքը
այտերուն վրայ կը սահէին: Այն ատեն տարօրինակ շարժում մը
ունեցաւ. այսինքն ծուռեցաւ, անկողնին ստանին մէկ ծալքը
բռնեց, համբուրեց՝ և իսկոյն կանգնելով՝ սենեկէն դուրս ելաւ:
Այս մարդը բնութեան և ճշմարտութեան դէմ միշտ սուսալի

և շատ անդամ յաղթական պատերազմին մէջ անդամ մը յաղթուած էր : — Բայց տղայութիւն է երեակայել թէ այսպիսի կազմութիւն և խստութիւն ունեցող բնաւորութիւն մը կրնար քանի մ'անցողական յուզումներու և քանի մը ջլային խռովութիւններու ազդեցութեամբը զգալի կերպով այլակերպիկ կամ փոփոխիլ : Պ. Տը Գամօր շուտով յաղթեց իր այս տկարութեան , և թերևս զղջաց իսկ այսպիսի տկարութիւն մ'ունենալուն :

Ութ օր մնաց Բէօյեի՝ տիկին տը Թեքլի գնացքին և իրենց միասնական կեանքի յարաբերութեանց մէջ առաջուանէն քիչ մ'աւելի անհոգութիւն նշմարելով : Երբ Բարիզ վերադարձաւ , ուշադիր մարդասիրութեամբ մ'իր ապարանին ներքին կարգադրութիւններուն քանի մը փոփոխութիւններ ընել տուաւ որպէս զի աւելի հանդստութեամբ և զիրութեամբ տեղաւորուին երիտասարդ կոմսուհին և իր զաւակը , որք քանի մը շաքարթէն էտք հոն պիտի գային :

Ե

Երբ տիկին Տը Գամօր Բարիզ գալով էրիկին տունը մտաւ , անցելոյն ողբալի տպաւորութիւնները և ապագային տխուր մտաւտանջութիւնները գտաւ հոն , սակայն զօրաւոր միջիմարութիւն մը բերած էր հետը , թէև շատ զխորտակ ըլլար այն : Ախշտերէ պաշարուած ըլլալն և նորանոր յուզումներու մշտնջենական սպառնալիքը ստիպեր էին զիրքը անձամբ տանելու իր զաւակը . սակայն ասոր քովէն չէր գատուեր , վասն զի կրնախանձ ր գայեակէն , և կ'ուզէր զէթ զաւակէն սիրուիլ : Ինք կը սիրէր զաւակը , անհուն տրիփով մը կը սիրէր , կը սիրէր վասն զի զաւակը , արիւն և իր ցաւերուն տրխտորն էր ան . կը սիրէր վասն զի մարդկային երջանկութեան նկատմամբ իր բոլոր յոյսը ունէր այսուհե-

տե . կը սիրէր , վասն զի լոյսին պէս զեղեցիկ կ'երևար իրեն ան , և իրաւ է որ զեղեցիկ էր , վասն զի հօրը կը նմանէր , և այս պատճառաւ ևս աւելի կը սիրէր զան :

Ուստի կոմսուհին իր բոլոր սիրտը և իր բոլոր խորհուրդները այս սիրելի արարածին վրայ համախմբելու փորձ կ'ընէր , և առջի ժամանակները կարծեց թէ յաջողեցաւ իր այս փափաքին : Ինքն իսկ զարմացած էր իր հանդարտութեան վրայ երբ վերտան տեսած էր տիկին Տը Գանվալօնը , վասն զի իր կրակոտ երեակայնութիւնը կանխաւ լափած էր այն ամեն տրտմութիւնները զոր իր նոր կեանքը կը պարտաւորէր պարունակել . բայց երբ թօթմեց իր վրայէն այն տեսակ մ'ընդարմացումը որու մէջ զինքը ընկղմեր էին իրարու յաջորդող այնքան տառապանք և վիշտ , երբ սովորութիւնը քիչ մը մեղմեց անոր մայրական զգայնութիւնները , կնային սիրտը նորէն երեան ելաւ մայրական սրտին մէջ , և իր շնորհագեղ ու սոսկալի էրիկին վրայ նորէն տրիփաւէտ համակրութիւն մը զգաց բռնի :

Տիկին Տը Թեքլը աղջկան հետ Բարիզ եկած էր երկու ամիս մնալու համար , ապա զիւզը վերադարձած էր : Տիկին Տը Գամօր հետեւեալ դարձան սկիզբն անոր նամակ մը կը դրէր որ ճիշդ դադար մը պիտի տար այն զգացումներու վրայ զոր ծաղկահաս կիներն ունէր այն ժամանակ , և այն դարձուածքին վրայ զոր առած էր իր ընտանեկան նոր կեանքը :

Բոպերին այսինքն իր զաւակին առողջութեան և զեղեցկութեան նկատմամբ մանրամասն պարագաներ գրելէն ետք կոմսուհին կը շարայալեր .

« Իր հայրն ինձի հետ կը վարուի միշտ այնպէս ինչպէս տեսար արդէն . ինձ ցաւ չպատճառելու համար զղջը կը կենայ այն ամեն բաներէն որոնցմէ կարելի է զգուշանալ , բայց յայտնապէս մի և նոյն կերպարանքով պինդ կը կենայ այն ճակատագիրն որու կը հնազանդի ան : Սակայն յապոգային նկատմամբ յոյսս ամենէն չեմ կտրել , սիրելի մայրս : Այն բոպէն 'ի վեր' ուր այն արտօսողը իր աչքին մէջ տեսայ՝ խեղճ սիրտս նորէն սկսաւ վստահիլ : Ապահովեղի՛ր , պաշտելի մայրս , թէ օր մը զիս պիտի սիր-

րէ եթէ ոչ տրիշկերպով դէթ դաւակին միջոցովը զոր կ'սկսէր կամաց կամայ սիրել առանց նշմարելու սիրելը: Ինչպէս կը յիշես, նախ անի, այն մանկիկն ոչինչէր իրեն համար, ինչպէս ես ալ երբ բանկարծ ծառայիս վրայ կը տեսնէր զան՝ շուրթերուն ծայրովը ծանրասպէս կը սպաղնէր զբարի՛ լոյս, պարոն՝ ըսելով և սպա մեկնելով: Բայց ասկէ ճիշդ ամիս մ'ստաջ — թուականը նշանակեցի — Քարի՛ լոյս, զուակս, գեղեցիկ ես՝ ըսաւ: Ար տեսնես յառաջդրմութիւնը: Աերջասպէս երէկ ինչ տեղի ունեցաւ, գիտես: Բօսպէրին սենեակը մտայ անձայն, վասն զի բաց էր դուռը. և ինչ տեսնեմ, մնցր իմ: Պ. Տը Գամօրը, որ գլուխը որբանին ներսը դրած կը ինդար սիրուն մանկիկին օր նոյնպէս կը խնդար: Ճշմարիտ կ'ըսեմ թէ Գամօր կարմրեցաւ, ներուժն ինդրեց:

«— Գուռը բաց էր, մտայ, ըսաւ ինձ:»

«Անա չուէի, պատասխանեցի:»

«Պ. Տը Գամօր երբեմն տարօրինակ է. հետս կը վարուի անցնելովայն սահմաններէն որք որոշուած և հարկաւոր են: Միայն քաղաքավար չէ. նաև ջանադիր է ինձ հաճելի ըլլալու: Բարէ, ուրիշ ժամանակներ այս շնորհալի բաները սրտիս վրայ իբր երկնից մէկ ցօղն իջած սիւտի ըլլային: Հիմա քիչ մը կը նեղեն զիս անոնք: — Օրինակի աղաղաւ, երէկ գիշեր — ուրիշ թուական մ'ալ — ըստ սովորութեան գաշնակիս առջև նստայ ճաշէն ետք վաւարանին քով լրացիր մի կը կարդար ան: Գուռս ելնելուն սովորական ժամն անցաւ: Շատ զարմացայ: Անդամ մը գաղտնապէս իրեն նայեցայ երկու տաւղումի միջոցին (arpège).^{*} սոսայ որ չէր կարդար, չէր քնանար, այլ կ'երագէր ան:»

«— Լրացրին մէջ նոր բան մը կոյ:»

* Arpège բառին ստուգաբանութեանը (harpa) հեթեթելով տաւղում և arpegger տաւղել էլ Ռարբանէնէ: Arpège տաւղում՝ ըսող էնթրէն էլ նշանակէ նախապէս համայնութեան, որուն զանազան յայները նախաբանորը փոխանակ ամենը մեկին զարմեւով լեւել քաղաք՝ հեթեթեթէ և արաբերէն լեւել էր որոյ: Ծ. Թ.

«— Չէ, չէ, բան մը չկայ:»

«Երկու կամ երեք անգամ ևս տաւղեցի գաշնակիս վրայ, և զուակիս սենեակը դացի, պառկեցոցի, քնացոցի, համրոյրներով լափեցի զան, և ետ եկայ: Պ. Տը Գամօր կեցած էր: — Ապա հետցեալ ըսաւ:»

«— Մայրեդ լուր առի՛ր: Ինչ կ'ըսէ: Տիկին տը Թօյէրը տեսնա՛ր: Կարդացի՛ր այս հանդէսը:»

«Աերջասպէս խօսակցիլ ուղող մ'է ան:»

«Ատեն մ'արիւնս կը տայի փոխարէն՝ այս երկիւղներուն մին անենալու համար, և հիմակ ինձ կը տորուի այն՝ մինչ ևս սղամենեիս պէտք չունիմ այսպիսի երկիւղէ մը:»

«Սակայն մայրիս խրատները կը յիշեմ. չեմ ուղեր վհատել այս փանաքի այլակերպութիւնը, տօնախմբութեան սրտի կերպարան մը կը կազմեմ ինձ, սովորականէն աւելի չորս մտ կը վառեմ, կը ջանամ սիրուն ըլլալ առանց պչրանաց, վասն զի պչրանքն այս պարագայիս մէջ ամօթ մ'է, տյնպէս չէ, մնցր իմ: Աերջասպէս շաղակրատեցինք միասին. գաշնակին վրայ երկու եղանակ երգեց, ուրիշ երկու եղանակ ալ ես երգեցի. եկող տարի Բօսպէրին հազցնելու համար առսական հազուստ մը ուրուագրեց. սպա քաղաքականութեան վրայ խօսեցաւ հետս, որով սաստիկ ուրախ եղայ: Ազգային պատգամաւան մէջ իր կացութիւնը բացատրեց ինձ: Աէս գիշերը զարկաւ: Նշանաւոր կերպով մը լուռ կեցայ:»

Գամօր ոտք ելաւ:

«— Չեք քզ կրնամ սեղմել իբր բարեկամ:»

«— Այո, Աօտունձ իմ:»

«— Գիշեր բարի, Մարի:»

«— Քեզ լոյս բարի:»

«Այո, մնցր իմ, մտքեդ ինչ անցնիլը գիտեմ. կը խորհիս թէ այս բանին մէջ վտանգ մը կայ. բայց ցոյց տուի ինձ այդ վտանգը, և սակայն կը կարծեմ թէ միտիս ալ սիտի նշմարէի զայն: Ուստի մի վախնար: Երջանիկ սիտի ըլլամ անոր բարի զգացումներովը, կը ցածիս չափ սիտի խրատութեամբ այս զոսցումները, բայց անոնց մէջ ստուգապէս զէպ ՚ի բարին և զէպ ինձ վերադարձ մը»

տեսնելու չպիտի փութամ : Հոս մարդկանց մէջ կը տեսնեմ այնպիսի իրաւախոհութիւններ որք զայրոյթ կը տան ինձ : Ապա բողբոստութեան միջևն անարատ և սէգ կը մնամ : Բայց ես ինքզինքս յետին ծայր կ'արհամարհէի եթէ երբէք Պ. ՏՐ Գամօրին համար քրահաճութեան մ'առարկայ ըլլալու վտանգին երթարկուէի : Այսքան անկուն մարդ մ'օրուան մը մէջ չկանգնիր : Եթէ ստուգիւ ուզէ իմ ըլլալ նորէն , ծանր վկայութիւն պիտի պահանջեմ անոր այս դարձին հատալու համար : Զինքը սիրելէ չբողբոստայ , և թերևս իր մտքէն անդամ չանցնիր սիրելու , սակայն պիտի սորվի որ այս տրտմալի սէրը կրնայ յօշոտել սիրտս , բայց չլրնար նուաստել , և հարկ չունիմ ըսելու մօրս թէ պիտի կրնամ օրքեվարի կնկան հազուատովս արիաբար ապրիլ և մեռնիլ :

«Ուրիշ նշաններ ևս զարմանք կը տան ինձ : Աւելի ակնածութեամբ կը վարուի հետս երբ ներկայ է նէ : Թերևս այդպէս վարուի իրենց մէջ որոշուած բան մ'է , բայց տարակուսելի է ինձ որոշուած ըլլալը : Միւս գիշեր զօրպետին տունն էինք : Արվալսէր նէ , և Պ. ՏՐ Գամօր հազուադէպ շնորհքով մ'աղջկանդ քով եկած նստած էր : — Մեր առջևէն անցնելով նայուած մը , փայլակ մ'արձակեց նէ Զգացի բոցը : Ապոյտ աչերը գազանային կրնան ըլլալ : Ա'երևայ թէ կ'ըլլան : Անշուշտ հոգիս կաթողին չէ ներա նկատմամբ , վասն զի անագորոյն թշնամուհիս է . բայց սակայն եթէ երբէք նէ ևս կրէր այն վիշտերը զոր ինձ կրել տուա . . . այն , կարծեմ թէ կարելից կ'ըլլայի իրեն :

«Արպազնեմ քեզի , մայր իմ : Արհամարում մեր սիրելի թմբիները : Առաջուան պէս անոնց նոր տերեխիները կ'ուտեմ : Աշտամբէ զիս առաջուան պէս , և մանաւանդ առաջուան պէս սիրէ :

«ՄԱՐԻԳ»

Այս խելանի երիտասարդուհին զժբաղբոստեանն եփած ըլլալով ամեն բան կը դիտէր , ամեն բան կը տեսնէր և ոչինչ կը չափանցէր : Իր նամակին մէջ կատարեալ ճշգրտութեամբ մը կը շօշափէր Պ. ՏՐ Գամօրին կայութեան , և նոյն իսկ անոր գաղափարն զգացումներուն ամենէն փափուկ կէտերը :

Պ. ՏՐ Գամօր ամենէն դարձի չեկած էր , ոչալմօտ էր դարձի գալու . սակայն այս մարդկային սրտին կամ ուրիշ որ և է սրտի գերբնային անխուփութիւն մը տալն ալ մարդկային ճշմարտութիւնը չճանչել է : Ճշմարիտ կ'ըլլային եթէ բայց արձակապէս յաղթանակէին այն տխուր և անողորբելի տեսութիւններն որով Պ. ՏՐ Գամօր իր կենաց օրէնքը շինած էր : Մինչև այն ատեն կրած փորձանքէն չայլափոխուած բայց զղբոստած էր ան : Ալ մի և նոյն հաստատութեամբ չէր քայլեր իր ճամբուն վրայ : Ար չեղէր իր ռախոգդէն : Իր նահատակուհիներուն մէկին համար գթօտ եղած էր , և որովհետև յանցանք մը միշտ ուրիշ յանցանքի մը տեղի կը տայ , կ'ունեն իր կնկան վրայ զթալէն ետք զաւակը սիրելու մօտ էր : Այս երկու տկարութիւնները մարմարիտի մը ճեղքերէն ներս սպրդելու պէս անոր քարանձան սրտին մէջ սպրդեր էին , և հոն կը բողբոստէին , սակայն աննշմարելի էին այս երկու բողբոստերը : Ամեն օր հազիւ քանի մը վայրկեան կ'զբաղէր զաւակին , սակայն կը մտածէր անոր վրայ , և երբեմն այս թարմութեան երեսին ժպիտէն գաղտնապէս հրապուրուելով սովորական ժամէն քիչ մ'առաջանոր սենեակը կը մտնէր : Մայրն իրեն համար աւելի բան մ'էր : Ներա վիշտերը , պատանեկան դիւցազնութիւնն իր արդահատանքը շարժեր էին : Իր առջև Մարի անձ մը դարձած էր : Արժանիք կը գտնէր ներա սրտին և մտքին մէջ : Ար նշմարէր որ իբր կին խիստ կը թուած և իբր Ֆրանսուհի խիստ շատ կը թուած է : Այս կինը կէս խօսքը կը հասկընար , շատ բան զիտէր , և չգիտցածը կը գուշակէր : Աերջապէս ունէր շնորհագեղութեան և ամբոթեան այն խառնուրդը , որ մշակուած մտքի տէր կանանց խօսակցութեան անհամեմատ հրապոյր մը կը տայ :

Տիկին ՏՐ Գամօր մանկութեանը ժամանակէն 'ի վեր իր բարձրութեան և աղօր երեսին սովորած ըլլալով թէ մէկը և թէ միւսը պարզութեամբ կը կրէր : Իր տունին հոգեբովը կ'զբաղէր՝ իբր թէ ուղեղին մէջ ուրիշ գաղափարներ չունենար : Տնական մանր մունր բաներ կային զոր ծառաներուն չէր թողուր : Ասոնց ետեւէն իր սրահը մեծախուցը կը գծը նէ կապոյտ փեփառուել (ըս-

meau) 'ի ձեռին. այս փետրաւելով աստիճանաւոր դարանները, ծաղկանօթները, զօնսօլները թեթեակի կը գգուէր, կահ մը կը տեղաօրէր. ուրիշ մը տեղէն կը վերցնէր, անօթի մը մէջ ոստեր կը տնկէր, և այս ամեն գործերը կը կատարէր ուտաստելով և երգելով, ինչպէս թուչուն մ'իւր վանդակին մէջ: Էրիկն երբեմն առնոր այս մանր մունր գործերով զբաղելը դիտելով կը զուարճանար, և միտքը կը բերէր այն իշխանօճիւնները, որք օրերայի կաքաւահանդէսներու մէջ ծառայելու ստիպուած են բաղլին մէկ հարուածէն, և որք կը սրբեն տունը հաւքուք ընելով:

— Ինչպէս կը սիրես բարեկարգութիւնը, Մարի, ըսաւ Գամօր օր մը:

— Բարեկարգութիւնը, ըսաւ նէ ծանրապէս, իրերու բարոյական գեղեցկութիւնն է:

Տիկին Տը Գամօր էբէր— բառը յամրաբար արտաբերեց, և պահանջոտ (pretentieux) եղած ըլլալու վախն ունենալով՝ կարմրեցաւ:

Սիրուն արարած մ'է այս կինը, և՛ ինչպէս կը յուսանը՝ ընթացողը սխալ հասկընայ թէ ան հրատար մ'ունէր, իր էրիկին համար իսկ: Թէև Գամօր վայրկեան մը մտքէն չէր անցուներ անոր զօհել այն տրիփր որ իր կեանքը կը դրաւ էր, սակայն ստոյգ է որ իր կինը հաճելի էր իրեն իբր շնորհազեղ բարեկամուհի և թերևս իբր արդիւնալ քաղցրահամ պտուղ մ'ինչպէս էր իրօք:

Երկու կամ երեք տարի անցաւ այս սրասնութեան զանազան անձանց փոխադարձ յարաբերութիւններուն առանց զգալի փոփոխութիւններ տալու: Այս երկու կամ երեք տարին Պ. Տը Գամօրին կենացն ամենէն փառաւոր և անշուշտ ամենէն երջանկաւէս կերպարանքն եղաւ զանազան կերպով: Ամուսնութիւնն անոր հարստութիւնը կրկնապատկած էր. իր յաջող շահագիտութիւններն ամեն օր ևս աւելի կը բազմապատկէին զայն: Իր տան ընթացքն իր դբամական նոր կացութեան համեմատած էր. վայելչասիրական բարձր կեանքի սահմաններուն մէջ ստուգիւ ինք կը բռնէր իշխանական դատազանք: Իր երկվարները, կառուծին, ճարտարագիտական ճաշակը, սրճնումն իսկ օրէնք կը դառնային: Տիկին Տը

Գանձալոյնին սիրողն ըլլալը՝ առանց հրատարակելու՝ արդէն կասկածի տեղի տուած և իր դիւթական արդեցութիւնը ամբողջած էր: Մի և նոյն ժամանակ իր քաղաքադիտական կարողութիւնը կ'սկսէր փառաւորապէս հաստատուիլ. բանի մը նոր վիճաբանութեանց մէջ ինքն ալ խօսեցած, և իր առաջին ատենաբանութիւնը յաղթական եղած էր:

Այս բարեբաստութիւնը մնծ էր: Սակայն իրաւ է որ Պ. Տը Գամօր անվրդով չէր վայելէր զայն: Երկու սև կէտեր կը բծէին այն երկինքը ուր կը սառաւէր ան, և կրնային շանթը սարունակել: Ըսել կ'ուզէնք թէ նախ իր կեանքը դերձանէ մը կախուած էր անընդհատ: Օրին մէկը Տը Գանձալոյն զօրապետը կը նայ իր բնն անպատուութիւն բերող սիրային դաւը իմանալ կամ շահախնդիր մատնութեան, կամ տարաձայնութեան շնորհիւ որ կ'ըսուէր զրդուսիլ: Եթէ այս սրբազան ներկայութեւր, Գամօր գիտէր թէ զօրապետը չէր ինչպէր իրեն, ասկից 'ի զատ որոշած էր իր կեանքը չարաշտպանել անոր դէմ: Գամօր իր մտքին մէջ յասկապէս գրուած այս որոշումն իբր յետին փաստ կը դործածէր իսկ իր խիղճը հանդարտելու համար: Արեմն իր բաղլին բոլոր ջնքք բաւական ճշմարտանման դիպուածի մը՝ ձեռքն էր բոլորովին:

Իր վրդովումներուն երկրորդն էր տիկին տը Գանձալոյնին նախանձոտ ատելութիւնը: Մարդիզոհչի իրօք կ'ատէր այն նորաստի ոտխուհին (rivale) զոր ատենօք ինքն իրեն համար բնորած էր: Առջի ժամանակներն այս նախանձոտութեան նկատմամբ անկեղծապէս կատակներ ընելէն ետք՝ սակաւ առ սակաւ այս մտին ակնարկութիւն անզամբնէլէ դադրած էր: Պ. Տը Գամօր շլինալով խաբուի ինչ ինչ անմուռն շաննէրէ՝ երբեմն կը վրդովուէր այս ընին նախանձոտութենէն: Այլրան ահարկու սրտի մը մէջ կրնային զգացումներուն ամենէն սաստիկը զայրացնելու վախը ունենալով ստիպուած էր օր ըստ օրէ այնպիսի ակնածութիւններ ընելու որք ծանր կը դային իր մեծարտութեան և լեղիւս իր սրտին: Վասն զի իր կինն՝ որուն համար չբացատրուած էր իր նոր ընթացքը՝ սաստիկ կը վշտանար էրիկին այն ակնածութիւնները տեսնելով, և Գամօր կը անոնէր անոր վշտանալը:

1860ին մայիս ամսուան մէջ զիշեր մը Տիրընկալութիւն կար Գանձալոնի ապարանը: Մարդիզուհին՝ զիւղը մեկնելէն առաջ՝ մնաք բարև կ'ըսէր իր հետ սովորաբար տեսնուող անձանց ընտրելազոյն խումբին: Թէև կիսովին մտերմական էր այս հանգիսին կերպարանքը, սակայն տիկին Տը Գանձալոն իր սովորական պաճուճանքովն ու ճաշակովը կարգադրել սուած էր զայն: Ճեմելու գաւիթ մը կար դալարաշէն և ծաղկազարդ, որ սրահներէն ծաղկոյցը կը տանէր պարտեզէն անցնելով: Տիկին Տը Գամօրին համար ցաւալի եղաւ այս երեկոյթը. էրիկն այնքան յայտնի կերպով զանցառութիւնցոյց տուաւ անոր, մարդիզուհիին ալ այնքան յարատեւութեամբ խնամք տարաւ, և իրենց համամտութիւնն այնքան ուրախալի երեցաւ որ դեռահաս կիներ իր լքումին վիշտը գրեթէ անտանելի սաստկութեամբ մը զրայ: Ուստի զնաց ծաղկոցն սպաւիներու, և՛ հոն միայնակ դանուելով՝ սկսաւ լալ: Պահ մ'ետք՝

Պ. Տը Գամօր՝ ալ սրահներուն մէջ չտեսնելով զան՝ անհանգիստ եղաւ. կիներն անոր ծաղկոցը մանելը տեսաւ կիներուն արագատես աչքովն որ կը տեսնէ առանց նայելու, պարտեզին ծաղիկները քննել ձեացոյց, և կամքի ջանադրութեամբ մ'արտասուքը չորցուց: Սակայն էրիկը յամբար գէպ իր քովը յառաջացած էր:

— Ի՛նչ գեղեցիկ գամելիա, ըսաւ կինը. . . : Ար ճանչեմ այս տեսակը:

- Գաջ կը ճանչեմ, ըսաւ. այդ գամելիան լացող տեսակէն է:
- Եւ Գամօր ծաղիկը բոցուց:
- Մարի, կրկնեց Գամօր, երբէք աղայական իրերու խիստ միտում ունեցած չեմ. բայց ահա ծաղիկ մը զոր պիտի պահեմ: Կոմսուհին զարմայմամբ էրիկին կը նայէր անշարժ:
- Ասան զի կը սիրեմ այս ծաղիկը, շարայարեց Գամօր:
- Ոտքի ձայն մ'առնելով երկուքն ալ զարձան: Եկողն էր տիկին Տը Գանձալոն որ օտարական դիւանագէտի (diplomate) մը թեք մտած ծաղկոցը ծուռ կը դար:
- Ներեցէք, ըսաւ տիկին Տը Գանձալոն, անհանգիստ ըրի ձեզի. շատ կոշտ եմ:
- Եւ անցաւ:

Տիկին Տը Գամօր յանկարծ բոլորովին կարմրած և էրիկն ալ գեղնած էր: Գիւանագէտը միայն գոյնը չփոխած էր, վասն զի եղելութենէն բան մը չէր հասկնար:

Նորատի կոմսուհին պատրուակ բռնելով զլիսու ցաւ մը՝ զոր իր երեսին գոյնը կը հաստատէր՝ գրեթէ իսկոյն մեկնեցաւ, ըսելով էրիկին թէ կառքը պիտի զրկէ:

Գանի մը բոպէ ետք՝ Տը Գանձալոն մարդիզուհին՝ Պ. Տը Գամօրին մի գաղտնի նշանին հնազանդելով իր մեխախոյր գնաց և հոն դտաւ զան, այս մեխախոյն անոնց կենաց ամենէն յանցաւոր վայրկեանը կը յիշեցնէր երկուքին ալ:

Մարդիզուհին իր ամբարտաւան անհոգութեամբ բաղմոցին վերայ անոր քովը նստաւ:

- Ի՛նչ կայ, հարցուց Գամօրին:
- Ի՛նչու կը լրտեսես զիս: Ատի անարժան բան մ'է քեզի համար:

— Ա՛հ, բացատրութիւն մը: Տրամալի բան: Մեր մէջ առաջինն է այդ բացատրութիւնը, գէթ կատարեալ և շուտ ըլլայ այն:

Մարդիզուհին կիսահագագ բայց տրիպալին ձայնով մը կը խօսէր՝ աչքը յառելով իր ոտքին վրայ զոր թեթևակի վեր կ'ընէր, և որ սնդուսեայ կոշիկին մէջ կը գալարուէր:

- Շիտակը ըսէ, կրկնեց նէ, կնոջ սիրահար ես:
- Գամօր քիթուպինչ ըրաւ, և կրկնեց.
- Ար կրկնեմ թէ անարժան է քեզ այդ բանը:
- Ուրեմն ի՛նչ կը նշանակէ զան այդպէս գգուելը:
- Ա՛ն թաղրեմ թէ հրաման ըրիք ինձ հետը կարգուելու և չէ թէ զինքը մեռցնելու:

Մարդիզուհիին ունքը տարօրինակ շարժում մ'ունեցաւ զոր Գամօր չտեսաւ, վասն զի երկուքն ալ մէկմեկու չէին նայեր:

- Պահ մը լռութենէ ետք, կրկնեց տիկին Տը Գանձալոն:
- Նէ իր զաւակը ունի, մայրը ունի, իսկ ես քեզի ունիմ միայն. . . : Մտիկ ըրէ, բարեկամ, նախանձոտ մի բներ զիս, վասն զի երբ նախանձոտ ըլլամ, այնպիսի խորհուրդներ կ'ունենամ որոնցմէ ես իսկ կը զարհուրիմ, . . . : Եւ ինձ նայէ, քանի

որ այս կէտին հասանք, եթէ կը սիրես զան, աւելի շուտ ըսէ ինձ սիրե՞լդ: կը ճանչես զես, մանր խաղաթիւններ չունիմ. . . : Եւրբ այնքան կը վախնամ վիշտերէն և նուաստութիւններէն զոր այժմէն կ'ըզամ, ես կ'զմէն այնքան կը վախնամ որ ազատութիւնդ կը շնորհեմ, ես կըտամ. . . : Եւելի աղէկ ունիմ այս սոսկալի, բայց դէժ անկողծ և աղնու ցաւը. . . : Հաւատ որ ծուղակ մը չեմ լարեր քեզ: Ինձ նայէ. ստէպ չեմ ըսեր. . . : (Իր աչերուն մութ կարօյան արտաբեւ վարդաւած էր:) Եյո, անկողծ եմ, և կ'աղաչեմ որ եթէ իրաւ է կինդ սիրելդ՝ սրտեհ աւելի սեպես այս անկողծութեանս վայրկեանը, և ետ առնես ազատութիւնդ, վասն զի եթէ փախցնես այս առիթը, երբէք անգամ մ'ալ չպիտի գտնես զայն:

Պ. Տը Գամօր ամենեկին պատրաստուած չէր այսպիսի պարտապանութեան վիճակի մը: Տակաւին մտքէն չանցած էր բնաւ մարդիզուհին սիրելէ՝ դադրելու գաղափարը: Եյո սէրն իրեն խիտ հանդուհանուր կ'երևար այն զգացումներուն հետ զոր կ'ընր կընար ներշնչել իրեն: Իր կենացն ամենէն ծանր յանցանքն ու մշտնջենական վտանգն էր, բայց միանգամայն անոր յուզումը, հարստութիւնն ու շքեղ հեշտութիւնն էր այն: Աւտի Գամօր սարսուցաւ, դրեթէ բարկացաւ սցաղիքի սէրոյ մը կորուստը գալտարելով, սէր զոր նաև այնքան սուղ գնած էր: Հրարբոց նայուածքով մը համակեց տիկին Տը Գամօրին զեղանշոյլ ճակատը, որ պատերազմուը հրեշտակայետի մը ճակատին սէս անարատ և բորբոքուն էր:

— Կեանքս քուկդ է, ըսաւ կոմսը: Ինչպէս կրնաս մտքեդ անցունել այսպիսի սէրահարութեան մը կտայը խղելու գաղափարը. ինչպէս կրնաս վրդովիլ կամ քեզ հօգ ընել իսկ ուրիշին նկատմամբ բռնացքս: Ես եմ ինչոր սրտիւն ու մարդասիրութիւնը կը հրամայեն ըլլալ ինձ. ասկից աւելի չիք ինչ, իսկ քեզի կը սիրեմ, կը լսես. . . իմն Շաքիթ:

- Իրաւ է, ըսաւ նէ:
- Իրաւ է:
- Կը հաւատամ:

Մարդիզուհին Գամօրին ձեռքը բռնեց, և սրահ մ'անոր նայեցաւ անմուռնչ՝ մինչդեռ աչքը վարագուրուած էր և սիրտը կը բախէր. ապա յանկարծ ոտք ելնելով . . .

— Գիտես, բարեկամ, թէ հիւր ունիմ տունս: Ժպիտով մը մնաս բարև ըսաւ Գամօրին և մենախուցէն դուրս ելաւ:

Սակայն այս վէճը Գամօրին մտքին անախորժ տպաւորութիւն մ'ըրած էր. և հետեւեալ օրն առտու դժգոհութեամբ անոր վրայ կը խորհէր՝ Շանդ-Էլիզէի սրողոտային մէջ երկվար մը փորձելով երբ յանկարծ իր առջև տեսաւ իր վաղեմի քարաուղարը՝ Վօթրօն: Չտեսած էր զան այն օրէն ՚ի վեր ուր այս պարօնը խոհեմութիւն սեպած էր յանկարծ ինքնին պաշտօնէն քաշուիլը: Նոյն մութիւն սեպած էր յանկարծ ինքնին պաշտօնէն քաշուիլը: Նոյն միջոցին Շանդ-Էլիզէն ամայի ըլլալով Վօթրօ շիրցաւ զգուշանալ Գամօրին հանդիպելէ, ինչպէս թերևս շատ անգամ զգուշացած էր: Տեսնելով թէ ճանչուած է իր առջի տէրէն, բարև տուաւ, և կանկ առաւ՝ շուրթերուն վրայ անհանդիստ ժպիտ մը ունենալով: Իր մաշուած սև թիկնոցն օւ աղտոտ շապիկը կը յայտնէին թշուառութիւն մ'որ շխտտովանուած այլ սաստիկ էր:

Պ. Տը Գամօր չգիտեց այս պղտի կէտը, որ անշուշտ պիտի դրդուէր իր բնական վեհանձնութիւնը և զսպէր այն սրտմտութիւնը որով անմիջապէս դրաւուիլը զյայցած էր:

Յանկարծ սանձը քաշելով երկվարը կեցուց:

— Այն, հոս ես եղեր, պարօն Վօթրօ, ըսաւ: Ե՛լ Ենդիլիա չես ուրեմն: Եւ ինչ կ'ընես հիմա:

— Գործ մը կը փնտռեմ, պարօն, ըսաւ խոնարհաբար Վօթրօ, որ իր վաղեմի տէրը քաջճանչելով յայտնապէս կը դիտէր թէ անոր պիտին ծաղքը փոթորիկի նշաններ ունէր:

— Եւ ինչո՞ւ նորէն կղտակադործութիւն չես ըներ, կրկնեց Գամօր: Շատ յաջողակ էիր այդ արհեստին մէջ. . . : Ամենէն խառնաչէն կղտակները քեզի համար գաղտնիք չունէին:

— Չիտեմ թէ ինչ ըսել կ'ուզէք, միմբաց Վօթրօ:

— Ապիրանս:

Եւ Պ. Տը Գամօր արհամարհութեան անասելի ձայնով մ'այս

բառը շուրթերուն ծայրէն նետելով՝ թեթևակի Աօթրոյին ուսին գայաւ իր մտրակին ծայրի լարովը. ապա հանդարտօրէն հետացաւ իր երկվարին պզտի քայլերովը:

Պ. Աօթրօ իրօք այն ատեն գործ մը կը փնտռէր, զոր դիւրութեամբ կրնար գտնել թէ գործ ըլլար այն գործերէն որք կը լարմարէին իր յատկութեանց. բայց՝ ինչպէս կը յիշէ ընթերցողը՝ Աօթրօ այն անձանց կարգէն էր որք իրենց արժանեաց հետ համեմատութիւն չբռնեցող սնտափառութիւններ ունին, կամ այն անձերուն մին էր որք աւելի վայելաւորութեամբ քան թէ աշխատութեան նօթաթիւնը կրկրեն: Այն ժամանակ Աօթրօյեանին ծայր չբարորութեան մէջ ընկած ըլլալով, այս չբարորութիւնը զան եթէ ոչ գէպ ածիր: գէթ գէպ ՚ի գէշութիւն մը լու համար շատ զայրանալու պէտք չունէր: Մեր օրերու մէջ շատ են օրինակներն այն ծայրայեղութեանց՝ ուր կրնայ երթալ այս տեսակ փառամուտ, անյայդ և անկար միտք մը: Աօթրօ՝ լաւազոյն գերի մը ստասերով՝ ժամանակէ մ'ի վեր առած էր այն երկդիմի գերը որուն մէջ ատենօք յաջողած էր. առջի օրն իսկ տիկին Տը Լա Բօշ-Ժիւկանին տունը վերագառնալով իր փիլիսոփայական մտքութեանց համար մեղայ ըսած էր, վասն զի կրնմպնէր Զարդուման եի ժամանակուան այն Սաքսօններուն որք մըրտուի կ'ուղէին ամեն անգամ որ նոր պատմութեան մ'ունենալու փառքը կ'զգային:

Տիկին Տը Լա Բօշ-Ժիւկան գէշ չընդունած էր այս տրամալի անառակ սրբին. սակայն զրալի կերպով պահած էր տեսնելով թէ իր ուղածէն աւելի դաղտնասպահ էր Աօթրօ խնդիրի մը նկատմամբ զոր նէ արտօմի կ'ուղէր մանրամասնարար հասկընալ: Այն ատեն այս կինն առաջուանէն աւելի մտատանջութիւն ունէր այն յարաբերութեանց նկատմամբ, որոնց տիկին Տը Գանվալօնին և Սը Գամօրին մէջ տեղի ունենալուն կասկածը երկար ատենէ ՚ի վեր ծնած էր իր մտքին մէջ: Այս յարաբերութիւններն անշուշտ կրնային աղետաւոր ըլլալ այն յոյսերուն, զոր դրած էր մարդիղուհիին այրիութեան և զօրապետին ժառանգութեան վրայ: Գամօրին ամուսնութենէն պահ մ'իւր աչքը խաբուած էր. բայց նէ այն ջերմեանդուհիներուն կարգէն էր որք միշտ գէշու-

թիւնը կ'ենթադրեն, և իր կասկածները շուտով գրգռուեր էին: Աօթրօ երկար ատեն Գամօրին մտերիմն եղած էր, ուստի տիկին Տը Լա Բօշ-Ժիւկան աշխատած էր այս գաղտնիքին վրայ քանի մը տեղեկութիւններ առնուլ անորմէ, և տեսնելով թէ Աօթրօն այս տեղեկութիւնները մերժելու ամօթխածութիւնը ունի, զան արտաքսած էր:

Աօթրօ Զանդ-Ելիգէի պողոտային մէջ իր սիրով հանդիպելէն անմիջապէս ետք գէպ ՚ի Սէն-Տօմիէի փողոցն ուղղուած էր, և ժամ մ'ետք տիկին Տը Լա Բօշ-Ժիւկան Գամօրին և մարդիղուհիին սիրահարութեանց նկատմամբ արգէն իր դիտցածը նորէն զխոնարու հաճոյքը ունէր: Արդ՝ ինչպէս կը յիշէ ընթերցողը, Աօթրօ ամեն բան զիտէր: Տիկին Տը Լա Բօշ-Ժիւկան թէև կըրցած էր նախատեսել իրողութիւնները զոր իրեն կը յայանէր Աօթրօ, բայց և այնպէս զարհուրեցաւ, վասն զի տեսաւ որ իր մայրական նպատակները մշտնջենապէս ՚ի գերեւ կ'ելնէին: Այս գեղեւումի դառն զգացումին հետ նաև վրէժ լուծելու անզուսպ փափաք մը ծնաւ այս նուաստ սրտին մէջ: Իրաւ է որ աղէկ վարձատրութիւն գտած չէր այն անանուն ջանադրութիւնն զոր ատենօք ըրած էր նէ՝ զժրաղը զօրապետին աչքը բանալու համար. վասն զի այն օրէն ՚ի վեր զօրապետը, մարդիղուհիին և Գամօր անդամ՝ առանց կտրելու իրենց յարաբերութիւնները Ներա հետ՝ զգացուցեր էին այս կնկան արհամարհութեան սլաք մը որմէն իր սիրտը սաստիկ վիրաւորուած էր:

Ուստի պէտք չէր մի և նոյն տեսակ նոր աղէտքի մը վտանգէն ենթարկուիլ. անշուշտ յանուն բարոյականի պէտք էր այս անգամ այս կոյրերը և յանցաւորները ամօթխարտ թողուլ անորա-նալի ապացոյցներով որպէս զի հարուածն անդիմադրելի ըլլայ: Այս բանիս վրայ շատ մտածելով տիկին տը Լա Բօշ-Ժիւկան համոզուեցաւ իսկ թէ գէպերու նոր դարձուածքը կրնար վերստին նպատաւոր դառնալ այն պահանջումներուն որք իր կենաց անշարժ խորհուրդն եղեր էին: Եթէ տիկին Տը Գանվալօն կործանուէր, և Պ. Տը Գամօր մեկուսուէր, զօրապետը կը պարտածանուէր, և Պ. Տը Գամօր մեկուսուէր, զօրապետը կը պարտաւորէր մինակ մնալ աշխարհիս մէջ, և բնական էր ենթադրել թէ

այն ատեն վերստին իր դեռատի ազդականին՝ այսինքն Սիժիսմոնին կողմը պիտի դառնար եթէ ոչ ուրիշ բանի դէմ տիկին Տը Լա Բօշ-Ժիւկանի հետատես և թշնամանուած բարեկամութիւնը վարձատրելու համար։ Ստոյգ է որ զօրապետն ամուսնական դաշնագրով իր բոլոր գոյքը իր կ'կան տուած էր. սակայն տիկին Տը Լա Բօշ-Ժիւկան՝ այս խնդրոյն նկատմամբ իրաւադէտներու խորհուրդ հարցուցած ըլլալով՝ դիտէր թէ զօրապետը քանի որ կենդանի էր՝ կրնար իր գոյքը ձեռքէ հանել, իր անարժան կնիկէն ետ առնուլ և Սիժիզմոնին տալ։

Զօրապետին Գամօրին հետ մենամարտութիւն մ'ընելը հաւանական էր. բայց տիկին Տը Լա Բօշ-Ժիւկան կարեւորութիւն չտուաւ այս հաւանականութեան որ սակայն բաւական ճշմարտանման էր. դիտենք թէ կիներն ինչպիսի անարդանօք աներկևան են մենամարտութեան մասին։ Ուստի առանց խղճահարութեան հնարք հայթայթեց Վօթրօն իրեն գործակից ընելու վարձատրութեան արժանի այն գործին մէջ զոր դաւաճանութեամբ կը պատրաստէր, կապեց զան քանի մ'անմիջական շահերով և խոստումներով. զօրապետին կողմէն մեծ վարձատրութիւն մ'ընդունելու յոյսը տուաւ անոր։ Վօթրօ՝ որ տակաւին իր ուսին վրայ կ'զգար Գամօրին խարաղանը՝ և որ կը մեռցնէր զան եթէ համարձակէր մեռցնելու, հազու պէտք ունէր շահու գրգիռներէն՝ իր պաշտպանուհիին հետ միասին վրէժ լուծելու և անոր գործիքն ըլլալու համար։ Սակայն քանի որ առիթը կը ներկայանար, Վօթրօ որոշեց միանգամ ընդ միշտ թշուառութեան հարուածներէն ազատ մնալ սատանութեամբ օգուտ քաղելով իր զիտցած գաղտնիքէն և զօրապետին անբաւ հարստութենէն։

Վօթրօ ուրիշ զջացումէ մը ներշնչուելով այս գաղտնիքը արդէն իմացուցած էր տիկին Տը Գամօրին. սակայն այն ատեն իր ձեռքն ունէր վիլյայութիւններ որք այսօր կը պահուէին։ Ուստի նոր և անվրիպելի զէնք հայթայթելու պէտք ունէր. սակայն՝ եթէ տակաւին կը շարունակուէր այն գաղտնի սէրը զոր երևան հանել կ'ուզէր՝ յուսաց թէ քանի մը ստոյգ նշաններ պիտի կրնայ յանկարծապէս նշմարել տեսնօք Տը Գամօր կոմսին սովորութիւնները

և ընթացքը ընդհանուր կերպով ճանչած ըլլալուն շնորհիւ։ Սոյն միջոցէն սկսելով Վօթրօ գիշեր ցորեկ այս գործին հասէն ընկաւ տեսութեան և շահատենչութեան չարաբոյր եռանդովը։

Գամօր օրիորդ Տը Թեքլին հետ կարգուէլէն ՚ի վեր Պ. Տը Գանվալօն վերստին բացարձակ վստահութիւն ցոյց տուած էր իր կնիկան և կոմսին. այս վստահութեան շնորհիւ երկու սիրահարներն անշուշտ կրնային իրենց յարաբերութիւններէն ջնջել գաղտնիքի և արկածի խառնակութիւնները. սակայն մարդիգուհիին երևակայութեան վաւճառն, բանաստեղծական և թատերական հանգամանքն այս ջնջումին չէր հանդուրժած։ Սէրը չէր բաւեր այս կնիկան. տիկին Տը Գանվալօն իր սիրոյն վտանգը, հանտեսը (mise en scène) և սարսափէն քաջալիբուած հեշտութիւնները կ'ուզէր։ Առջի ժամանակները մէկ կամ երկու անգամ յանդգնած էր գիշերայն իր ապարանքէն մեկնել և արևին ծագումէն առաջ ետ դառնալ. բայց սարսառուած էր հրածեշտ տալ այսպիսի յանդգնութիւններու որոնց շատ վտանգաւոր ըլլալը ճանչուած էր։ Գիշերը քէչ անգամ կը տեսնուէր Գամօրին հետ, և միշտ իր տան մէջ տեղի կ'ունենային այս գիշերային տեսութիւնները։ Ահա ըստենք թէ ինչ կարգադրութիւն ըրէր էին այս տեսութեանց համար։ — Գանվալօնին սպարանին պարտզներուն կից անմշակ երկիր մը կար որ ժամանակ առ ժամանակ փայտանոցի տեղ կը ծառայէր. զօրապետն այս երկրին մէկ մասը գնելով հոն՝ բանջարանոցի մը միջև տնակ մը շինել տուած և՛ իր սովորական բարեխրութեամբը՝ անոր մէջ բնակեցուցած էր Մեսնիլ անունով վաղեմի փոխ-պաշտօնակալ մ'որ երկար ատեն բարեբրութեան պաշտօն վարած էր իր քովը։ Զօրապետն անթերի վստահութիւն ունէր այս Մեսնիլին վրայ։ Այս մարդը Պ. Տը Գանվալօնի կալուածներուն անտառական մասին վրայ տեսակ մը հսկողութիւն ընելու պաշտօն ունէր։ Զմեռը Բարիդի մէջ կը բնակէր, բայց մերթ ընդ մերթ դիւղը կ'երթար և երկու երեք օր հոն կը մնար երբ զօրապետը կը փախաբէր մասնաւոր դատի մը վրայ ստոյգ տեղեկութիւններ ստանալ։ Ահա Մեսնիլին այս բացակայութեանց միջոցին տիկին Տը Գանվալօն և Պ. Տը Գամօր իրենց գիշերուան

Ժամագրութիւնները կ'ընտրէին : Գամօր՝ իրենց մէջ որոշուած նշան մը դուրսէն տեսնելով՝ Մեսնիլին տնակը շրջապատող պարտէզը կը մտնէր ցանկէն, և անկից ալ ապարանին պարտէզները կը հասնէր : Տիկին Տը Գանվալօն դետնայարկին պատուհաններուն մին ինք անձամբ բաց կը թողոր զարհուրանքով որ զմայլում կը տար իրեն : Ծառաները ձեղունի խոցի մէջ պակեցնելու բարիգեան սովորութիւնն այս յանդգնութեանց տեսակ մ'ապահովութիւն կը տար, թէև միշտ խիստ անհաստատ ըլլար այս ապահովութիւնը :

Մայրիս վերջերը պատահած էր այս առիթներուն մին որոնց միշտ անհամբերութեամբ կ'սպասէին երկուստեք, և Պ. Տը Գամօր կէս գիշերին վաղեմի փոխ-պաշտօնակալին պարտէզը կը մտնէր : Երբ կը դարձունէր վանդակին բանալին որով կը դոցուէր այն, իր ետեւէն պզտի ձայն մը լսել կարծեց : Ետեւ դարձաւ, արագօրէն անդամ մ'իր շուրջը պատող մթին անջրպետին նայեցաւ. և՛ կարծելով թէ սխալած է՝ ներս մտաւ : Պահ մ'ետք փայտանոցին մէջ հոս հոն բարձրացող փայտակոյտներուն մէկին անկիւնը մարդու մը շուքն երեցաւ. այս շուքն ատեն մ'անշարժ կեցաւ. ապարաններուն պատուհաններուն առջևը, և ապա աներևոյթ եղաւ ՚ի խաւարի :

Հետեւալ շաբաթ Պ. Տը Գամօր երեկոյ մը ժողովանոցը գտնուելով զօրապետին հետ վե՛ր խաղաց : Գիտեց որ Պ. Տը Գանվալօն խաղին չէր տար խելքը, և իր դէմքին վրայ սաստիկ մտատանջութեան դրոշմը իսկ տեսաւ :

— Տկարութիւն ունիս, զօրապետ, հարցուց Գամօր՝ երբ սախաղը լմնցաւ :

— Զէ, չէ, ըսաւ զօրապետը. . . միայն դժգոհութիւն ունիմ . . . : Գիւղը. . . պահնորդներուս երկուքին մէջ. . . ձանձրալի գործ մը . . . : Այս առաւ Մեսնիլը շրկեցի որ քննէ այս բանը :

Զօրապետը քանի մը քայլ առաւ, և նորէն Գամօրին մօտենալով մէկ կողմ առաւ զան :

— Բարեկամ, ըսաւ Գամօրին, Պահ մ'առաջ խաբեցի քեզի . . . մտքիս մէջ բան մ'ունիմ, ծանր բան մը. . . խիստ դժբաղդ եմ անգամ :

— Բայց ի՞նչ կայ, ըսաւ Գամօր, որու սիրտը սաստիկ կը զարնէր :

— Եղելութիւնը քեզ պիտի պատմեմ. . . թերևս վաղը. . . : Վաղէն առաւ անպատճառ տունս եկուր, կը գնաս :

— Այո՛, անշուշտ :
— Շնորհակալեմ : Հիմա, ալ կ'երթամ, վասն զի իրօք աղէկ չեմ :

Գամօրին ձեռքը սովորականէն աւելի սիրով սեղմեց :
— Մնաս բարև, սիրելի տղաս, շարայարեց :
Եւ իսկոյն դարձաւ՝ պահելու համար արասուքը որով յանկարծ աչերը լեցուած էին :

Պ. Տը Գամօր քանի մը վայրկեան սաստիկ անհանդստութիւն մը զգացած էր. սակայն զօրապետին բարեկամական և արգահատական մնաս բարևին վրայ բոլորովին հանդարտեցաւ իրեն վերաբերող իրողութեան նկատմամբ, թէև ձերուներին յուզուած արտմութիւնը զարմանք և ցաւ անդամ տուաւ իրեն : Եթէ աշխարհիս մէջ կար մարդ մ'որուն Գամօր ուզէր աղէկութիւն ընել և որուն համար պատրաստ ըլլար անձը նուիրելու, ճիշդ այն մարդն էր զոր անհնարին կերպով կը թշնամանէր. ի՞նչ զարմանալի բան :

Սակայն Գամօր իրաւամբ անհանգիստ եղած էր, և յանբաւի հանդարտած էր, վասն զի զօրապետն այն գիշեր իր կնոջ մատնութիւնը իմացած էր, գէթ պատրաստուած էր իմանալու : Միայն թէ տակաւին չէր գիտեր ներս մեղսակցին անունը, վասն զի իրեն տեղեկութիւն տուողները Գամօրին անունը չտուեր էին վախնալով որ զօրապետը յամառ և բացարձակ կերպով պիտի չուզէր հաւատալ իրեն : Եթէ նորէն Գամօրին անունը տրուէր զօրապետին, ասի՛ նկատելով ատենօք տեղի ունեցող իրողութիւնը՝ հաւանական է թէ իրօք նախանջէր այս կասկածին առջև իբր հրէշութեան մը առջև, որ անհնարին կ'երևար և որուն վրայ խորհիլն անդամ անպատուութիւն էր :

Պ. Տը Գամօր կէս գիշերէն ետք մինչև ժամը մէկ ժողովանոցը կեցաւ, և անկէ Ղանօ փողոցը գնաց : Սովորական զուշուութիւններով Գանվալօնին ապարանը մտաւ, և այս անգամ իրեն պիտի հետևինք :

Պ. Տը Գամօր՝ սարտեղէն անցնելով աչքը վեր ըրաւ դէպ ՚ի զօրասպետին սենեկին պատուհանները, և տեսաւ որ գիշերուան ճրագի մ'աղօտ լըյը միայն կը շողար վանդակապատին ետեւէն։ Մարդիլու ճին անոր կ'սպասէր իր մենախուցին դրան առջև որ արտաքին գմբեթաւոր հովանոցի մը վրայ կը բացուէր։ այս հովանոցը գեանէն քանի մ'աստիճան բարձր շինուած էր։ Աոմն իր շուրթերը անտիական կնկան ձեռքին վրայ դրաւ, և ապա զօրասպետին մտատանջարտմութեան վրայ քանի մը խօսք ըսաւ։ Մարդիլու ճին սպատասխանեց թէ քանի մ'օրէն ՚ի վեր իստ վըրդոված էր ան իր առողջութեան մասին։ Այս բացատրութիւնը բնական երեցաւ Պ. Տը Գամօրին, և տիկին Տը Գանվալօնին ետեւէն գնաց՝ մեծ սրահներէն անցնելով որք խաւարամած և լռին էին բոլորովին։ Նէ ձեռքը բռնած էր ճրագ մ'որուն տկար նշոյլն իր քնքոյշ գէմքին վրայ տարօրինակ գեղնութիւն մը կ'արձակէր։ Երբ լայնաձև և հնչեղ (sonore) սանգուղէն վեր ելան, բազրոսներուն քսուող բոսային ձայնը միայն կը յայտներ ներս թեթևաքայլ գնացքը։ Մերթ ընդ մերթ սարսուռով համակուած՝ կանգ կ'առնուր կարծես աւելի ազէկ վայելելու համար այն տրամական հանգիստորութիւնը ուր կը դառնուէին միասին. քիչ մ'իր քուճայթ գլուխը կը ծռէր Գամօրին նայելու համար. կը ժպտէր անոր իր երկնաշունչ ժպտաւրը, ձեռքին մէկը սրտին վրայ կը դնէր՝ կարծես «Արվախնամ» ըսելու համար, և նորէն կը քայլէր։

Գամօրին հետ հասաւ իր սենեակը, որուն մէջին շքեղութիւնը, քանդակուած փայտակերտները, ծանր ասուեղէնները կիսովին կը լուսաւորուէին ճրագէ մը։ Արակարանին բոցը մերթ ընդ մերթ ելնելով հրատիպ շողեր կ'արձակէր սպանիական գպրոցին երկու կամ երեք սրտիկերներուն վրայ որք այս անպաճոյճ և հոյակապ սենեկին միակ զարդարանքն էին։

Չփնէտցին քով բազմոցի ձեով կահ մը կար. մարդիլու ճին այս բազմոցին վրայ ընկնելու պէս նստաւ կարծես վախէն ու ժաթափ, ապա որքօնք երկու բարձ հրեց որոնց վրայ Պ. Տը Գամօր ծռնր դրաւ անոր առջև. այն ատեն մարդիլու ճին երկու ձեռներով իր մաղբրուն թանձրահալու խոսրոյքիլը ետըը նստեց, և իր սիրողին վրայ ծռուելով,

— Այսօր կը սիրե՛ս զիս, ըսաւ։
 Իր ձայնին անարատ շունչը տակաւին Գամօրին երեսին վրայէն կ'անցնէր երբ իրեն առջևը դուռ մը բացուեցաւ, և զօրասպետը ներս մտաւ։

Մարդիլու ճին և Պ. Տը Գամօր մի և նոյն միջոցին ոտք ելան, և քով քովի անշարժ կենալով անոր նայեցան։

Զօրասպետը դրան քով կանկ առած էր. զանոնք տեսնելով տկար սարսուռ մ'առնեցեր էր, և իր գէմքին վրայ կապարպոյն (livide) գեղնութիւն մը ծաւալեր էր։ Այսրիկեան մ'իր աչքը Գամօրին վրայ յառեցաւ շլմորուն և դրեթէ մորթադին նայուածքով մը. ապա իր ձիգ թեկերը դիտուն վերեւ վերցոյց, և երկու ձեռները շաչիւնով մէկմէկու դարկին։

Այս ստակալի միջոցին տիկին Տը Գանվալօն Գամօրին թեք բռնեց, և անգամ մ'անոր նայեցաւ խորին, աղետալի, եղբրական նայուածքով մ'որ վախ տուաւ կոմսին։ Գամօր տեսալ մը տմարդութեամբ հրեց մարդիլու ճին, թեկերը կուրծքին վրայ առաւ, և սպասեց։

Զօրասպետը Գամօրին վրան քայլեց, նախամարար. յանկարծ իր երեսը կարմիր գոյնով մը վառեցաւ. շուրթերը կէս մը բացուեցան և շարժեցան յետին ծայր նախատիւնքի մը համար, և արագօրէն յառաջացաւ ձեռքը վեր ըրած. սակայն քանի մը քայլէն ետք ձեռունին յանկարծ կանկ առաւ, երկու ձեռքովը օղբ ձեծեց նեցուկ մը վնտռելու պէս, ապա գայթեցաւ. առջևն ընկաւ՝ գլուխը չմինեային մարմարիտին զարնելով, և օթոցին վրայ դիտորուելով տարածուած և անշարժ մնաց։

Այն ատեն աղետալի լուրթիւն մը տիրեց այս սենեկին մէջ։ Պ. Տը Գամօրին մէկ զսպուած արտաղկը խնց այս լուրթիւնը։ Մի և նոյն միջոցին նեաուեցաւ, անշարժ ձեռունիին առջև ծռնր դրաւ, և երկար ատեն անոր ձեռքը, ապա սիրտը բռնեց։ Տեսաւ որ մտած էր զօրասպետը։ Արեան նուրբ թեկ մը կը հոսէր գունարեկ ձակամէն որ մարմարիտին զարնուելով խղատած էր. սակայն թեթև էր այս վէրքը. զօրասպետը մտոյնտոյն այն չէր, առնոր մահուան պատճառն էր մատնուիլն այս երկու տնձէն զօր

կրօնիւնքն և որոնցմէ սիրուած կրկարծէր ինքզինքը: Ջարմացման, վիշտին և սարսափին բռնութիւնը ստուգապէս խորտակած էր անոր սիրտը:

Գամօրին մէկ նայուածքն իմացուց տիկին Տը Գանվալօնին թէ ալ որբեարի է: Մարդիզուհին բաղմոյցին վրայ կբեցաւ, զլուխը բարձերուն մէջ պահեց, և հեծկլտաց:

Պ. Տը Գամօր ոտքի վրայ կեցած, կռնակը չմխնէ ային տուած, աչքն անշարժ էր և կը մտմտար: Սրտին բոլոր անկեղծութեամբը կ'ուզէր յարուցանել այս մեռելը և իր կեանքը տալ անոր: Իւրովի երդումը ամ էր իր կեանքը առանց պաշտպանելու յանձնել զօրպետին եթէ զայն ուզէր իր մոռցուած բարութեանց, մատնուած բարեկամութեան, և պղծուած պատուոյն փոխարէն, և հիմա մոռցուցած էր զան: Թէ և իր ձեռքովը չգործած էր այս ոճիրը, սակայն ոճիրն իր առջևն էր իր սոսկալի հանգերձանքովը: Գամօր այս ոճիրը կը տեսներ, անոր հստը կ'առնուր, արիւնը կը շնչէր:

Մարդիզուհին մէկ անհանդարտ նայուածքին վրայ երիտասարդը խելքի զլուխը հաւքեց սաստկապէս և անոր քովը դնաց: Այն ատենցած ձայնով շշուք մը տեղի ունեցաւ իրենց մէջ. Գամօր շտապաւ հասկցուց անոր թէ ինչ ընթացք բռնելու կը պարտաւորէր: Պէտք էր ծառաները կանչել, ըսել թէ զօրպետը յանկարծ աւելի հիւանդացած էր, և թէ ոտքը ներս սենեկին ներսը դնելով կաթուածամահ ընկած էր: Սակայն մարդիզուհին ահաբեկ հասկցաւ թէ պէտք էր բաւական երկար ատեն սպասել աղմուկ հանելէ առաջ, վասն զի կը պարտաւորէր փախելու ժամանակ տալ Գամօրին, և մինչև այն ատեն ահալի առանձնութիւն մը պիտի ունենար մեռելին քով: Գամօր զութ ունեցաւ այս կնկան վրայ, և որոշեց ապարանէն դուրս ելնել՝ Պ. Տը Գանվալօնին յատուկ բնակարանէն անցնելով որ փողոցին վրայ մատնաւոր էր մ'ունէր:

Մարդիզուհին խսկոյն զանդակը բազմիցս հնչեցուց սաստկութեամբ, և Պ. Տը Գամօր այն ատեն միայն մեկնեցաւ երբ արագահառ քայլերու գփռաւորը լսուեցաւ սանդուղին վրայ:

Ջօրպետին բնակարանը կարճ փողով մը հաղորդակցութիւն ունէր իր կնկան բնակարանին հետ. ապա աշխատութեան խուց մ'է սենեակը կար: Պ. Տը Գամօր այս սենեկէն անցաւ այնպիսի զղացումներով զոր չպիտի աշխատինք նկարագրելու, և փողոցը հասաւ:

Բժիշկները հաստատեցին թէ զօրպետը սրտին մէկ երակին բեկումովը մեռած էր:

Մահուան երկրորդ օրը տեղի ունեցաւ թաղումն որուն Պ. Տը Գամօր ներկայ գտնուեցաւ: Ճիշդ նոյն իրիկուն Բարիզէն մեկնեցաւ և դնաց կնիկին քովը, որ նախորդ շաբաթէն 'ի վեր Ռէօյեի մէջ տեղաւորուած էր:



Այս աշխարհիս ամենէն քաղցր զգայութեանց մին է այն զոր մարդս կը կրէ երբ ահալի երազի մը ցնորական ճնշումներէն նոր կ'ազատի, և որ' ճակատը սառնարեկ քրտինքով ողողուած՝ կ'արթընայ և կ'ըսէ իւրովի թէ երազ տեսաւ: Պ. Տը Գամօր ահա կերպիւ իւր այս տպաւորութիւնը զլաց երբ Ռէօյեի գալով հետեւեալ օրն արթնցաւ և առաջին նայուածքով տերեւներուն մէջ արեւին խաղալը տեսաւ, և երբ իր պատահանին ներքև իր զաւկին կայտառութեամբ ինզալը լսեց: Սակայն ինքն երազ չտեսած էր. միայն թէ իր հողին՝ զոր իր նոր յուզմանց սոսկալի ձգտումը մահած էր՝ պահ մը դադարում ունէր և զրեթէ տուած խառնուրդի կը վայելէր այն հանգստութիւնը որ անոր շուրջը կը ախրէր:

Գամօր տեսակ մ'աճապարումով հաղուեցաւ և պարտէզն իջաւ. իր տղան վաղեց եկաւ. կոմսն անսովոր խանդաղատութեամբ պազաւ զաւակը, և անոր վրան ծռուելով, ձայնը քաղցրութեան և

արտևութեան դարմանալի ելեկշով մեղմիկ հանեց և հետը խօսեցաւ, իր մօրն և իր խաղալիկներուն վրայ հարցուփորձ ընելով: Ապա մանկան ազատութիւնը տուաւ և յամրաբայլ ժուռ եկաւ առ առատուան օդը շնչելով, տերևները և ծաղիկները տեսալ մը տարօրինակ հետաքրքրութեամբ քննելով: Ժամանակ առ ժամանակ իր ձգմուած կուրծքէն խորին և կցիտուր հառաչ մը կ'ելնէր, և Գամօր ձեռքը ձակատը կը տանէր կարծես ձանձրառիթ տեսիլներ ջնջելու համար:

Կստաւ այլանդակօրէն կտրուած այն տուսախներուն մէկին վրայ որք հին ձեռով պարտէզները կը զարդարեն, և նորէն կանչեց իր զաւակը. ծունկերուն մէջն առաւ զան, դարձեալ հարցուփորձ ըրաւ կիսաձայն՝ ինչպէս ըրած էր արդէն, ապա քաշեց և երկար ատեն սեղմելով գրկեց կարծես մանկան սրտին անմեղու թիւնը և հանգստութիւնը իր սիրտը փոխադրել տալու համար:

Տիկին Տը Գամօր յանկարծ հոն հասնելով տեսաւ էրիկին որդեսիրական զգացմանց այս արտահայտումը, և զարմանալով անմուռնչ մնաց: Գամօր իսկոյն ոտք ելաւ, և ներաւ ձեռքը բռնելով՝ ըսաւ.

— Ինչպէս աղէկ կը դատարարակես զան: Ընորհակալեմ. . . . Գեղ և մօրդ արժանի պիտի ըլլայ ան:

Տիկին Տը Գամօր այնքան կը զարմանար անոր ձայնին անոյշ և արտմալի հնչումէն որ շփոթութեամբ թոթովելով պատասխանեց.

— Բայց նաև քեզ արժանի կարծեմ:

— Ի՛նչ, ըսաւ Գամօր՝ որու շարժերը մեղմուլին դողացին և Խեղճ տղեկ, յուսամ թէ ոչ:

Եւ արագութեամբ հեռացաւ:

Տիկին Տը Գամօր և տիկին Տը Թեքլը առջի օրն առտու զօրագետին մուսիլը ըսեր էին: Երբ իրիկուն կտմնն եկած էր, այս մահուան վրայ բան մը չըսած էր անոնց, և անոնք ալ զգուշացեր էին այս մասին ակնարկութիւն մ'ընելէ: Հետեւեալ օրն և միւս օրերը մի և նոյն զգուշութեամբ վարուեցան: Թէև ամենեկն չէին երեւակայեր այն աղետալի պարագաները, որով Գամօրին այնքան ծանր կ'երեւար այս յիշատակը, բայց անոր այս-

քան յանկարծահաս աղէտքէ մը սաստիկ զգածուելը և իր խղճին այս պատճառաւ յուզուած ըլլալը բնական բան մը կը սեպէին. սակայն զարմացան տեսնելով թէ այս սպաւորութիւնը տեսական զգացումի մ'երեղծութիւն առնելու չափ կ'երկարէր օր ըսա օրէ: Ուստի կարծեցին թէ տիկին Տը Գամօրին և Գամօրին մէջ թերեւս զօրաստին մահուան առթիւ՝ փոթորիկ մը ծագելով անոնց սէրը մեղմած է: Իրաւ է որ Գամօր Բէօյեի դալէն տասնուհինգ օրի չափ ետք քսանուչորս ժամի չափ տեղ ուղեորութիւն մ'ընելով ստուղապէս կասկած տուաւ անոնց, բայց շուտով ետ դառնալը և բողբոլին նոր յօժարութեամբ մը ամառն 'ի բուն Բէօյեի մէջ բնակիլը բերկրալի նշաններ երեցան տիկին Տը Գամօրին և իր մօրը: Գամօր տարօրինակ կերպով արտում, խորհուրէր էր, և ունէր անգործութիւն մ'որ իր ամեն սովորութիւններուն ներհակ էր: Երկարատեւ պտոյտներ կ'ընէր՝ հետի և միայնակ. Երբեմն տղան հետը կը տանէր իբր 'ի բարեբասա կացութեան: Կնկանը հետ վեհերոտ խանդաղատութեան փորձեր կ'ընէր, և իր կողմէն այս վեհերոտութիւնը սրտաուռ էր:

— Մարի, ըսաւ օր մը, դուք որ կիս մ'ես, դաւաղանդ Բէօյեի շուրջը ժուռ ածէ և այս երկիրը ովկիանոսին միջև կղզի մը ըրէ:

— Ատի կ'ըսես, վասն զի լողալ գիտես, պատասխանեց կինը խնդալով և զլուխը օրելով:

Սակայն ծաղկահաս կնկան սիրտն ուրախութեան մէջ էր:

— Ժամանակէ մ'ի վեր ամեն վայրկեան կը համբուրես զիս, հոգիս, ըսաւ աղջկան տիկին Տը Թեքլը: Միթէ այդ ամէն համբոյրներն ճիշդ ինձի համար են:

— Պաշտելի մայրս, պատասխանեց Մարի՝ համբոյր մ'ես տանելով անորմէն, իրաւ կ'ըսեմ որ պարզապէս կը քծնի քովս . . . : Պատճառը՝ Չգիտեմ. բայց կը քծնի քովս, նաև քու քով, մայր իմ, միթէ չէս նշմարեր:

Տիկին Տը Թեքլը իրօք կը նշմարէր Գամօրին իր քով քծնելը: Կտմնն անոր հետ խօսակցելու ժամանակ տեսալ մը սեթեւեթով կը փնտռէր անցելոյն յիշատակները զոր միասին ունեցեր էին, կար-

ծես թէ Գամօր այս անցելոյն հետ կ'ուզէր շղթայել իր նոր կեանքը, միւս ամեն բան մոռնալ և աղաչել որ մոռցուի այն :

Այս երկու զմայելի կիներն առանց գողալու չէին տածեր իրենց յոյսերը : Արշիշէին թէ ահարկու անձի մ'առջևն էին : Գրեթէ չէին ըմբռներ այսքան յանկարծական կերպարանափոխութիւն մ'որու սկիզբը յայտնի չէր իրենց : Արվախնային անցողական քնահաճութենէ մ'որմէն եթէ միամտաբար խաբուէին, իսկոյն ոչ միայն իրենց առջի բոլոր դժբաղդութեան մէջ կը գլտորուէին, այլ նաև իրենց արժանապատուութիւնը կորուսած պիտի ըլլային այս անգամ : Սակայն միայն իրենք չէին այս տարօրինակ կերպարանափոխութեան վրայ զարմացողները : Պ. ՏԸ Գամօր ևս կը խօսէր այս փոփոխութեան վրայ : Շրջականերուն զիւղացիները կոմսին խօսուածքին մէջ բոլորովին նոր բան մ'է գթոտ մարդասիրութեան բարի և ակործելի համմը զգալով կ'ըսէին թէ միւս տարիները քաղաքավար, խի այս տարի բարեսիրտ էր ան : Անկենդան բաներն անգամ, անտառները, դաշտերը, երկիւնքը կրնային մի և նոյն վիպյութիւնը տալ կոմսին համար, վասն զի Գամօր զանոնք կը դիտէր և կը քննէր բարեսիրական հետաքրքրութեամբ որով զանոնք երբէք չբատուած էր ուրիշ ժամանակ :

Ճշմարիտը խօսինք. սաստիկ խռովութիւն մը դրաւած էր Գամօրը և ալ չէր թողուր զան : Այն ժամանակէն առաջ իր հողին, վարդապետութիւնները, հպարտութիւնը բազմիցս խիստ հարուածներ ընդուններ էին, բայց այս հարուածները ընդունելովը հանդերձ իր քայլը շարունակած էր՝ մէն մի հարուածին ժամանակ կանգնելով իրր վերադարձնելու յայտնալ յաղթահար առիւծ մը : Ատենօք ոտնակոխ ըրած էր գունդիկը արդիւղ բարոյական ամեն սկիզբները, բայց պատիւը վերապահած էր իրր անբռնարարելի սահման. ապա տրփին իշխանութեան ներքև ընկնելով ըսած էր իւրովի թէ պատիւն ալ միւս բաներուն պէս դաշն մ'էր, և պատիւը ևս ոտքին տակն առեր էր. բայց պատիւը ոտնակոխ ընելէն ետք ոճիրը տեսած, ձեռքով շօշափած էր. սարսափով համակուած էր, և կ'ընկերէր :

Պժգումով կը մերժէր այն սկզբունքը որք զինքն հոն տարեր էին, թերևս հարցնելով ինքնին թէ մարդկային ընկերութիւն մ'ի՞նչ կը

դառնայ եթէ անոնցմէ զատ սկզբունք չունենայ : Իրենց հանդարտ շքեղութեամբ կ'երևային իրեն այն պարզ ճշմարտութիւնները զոր ուրացեր էր ան. տակաւին յայտնի և մեկին կերպով չէր տեսներ այն ճշմարտութիւնները, անոնց անուն մը տալու չէր աշխատեք. սակայն զաղանի զմայլումով անոնց հովանիին և անդորրութեան կ'ապաւինէր, զանոնք իր զաւկին անարատ սրտէն, կնկանն անարատ սրտէն, բնութեան հանապազօրեայ հրաշքէն, երկնից ներդաշնակութիւններէն, և թերևս արդէն՝ բոլորովին մտապէս՝ Աստուծմէ կ'ուզէր :

Գամօր նոր կեանքի մը համար ունեցած եռանդներուն միջևը կը վարանէր : Ասան զի տիկին Տը Գանվալօն իր առջևն էր : Տակաւին անորոշապէս կը սիրէր այն կինը. մանաւանդ չէր կրնար լքանել զան առանց տեսակ մը վատութեան : Շփոթալի զարհուրանքով կը յուզուէր կոմսը : Այնքան չարութիւն ընելէն ետք իրեն ներելի էր բարեգործ ըլլալ և հանդարտօրէն վայելել այն ուրախութիւնները զոր կ'ընդնշմարէր : Ապելելու հրաման կը տային իր անցելոյն հետ կապակցութիւնը, զէշութեամբ ստացուած հարստութիւնը, աղետալի տարփուհին և այն ձերուսիին ուրուականը, և կը յաւելուէր. Նախախնամութիւնը թոյլ պիտի տնր : Շատերուն պէս մենք այ չենք ուզեր թեթևութեամբ չարաչար գործածել այս Նախախնամութիւն բառը և Պ. Տը Գամօրը գերբնային պատժոյ մը սպառնալից ներքև ցոյց տալ. Նախախնամութիւնը յաւիտեանական օրինաց տրամաբանութեամբ միայն կը միջամտէ մարդկային պատահարներուն, այս տրամաբանութիւնն ոչ այլ ինչ է բայց եթէ այն օրինաց վաւերումը. սակայն ասի բաւական է ահարկու ընելու յաւիտեանական օրինաց տրամաբանութիւնը :

Պ. Տը Գամօր՝ օգոստոս ամսոյն վերջերն ըստ սովորութեան գաւառին կեդրոնաբաղարը (chef-lieu) դնաց ընդհանուր ժողովին աշխատութեանց մասնակցելու համար : Երբ ժողովին նիստերն աւարտեցան, կոմսը (էօյի վերադառնալէն առաջնաց տղացելութիւն մ'ըրաւ Տը Գանվալօն մարդկալու հիին : Ամառուան մէջ քիչ մ'անհանգստութիւն ցոյց տուած էր ներս նկատմամբ,

և հազիւ քանի մ'անգամ Գանձալոնի գիւղն երևած էր ինչպէս
կը պահանջէր պատշաճութիւնը :

Մարդիկուհին ուղեց ճաշի համար կեցնել Գամօրը, թէև հիւր
չունենար սուներ. այնքան հրապոյրով թախանձեց որ Գամօր ինք-
զինքը պախարակելով հանդերձ հաւանեցաւ մնալու : Երբէք չէր
տեսներ մարդիկուհին առանց խոսվուելու : Նէ սոսկալի յիշատակ-
ներ, բայց նաև սոսկալի հեշտութիւններ կը յիշեցնէր անոր :
Բնաւ այսքան զեղանի չեղած էր տիկին Տր Գանձալոն. սգաորի
հագուստն իր նուազուն և բացարձակ շնորհագեղութեան նոր
փայլ մը կը տար. սև զգեստին ազդեցութեամբն անոր ճակատը
գեղին և նայուածքին տխուր պայծառութիւնն աւելի շողուն կ'ե-
րևային. ողբերգային ծաղկահաս թագուհի մը, կամ գիշերային
այլասաց պատկերի մը կը նմանէր :

Առջի գիշերուան միջոցին հասաւ ժամ մ'ուր մոռցուեցաւ այն
զգոյշ ընթացքն որով երկար ատենէ 'ի վեր կը վարուէին միասին :

Պ. Տր Գամօր առաջուան պէս անտիական մարդիկուհիին ոտքին
քովը նստաւ դարձեալ, աչքը անոր աչքին մէջ դնելով, անոր
փոզիկողուն ձեռները անընդհատ համբուրելով : Այն իրիկուն
տարօրինակ էր այս կիներ : Դռանդալաւ խանդաղատութեամբ մը
կը նայէր Գամօրին, հեշտախոտութեան ամենէն կիզողական սիրա-
զեղերը կարծես ըստ հաճոյս անոր երակներուն մէջը թափելով.
ապա խոյս կը տար երիտասարդին քովէն, և աչերէն արտառք
կ'արտարգլխէին :

Յանկարծ մոզական շարժումով մ'իւր և սիրողին գլուխը իր մա-
ղերուն տակն առաւ, և այս անուշաբոյր վարպոյրին շուքին
տակ բոլորովին ցած ձայնով մ'ըսաւ .

- Արքան երջանիկ կրնայինք ըլլալ :
- Երջանիկ չէնք, պատասխանեց Գամօր :
- Ո՛չ . . . գէթ ես . . . վասն զի բոլորովին իմն չես,
մինչ ես քուկդ եմ բոլորովին . . . : Այս կէտը աւելի անտա-
նելի կ'երևայ ինձ հիմակ որ ազատ եմ . . . : Եթէ դուն ալ ա-
զատ մնացած ըլլայիր . . . : Ե՛րբ կը խորհիմ ատոր վրայ . . .
կամ եթէ կարենայիր ազատ ըլլալ . . . երկինք մերը կ'ըլլար :

— Գիտես որ ազատ չեմ . . . : Ինչո՞ւ ազատութեան խօսքը
կ'ընես :

Մարդիկուհին քիչ մ'ևս մօտեցաւ, և աւելի իր շունչովը քան
թէ ձայնովը ըսաւ .

- Միթէ անկարելի է ազատիլը, ըսէ :
- Ինչպէս, հարցուց Գամօր :
- Պատասխան չտուաւ նէ. բայց իր անշարժ, սիրազրդիւ
անգութ նայուածքը պատասխանեց .
- Խնդրեմ, ըսէ, ինչպէս, մըմբաց Գամօր :

— Չըսիր ինձ — գէթ ես չեմ մոռնար ըսած ըլլալը — թէ ա-
ամեն բանէ բարձր կ'սիրեմ պիտի միանայինք . . . թէ աչ-
խարհս և իր օրէնքն ալ մեզի համար էութիւն պիտի չունենար .
. . . թէ մեզի համար մեր երանութենէն կամ երջանկութենէն 'ի
զատ բարի կամ չար չպիտի ըլլար : Արդ՝ ահա երջանիկ չենք . . .
. . . և սակայն կրնայինք երջանիկ ըլլալ վերջապէս . . . : Մտիկ
ըրէ — ես աղէկ խորհեցայ մեր երջանկութեան վրայ . . . :

Տիկին Տր Գանձալոնին շուրթերը Գամօրին այտին դպան, և
իւր վերջին խօսքին շուքն իր համբոյրներուն մէջ կորսուեցաւ :

Պ. Տր Գամօր տամբողբէն հրեց մարդիկուհին, և անոր առ-
ջէն ոտքի վրայ ելաւ :

— Շարժո՛ք, ըսաւ ուժգնապէս, յուսամ թէ փորձ մ'է ատի . .
. . . բայց փորձ ըլլայ կամ չըլլայ, երբէք ատոր խօսքն ուրիշ ան-
գամ չընես, երբէք, ըսի, լսեցիր :

Շարժո՛ք ևս ոտք ելաւ յանկարծ :

— Ա՛հ, ինչպէս կը սիրես եղբր զան, գոչեց : Այո՛, կը սիրես
զան, քու սիրածդ ան է, գիտեմ, կ'զգամ, և ես ալ միայն կա-
րեկցութեանդ կամ բնահաճութեանցդ ծառայող առարկայ մ'եմ . .
. . . լա՛ւ, դնա՛, գտի՛ր զինքը, վասն զի կ'երգնամ թէ վտանգի մէջ
է նէ . . . :

Գամօր ամենախրոխտ հեգնութեամբ մը ժպտեցաւ :

— Ըսէ, նայիմ, նպատակներդ, ըսաւ : Այոպէս ուրեմն գիներ
մեռցնե՞ք միտք ունի :

— Եթէ կարենամ, ըսաւ մարդիկուհին :

Եւ իր հայածն թեք երկնցոց զէն մը բունելու համար :

— Ի՛նչ . ձեռքով :

— Ձեռքը . . . պիտի դանուի :

— Այս միջոցիս այնքան զեղանի ես , ըսաւ Գամօր , որ ճորէն տարք ընկնելու անդուսոյ փափաք կ'ըզամ : Խոստովանէ միայն թէ ուղեցիր փորձել զիս , կամ թէ վայրկեան մը խենդ եղար :

Շարլօթ վայրենի ժպիտ մ'ունեցաւ :

Բ. — Ա՛հ , կը վախնաս , բարեկամս , ըսաւ պաղութեամբ :

Հ. — Եւ իրաւունք ունիս վախնալու . վասն զի խե չեմ . . .

Հուզեցի փորձել քեզի . . . նախանձոտ եմ . . . մատնուած եմ .

. . . և վրէժս պիտի լուծեմ : Եւ ոչի՛նչ ծանր պիտի նստի ինձ .

. . . վասն զի աշխարհիս մէջ աչի՛նչ ունիմ : Գնա՛ , պահէ՛ կնիկդ :

— Աղէ՛կ , կ'երթամ , ըսաւ Գամօր :

Իսկոյն սրահէն , ապա ասպարանէն դուրս ելաւ : Բտքով մինչև երկաթուղիին կայարանը դնաց , և նոյն իրիկունն իսկ Բէօյեի հասաւ :

Հոն սոսկալի բան մը կ'սպասէր իրեն :

Իր բացակայութեանը ժամանակ տիկին Տը Գամօր մօրը հեռ Բարիզ գացած էր քանի մը պիտանի բաներ գնելու համար : Հոն երեք օր կեանքն ետք առտու ետ դարձեր էին : Գամօր ինքն ալ երեկոյնի շատ ուշ հասած էր : Թուեցաւ իրեն թէ իր կինն ու ասոր մայրը քիչ մը նեղութեամբ ընդունեցին զինքը . սակայն իր մտքին այժմայ վիճակին մէջ մտահոգութիւն մը չունեցաւ անոնց այս վարմունքէն :

Ըսենք թէ ի՛նչ անցած էր :

Տիկին Տը Գամօր՝ Բարիզ մնացած միջոցին իր սովորութեան համեմատ այցելութեան դացած էր տիկին Տը Լա Բօշ-Ժիւկանին որ իր մօրաքոյրն էր : Միշտ միջակ եղեր էին իրենց յարաբերութիւնները : Իրենց ոչ բնաւորութիւնն և ոչ կրօնքը չէին համաձայներ . սակայն տիկին Տը Գամօր իր մօրաքոյրը չսիրելը բաւական կրսեպէր , և տիկին Տը Լա Բօշ-Ժիւկան իր մօրաքեռաղջիկը կ'ատէր : Ըտելութիւնը անոր ցոյց տալու համար աղէկ նախ թ մը դտաւ , և այս առիթը չփախցուց : Զօրապետին մահէն

ի վեր չտեսնուեր էին : Պարզապէս իր զայրոյթը զրգուած էր այս դէպքէն , որուն համար տիկին Տը Լա Բօշ-Ժիւկան կը պարտաւորէր ինքզինքը մեղադրել՝ անոր մէկ գլխաւոր պատճառն եղած ըլլալուն համար : Իր շարագործութիւնն իրեն դէմ դարձած էր : Պ. Տը Գանվալօնին յանկարծաստ մահը ներս վերջին յոյսերը ջնջած էր , կ'ակնարկենք այն յոյսերուն զոր կարծած էր թէ կրնայ գնել ձերուսիկն բարկութեան և լքումին վրայ : Այն օրէն ՚ի վեր ժանտարարոյ կնկան մը յատուկ կատաղութեամբ պաղտնապէս զրգուած էր Գամօրին և մարդիզուհիին դէմ : Աօթրօէն իմացած էր թէ Պ. Տը Գամօր տիկին Տը Գանվալօնին սենեկին մէջ կը գտնուէր այն զիշերն ուր զօրապետը մեռած էր : Այս ստոյգ հիման վրայ չվախեցած էր ամենէն նողկալի եւթադրութիւնները զիզելու , և այս մասին իրեն օգնած էր Աօթրօ որ՝ անոր պէս՝ իր վրիժառութեան և մոլեկան ցանկութեանց դերեւումը տեսած էր :

Քանի մը սոսկալի տարածայնութիւններ , որք հաւանական է թէ այս աղբիւրէն ելեր էին , Բարիզի հասարակութեան մէջ պտոյտ անդամ ըրեր էին :

Գամօր և տիկին Տը Գանվալօն՝ կասկածելով թէ երկրորդ անգամ մատնուած են տիկին Տը Լա Բօշ-Ժիւկանէն , դպրեր էին հետը յարաբերութիւն ունենալէ , և այս կինը մարդիզուհիին գտնուող ներկայանալով կրցած էր նամարել թէ ներս չընդունելու հրաման տրուած էր . այս նախատիքը բոլորովին վերաւորած էր տիկին Տը Լա Բօշ-Ժիւկանը :

Այս զգացումներուն բոլոր բունութեամբը տակաւին համակուած էր նէ երբ տիկին Տը Գամօրին այցելութիւնը ընդունեցաւ : Զօրապետին մահը խօսակցութեան ՚ի թ ընդ ձևացուց , քիչ մ'արտասուք թափեց իր հին բարեկամին վրայ , և խանդալատութեան եռանդով մ'իր մօրաքեռաղջկան ձեռները բռնելով ,

— Խեղճ սիրելիս , ըսաւ , քու վրայ ալ կըլլամ . . . վասն զի հիմակ առաջուանէն աւելի ասպերջանիկ պիտի ըլլաս . . . եթէ կարելի է :

— Չեմ հասկնար միտքդ , տիկին , ըսաւ ծաղկահասակ կինն անտարբեր կերպով :

— Աւելի աղէկ, եթէ միտքս չեմ հասկնար կրկնեց Տը Լա Բօշ-Թիւկան գոյգն ինչ դառնութեամբ:

Ապա, պահ մը հանդիստ մնալէն ետք,

— Մտիկ ըրէ, սիրելի աղջիկս, գիտնաս որ խղճի պարտ մը կը կատարեմ . . . քեզի պէս պարկեշտ արարած մը լաւագոյն վիճակի արժանի էր . . . և մայրդ որ նոյնպէս միամտաբար կը խաբուի . . . : Այն մարդը զԱստուած անդամ խաբէ թերևս : Յանուն ընտանեացս ձեր երկուքէն պընտրուամ խնդրելու պէտքը կ'զգամ :

— Ար կրկնեմ, տիկին թէ չեմ հասկնար միտքդ :

— Բայց չհասկնալք անկարելի է, աղջիկս : Այն, անկարելի է որ այն ժամանակն 'ի վեր կասկած մ'ըրած չըլլաս :

— Ամենևին կասկած մը չունիմ, տիկին, ըսաւ տիկին Տը Գամօր, վասն զի ամեն բան իմացած եմ :

— Ա՛հ, կրկնեց խստիւ տիկին Տը Լա Բօշ-Թիւկան, եթէ ամեն բան իմացած ես, ըսելիք չունիմ. բայց այն ատեն կան ուրեմն անձեր որք խղճի շատ տարօրինակ իրաւախօհութիւններ ունին :

— Քիչ մ'առաջ խօսքերուդ միտ դնելով ես ալ մի և նոյն բանը կ'ըսէի, ըսաւ տիկին Տը Գամօր՝ ոտք ելնելով :

— Թող այնպէս ըլլայ, սիրելի աղջիկս . . . բայց ես քու շահու համար կը խօսէի, և ինքզինքս կը մեղադրէի անդամ եթէ աւելի յայտնի և մեկին-կերպով չխօսէի : Իս քեզմէ շատ աւելի աղէկ կը ճանչեմ Պ. Տը Գամօրը, որ աղոսկանս է, նոյնպէս և միւսը . . . : Ինչ որ ըսես, ամեն բան իմացած չես, կը լսես . . . : Զօրապետը յանկարծապէս մեռաւ . . . և անորմէ ետք կարգը քուկդ է . . . : Ուրեմն զոյշ կեցի՛ր, խեղճ աղջիկս :

— Ա՛հ, տիկին, գոչեց նոբատի կինը, որ սոսկալի կերպով սոգունեցաւ, մինչև մահս ալ չպիտի տեսնուիմ հետդ :

Անմիջապէս գուրս ելաւ, իր տունը վազեց, հոն գտաւ իր մայրը, և պատմեց անոր այն սոսկալի խօսքերը զոր պահ մ'առաջ լսած էր : Մայրն ուղեց հանդարտել աղջիկը, սակայն ինքն ևս վրդոված էր : Իսկոյն տիկին Տը Լա Բօշ-Թիւկանին տունը

50
5
15

դնաց, աղերսեց որ դու թ ունենայ իրենց վրայ, ետ առնու կամ յայտնի կերպով բացատրէ իր դարչելի խօսքը : Հասկցուց անոր նաև թէ 'ի պահանջել հարկի Պ. Տը Գամօրին պիտի իմացնէ իրողութիւնը, և թէ ան անշուշտ այս պատճառաւ մեծամարտութեան պիտի հրաւիրէ Յիժիսմօնը : Այս սպառնալիքէն տիկին Տը Լա Բօշ-Թիւկան ևս վախնալով մտածեց որ ապահովագոյն միջոցն էր բոլորովին ջնջելայն համարումը զոր տիկին Տը Թեքլը ունէր Պ. Տը Գամօրին վրայ : Ուստի կատարելապէս պատմեց անոր Աօթրօէն լրած բաները, սակայն պատմութեամբը ինքզինքը վտանդելէ զոյշ կեցաւ : Իմացուց տիկին Տը Թեքլին թէ Պ. Տը Գամօր զօրապետին տունն էր այն դիշերն ուր մեռած էր նա . ըսաւ նաև այն տարաձայնութիւնները որք ելեր ին այս մահուան նկատմամբ : Զբարտաթիւնները ճշմարտութիւններու հետ խառնելով, մի և նոյն ժամանակ իր խօսքին քաղցրութիւնը, իր զգուանքը և արտասուքը կրկնապատկելով՝ յաջողեցաւ տիկին Տը Թեքլին այնպիսի դաղափար մը տալ Գամօրին բնաւորութեան նկատմամբ, որ խեղճ կնկան աշամեն ենթադրութիւններն, ամեն վախերն օրինաւոր երեցան : Տիկին Տը Լա Բօշ-Թիւկան առաջարկեց Աօթրօն զրկել տիկին Տը Թեքլին որպէս զի ինքն անձամբ ալ հարցուփորձ ընէ Գամօրին այս վաղեմի դրագրին : Սակայն տիկին Տը Թեքլը առ երեսս անհաստութիւն և հանդարտութիւնցոյց տալով մերժեց այս առաջարկութիւնը, և մեկնեցաւ :

Իր տունը վերադառնալով ջանք ըրաւ աղջիկը խաբելու այն սպառնութեանց մասին զոր բերած էր . բայց աղէկ չյաջողեցաւ խաբելու . իր դէմքին այլայլութիւնը շատ զղալի կերպով սուտի կը հանէր իր խօսքը :

Հետեւեալ գիշերն երկուքն ալ մեկնեցան փոխադարձապէս իրարմէ պահելով իրենց հոգիներուն մոլորումը և անհնարին վիշտը . բայց այսքան երկար ժամանակէ 'ի վեր միասին խորհելու, զգալու և տառապելու սովորած ըլլալով՝ երկուքն ալ մի և նոյն խորհրդածութիւնները, մի և նոյն պատճառաբանութիւնները ըրին, մի և նոյն սարսափները ունեցան առանց իրարու հարողորդելու :

զանոնք : Վերստին կը յիշէին Գամօրին բոլոր կեանքը և բոլոր յանցանքները . այն ճիւղաղական գործը , որու համար ամբաստանուած էր Գամօր տիկին Տը Լա Բօշ-Թիւկանէն , հիմակ իր անդրադարձ աղջեցութեամբն այս յանցանքներուն եղեւնական հանգամանք մը կը տար և տիկին Տը Թեքլը և իր աղջիկը կը զարմանային թէ ինչպէս չճանչեր էին այս հանդամանքը : Անոր դիտաւորութեանց մէջ շարունակութիւն մը , կապակցութիւն մը կը գտնէին . այսուհետև ամեն բան , բարութիւնն անգամ Գամօրին դէմ ռճիրի կերպարան կ'առնուր : Այսպէս այս վերջին ամբաստանուն մէջանոր բունած ընթացքը , տարօրինակ դիրքը , նորէն իր զաւակին և կնկան մօտիկն ու անոնց սէրցոյց տալը , խանդակաթ սիրով Մարիին հոգ տանիլն ոչայլ ինչէր բայց եթէ կեղծաւորութեամբ նոր ռճիր մը խորհիլ կանխաւ , ռճիր որ ինքն իրեն այժմէն գիմակ մը կը պատրաստէր :

Սակայն ինչ ընելու էր : Այսպիսի խորհրդածութիւններու բեռին ներքև միասնական ինչ տեսակ կեանք հնարին էր : Ինչպիսի ներկայ , և ինչպիսի՛ սպադայ : Տիկին Տը Թեքլը և իր աղջիկը շուարեր մնացեր էին առանց խելք հասցնելու այս կէտերուն :

Հետևեալօրը Պ. Տը Գամօր իր առջև անոնց տարօրինակ դիրքը նշմարելէ չկրցաւ արդիւուիլ . սակայն լսելով թէ իր ծառան առանց չարամտութեան իմացուցեր է անոնց իր տիկին տը Գանվալօնին այցելութեան գացած ըլլալը , երկու կանանց անտարբերութեան և շփոթումին պատճառ այս դէպքը սեպից : Այս իրողութիւնը մեծ հնհնուք մը չըրաւ իրեն մանաւանդ , վասն զի տրամադիր էր տիկին Տը Գանվալօնի հետ յարաբերութեանը նկատմամբ կատարեալ ապահովութիւն տալ անոնց : Իրօք զիշերն ըրած խորհրդածութիւններէն ետք Գամօր կը խորհէր ընդ միշտ դադրեցնել մարդիզուհին հետ ունեցած սիրային յարաբերութիւնը : Ինքն իր կողմէն դադրեցնելը պատուոյ ներհակ համարէր թերեւս , բայց տիկին Տը Գանվալօն ինքն այս դադարումին բաւական առիթ մը տուած էր Գամօրին . այն եղեւնական խորհուրդը զոր համարձակած էր յայտնելու կոմսին՝ անշուշտ զինքը փորձելու համար կեղծիք մ'էր լոկ . գէթ այսպէս կը կարծէր Գամօր , բայց

այնպիսի խորհուրդ մը յայտնած ըլլալը բաւական էր արդարացընելու տիկին Տը Գանվալօնին իրմէն լքանիլը : Իսկ այն սաստիկ և սպառնական խօսքերուն նկատմամբ՝ զորս նախանձէն դրդուելով ըսած էր մարդիզուհին՝ Գամօր ոչայնքան հոգ կ'ընէր , թէ և յիշելով զանոնք մերթ ընդ մերթ կը վրդովուէր : Սակայն տարիներէ 'ի վեր սրտին մէջ այսբան թեթևութիւն չզգացած էր Պ. Տը Գամօր : Առմտը մարդիզուհին սիրելէ գաղթելովը կարծած էր թէ իր ազատութեան հետ տեսակ մը պատանութիւն և առաքինութիւն ստացած էր վերստին : Օրուան մէկ մասը իր տղուն հետ խաղալով և ման գալով անցուց :

Երբ ընթրիքն աւարտեցաւ , արդէն զիշերուան մութը սկսած էր տիրել . սակայն պայծառ և յստակ էր զիշերը . Գամօր յանկարծ առաջարկեց կնիջն անտաններն՝ երթալ միասին և ման գալ առանձին : Խօսեցաւ անոր վայրի մը վրայօք որ անկից առաջ ճիշդ այսպիսի զիշեր մ'իւր զարմանքը դրսուած էր և որ անոր վիպասիրական ճաշակին հաճելի պիտի ըլլար , ըստ խնդալով : Սակայն չկրցաւ չզարմանալ անտիական կնկան ոչայնքան փութալը , զէմբին վրայ վրդովումի զգացման մը նկարուիլը , և մօրը հետ արագօրէն նայուածք մը փոխանակելը տեսնելով :

Իրօք Գամօրին առաջարկութեան վրայ այս երկու գժբաղդ կանանց մտքէն մի և նոյն գաղափար մը , սոսկալի գաղափար մը անցաւ : Գղբու մ'անոնք կարծես խենդ գարձեր էին , և այս գղբու մին անմիջական տպաւորութիւնը տակաւին կը շարունակուէր իրենց վրայ . ուստի Գամօրին յանկարծական առաջարկութիւնն որ անոր սովորութեանց ներհակ էր նաև , ժամանակը , զիշերը , առանձնական շրջադայութիւնը յանկարծ տիկին Տը Թեքլին և իր աղջկան ուղեղին մէջ գրգռեր էին այն աղետալի գաղափարները զոր տիկին Տը Լա Բօշ-Թիւկան նետած էր հոն :

Սակայն տիկին Տը Գամօր համարձակ կերպարանով մը՝ զոր պարադան գրեթէ չէր պահանջեր թերևս՝ պատրաստուեցաւ խուլոյն երթալու . ապա էրիկին հետ գուրս ելաւ տունէն , զատկը տիկին Տը Թեքլին խնամոցը յանձնելով : Գամօր և իր կիներ պարտէզէն անցնելէն անմիջապէս ետք զանուեցան անտաններուն

մէջորք անոնց բնակարանին կից էին և որք միւս կողմէն տարածուելով կրմիանային այն հինօրեայ բարձրաբերձ ծառաստաններու հետ որոնց տէրն եղած էր Պ. Տը Գամօր՝ Տը Թեքլը կոմսին մահաւամբը :

Պ. Տը Գամօր այս առանձնական շրջադայութիւնը ուղեւորվ դիտաւորութիւն ունէր իր ըրած վերջնական որոշումը կնոջը յայտնել, իր սիրտը և կեանքը անոր յանձնել վերջապէս, և մենութեան մէջ սրտի երջանկութեան առաջին սիրումները վայելել : Ամուսն զարմանալով այն սառնարեկ անմտադրութեան վրայ որով թարմահաս կիներն իր խօսքերուն սիրազին զուարթութեան կը պատասխանէր, իր ջանքը կրկնապատկեց իրենց խօսակցութեան մտերմական և խօստովանական ձև տալու համար : Մերթ ընդ մերթ կանկ առաւ արահետի մը բաց օդէն կնոջը լըսի երեւոյթ մը ցուցնելու և ներա զարմանքը զրգուելու համար, ու միանգամայն սկսաւ հարցուփորձ ընել անոր զէպ ՚ի Բարիզ ըրած նոր ճամբորդութեան, նաև այն անձերու վրայ որոնց հետ տեսնուած էր հոն :

Տիկին Տը Գամօր տիկին Ժօպէրին և ուրիշ քանի մ'անձերու անունը տուաւ, ապա իր ձայնը ակամայ մեղմելով ըսաւ թէ նաև Տիկին Տը Լա Բօշ-Ժիւկանին հետ տեսնուած է :

— Ատոր հետ, ըսաւ Գամօր, կրնայիր չտեսնուիլ : Մոռցայ իմացնել քեզ թէ ալ չեմ տեսնուիր այդ կնկան հետ :

— Ինչո՞ւ, հարցուց վեհերոտութեամբ :

— Ասան զի թշուառական կին մ'է ան, ըսաւ Գամօր : Երբ քիչ մ'աւելի աղէկ ըլլանք միասին, այսինքն ես և դուն, շարասարեց խնդալով, այդ կնկան բնաւորութեան ինչ ըլլալը մանրամասն պիտի բտմքեզ : Պիտի պատմութեղամեն բան . . . ամեն բան, կ'ըսեմ, կը լսես :

Այս խօսքերը արտաբերելու ժամանակ Գամօրին ձայնն այնքան բնական և դրեթէ անոյշ ելելէջ մ'ունէր որ կոմսուհին իր սիրտը տանջող ճնշումին կիսովին թեթեւիլը զգաց : Աւելի անհոգութեամբ ախորժեցաւ էրիկին շնորհալի ողորումներէն և իրենց շրջադայութեան թեթև զէպքերէն : Աւրուականները սակաւ առ

սակաւ ներա մտքէն կը ցրուէին, և տիկին Տը Գամօր կ'սկսէր իւրովի ըսել թէ զէշերազի մ'և ճշմարիտ յիմարութեան մը խաղաչիկն եղած էր, երբ իր էրիկին դիրքը տարօրինակ փոփոխութիւն մ'առնելով ներա ամեն սարսափները սկսաւ զրգուել : Իրօք հիմակ ալ Պ. Տը Գամօրին միտքը թարթափուն դարձած, և ծանր հնհնուքէ մը տանջուած կ'եւեար : Ալ ջանադրութեամբ կը խօսէր, կէս պատասխաններ կը տար, կը մամտար, ապա յանկարծ կանկ կ'առնուր ահարեկ մանկան մը պէս իր շուրջը նայելու համար : Իր առջի դիրքէն բոլորովին տարբերող այս տարօրինակ շարժումները սովորականն աւելի վրդովեցին գեռահաս կիներ, վասն զի այն ատեն անտաւին ամենէն ամայի և հեռաւոր կողմը կը գտնուէին :

Մին և միւսը պաշարող գաղափարներուն մէջ արտաքոյ կարգի համեմատութիւն մը կար :

Այն պահուն ուր տիկին Տը Գամօր սարսափահար կը գողար էրիկին քով, Գամօր ներա համար կը գողար : Արծած էր նշմարել թէ իրենց ետեէն եկող կոյ : Բաղմիցս թուած էր իրեն ոտերու շառաչիւններ, տերեւներու շփշփումներ, վերջապէս մեղմ մաքայլ ոտքի ձայն մը լսել անտաւին մացառուտ անդէն . այս ձայնը կ'ընդհատուէր երբ Գամօր կանկ կ'առնուր, և երբ վերստին կ'սկսէր քայլել, ոտքի ձայնը նորէն կը լսուէր : Պահ մ'երևակայեց թէ իրենց ետեէն եկող և թաւուտքէ մ'արագօրէն զէպ ուրիշ թաւուտք անցնող մարդու մը շուրջ տեսաւ : Նախ կարծած էր թէ դուցէ նենդորս մ'է ան, բայց այս կարծիքը չէր համաձայներ այն հաստատութեան հետ որով կ'երևար թէ իրենց հետեող կար : Աւերջապէս համոզուեցաւ թէ զինքը և իր կիները զաղտնի կըզիտէին . նոյն կրնային այս լրտեսութիւնը ընել : Տիկին Տը Գամօրին տիկին Տը Գամօրին կենացը զէմբաղմիցս ըրած սպառնալիքը, այն կնկան կրքոտ և ապերասան բնաւորութիւնը յանկարծ Գամօրին մտքին առջևն եկեր էին, և այս խորհրդաւոր հալածումին հետ համեմատուելով սոսկալի կասկածներ տուեր էին կոմսին : Այսրիկեան մը չկարծեց թէ մարդիկուհին ինքն անձամբ իր վրէժը լուծելու հոգը իր վրայ առած ըլլայ :

բայց՝ ինչպէս կը յիշէր Գամօր՝ ըսած էր նէ թէ վրիժառու ձեռքը պիտի դանուի։ Իրօք մարդկուհիին զայն դանելու չափ հարուստ էր, և այս ձեռքը կրնար հիմակ անտառին մէջն ըլլալ։

Չէր ուղեր վրդովել իր դեռասի կինը՝ անոր ուշադրութիւնը հրաւիրելով այս տեսակ մ'որուականին վրայ որուն իրենց քովներն ըլլալը զգայ կը կարծէր. սակայն չէր կրնար պահել անորմէն յուզում մ'որու մէն մի շարժումն այնքան անհիմն և այնքան անադորոյն մեկնութեանց տեղի կը տար։

— Մարի, ըսաւ, կ'աղաչեմ, քիչ մ'աւելի շուտ քալենք, ցուրտ կ'ըլլամ։

Գամօր շտապեց իր քայլը, և որոշեց դղեակը հասնիլ հասարակաց ճամբայէն երթալով որուն վրայ ցանուցիր տուներ կային։ Երբ անտառին եզրին մտնեցան, թէև միշտ կը կարծէր մերթ րոնդ մերթ լսել այն ձայները որք վրդովեր էին զինքը, սակայն սիրտ անաւ, մտքին հնունուքը ցրուեցաւ բաւական, և իր անհիմն վախէն փոքր ինչ ամօթահար ըլլալով՝ կոմսուհին կեցուց այն բնական դիրքին առջև որ իրենց շրջապայութեան նպասակն եղած էր։ Այս դիրքն ապաստաներու շար մ'էր որ երկար ատենէ ՚ի վեր լքուած կրօնաւոր երկրի մը խորունկ փոսին վրայ կը նայէր. այս քարածայուին կատարը զարդարող այլանդակաձև թուփերը, կախուղ լիանները, քարածայուին ներքին երեսը օթոցի պէս ծածկող մթադոյն բաղեղները, քարին սպիտակութիւնները, անդունդին յատակը հոսող լճակին անորոշ ցոլումներն, և ուրիշ պարագաներ վայրենապէս գեղեցիկ տեսարան մը կ'ընծայէին այն լուսաստի գիշերուան ժամանակ։

Արախառն հողի փոսին շուրջն երկիրը զանազան ձևերով կարդադրուած և փշոտ մացառներու թաւուաքէ շրջապատուած ըլլալով անտառէն մերձակայ ճամբան անցնիլ ուղղուները երկար շրջան մ'ընէլու կ'ստիպէր. սակայն փոսին ամենէն նեղ մասին վրայ ծառի երկու կոճղ երկնցուցեր էին. զուգուած և կիսովին հարթ թուած այս ծառի կոճղերուն վրայէն ուղղն ոչ միայն կրնար ուղղակի անցնիլ, այլ նաև անցնելու համար ձակողն այն տարօրինակ դրրին ամենակատարեալ և արժանանկար (pittoresque) տեսարանը

կը վայելէր։ Տիկին Տը Գամօր դեռ չտեսած էր այս տեսակ մը կամուրջը զոր էրիկը մօտ օրերը կ'աղմկէ տուած էր։

Գամօր քանի մը բոպէ այս տեսարանին հոգեպիշ նայելն ետք, երբ ձեռքովը ծառի երկու կոճղը ցոյց տուաւ կնկանը,

— Միթէ պէտք է ասկից անցնիլ, հարցոց տիկին Տը Գամօր խիստ կտրուկ ձայնով մը։

— Եթէ չես վախնար, ըսաւ Գամօր, ասկից ՚ի զատ ես հոն պիտի ըլլամ։

Գամօր կնկանը գեղեկիլը տեսաւ, և լուսնին ճառագայթներուն ներքև ներա գեղնութիւնն այնքան տարօրինակ երեցաւ իրեն որ չկրնալով համբերել ըսաւ.

— Կը կարծէի թէ աւելի քաջասիրտ ես։

Ա'լ չվարանեցաւ տիկին Տը Գամօր, և ոտքը այս վտանգաւոր կամուրջին վրայ դրաւ։

Չյուշութեամբ կամուրջին վրայէն յառաջանալով հանդերձ՝ անկանայ գլուխը ետին կը դարձրնէր կիսովին, և դարձրնելն իր քայլերուն համար նեղութիւն մ'էր։ Յանկարծ երեքեցաւ նէ։ Գամօր վաղեց հասաւ կինը բռնելու համար, և սրարագային շփոթութեան պատճառաւ իր ձեռքը տեսակ մը ուժգնութեամբ ընկաւ կնկանը վրայ։ Հէք կինը սրտաճմրիկ աղաղակ մը հանեց, շարժում մ'ըրաւ մաքառելու համար, հրեց էրիկը, և խենդի պէս կամուրջին վրան վազելով՝ նորէն անտառը նետուեցաւ։ Գամօր շուարելով, վախնալով, այս իրողութեան պատճառը չհասկնալով աճապարանօք ներա ետևէն զնաց. տիկին Տը Գամօր կամուրջէն երկու քայլ անդին կունակը տուած էր առաջին ծառին որու հանդիպած էր, և էրիկին կը նայէր ահաբեկ բայց սպառնական դիրքով. երբ Գամօր մտնեցաւ,

— Ա՛ստ, ըսաւ կինը։

Պ. Տը Գամօր ճշմարիտ մոլորումով մը կը նայէր կնկան երբ արտորացող քայլերու ձայն մը լսեց. անտառին թանձրախիտ կողմէն յանկարծ ստուեր մ'եղած էր. տեսաւ որ տիկին Տը Թեքըն էր այս ստուերը։ Նէ վաղեց եկաւ շնչասպառ. մազերն ու զգեստները տակնուվրայ էին. աղջկանը ձեռքը բռնեց, և Գամօրին ուղղութեամբը կանգնելով

— Գէթ զիս ալ իր հետ, ըսաւ :

Գամօր հասկցաւ վերջապէս : Աղաղակ մը զսպուեցաւ կոկորդին մէջ . ջրաձգային շարժումով մը ճակատը երկու ձեռքին մէջն առաւ . ապա յուսարեկ թևերը կախելով,

— Այսպէս, ըսաւ խորին ձայնով մը, զիս մարդասպան մը կը համարիք : Լաւ ուրեմն, շարայարեցյանկարծական սաստկութեամբ մ'ոտքը դետինը զարնելով, ինչո՞ւ հող կը կենաք . . . : Փախէք . . . փախէք ուրեմն :

Մայրն և աղջիկ՝ անհնարին սարսափով մը համակուելով հնազանդեցան անոր : Խոյս տուին . մայրն աղջիկը քաշեց տարաւ մեծաբայլ, և Գամօր անոնց 'ի խաւարի աներևութանալը տեսաւ :

Իսկ ինք հոն՝ այն վայրենական տեղը մնաց . ժամերը կ'անցնէին, և կոմսը չէր գիտեր թէ որքան էին անոնք : Մերթ կ'երթեկէր այն նեղ անջրպետին վրայ որ զինքը կամուրջէն և անդունդէն կը զատէր . մերթյանկարծակի կանկ կ'առնուր ակնկոր և ակնայեռ . անշարժ և անզոր՝ կ'երևար ծառի կոճղին պէս որուն կը կռթնէր : Եթէ՛ ինչպէս կը յուսանք՝ կայ աստուածային ձեռք մը որ մեր վիշտերը մեր յանցանաց հետ արգարութեամբ կը կշռէ, այս վայրկեանն անշուշտ այս երիտասարդին հաշիւին անցաւ :

Է

Հետևեալ օրն առտու Տը Գանվալժն մարդիկուհին ժուռ կը գար բոլորաձև և ընդարձակ լճի մ'եզրերուն վրայ . այս լիճը ներս մեծ պարտէզին վարի մասը կը զարգարէր, և իր մետաղանման ցոլումները հեռուստ կ'ընդհանրուէին ծառերուն մէջտեղէն : Գլուխը ծռելով, սղաւորի երկայն բօսան առաղին վրայ քսելով յամրաբայլ կը դառնար լճին բոլորտիքը՝ կարծես իրեն շքաղիւր ունենալով երկու սպիտակափայլ մեծ կարասներ որ սնոր ձեռքէն կարծես ճարակի մը սպասե-

լով անոր մօտ և եզրին քովէն կը լողային միշտ : Յանկարծ Պ. Տը Գամօր իր առջևն երեցաւ : Մարդիկուհին կարծած էր թէ ընտ սկտի չտեսնէ զան . վեր բրաւ գլուխը, և ուժգնակի ձեռքին մէկը սրտին վրայ դրաւ :

— Այո, ես եմ, ըսաւ Գամօր : Տուր ինձ ձեռքդ :

Տուաւ մարդիկուհին :

— Իբրևունք ունէիր, Շարլօթ, կրկնեց կոմսը . մերինն պէս սիրային կապերը չեն կարուիր . . . : Կտրելու խորհուրդը ունեցայ . . . : Առտու թիւն մ'էր այս որու համար կը մեղադրեմ ինքզինքս և որուն պատիժը բաական կրեցի սակայն : Սակայն կ'աղաչեմ որ ներես այս վատութիւնս :

Լճին բոլորտիքը մեծ սօսիներ կային . մարդիկուհին քանի մը քայլի չափ Գամօրը քաշելով այս ծառերուն շուքին տակը տարաւ . իր թատերական վայելչութեամբ ծունկի վրայ եկաւ, լնաց անցրով աւոր նայեցաւ ակնայեռ և ձեռները բիրտ անդամ համբուրեց : Գամօր վեր ըրաւ մարդիկուհին, և սիրաղին փարուսով մը սեղանով զան,

— Սակայն ոչ ապաքէն չէիր ուղեր այն ոճիրը, բնական ձայնով : Եւ որովհետև տիկին Տը Գանվալժն տեսաւ մը վարանումով գլուխը կը ցնցէր .

— Եթէ իրաւ ուղած ըլլայիր դործել այն ոճիրը, կրկնեց Գամօր դառնապէս, իրարու աւելի արժանի կը հանդիսանայինք այդ մտին, վասն զի զիս այդպիսի բան մ'ընելու կարող կարծեցին :

Ապա թևն առաւ մարդիկուհին, և հետը քայլելու ժամանակ համառօտ կերպով սրտմեց զիշերտան իրօղութիւնները : Աստ թէ իր տունը չարձած էր, և թէ որոշած էր բնաւ ոտք չկոխել հոն :

Իրօք իր ցաւալի խորհրդածութեանց հետևանքն այս որոշումն եղած էր . նախ միտքը դրաւ բացատրութիւն մը տալ տիկին Տը Թեքլին և իր աղջկան որք այնքան սաստիկ լճնամանէր էին զինքը, իր սիրտը բոլորովին բանալ անոնց, ըսել թէ ուրիշին մ'առջի օրն առաջարկած էր իրեն այն եղևնական խորհուրդը որու համար կ'ամբաստանէին զինքը, և թէ ինք պիտի մտնէր ժամ էր այս առաջարկութիւնը . սակայն անդուտ եղած կ'ըլլար այս խոնարհութիւնը, եթէ կարենար հաւանիլ այսպիսի խոնարհումի մը . ինչպէս յուսար խօսքով յաղթել անվստահութեան մ'որ այսպիսի կատակներ տածելու կարող էր : Գամօր անորոշապէս

կը գուշակէր այս կասկածներուն ուսկէ ծնունդ առնուլը, և կը հասկնար թէ անցեւոյն յիշատակներով թունաւորուած այս անվտանգութիւնն անբուժելի էր : Անդարմանելիին զղացումը, զայրացած հպարտութիւնը, անիրաւութեան սրտմտութիւնն իսկ միայն մէկ հնարաւոր ապակէնցոյց տուեր էին իրեն, և այս ապակէնն էր այն ուր հիմակ եկած նետուած էր :

Տիկին Տը Գամօր և տիկին Տը Թեքլը միայն իրենց ծառաներէն և հասարակութենէն իմացան թէ կոմսը Գանվալօնի գրեկէն քիչմը հեռի գիւղական տուն մը վարձու բռնած և հոն տեղաւորուած էր : Տասն նամակ գրելէն, և սակայն տասն ալ այրելէն ետք որոշած էր բացարձակ լուսութիւն մը պահել :

Տիկին Տը Գամօր և մայրը ժամանակ մը գողացին կարծելով թէ Գամօր իր զուակը պիտի առնու : Արմսին մտքէն անցաւ առնուլ զան. սակայն տեսակ մը վրիժառութիւն էր այս զոր անարգեց :

Արմսին այսպէս գիւղը տեղաւորուիլը, որ անոր տիկին Տը Գանվալօնի հետ ունեցած յարաբերութիւնները կը հրապարակէր, Բարիզեան աշխարհի մէջ շուտ մը լսուելով մեծ տպաւորութիւն ըրաւ հոն, և ինչպէս ընթերցողը կրնայ յիշել՝ կարգէ գուրս տարածայնութեանց տեղի տուաւ : Պ. Տը Գամօր իմացաւ և արհամարհեց այս տարածայնութիւնները : Իր ամբարտաւանութիւնը, սր այն ատեն վայրենական զրգոթութեամբ մը զայրացած էր, հաճութեամբ առ ոչինչ գրեց հասարակաց կարծիքը, նաև յառաջագրեց գիւրութեամբ յաղթանակ տանիլ այս կարծիքին դէմ : Պ. Տը Գամօր գիտէր թէ մարդս յանդգնութեամբ և ստակով կրնայ աշխարհս ստիպել հաւանելու որ և է կացութեան :

Այն ժամանակէն սկսեալ իր առաջուան կեանքը, սովորութիւնները, աշխատութիւնները, ասպակայի խորհուրդները նորէն սկսաւ ազդու կերպով շարունակել : Տիկին Տը Գանվալօն անոր ամեն նպատակներուն մտերմապէս խեղամուտ ըլլալով՝ անոնց հետ կը միացնէր իր նպատակները, և երկուքը միասին այսուհետև մշտնջինապէս միացեալ իրենց երկու կեանքը յառաջագոյն բարեկարգելու զբաղեցան : Գամօրին անձնական ինչքը տիկին Տը Գանվալօնի ընչից հետ միանալով ամենևին սահման մը չէր թողուր այն քմահաճութեանց որք կրնային գործել անոնց երեակա-

յութիւնը : Որոշեցին Բարիզի մէջ զատուած բնակիլը՝ սակայն մարդիգուհիին խօսակցութեան սրահն երկուքին միասնական սրահը պիտի ըլլար . երկուքին ակնապատիր փառաւորութիւնը (prestige) միանգամայն պիտի փոփոխուէր այն սրահին մէջ և անով բացարձակ ազդեցութեան մ'ընկերական կեդրոն մը պիտի կազմէր : Մարգիգուհին հոն իր անձին շքեղութեամբը դպրութեանց, ճարտարութեանց և քաղաքականութեան վերաբերող անձանց վրայ պիտի իշխէր . Գամօր ալ հոն պիտի գտնէր գործողութեան միջոցներ որոնցմով ՚ի հարկէ պիտի շտապէին այն բարձր ճակատագիրներն ուր գինքը կը հրաւիրէին իր տաղանդներն ու փառամոլութիւնը : Աւերջապէս ասի այն կեանքն էր որ իրենց սիրոյն սկիզբն երեւած էր անոնց իբր մարդկային երջանկութեան տեսակ մը կատարելութիւնը, այսինքն բազմութեան վերելք երկրիս ամեն հեշտութիւնները, տրիին հողեյոյզ զգայութիւնները և մտքին վայելուածները, հպարտութեան գոհունակութիւնները և զօրութեան յուզումները միասնապէս և սիդարբար վայելող երկու բարձր անձերու կեանքը : Այսպիսի կեանքի մը փառաւորութիւնը Գամօրին վրէժը կ'ըլլար, և գառնապէս զըջալու կը բռնադատէր այն կիները որք համարձակեր էին չձանչելու զինքը :

Սակայն մարգիգուհիին տակաւին շատ նոր սղաւորութիւնը կը հրամայէր իրեն և Գամօրին ուրիշ ժամանակի թողուլ իրենց երազին իրագործումը, եթէ չէին ուզէր սաստիկ ուժգնութեամբ վիրաւորել հասարակաց խիղճը : Զղացին այս բանը, և որոշեցին Բարիզ վերադառնալէ առաջ քանի մ'ամիս ուղևորութիւն ընել : Տիկին տը Գանվալօնի կեանցն ամենէն քաղցր ատենն եղաւ այն ժամանակը զոր իրենց ապագային նկատմամբ կարգադրութիւններ և ճամբորդութեան համար պատրաստութիւններ ընելով անցուցին : Մարգիգուհին վերջապէս լիուրի կը վայելէր մտերմութիւն մ'որ այնքան երկար ատեն խռովուած էր, և որու հրապոյրը ճշմարտիւ մեծ էր, վասն զի իր սիրողը՝ ներաւ պահ մը լքուած ըլլալը կարծես մոռցնել տալու համար իր մտքին անհուն շնորհքովը եռանդարոյր սիրոյ մ'ամեն զգացումները դուրս կը տար այս մտերմութեան մէջ : Մի և նոյն ժամանակ իր մասնաւոր ուսմանց, ինչպէս նաև իրենց միասնական նպատակներուն նկատմամբ ցոյց կը տար եռանդ մը, խանդ մ'որ իր ճակտին վրայ, աներուն մէջ

կրմաւեր, և որ կարծես թէ աւելի փայլկրտար անոր առնական գեղեցկութեան :

Գիշերները մարդիզուհին մինակ ձգելէն ետք՝ շատ անդամժամերով և երբեմն մինչև առաու կ'աշխատէր : Ճամբայ ելնելու համար իրենց որոշած օրէն քիչ մ'առաջ գիշեր մը կոմսին ծառան որ իր տիրոջ սենեկին տակը կրպառկէր՝ ձայն մը լսեց և վրդովեցաւ : Աճապարանօք վեր ելաւ և տեսաւ որ Պ. Տը Գամօր իր աշխատութեան սեղանին սորին քով նուազած և գետինը երկնցած էր : Գամօր բոլորովին վստահութիւն ունէր այս ծառային վրայ որ Գանիէլ կ'անուանէր, և որ կը սիրէր իր տէրը այն տարօրինակ սիրով զոր հզօր բնութիւնները ստէպ կը ներշնչեն իրենց ստորակարգեալներուն : Գանիէլ տիկին Տը Գանիւլօնը կանչել տուաւ : Նէ խիոյն վաղեց եկաւ : Երբ ներս մտաւ, Պ. Տը Գամօր իր նուազումն սթափած բայց սաստիկ դուռնաբեկ էր, և իր սենեկին մէջ կ'երթնեկէր : Կոմսը մարդիզուհին տեսնելով դժգոհ երեցաւ, և բաւական սաստիկ կշտամբեց ծառան իր անպատեհ եռանդոտութեան համար : Ըսաւ Գամօր թէ գլխու պոռոյտ մ'ունեցած էր միայն, ինչպէս սովոր էր ունենալու : Տիկին Տը Գանիւլօն արեւոյնց կոմսը որ ալ այսբան ծայրայեղապէս չաշխատի, և ապա խիոյն մեկնեցաւ :

Հետեւեալ օրն երբ Գամօր ներս տունն եկաւ, մարդիզուհին չկրցաւ չզարմանալ տեսնելով վճատութիւն մ'որ անոր դէմքին վըրայ գորշմուած էր և որու պատճառ կը սեպէր առջի գիշեր Գամօրին կրած ցնցումը : Բայց երբ իրենց մտաւրուտ ուղեորութեան վրայ խօսեցաւ, Գամօրին պատասխանէն զարմացաւ և վրդովեցաւ իսկ :

— Աղաչեմ, քիչ մը յապաղենք, ըսաւ, կ'զգամ թէ ճամբորդութիւն ընելու վիճակի մէջ չեմ :

Օրերն անցան հետզհետէ : Գամօր ալ ամենեւին ակնարկութիւն չբրբաւ այս ճամբորդութեան : Տխուր, լռին, սառնահար էր ան : Յանկարծ դադրած էր այն գործունեայ և զողջեւ տենդային եռանդն որ մինչև այն ատեն անոր կեանքին, խօսուածքին, աչքին ոգի առած էր : Գամօրին վրայ երևող ախտանշաններուն (symptôme) մին մանաւանդ աւելի վրդովում տուաւ տիկին Տը Գանիւլօնին, կ'ակնարկէնք այն բացարձակ անդործութեան որու ինքզինքը տուաւ կոմսը : Գիշերները կանուխ կը հեռանար ներս

քովէն : Գանիէլ մարդիզուհին ըսաւ թէ կոմսը չէր աշխատեր և թէ գիշեր ժամանակ անոր քայլելը կը լսէր : Մի և նոյն ժամանակ Գամօրին առողջութիւնն ալ կը խանդարուէր յայտնի կերպով :

Մարդիզուհին որոշեց օր մը հարցուփորձել զան : Մինչդեռ միասին պոռոյտ կ'ընէին զգեկին ընդարձակ պարտեզին մէջ,

— Իզմէ բան մը կրպահես, ըսաւ Գամօրին : Հիւանդ ես, սիրելիս . . . ի՞նչ ունիս :

- Ոչինչ :
- Աղաչեմ, ըսէ :
- Ոչինչ, կրկնեց Գամօր աւելի ուժգնութեամբ :
- Մի թէ զաւակդ է քեզ ցաւ տուողը :
- Ոչինչ ցաւ կը տայ ինձ :

Լուրեայն քանի մը քայլ առնելէն ետք, — Երբ կը խորհիմ, կրկնեց Գամօր յանկարծապէս, թէ աշխարհիս մէջ կայ մէկն որ վատի տեղ դրաւ զիս . . . վասն զի միշտ ականջիս մէջ կը լսեմ այս խօսքը . . . որ վատի տեղ դրաւ զիս . . . որ ըսածին պէս՝ կը կարծէ թէ վատ եմ . . . և որ միշտ այնպէս պիտի կարծէ . . . : Եթէ մարդ մ'ըլլար բողբոջ, գործն ինքնին կը կարողարուէր բոլորովին, բայց կի՛ն մ'է բողբոջ :

Գամօր սրտին դառնութիւնը այսպէս յանկարծ դուրս թափեցէն ետք լուեց :

— Լաւ, բայց ի՞նչ կը կամիս, ի՞նչ կ'ուզես, ըսաւ մարդիզուհին տեսակ մը բարկութեամբ : Այր կամի՞ս որ երթամ ճշմարտութիւնը բռնախրեն, բռնաթէ պատրաստ է իր զինքը ինձի դէմ պաշտպանելու, թէ զինքը ի՞նչ սիրէ իր և զիս կ'ատէ իր : Եթէ ասի է ուղածդ, ըսէ . . . : Մեր այս կեանքն այնքան անհնարին կը դառնայ որ կարծեմ թէ կարող եմ այդպէս խօսելու կնկանդ :

— Հիմակ ալ դուն մի նախատեր զիս, ըսաւ Գամօր սաստկութեամբ : Արտաքսէ զիս, եթէ կը հաճիս, բայց ես միայն քեզի կը սիրեմ . . . : Հպարտութիւնս անհնարին վէրք առած է, այս է ահա միայն ունեցածս : Եւ պատուոյս վրայ կ'երդնում որ եթէ երբէք երթաս իր առջև զիս արդարացնելու նախապիկքը ընես ինձ, մինչև մահս ոչ քեզի և ոչ զինքը պիտի տեսնեմ . . . : Համբուրէ՛ զիս :

Գամօր կուրծքովը զգուեց մարդիզուհին, որ քանի մը ժամ հանդարտեցաւ :

Սակայն Գամօրին վարձու բունած զիւղական տունին պայմանածամբ քիչ օրէն կը լրանար, և ալ վարձու չպիտի տրուէր, վասն զի տէրն ինք կը դար բնակելու: Գեկտեմբերի միջինքը կը մօտենար այն ատեն, այսինքն այն ժամանակն ուր մարդիզուհին սովորութիւն ունէր Բարիզ վերադառնալու: Առաջարկեց Գամօրին որ զայ իր դղեկին մէջ բնակելով անցունէ այն սակաւածիւ օրերը, զոր տակաւին կը պարտաւորէին զիւղը անցունել: Գամօր հաւանեցաւ առաջարկութեան. բայց երբ մարդիզուհին Բարիզ երթալու խօսքը բացաւ,

— Ինչո՞ւ այդքան կանուխ, ըսաւ. հոս միթէ հանգիստ չենք:

Անկէ քիչ մ'ետք յիշեցուց Գամօրին թէ խորհրդարանին բացուիլը մօտ էր: Գամօր առողջութեան վիճակը պատրուակ բռնելով և ըսելով թէ հիւանդ է, ուղեց երեսփոխանութենէ հրաժարիլ: Տիկին Տը Գանվալօն աղաչանացը շնորհիւ համողեց Գամօրը որ ժամանակ մը խորհրդարանը չզալու հրաման ուղեւը թաւական համարի:

— Բայց, սիրելի՞ դ իմ, ըսաւ անտիական կնկան, քեզի տրտմալի կեանքի մը դատասարտած կ'ըլլամ:

— Քեզի հետ, պատասխանեց նէ, ամենուրեք և յամենայնի երջանիկ եմ:

Իրաւ չէր երջանիկ ըլլալը. սակայն Գամօրը սիրելն և իր անձը անոր նուիրած ըլլալը ճշմարիտ էր: Չկար տառապանք որու չհամբերէր, չկար զոհողութիւն որու պատրաստ չըլլար եթէ Գամօրին համար էր համբերելն և պատրաստ ըլլալը: Սոյն միջոցէն սկսեալ տիկին Տը Գանվալօնէն խոյս կը տար այն փողփողուն կեանքի, այն աշխարհային վեհապետութեան հեռատեսիլ պատկերը զոր այնքան երազած էր. Առանձնութեամբ, հրաժարումով և դառնազին արտսուքով բաղկացեալ ախուր ապագայ մը նախազգալ կ'սկսէր. սակայն Գամօրին քով վիշտն անգամատօնախմբութիւն մ'էր իրեն:

Գիտենք թէ ի՞նչ պիտի արագութեամբ կեանքը կը սահի կ'երթայ այն անձերու համար որք սոստիկ վշտի մը մէջ կը թաղուին առանց զբօսումի. օրերն երկար են, բայց անոնց շագունակութիւնը կարճ և կարճես անզգալի է: Ահա այսպէս ամիսները, ապա տարուան եղանակներն իրարու յաջորդեցին մարդիզուհին և Գա-

մօրին համար 'միաձեռութեամբ մ'որ դրեթէ ամենեւին հետք մը չէր թողուր անոնց մտքին մէջ: Իրենց ամենօրուան յորաբերութիւններն անփոփոխ յատկանիշ մ'ունէին. այսինքն կոմսը ցուրտ և ըստ մեծի մասին լուին մարդավարութիւն մը, մարդիզուհին ալ ուշադիր սէր մ'է զսպուած վիշտ մ'ունէր: Ամեն օր ձիով գիւղէն դուրս պտոյտ ընելու կ'երթային, երկուքն ալ սևեր հագնելով, իրենց գեղեցկութեամբն ու արտմութեամբն ամենուն համակրութիւնը գրաւելով, և այն երկրին բնակիչներուն ահախառն յարգանացն առարկաները դառնալով:

Նետակեալ ձմեռուան սկիզբները տիկին Տը Գանվալօն սկսաւ ստուգապէս վերդովիլ: Թէև Պ. Տը Գամօր գանդատ չէր բնէր, սակայն իր առողջութեան ևս քան զևս աւրուիլը յայտնի կ'երեւար: Մրանման, գրեթէ կաեղէն դոյն մը կը ծաւալէր իր նիւհարցած այտերուն վրայ և կը տարածուէր մինչև անոր աչերուն ճերմկոցին վրայ: Մարդիզուհին իր բժիշկը Բարիզէն բերել տուաւ առանց իմաց տալու Գամօրին: Կոմսը բժիշկը նշմարելով քիչ մը նեղանալը ցոյց տուաւ, և սակայն իր սովորական քաղաքավարութեամբը հաւանեցաւ բժշկին քննութեան: Ասի հինցած տապալերդի (hépatite) ախտանշանները գիտեց, վտանգ չտեսաւ, բայց Ախշիին ջուրերը, քանի մ'ողջապահիկ զգուշութիւններ և մօքի բացարձակ հանդարտութիւն պատուիրեց անոր: Երբ մարդիզուհին ուղեց առաջարկել Գամօրին որ Ախշի երթայ, առանց պատասխանելու ուսերը վեր ըրաւ ան:

Քանի մ'օրէն ետք տիկին Տը Գանվալօն առտու մ'ախտները մտաւ, և տեսաւ որ Մեճէ՛ օր Գամօրին սիրական մատակ ձին էր՝ փրփրալի, շնչասպառ և ոտքը կիսովին կարկամուած էր: Չհարգարմանը շփոթութեամբ բացասրեց այս կենդանիին վիճակը, ըսելով թէ կոմսն առտու ժուռ եկած էր անով: Մարդիզուհին Գանիէլին զիմեց, որ ներա համար խորհրդակից մ'եղած էր: Ստիպողական հարցումներ ըրաւ անոր, և Գանիէլ խոստովանեցաւ վերջապէս թէ իր աէրը ժամանակէ մ'ի վեր գիշերները շատ անգամ ձիով դուրս ելած և առտու ետ դարձած էր: Ծառան կը յուսահատէր այս գիշերային շրջագայութիւններն, որք շատ կը յոգնեցնէին Պ. Տը Գամօրը, կ'ըսէր: Աւերջապէս խոստովանեցաւ նաև թէ անոր այս արշաւանաց նպատակը Բէճիէին էր:

Տը Գամօր կոմսուհին զիջանելով նկատողութեանց՝ որոնց մանր պարագաներն անկարևոր են՝ տակաւին Բէօյեի կը բնակէր այն օրէն ՚ի վեր որ էրիկը ձգած էր զինքը: Բէօյեի Գանվալօնի զիւղէն տասն մղոնի չտի հեռի էր, թէև կարելի էր ճամբան կարճել քանի մը զարտուղի շախմատներէ երթալով: Պ. Տը Գամօր չէր վարաներ զիշերն երկու անդամ անցնելու այս ճամբէն, և անցնելուն նստատակն էր իր կնիան և զաւկին ծծած օգն ինքն ալ ծծելու յուզմունքը ունենալ: Գանիէլ մէկ կամ երկու անդամ տիրոջը հետ դացած էր. բայց կոմսը շատ անդամ միայնակ կ'երթար: Չին անտառը կը թողոր, կըրցածին չտի տունին կը մտենար տեսնուելու վտանգէն զուշանալով, և՛ չարագործի մը պէս ծառերուն շուքին տակ պահուելով՝ յաւիտենական անդունդով մ'իրմէն զատուած սիրելի էակներուն պատուհանները, լոյսերը, շշուքները, ամենափոքր նշանները կը գիտէր գաղանի:

Մարգիզուհին կէս մը բարկանալով, կէս մ'ալ վախնալով այլանդակութենէ մ'որ իսկութեան մօտ բան մ'երեւցաւ իրեն, անոր նկատմամբ անտեղեակ ըլլալ ձևացուց. սակայն այս երկու անձանց միտքը օր ընդ օր իրարու խորհուրդը թափանցելու սյնքան սովորած էին որ ոչինչ կրնային պահել մէկմէկէ: Գամօր հասկցաւ թէ մարգիզուհին իմացած էր իր տկարութիւնը, և ալ իր տկարութիւնը զազանի պահելու հող անդամ չընել ձևացուց:

Յուլիս ամիսուան մէջ իրիկուն մը ձիովը մեկնեցաւ և ետ դարձաւ ընթրելու համար: Գիշերուան մութը տիրելու տեսն անտառը հասաւ, արդէն միտքը դրած էր այն տանն հասնիլ հոն: Իր սովորական զուշութիւններովը պարտեզը մտաւ, և տան սովորութեանց մասին ունեցած տեղեկութեանը շնորհիւ՝ կըրցաւ՝ առանց նշմարուելու՝ մտենալ տաղաւարին ուր էր կոմսուհին սենեակը. նաև իր զաւկին սենեակն էր այն: Այս սենեակը՝ տունն մասնաւոր կարգադրութեամբը՝ միջնախոցի (entree-sol) մը բարձրութեամբ շինուած էր գաւթին կողմէն. սակայն դրան չեմը պարտիզին զեանին հետ հաւասար էր. պատուհաններուն մին բաց էր զիշերուան տաքին պատճառաւ: Պ. Տը Գամօր պահուցաւ պատուհանին վանդակապատին փեղկերուն մէկին ետեւ որ կիսովին ողջ էր, նայուածքը սենեկին մէջն ընկղմեց: Գրեթէ երկու տարիէ ՚ի վեր չստեած էր ոչ իր կենը, ոչ զաւակը, և ոչ

տիկին Տը Թեքը. երեքն ալ տեսաւ: Տիկին Տը Թեքը չմինեային քովը կ'աշխատէր. երեսը չփոխուած էր. տակաւին մի և նոյն առողջ կերպարանը ունէր. սակայն մաղերը ձիւնի պէս ճերմկեր էին բոլորովին: Տիկին Տը Գամօր, գրեթէ պատուհանին հանդիպակայ կողմը բազմուցի մը վրայ նստած էր և զաւկին զղեստները կը հանէր հետը զուարթօրէն հարցումներ, պատասխաններ և համբոյրներ փոխանակելով:

Մանուկն իր զիշերուան թեթև հաղուստովը մայրին ոտիցը քով ծուռ դրաւ նշանի մը վրայ, և սկսաւ իր ամեն զիշերուան աղօթքը ընել բարձրաձայն, մինչդեռ մայրն անոր երկու ձեռքը իր ձեռքին մէջ միացած կը բռնէր: Մերթ ընդ մերթ տիկին Տը Գամօր մանկան մոռցած մէկ բառը միտքը կը ձգէր: Այս աղօթքը կը բաղկանար քանի մը կարճ խօսքով, որը հպելի էին մանկան նորածիլ մտքին, և կը վերջանար յետադայ խօսքերով.

«Աստուած իմ, բարեղութ և ողորմած եղի՛ր հանիիս. ազգահաններուս, և մանաւանդ, Աստուած իմ, անբաղդ հօրս համար:»

Այս խօսքերը քիչ մը մանկային աճապարուժով արտաբերուած էին. տղեկը մայրին մէկ ծանր նայուածքին վրայ խօսյն կրկնեց յուզուած ժողովեամբ մը, իբր աղայ մ'որ իր սորված մէկ ձայնի ելէջը կը կրկնէ.

«Եւ մանաւանդ, Աստուած իմ, անբաղդ հօրս համար:»

Պ. Տը Գամօր յանկարծ երեսը դարձուց, հեռացաւ անձայն, և սարտեղէն մեկնեցաւ մտադոյն դուռէն դուրս ելնելով: Գիշերը անտառին մէջն անցուց: Անշարժ զաղափարէ մը կը տանջուէր ան. այսինքն կ'ուզէր զուսկը տեսնել, պագնել, սրտին վրայ սեղմելով զղուռել և հետը խօսիլ: Ետքը հօդը չէր: Յիշած էր թէ ժամանակաւ սովորութիւն ունէին տղան ամեն անտառ մտադոյն ազարակը տանիլ իրեն թաս մը թէյ խմել տալու համար: Ար յուսար թէ այս սովորութիւնը պահուած է:

Աստու եղաւ, և շուտով հասաւ այն ժամն որու կ'սպասէր Գամօր: Գարունի պահուած էր այն արահետին մէջոր աղաբակը կը տանէր: Բայլերու ձայն մը, խնդումներ, զուարթակին աղաղակներ լսեց, և յանկարծ իր զուակն երեցաւ որ յառաջ կը վազէր: Սա հինգէն մինչև վեց տարեկան վայելչաձև պղտի սղայ մ'էր այն տեսն՝ շնորհայի և սեղ դէմքով: Երբ մանուկն արահետին մի-

Ղևը տեսա Պ. Տը Գամօրը, կանկ առաւ. կը վարանէր այս ան-
ծանօթ կամ կէս մը մոռցուած երեսին առջև. սակայն Գամօրին
սիրալի, գրեթէ աղերսարկու ժպտէն սիրտ առաւ .

— Պարսն, ըսաւ տարակուսանքով :

Գամօր թևերը բացաւ, և ծնրադրութեան պատրաստուողի մը
պէս ծռուելով,

— Եկուր, համբուրէ ինձի, կ'աղաչեմ, մրմրաց :

Մանուկն արդէն ժպտելով լըյառաջանար երբեքանկարծ երևցաւ
իր ետևէն եկող կիինն որ անոր հին դայեակն էր :

Այս կիինն ահարեկութեան շարժում մ'ըրաւ .

— Հայրդ, ըսաւ կիսահագագ ձայնով մը :

Մանուկն այս խօսքը լսելուն վրայ սարսափահար աղաղակ մը
արձակեց, դէպ ետեւը նետուեցաւ ուժգնապէս, և կնկան վրան
փաթթուեցաւ՝ ահարեկ աչքը հօրը վրայ յառելով : Գայեակը
տղուն թևէն բռնեց և արագօրէն առաւ տարաւ :

Պ. Տը Գամօր չլացաւ : Սոսկալի կարկամութիւն մ'անոր բերնին
խորշերը խորշումը և այտերուն նիհարութիւնը երևան հանեց : Ջեր-
մային սարսուռներուն նման երկու կամ երեք ցնցում ունեցաւ : Չեռ-
քըյամբարար ճակատը տարաւ, երկարօրէն հառաչեց, և մեկնեցաւ :

Տիկին Տը Գանվալօն չիմացաւ այս տրամալի իրողութիւնը .
սակայն անոր հետևանքը տեսաւ, և ինքն իսկ դառնապէս զգաց
հետևանքը : Անձանաչելի եղաւ Գամօրի բնաւորութիւնն որ ար-
դէն այնքան սաստիկ այլայլած էր : Ա՛լ տիկին Տը Գանվալօնին
ցոյց չտուաւ այն ցուրտ քաղաքավարութիւնը անդամ զոր մինչև
այն ատեն պահած էր : Տարօրինակ հակակրութիւն մը կը ցուցը-
նէր այս կնկան : Կը հեռանար անորմէն : Մարդիզուհին նշմարեց
թէ Գամօր կ'ըղուշանար իր ձեռքին դպելէ : Ա՛լ խիստ քիչան-
գամ տեսնուեցան, վասն զի Գամօրին առողջութեան վիճակը չէր
ներեր իրեն կանոնաւորապէս ընթրել :

Այս երկու վշտարեկ անձանց կեանքն այն ատեն արդահատու-
թեան արժանի տեսարան մը կ'ընծայէր այն գրեթէ արբայական
կազմութեան միջևն ուր կը գտնուէին երկուքն ալ : Այս փառա-
ւոր պարտեզին շքեղազարդ ծաղկոցներուն և մարմարաչէն մեծ
անօթներուն մէջտեղէն, սպիտակ արձաններով լի գալարաչէն եր-

երբեմն իրարու հանդիպելով, այլ առանց բնաւ խօսելու թափա-
ռիլը կը տեսնուէր :

Սեպտեմբեր ամսոյն վերջերն օր մը Գամօր իր սենեկէն չիջաւ .
Գանիէլ ըսաւ մարդիզուհիին թէ հրաման առած էր տիրոջմէն ոչ
զոք թողուլ որ ներս մանէ :

— Նաև դիս, ըսաւ նէ :

Ծառան գլուխը ցնցեց ցաւաղին : Մարդիզուհին պնդեց :

— Տիկին, ըսաւ, եթէ թողում, պիտի արտաքսուիմ :

Ամսը բացարձակապէս առանձին մնալու այս այլանդակ սովորու-
թեան մէջ պինդ կենալով, մարդիզուհին այն միջոցէն սկսեալ պարտա-
ւորեցաւ գոհ ըլլալ այն լուրերով զոր ծառան ամեն օր կը տար իրեն :

Սակայն Գամօր անկողինը չինկած էր : Աեանքը տխուր մտա-
խոհութեամբ մը կ'անցուէր, իր բազմոցին վրայ պառկած :
Մերթ ընդ մերթ կ'երէր, քանի մը տող կը դրէր, և նորէն կը
պառկէր : Շատ էր իր տկարութիւնը, թէև ինք ամենեւին ցառի
գանգատ մը չէր յայտնէր : Երկու կամ երեք շաբաթէն ետք՝ մար-
դիզուհին Գանիէլին դէմքին վրայ սովորականէն աւելի վրդո-
վում մը տեսնելով, աղերսեց որ իր տիրոջը սենեակը մտցնէ քա-
ղաքին բժիշկը զոր կանչել տուաւ նէ : Ծառան որոշեց կատարել
ներաւ խնդիրը : Երբ բժիշկը կոմսին սենեակը մտաւ, թշուառ
կինը դուռին ետեւը կեցաւ՝ անձկութեամբ մտիկ ընելով : Գամօ-
րին ձայնին սաստիկութեամբ ելնելը լսել կարծեց, ապա այս ձայնը
մեղմեցաւ : Բժիշկը դուռն ելնելով պարզապէս ըսաւ մարդիզուհիին .

— Տիկին, իր վիճակը ծանր, բայց ոչ յուսահատական կ'երե-
ւայ ինձ . . . : Այսօր չուզեցի ստիպել զինքը . . . : Թոյլ
տուաւ որ վաղը նորէն գամ :

Հետևեալ գիշերը ժամն երկուքի միջոցին տիկին Տը Գանվալօն իր
կանչուիլը լսեց . ճանչեց կանչող ձայնը որ Գանիէլինն էր : Իսկայն
ելաւ, լօղիկ մ'առաւ վրան, և հրաման տուաւ որ ներս գայ Գանիէլ :

— Տիկին, ըսաւ ծառան, Պ. կոմսը ձեզի կ'ուզէ :

Եւ սաստիկ արտասուեց :

— Աստուած իմ, ինչ կայ :

— Եկէք, տիկին, պէտք է որ աճապարէք :

Մարդիզուհին իսկոյն անոր հետը դնաց :

վրայ : Մահը հոն էր : Մտտ էր վերջանալու այն կեանքն որ այնօր
 քան զեղուն , սէզ և հզօր էր , և որ հիմա վիշտն մաշտած էր :
 Գամօրին գլուխը սնարներուն վրայ ընկած էր , և կարծես թէ
 արդէն սղալի անշարժութիւն մ'ունէր : Աշտէն շեշտուած իր
 զեղեցիկ դէմքը քանդակին ճշգրիտ դարեանդը կ'առնուր : Իր
 աչքը միայն կենդանի էր տակաւին , և տիկին Տը Գանվալօնին
 կը նայէր : Նէ շտապաւ մօտեցաւ , և ուղեց բռնել անոր ձեռքը
 որ սաւանին վրայ կ'երեւար : Գամօր քաշեց ձեռքը : Ատոր վրայ
 յուսահատաբար հեծեց նէ անգամ մը : Գամօր անոր կը նայէր
 միշտ ակնայեռ : Մարդիզուհին կարծեց հասկնալ թէ կ'ուզէր խօսիլ
 ան և թէ չէր կրնար խօսիլ . սակայն անոր աչերը կը խօսէին :
 Հրամայական ու միանգամայն աղերսալի պատուէր մը կը տային իրեն .
 հասկցաւ անշուշտ այս պատուէրին ինչ ըլլալը , վասն զի
 սիրաւէտ ու վշտալի կերպով մ'ըստ բարձրաձայն .

— Ար խոստանամ :

Ատոր վրայ Գամօր կարծես ցաւալի ջանադրութիւն մ'ըրաւ , և
 իր նայուածքը ցոյց տուաւ կնքուած մեծ նամակ մ'որ անկողնին
 վրան էր . մարդիզուհին առաւ նամակը , և պահարանին վրայ
 կարգաց սա խօսքը . « Չաւակիս համար » :

— Ար խոստանամ , ըսաւ դարձեալ ծունկի վրայ կ'յնալով և արտա-
 սուքովը սաւանը ողողելով :

Այն ատեն Գամօր ձեռքը դէպ 'ի նէ վերցուց :

— Շնորհակալութիւն , ըսաւ տիկին Տը Գանվալօն :

Եւ ատելի սաստիկ արտասուելով շուրթերը այս արդէն սառնա-
 բեկ ձեռքին վրայ դրաւ : Երբ վեր ըրաւ գլուխը , մի և նոյն
 բոպէին մշջՊ. Տը Գամօրին աչերուն տկարօրէն թըրուիլը , յան-
 կարծ մոլորադին դառնալը , սպա մեռնիլը տեսաւ :

Մարդիզուհին աղաղակ մը հանեց , անկողնին վրայ նետուե-
 ցաւ , և խենդի պէս պողաւ այս աչերը որք բաց էին տակաւին
 և որք սակայն ան չէին տեսներ զինքը :

Այսպէս մեռաւ այս մարդն որ անշուշտ մեծ յանցաւոր մ'էր
 և որ սակայն մարդ մ'եղաւ :

2589

ՀԱՅ ԳԵՂԱՐՈՒԵՍԱՍԻՐԱՑ
ՄԻՈՒԹԻՒՆ
ՎԱՄԱՏԵՆՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԳԱԶԻՐԷ - ՀԻՄՆԵԱԼ 1942

2013

